¹ Համագործակցությունն իրականացնող ծրագրերից մեկը՝ «Mission Caucasus» ֆինանսավորվում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության կողմից և ղեկավարվում էր Ք. Շատենիեի կողմից, 2016 թվականից ծրագրի պատասխանատուն է դարձել Բ. Պերելյոն (CNRS, Maison de l’Orient et de la Méditerranéen, Lion), և մյուսը՝ LIA(International Associated Laboratory) «Hemha»- Humans and Environments in Mountainous Habitats, the Case of Armenia, Nhasa" - Natural Hazards and Adaptation Strategies in Armenia from 10,000 BC onwards. ղեկ. Պ.Լոմբարդ, Ք.Շատենիե, Laboratory Environments and societies of the ancient Near East (Archeorient – UMR 5133 University Lumière of Lyon / CNRS.), Պ. Ավետիսյան՝ ՀԱԲ:

Էր թեև ժամանակավոր, սակայն ավելի լուրջ կազմակերպված կենցաղի և հարաբերականորեն երկարատև բնակության մասին: Առանձին քննարկման առարկա են մնում քարայրում կատարված միջնադարյան չորս թաղումները²: Ժամանակաշրջանին վերաբերող աշխատանքները քարայրում իրականացվել են 2011-2013, 2015թթ.-ի և դարավանդին՝ 2016 թվականի ընթացքում:

2012 թվականին միջնադարյան բնակեցման փուլերից մեկում յուրօրինակ թաղման փաստ արձանագրվեց: Երկու տարածամասակյա թաղումներով, նավակաձև, սալարկղային, երկխուց դամբարանը շերտագործեն, ինչպես նաև զուգահեռներով և համեմատական նյութով թույլ տվեց թվագրել թաղման կառույցը ոչ ավելի վաղ, քան 11-12-րդ դդ.³: Չափազանց հետաքրքիր էր դարավանդին բացված հորի մոտից գտնված մատանին: *Պղնձիքարիդարյան ժամանակաշրջան*

Ինչ վերաբերում է պղնձիքարիդարյան ժամանակաշրջանին, ապա առաջին անգամ Հայաստանում՝ Գետահովտում տարվող երկարատև աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ նշված շրջանին վերաբերող քարայրային մշակույթի շերտերը բացել նման ծավալներով և հարուստ տվյալներ կուտակել: Բացի այդ, չափազանց կարևորվում է նաև այն հանգամանքը, որ քարայր կացարանն առաջինն է տարածաշրջանում, ուր թրքաշերտերի տեսքով հրաշալի պահպանվել են և ֆիքսվել պղնձիքարիդարյան մարդու հետ քարայրում մանր եղջերավոր անասունների հոտերի կայանման հետքերը: Հնավայրում բացվել են պղնձիքարիդարյան ժամանակաշրջանի մի քանի հորիզոններ, որոնց թվագրությունն ըստ ռադիոմետրիկ տվյալների՝ հիմնականում տեղավորվում է միջին էնեոլիթյան ժամանակահատվածի սահմաններում⁴: Շերտերը քիչ են տարբերվում: Կարելի է խոսել միայն բնակության կամ այցերի ինտենսիվության և տևականության մասին: Օրինակ՝ նկատելի են հավանաբար որսորդների խմբերի կարճատև այցելություններ, երբ բացվել են կրակատեղիների հարևանությամբ կոտրատված և այրված ոսկորների համատարած սփռված տարածքներ: Սակայն կան անասնապահների և որսորդ-հավաքչարարների մի փոքր ավելի հարատև բնակության հետքեր, երբ արդեն ոչ շատ մեծ հորեր և լուրջ, երկարատև օգտագործման հետքերով կրակատեղիներ են բացվում:

Համարյա ամեն շերտում առկա են անասնապահության հետքերը: Ժամանակավոր բնակության շերտերի հատակները, հիմնականում հաստ թրիքի կուտակումներից են սարքված: Շերտերի միջև անընդհատ նկատելի են նաև սանիտարական մաքրման կամ գուցե և երբեմն գոմաղբի և օրգանիկայի ինքնայրման հետևանքով գոյացած բարակ, սև գույն ունեցող շերտերը: Բացի թրքաշերտերից՝ անասնապահության օգտին են խոսում մանր եղջերավոր կենդանիների ոսկորների բազմաքանակ գտածոները, ինչպես

² Առաջին թաղումը բացվել էր 2011թ. աշխատանքների ժամանակ և իր թերի պահպանվածության պատճառով միայն հիշատակվել է հոդվածում: 2015թ. ոչ մեծ փոսի մեջ բացված երեխայի թաղումը առայժմ կարիք ունի կրկնակի թվագրման:

³ Kalantaryan et al, The Archaeological Investigations Of Getahovit -2 Cave(Armenia) In 2011-2012 // The Preliminary Results

⁴ Gasparyan, Arimura -2014b.

նաև թրիքի մեջ սարքված հավանաբար միզահեռացման պրիմիտիվ համակարգը, որը բացվել էր 2016թ. պեղումների ընթացքում: Պետք է ենթադրել, որ հոտերն այլ կամ բարձրադիր արոտավայրեր քշող անասնապահները նաև որսորդությամբ են զբաղվել, ինչի մասին են վկայում քարայրից գտնված որսի, վայրի կենդանիների ոսկորների մնացորդները, նաև դրանցից պատրաստված գործիքները:

Ժամանակաշրջանին վերաբերող հորիզոնների փոքրածավալ պեղումներն իրականացվել են 2011-2013թթ.-ին: 2016-ից լայնածավալ ուսումնասիրություններ են սկսվել, իսկ 2017-ին ներառվել են նաև դարավանդին բացված խրամատի տվյալները:

Պեղումներից այս ժամանակաշրջանին վերաբերող բավականին խեցեղեն է գտնվել: Հավաքածուն ներկայացված է տարբեր խոշոր և միջին անոթների մնացորդներից, ուր գերակշռում են հասարակ, խոհանոցային, հաստապատ տակառած, կրկավոր նստուկներով մեծ անոթները:

Ինչ վերաբերում է գործիքներին, ապա դրանք հիմնականում վանակատից են: Սակայն կարելի է տարբերություններ տեսնել շերտերի միջև, երբ քարայր եկած մարդը, բացի վանակատից, նաև բավական թվով կայծքարից պատրաստված գործիքներ է օգտագործել: Այս փաստը, ինչպես նաև քարայրից գտնված վանակատի նմուշների սպեկտրալ քննությունը կարող են խոսել քարայրն այցելող և ժամանակավոր բնակեցնող մարդկանց խմբերի թե՛ ծագման, թե՛ տարբեր վայրերից եկած լինելու մասին⁵:

Ստերիլ, ապա ցեխահոսքերի շնորհիվ քարայր լցված նստվածքներն առանձնացրել էին պղնձիքարիդարյան միջին ժամանակաշրջանի բնակության հորիզոնները ավելի վաղ ժամանակներով թվագրվող շերտերից: Դա հնարավոր եղավ պարզել 2018 թ. հետազոտությունների արդյունքում, երբ բացահայտվեցին երկու բնակության փուլեր: Դրանցից առաջինը կարճատև բնույթ էր կրել (US 49, 50, 52) և ստերիլ շերտերի վրա էր, մյուսն՝ ավելի լուրջ ու հարստ, որը բացվել էր ցեխաշերտերի տակ: Քննարկվող հորիզոնում բազմաթիվ կրակատեղիներ բացվեցին, գտնվեցին այլ նախորդ գտածոներից տարբերվող խեցեղենի բեկորներ, շատ էին ոսկրից պատրաստված առարկաները: Ոսկրի բեկորների վրա հստակորեն կարելի էր տեսնել կտրած հետքեր, ինչը ևս մինչ այդ չէր հանդիպում⁶: Մի շարք հզոր (St 212, 215, 216) անգամ կրկնակի օգտագործված կրակատեղիների (St 227 և 228-ը), նաև դրանցում բացահայտված հացահատիկի մնացորդները խոսում են բնակության լուրջ հորիզոնի մասին: Իրար ծածկող նյութերի սփռման

* Ծանոթագրություն: Սկսած 2018 թվականից՝ ՀԱԻ կողմից պեղումներն իրականացվում են «Իջևանի գինու և կոնյակի» գործարան ՓԲԸ-ի ֆինանսական աջակցությամբ, ինչի համար մեծապես շնորհակալ ենք սեփականատեր, պարոն Է. Եղիազարյանից, տնօրենների խորհրդի նախագահ, պարոն Ա. Եզոբյանից, գործադիր տնօրեն, պարոն Ա. Բայրամյանից հնավայրի հետազոտման կարևորագույն գիտական խնդրի լուծմանն ուղղված լուրջ ջանքերի համար:

⁵ Chataigner Ch. et al, Diachronic variability in obsidian procurement patterns and the role of the cave-sheepfold of Getahovit-2 (NE Armenia) during the Chalcolithic period // Quaternary International. Volume 550. -2020. pp. 1-19.

⁶ Zarikeyan, N., Kalantaryan I.-2019, Hunting Evidence From The Eneolithic Site Of Getahovit-2 Cave; Armenia, // International journal of Archaeology. Volume 7, Issue 2, <http://www.sciencepublishinggroup.com/j/ija> (online), pp. 24-29.

դեպքերը վկայում էին շերտի երկֆազ լինելը⁷: 2018-ին երկրորդ անգամ հուշարձանում, փոշնու բազմաթիվ սերմերից բացի, շերտից գտնվեց ևս մեկ խաղողի կորիզ, որն ի հայտ էր եկել կրակատեղիին շատ մոտ⁸: 2018 թվականի աշխատանքների նախնական արդյունքներն ամփոփ ներկայացվել են *հոդվածում*⁹:

2019 թվականին իրականացված աշխատանքներն ասես միջանկյալ բնույթ կրեցին: Դրանք մի կողմից հստակեցրին նախորդ պեղաշրջանի ընթացքում անհասկանալի մնացած շերտագրական իրավիճակները, նաև բնակեցման նոր հորիզոններ (ՊՄ 59-60, հատակ ՊՄ 61-62, ՊՄ 63-64, ՊՄ 65) բացվեցին, որոնց ամբողջական մեկնաբանումը հնարավոր դարձավ 2020-ին իրականացված պեղումների շնորհիվ:

Քարայրում 2020թ. աշխատանքների նպատակն էր. առաջին՝ շարունակել վաղագույն շերտերի մանրագնին ուսումնասիրությունները սրահի ներսում, երկրորդ՝ մաքրման աշխատանքների միջոցով տարածք պահպանել քարայրի փոքր, չուսումնասիրված սրահում: Ինչպես և նախորդ տարի՝ 2019թ., մի շարք հարցերի ստուգման, նաև շերտերի ճշգրտման աշխատանքներ իրականացվեցին, ինչպես և մի քանի նոր հորիզոններ պեղվեցին (զծ. 1):

2019-2020 թթ.-ին բացված թերևս ամենահետաքրքիր հորիզոնը ՊՄ 59-60 (հատակ ՊՄ 61,62) էր (զծ. 2), որը շերտագրորեն համապատասխանեց 2014 թ. արևմտյան հատվածում արված խորը տրանշից բացված հորիզոնին, որտեղից վաղ պղնձիքարիդարյան ժամանակահատվածի տվյալներ էին ստացվել (Աղ. 1): Թվում էր, թե ստերիլ հորիզոնի հարավային հատվածը բացահայտորեն հրդեհված էր ու ավերված: Չնայած դրան՝ այդտեղ կրակատեղիներ բացվեցին: Հաջորդ հորիզոնը, որը սակայն կտրվածքներում հստակ չի կարդացվում, ՊՄ 63-64 էր, ուր խոշոր չափերի, քարերով և խոշոր ածխի բեկորներով լցված St 226 կրակատեղին բացվեց: Հզոր կրակի հետևանքով հատակը դրա շուրջ կարմիր երանգ էր ստացել, նաև, փոսի շուրջ կապտականաչավուն հողանմուշներ էին գտնվել:¹⁰(նկ. 1a,b) Հորիզոնի արևմտյան մասում մեծ քանակությամբ մանր եղջերավոր անասունների բյուրեղացած շերտեր էին գտնվում:

Հաջորդ հորիզոնը (ՊՄ 65, ՊՄ 66 հատակ) (զծ. 3), որն առավել հանգամանորեն ուսումնասիրվեց պեղաշրջանի ընթացքում ՊՄ 65-ն էր և դրա համար հատակ ծառայած

⁷ Kalantaryan I., Ghanem Gh. “Preliminary Results Of The Getahovit-2 Cave Excavations In 2018” // «Արամագր» հանդես, հատոր XIII, համար 2, 2019, էջ 9:

⁸ Հովսեփյան Ռ., Քալանթարյան Ի., Խաղողի գտածոներ Գետահովիտ-2 քարայրի (Իջևան, Հայաստան) պղնձիքարիդարյան շերտերից (մ.թ.ա.V հազարամյակի կես) // Պատմա-բանասիրական հանդես, 2019, 1(210), էջեր 233-260.

⁹ Kalantaryan I., Ghanem Gh. “Preliminary Results of The Getahovit-2 Cave Excavations In 2018” // «Արամագր» հանդես, հատոր XIII, համար 2, 2019, էջեր 1-34 :

¹⁰ Ըստ Երկրաբանության ինստիտուտում նմուշների կազմության նախնական ուսումնասիրության՝ պարզվել է, որ գույնը պայմանավորված է խրիզոկոլլայի առկայությամբ - CuSiO3 -H2O : Տպավորություն է ստեղծվում, որ պղնձի հիդրատացված սիլիկատները ներծծվել են կվարց պարունակող որոշակի ապարների մեջ:

ՊՄ 66-ը (նկ. 29): 2019-ին այս շերտի որոշ արևմտյան հատվածներ բացվել էին, սակայն առանձնապես ինֆորմատիվ դրանք անվանել հնարավոր չէր:

2020 թվականին պեղվեցին շերտի արևելյան մասը ներկայացնող քառակուսիները, որտեղ երկու համաժամանակյա կրակատեղիներ բացվեցին՝ St. 233-ը (alt.2.73մ) G4-ում և St. 234-ը H5-6 G5-6 քառակուսիներում (alt. 2.72.5մ): (նկ. 30a) St. 233 կրակատեղին ուներ EW-0.50xNS-0.57մ վրա չափերը: Կրակատեղիի շուրջ վանակատի ցլեպներ, նաև երկու լավ մշակված գործիքներ գտնվեցին: Շատ էին նաև ոսկորների գտածոները: Երկրորդ կրակատեղին՝ St. 234-ն ուներ NS-0.52xEW-0.43մ վրա չափերը, որտեղ ևս բավական թվով վանակատի ցլեպներ գտնվեցին: Երկու կրակատեղիներն էլ արված էին ոչ խորը փոսերի մեջ (նկ. 2): Կարելի էր հետևել քարայրում ժամանակավոր ապաստանած մարդու՝ վանակատից գործիքի պատրաստման կամ դրա թարմացման պրոցեսին: Բացի դրանից, հատակի վրա ևս նյութեր էին բացվում (alt. 2.76, 2.77մ)՝ ներկայացված ոսկորի և վանակատի ցլեպների գտածոներով: Նշեն, որ շերտը շագանակագույն էր, իսկ հատակը լավ տարբերակվող թրքաշերտ էր ներկայացնում: F3 և G4 քառակուսիներում 2.70մ խորությունից թրիքի մեծ կտորներ էին բացվում: Կարևոր էր ասել նաև, որ շերտի նստվածքները բավական հաստ են, ինչը վկայում է հավանաբար մի քանի փուլի մասին: Շերտում կարելի էր ականատես լինել նյութերի՝ իրար ծածկելու դեպքերին (զծ. 4):

Հաջորդ բացված հորիզոնը ՊՄ 67 (ՊՄ68 հատակ) թերևս համապատասխանում է գեոմորֆոլոգի որակած N 8 շերտին: Այստեղ առավելապես հստակ տարբերակվում էր նաև թրքաշերտից արված հատակը: Շերտն, ինչպես միշտ, առավել հստակ էր արևելյան մասում, նաև D, E. F-7, F-6 քառակուսիների սահմաններում: Ցավոք, նյութեր չգտնվեցին, բացի մի քանի ոսկորներից: Նստվածքների տարբերակող հատկանիշը ածխաշատ լինելն էր: Պեղավայրի արևելյան մասում միայն մեկ կրակատեղի St. 235 (alt.2.79-2.83մ) բացվեց: Այն ներկայացնում է երեք քարերով շրջափակված, փոքր չափերի խարույկատեղ, ուր մոխրաշատ փոսիկ-հատվածն ուներ 0.10 մ տրամագիծ: Կրակատեղիին մոտ մի քանի ոսկորներ են գտնվել:

ՊՄ 69 (ՊՄ 70 հատակ) հորիզոն


2018-ին գեոմորֆոլոգի կողմից մարդու գործունեության շերտի որակում ստացած հորիզոնը վերջինն էր, որ մասամբ պեղվեց և իրապես ներկայացավ հետաքրքիր իրավիճակներով և բացված մի շարք կրակատեղիներով: Մի քանի սանտիմետր հաստությամբ շերտը դեռ պետք է ուսումնասիրվի: Հետաքրքիր էր E 7 քառակուսում բացված St. 242 կրակատեղին (D=0.36մ) (նկ. 3), որի մեջը ածխի բեկորիկներ են պահպանվել, և որի կողքը քար ու ոսկոր բացվեցին: Շերտից եղան ոսկորի մնացորդների, նաև վանակատի բեկորների գտածոներ: Հետաքրքիր են Ստ. 238, 240, 237 կրակատեղիները: Ցավոք, առայժմ բացակայում է ռադիոածխածնային քննության անհրաժեշտ շերտի թվագրության համար¹¹ (զծ. 5):

Հնագիտականին զուգահեռ իրականացվող այլ դիսցիպլինալ հետազոտությունների շարքում կարևորվում են հնակենդանաբանական ուսումնասիրությունները, որոնք,


¹¹ Քալանթարյան Ի., 2020թ. Գետահովիտ-2 քարայրի հնագիտական պեղումների հաշվետվություն:

չնայած նյութի ծայրահեղ ֆրագմենտարությանը, հետաքրքիր մանրամասներ են վեր հանում: Բացի վերը նշված ոսկրաբանական նյութերին վերաբերող մանրամասներից, կարևորվում է այն փաստը, որ քննարկվող նորահայտ հորիզոններում հստակորեն ավելանում է կովերի առանձնյակների քանակային հարաբերակցությունը¹²:

Եզրահանգում. Քարայրում 2019 և հատկապես 2020թ.-ին իրականացված պեղումները մի շարք վաղագույն հորիզոններ վեր հանեցին: Ցավոք, C14 քննության բացակայությունը թույլ չի տալիս այս պահին կոնկրետ ժամանակահատված նշել, սակայն կարող ենք հստակ պնդել դրանց, միջինը, մ.թ.ա. 4600թ.-ից վաղ լինելու հանգամանքը: Իսկ եթե մեր շերտագրական դիտարկումները ճշգրիտ են, ուր նույնանում են Ստ. 71, որի թվագրություն է մ.թ.ա. 5289-4995 և ՊՄ 60-ում բացված Ստ. 226-ը, ապա նախնական կերպով կարելի է եզրակացնել, որ այս հորիզոնին նախորդողները (ՊՄ65-66, 67-68, 69-70) պետք է ավելի վաղ թվագրություն ունենան:



ՊՃ. 1. 2020թ պեղաշրջանում կատարված աշխատանքների ծավալների գծագիր



ՊՃ. 2. ՊՄ 60

¹² Ջարիկյան Ն., 2020թ. Գետահովիտ-2 քարայրի հնագիտական պեղումներից գտնված հնակենդանաբանական նյութի ուսումնասիրության հաշվետվություն:




Նկ. 1 Ստ. 226 կրակատեղի, a,b




Նկ. 2. Ստ. 233, 234 կրակատեղիները
ՍՏ 65 –ի վրա.




Նկ. 3, ՊՄ 69-70 և Ստ. 242 կրակատեղին:



Գծ. 3 US 65, 66, Երկրորդ ֆազա



Getahovit-2 2020 Excavations
ST 226, 233, 234 Sections



Գծ. 5, ՊՄ. 6-70 և Մտ

Աղ. 1. Հուշարձանի ժամանակագրական սխեման.

Chronological chart of the Getahovit 2 cave
based on radiometric dating

Levels & Horizons	Stratigraphic units	Dates	
Level:1 Medieval			
Horizon 1	US3 (TR2)		
Horizon 2	Layer2	1021-1206 AD	
Horizon 3	US19, 20	897-1024 AD	
Horizon 4	US21	993-1155 AD	
Level:2 Sterile			
Sterile	US4=US8		
Level 3 Chalcolithic			
Middle Chalcolithic	Horizon 1	US31, 35	4341-4077 BC
	Horizon 2	US36, 37	4447-4258 BC
	Horizon 3	US38, 40, 41	4541-4360 BC
	Horizon 4	US44, 45	
	Horizon 5	US46, 47	
Horizon 6 - Sterile and mud layer	US48, 49, 52	4683-4463 BC	
Early Chalcolithic	Horizon 7	US53,US54(US57)	4703-4545 BC
	Horizon 8	US14 (2014)	5289-4995 BC
Level 4 Geological fluvial sedimentation			
Level 5 Geological co-luvial sedimentation	US16(2014)		
Level 6 Upper Paleolithic	US18(2014)	22020-21685 BC	

РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК ПЕЩЕРЫ ГЕТАОВИТ-2 В 2020г.

Калантарян И., Зарикян Н., Ферешетян В.

Ключевые слова: *Армения, долина реки Агстев, археологические раскопки, пещера, средневековье, энеолитические слои, история раскопок.*

Пещера Гетаовит -2 расположена на одной из террас в живописном ущелье реки Хачапюр, между сёлами Енокаван и Гетаовит Тавушского Марза. Раскопки здесь ведутся с 2011 года. Основные периоды представлены горизонтами средневековья, энеолита, периодом раннего энеолита, а также обнаружился слой верхнепалеолитического периода. Статья представляет историю обнаружения памятника, историю раскопок, также досконально представляются контексты средневековых и энеолитических слоев и горизонтов. Важная часть статьи - представление основных итогов раскопок 2020 г., где рассматриваются более ранние горизонты, по видимому предшествующие имеющейся раннеэнеолитической датировке (последняя треть 6-ого тыс. до н. э.).

THE RESULTS OF THE EXCAVATIONS CARRIED OUT IN GETAHOVIT-2 CAVE IN 2020

Kalantaryan I., Zarikyan N., Feretshyan V.

Key words: *Armenia, Tavush region, Aghstev valley, Getahovit cave, excavations, medieval, early chalcolithic.*

Getahovit-2 is a small cave situated on the one of the left terraces of Khachaghbiur river not very far from Ijevan (Tavush region center), northeastern Armenia. Excavations, started here in 2011 yielded cultural deposits nearly 2 m deep, with solid Medieval horizons, overlaying the Chalcolithic. With the help of deep test sounding below the sterile layer, the Upper Paleolithic horizon was attested in the cave. With radiocarbon dates, the Chalcolithic period observed in Getahovit-2 is placed very well in the middle sequence of the chronological chart used for radiometric dating. Moreover, one piece of data from the 2014 deep sounding excavations showed a very early Chalcolithic presence (5289-4995 cal BC), which is extremely important because the time range still remains unknown in Armenia, and in the southern Caucasus in general. The cave is unique by its' preserved coprolite layers. The aim of the article is the presentation of the preliminary results of the excavations 2020.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ջարիկյան Ն., 2020 թ. Գետահովիտ-2 քարայրի հնագիտական պեղումներից գտնված հնակենդանաբանական նյութի ուսումնասիրության հաշվետվություն:
2. Հովսեփյան Ռ., Քալանթարյան Ի., Խաղողի գտածոներ Գետահովիտ-քարայրի (Իջևան, Հայաստան) պղնձիքարիդարյան շերտերից (մ.թ.ա.V հազարամյակի կես)՝ Պատմա-բանասիրական հանդես, 2019, 1(210), էջեր 233-260:
3. Քալանթարյան Ի., 2020թ. Գետահովիտ-2 քարայրի հնագիտական պեղումների հաշվետվություն:

4. Christine Chataigner, Bernard Gratuze , Nicolas Tardy , Frédéric Abbès, Iren Kalantaryan, Roman Hovsepyan, Jwana Chahoud , Bérengère Perello Diachronic variability in obsidian procurement patterns and the role of the cave-sheepfold of Getahovit-2 (NE Armenia) during the Chalcolithic period //Quaternary International, [Volume 550](#), 10 June 2020, pp.1-19, Elsevier Ltd and the International Union for Quaternary Research (INQUA).
5. Gasparyan, B., Arimura M. -2014. Study of the Stone Age in the Republic of Armenia. Achievements and Perspectives, in B. Gasparyan, M. Arimura (eds), Stone Age Of Armenia, 13-33. Kanzawa.
6. Kalantarian I., Arimura M., Hovsepyan R., Chataigner C. The Archaeological Investigations Of Getahovit-2 Cave (Armenia) In 2011-2012: The Preliminary Results // Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies. Vol. VII. 1.-2012, pp. 7-23.
7. Kalantaryan I., Ghanem Gh. “Preliminary Results Of The Getahovit-2 Cave Excavations In 2018”// «Արամազդ» հանդես, հատոր XIII, համար 2, 2019, էջեր 1-34:
8. Zariqyan N., Kalantaryan I.-2019, Hunting Evidence From The Eneolithic Site Of Getahovit-2 Cave; Armenia // International journal of Archaeology. Volume 7, Issue 2, [http:// www.sciencepublishinggroup.com/j/ija](http://www.sciencepublishinggroup.com/j/ija) (online), pp. 24-29.

Ընդունվել է՝ 20. 07. 2021

Գրախոսվել է՝ 01. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Իրենա ՔԱԼԱՆԹԱՐԻԱՆ՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող, էլ. հասցե՝ irenkalanataryan@mail.ru

Նուշիկ ԶԱՐԻԿՅԱՆ՝ կենսաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
հնակենդանաբան, էլ. հասցե՝ noushigz@hotmail.com

Վահագն ՖԵՐԵՇԵՅԱՆ՝ բակալավր, ճարտարապետ,
էլ. հասցե՝ vahagn.fereshetyan@mail.ru

ԴՎԻՆ ԱՄՐՈՑ-ՍՐԲԱՎԱՅՐԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Գայանե Քոչարյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *ամրոց-սրբավայր, շարունակական զարգացում, պատմա-մշակութային համատեքստ, աշխարհիկ և հոգևոր իշխանություն, «երկրներ» արքայանիստ քաղաք:*

Հոդվածում ներկայացված է Դվին հնավայրի մ. թ. ա. III հազարամյակից սկսած մինչև մ. թ. IV դարն ընդգրկող մշակութային շերտերում ամրոց-սրբավայր գույգի ավանդապահ տեսականության բնութագիրը: Պատմամշակութային ժառանգականության հենքի վրա նորովի է վերանայվում հնագիտական և գրավոր սկզբնաղբյուրների առկա տեղեկատվությունը: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուրվագծելու ժառանգված իրողությունների զարգացման բնականոն ընթացքի ուղին Դվին բազմաշերտ հնավայրում:

Նախաբան. Դվինի ցարդ հայտնի, մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսից ոչ ուշ թվագրվող հնագույն շերտն ընդգրկում է ամբողջ բլուրը և հարող հարավարևմտյան տարածքը: Առկա տվյալները չեն բացառում բլրի գագաթային հարթակի բնական եզրագծով կառուցված, ժամանակին բնորոշ կիկլոպյան պարսպի և ծիսապաշտամունքային արարողությունների ընդհանուր սրբատեղիի գոյության հնարավորությունը¹:

¹ Քոչարյան Գ. Գ., Դվին բազմաշերտ հուշարձանի ձևավորման ընթացքը // Հանդես ամսօրեայ, 2017, թիւ 1-12, էջեր 2-5:

Մ. թ. ա. II-I հազարամյակների սահմանագլխին Ոստան Հայոց գավառի մտավոր սահմաններում, Էթիունյան (վաղերկաթիդարյան՝ մ. թ. ա. X-VIII դդ.) *բնակատեղիների* շարքում Դվին ամրոց-սրբավայրն առանձնանում էր որպես «արքունի քաղաք»²: Գետնախարսիսի հսկայածավալ քարերը՝ միմյանց հետ ամրացված կավե շաղախով, վերնամասը շարված հում աղյուսով հզոր պատվարի աղճատված մնացորդները հավաստում են բլրի գագաթի կառուցապատված հարթակը բոլորող պարսպագոտու երբեմնի առկայության մասին: Իսկ պատկերագրող կավե զոհարանները՝ տարատեսակ ծիսական խեցանոթներով, սերմնագրող պատկերով կավե կուռք-արձանիկներով, շարժական օջախ-կրակարաններով, վկայում են մեհյանների գոյությունը, հատկապես՝ բլրի հարավարևմտյան ստորոտին³:

Հարություն Մարտիրոսյանը իր գիտական գործունեության ընթացքում անդրադարձել է Դվինի պատկերագրող զոհարանների խորհրդապաշտական ենթատեքստում սքողված տեղեկատվության մեկնությանը⁴: Համեմատական վերլուծության հնարավորությունների հետևողական օգտագործմամբ նա վերծանում է իմաստաբանական հնամենի, վաղնջական խորհրդանշան-գաղափարագրեր՝ երկրային և երկնային երևույթների համակցություններ, տոտեմական-աստեղային պատկերացումներ (կենդանակամար, համաստեղություններ, արևանշաններ, երկնային և երկրային ջրեր, սրբացված լեռներ և այլն), այսինքն՝ ժամանակի բնապաշտական աշխարհայեցողությանը բնորոշ համատիեզերական ըմբռումներ: Իմաստաբանական որոշ ընդհանրությունների ծիսապաշտամունքային բովանդակության ակունքները հեղինակը փնտրում և բացահայտում է դեռևս մ.թ.ա. III հազարամյակի հնագիտական նյութի պատկերագրության հորինվածքներում և ժայռապատկերներում: Հ. Մարտիրոսյանի բացահայտած բնապաշտական ավանդույթների կենսունակությունն ու շարունակելիությունը հավաստող մեկնությունների ամբողջությունը անառարկելի կարևորություն ունի՝ անփոխարինելի բանալի է Դվինի նաև հաջորդ՝ անտիկ շրջանի աշխարհընկալումը, իմաստասիրական հայեցողությունն ըմբռնելու, վերծանելու տեսանկյունից:

Մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին՝ Վանի թագավորության լայնածավալ նվաճումների տարիներին, վարչական և պաշտամունքային այս խոշոր կենտրոնը հիմնահատակ կործանվում և հրկիզվում է (հմմտ. Մեծամորի, Կարմիր բլուրի «արքունի քաղաքների» համաժամանակյա ավերված, «հրդեհված շերտերը»)⁵:

Դվին ամրոցի դիրքը վերստին արժևորվում է անտիկ ժամանակաշրջանում՝ մ. թ. ա. II դարի 70-ականներից սկսած՝ որպես նորաստեղծ Արտաշատ մայրաքաղաքի հյուսիսային դարպասի մատույցների պաշտպանությունը վերահսկող ամրաշինական

² Խանգաղյան Է. Վ., Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 126: Տե՛ս նաև Քոչարյան Գ. Գ., նշվ. աշխ., էջեր 5-10:

³ Кушнарєва К. X. Древнейшие памятники Двина. Ереван, -1977. сс. 11-28.

⁴ Մարտիրոսյան Հ. Ա., Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, էջեր 32-33:

⁵ Խանգաղյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս., Մեծամոր, Երևան, 1973, էջեր 56-57: Кушнарєва К. X., նշվ., աշխ., էջեր 107-108:

հենակետ: Վերակառուցվում են Դվին բլրի գագաթի հարթակն օղակող պարսպագոտին, որոշ հատվածներում նաև կից կացարանները՝ մասամբ պահպանելով նախորդ՝ մ. թ. ա. I հազարամյակի սկզբի հատակագծային ցանցը: Այս սահմանափակ (0, 5 հա) տարածքի յուրաքանչյուր հերթական կառուցապատման ժամանակ դիտվում են ծավալատարածական այնպիսի լուծումներ, որոնց համաձայն՝ պարսպի որոշակի հատվածներ ուղղակիորեն ընդգրկվում են կից շինությունների հատակագծային հորինվածքի մեջ՝ դառնալով վերջինիս օրգանական մասը, ստեղծելով կուռ մի ամբողջություն բլրի գագաթին:

Կիրառելով ավանդական կոնստրուկտիվ սկզբունքներ և ժամանակակից շինարվեստ՝ գագաթի հարթակը կառուցապատվում է քաղաքացիական շինություններով: Միջնադարյան հազարամյա շերտի տակ աղճատված անտիկ կառույցների հատվածական ուսումնասիրությունը դժվարեցնում է սրանց գործառական բնույթի լիարժեք բացահայտումը: Այսուհանդերձ, ըստ տեղադրության, շինարարական մշակույթի, մասամբ և հնագիտական նյութերի զուդորդման՝ ենթադրվում է, որ գագաթի արևմտյան հատվածի՝ ճյուղավորված, ներքին բաժանմունքներով մեծ շինությունը որոշակի հասարակական՝ հավանորեն վարչատնտեսական դեր է կատարել ամբողջ-սրբավայրի համար⁶: Ընդ որում, տվյալ շինությունը նույն հատակագծով վերակառուցվում է վաղ միջնադարում՝ դառնալով թերևս Խոսրովաշեն առաջին կառույցներից մեկը:

Մ. թ. II դ. 60-ականներին Հայաստանը բռնազավթած հռոմեացիները կարևորում են շրջապատի վրա՝ Վաղարշապատ-Արտաշատ-Գառնի հաղորդակցության ուղիների հանգուցակետում, Դվին ամրոցի ունեցած դիրքային առավելությունը: Հնագիտական սակավ նյութերով անգամ ուրվագծվում է հռոմեական բանակի բենեֆիցիարիուսների ուղեցույց-ուղեկալ պահակակետ (statio)՝ բլրի գագաթին հրամանատարական դիտակետ, իսկ ստորոտին՝ վաղեմի սրբավայրում «պաշտամունքային կառույց»՝ Միթրային ձոնված զոհասեղանով⁷:

Սրբավայրի տարածքում և մերձակայքում մինչև օրս հայտնաբերվում են անտիկ՝ մ. թ. ա. II-մ. թ. III դդ. բնորոշ ճարտարապետական մանրամասներ, իսկ IV-V դդ. վաղմիջնադարյան գրեթե բոլոր մոնումենտալ շենքերի հիմնապատերի շարվածքում՝ կրկնակի օգտագործված սրբատաշ քարեր՝ հին սվադի, ներկի, որմնանկարի հետքերով: Բազմազան կողապատկերներ ունեցող տուֆե, սպիտակ ավազաքարե, բազալտե և գրանիտե տարբեր տրամաչափի շուրջ երկու տասնյակ (այդ թվում՝ տորաձև, «ատտիկական») սյունախարիսիսների քանակական ու ոճական հատկանիշների նույնիսկ պարզագույն համեմատությունը վկայում է այստեղ մասնագիտական բարձր մակարդակ

⁶ «Դվին, միջնաբերդի կենտրոնական հատվածի ընդհանուր հատակագծի վերակազմության փորձ (ըստ 1950-2013 թթ. պեղումների նյութերի համադրության)» Չափագրությունը՝ Կորյուն Դաֆադարյանի (տե՛ս Քոչարյան Գ., Դվին հնավայրի շերտագրման ճշգրտումներ՝ ըստ 2013թ. պեղումների արդյունքների//Բանբեր Երևանի Համալսարանի. Հայագիտություն, 2019, № 2, էջ 82, նկ. 1):

⁷ Հրամանատարական դիտակետի և «պաշտամունքային կառույցի» հնարավոր գոյությունը հավաստող փաստարկների մասին մանրամասն տե՛ս Քոչարյան Գ., Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ) // Պատմա-բանասիրական հանդես (հետայսու՝ ՊԲՀ), 2002, № 3, էջեր 209-213:

պահանջող, սրբատաշ քարերով որմնադրության գոյությունը: Դվինում, բացի տեղական սպիտակ ավազաքարից, օգտագործվել է նաև մերձերևանյան սև ու շիկավուն տուֆ և Գառնիից ձգվող անդեզիտաբազալտային շերտի մոխրագույն բազալտ:

Ի վերջո, այս բոլորը անտիկ դարաշրջանի ճարտարապետական-կառուցողական որոշակի մակարդակին բնորոշ՝ պաշտամունքային բնույթի քարաշեն կերտվածքների գոյության անառարկելի փաստեր են: Այսինքն՝ Դվինի առնվազն մ. թ. ա. I հազարամյակի սկզբից ի վեր հայտնի սրբավայրն իր գործառույթը տևականորեն պահպանում էր անտիկ ժամանակաշրջանում:

Դվին ամրոց-սրբավայրը և (Ագաթանգեղոսի հիշատակած) Տիր աստծուն ձուլված «Երազամույն տեղերը»⁸ իրենց դիցանվեր կաղնուտ-պատգամախոսարաններով, գտնվել են նույն տիրույթում և կազմել փոխկապակցված նույն կրոնապաշտամունքային համալիրը: Դվին տեղանվան ՀՆԽ *d^heun-հիմքից ծագած լինելու փաստը և հայ. Տիր/Տիր և՛ դիցանունի, և՛ դիցաբանական կերպարի նույն հնդեվրոպական ընդհանրությունից բխած լինելու իրողությունը վկայում են քննվող համալիրի պաշտամունքային ակունքների վաղեմության մասին⁹: Իրավամբ, մ.թ.ա. III հազ. և հատկապես մ.թ.ա. I հազ. սկզբի բազմահարուստ նյութական մշակույթում տեսանելի են բնապաշտական հավատալիքների ավանդականության դրսևորումներ: Մ.թ.ա. X-VIII դդ. բնապաշտական աշխարհայեցողության պատկերում ուրվագծվում է *լուսավոր երկնքի* առանցքային դերն իր կենսական լույսի պաշտամունքի գաղափարով: Անտիկ շրջանին բնորոշ կրոնական սինկրետիկ հայեցողությամբ պայմանավորված՝ ակնհայտ է դառնում *հայ. Տիր-հուն. Ապոլոն - հռոմ. Միթրա լուսակիր եռյակի* համատեղումը հինավուրց սրբավայրում: Իսկ արդեն Հայոց դարձից հետո աստվածային պատգամների լույսով մարդկանց հոգին ու միտքը լուսավորողի հիշատակը հավերժացնող *Մբ Գրիգոր Լուսավորիչ* կաթողիկե եկեղեցին է կառուցվում այս նույն Երազամույն տեղեր-Դվին սրբավայրում (բացառված չէ՝ ճիշտ Տիրի տաճարի տեղում): Հայրենի հնավանդ սրբավայրի գոյության տևականությունը պայմանավորված էր նրան վերագրվող աստվածային զորության՝ պաշտամունքային հիմնական գաղափարի՝ *լույսի երկրպագության մշտնջենականությամբ*¹⁰:

Մ. թ. IV դ. 30-ական թվականներին Խոսրով Կոտակ Արշակունին (330-338) արքունիքը Արտաշատից տեղափոխում է Դվին¹¹: Նա արքունի ապարանքը կառուցեց բլրի՝

⁸ Դեռևս Հայոց դարձի նախաշեմին գործող «Երազամույն տեղեր» սրբավայրի մասին տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությամբ, և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջեր 436-438 (778, 779 ՃԸ):

⁹ Տե՛ս **Քոչարյան Գ. Գ.**, Դվին տեղանվան վաղեմության հարցը // ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (հետալստ) ԼՀԳ, 2000, № 2, էջեր 132-138: **Նույնի՝** Տիր/Տիր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում // ՀՀ ԳԱԱ ԼՀԳ, 2005, № 1, էջեր 130-141:

¹⁰ «Երազամույն տեղեր». Դվին ամրոց-սրբավայրում դրսևորված աշխարհայեցողական ըմբռնումների զարգացման ընթացքի մասին մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ. Գ.**, Դվին ամրոց-սրբավայրի մշտնջենական խորհուրդը, ՊԲՀ, 2021, №1, էջեր 180-191:

¹¹ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթ. Մտ. Մալխասյանի, Երևան, 1990, էջ 170 (III, Ը):

պարսպով պատսպարված գագաթին (պահպանվել են IV դ. «Արշակունյաց գահադահլիճի» եռանավ սրահի մնացորդները)¹², իսկ հարավարևմտյան ստորոտին՝ հնագույն սրբավայրում նոր դավանանքի հոգևոր կենտրոնի սկիզբը դրվեց:

Խոսքով Կոտակը իր կաղնետունկ պարսպապատ անտառներն է հիմնում՝ նախկին կաղնուտ-պատգամախոսարաններն ընդգրկելով¹³: Անտառներից մեկը արքան կոչեց՝ «Տաճար մայրի»=«Կաղնու տաճար», որը տեղի նվիրական կաղնուտների պաշտամունքի տակավին չմոռացված հիշատակների բացահայտ արձագանքն էր: Իսկ մյուսը՝ որպես արքայի «հանգստի ու հաճույքի վայր»=պարադիս՝ կոչեց *Խոսքովակերտ*: «Պարադիսային» հնավանդ մշակույթի ակունքները Հայկական լեռնաշխարհում վկայված են մ. թ. ա. I հազ. սկզբներից և տևականորեն շարունակվում են հայոց արքայատոհմերի շրջանում (հմմտ. բնապատկերային ճարտարապետության ավանդական սկզբունքներով կերտված՝ Ռուսա Առաջինի, ապա՝ Երվանդ Վերջինի, Արտաշես Առաջինի, Տիգրան Մեծի, Խոսքով Կոտակի համալիրները)¹⁴:

Եզրահանգում. Խոսքով Կոտակի քաղաքաշինական այս ամբողջական, կուռ ծրագիրը կազմված էր ավանդական մոտեցմամբ, խարսխված էր խորհրդապաշտական հին ընկալումների և ըմբռումների վրա: Այսուհանդերձ, *Դվին ամրոց-սրբավայր+Երազանույն տեղերը*, արքան վերստին սրբագործելով, նորովի իմաստավորեց և արժևորեց՝ որպես *արքայանիստ համալիր կառույց*: Սա անվերապահորեն Նոր դավանանքի հավատացյալների վրա բարոյահոգեբանական ներգործության խորապես գիտակցված մարտավարական խելամիտ քայլ էր՝ հեթանոսական մշակույթային ժառանգականությունից քրիստոնեականին անցման աստիճանական մեղմացման դրսևորում:

Դվին բլրի գագաթին արքունի ապարանքի կառուցմամբ մարմնացավ աշխարհիկ իշխանությունը, իսկ ստորոտին՝ հնագույն սրբավայրում, եկեղեցիների կառուցմամբ ստեղծվեց վաղքրիստոնեական նշանակալի հոգևոր կենտրոններից մեկը, ուր և 470-ական թթ. Վաղարշապատից տեղափոխվեց կաթողիկոսական աթոռը: Այսպիսով, Դվինում կենտրոնացավ աշխարհիկ և հոգևոր իշխանությունը:

Դվինի քաղաքայնացման ընթացքում՝ աշխարհիկ և հոգևոր իշխանություն խորհրդանշող ամրոց-սրբավայր գույզի ավանդապահ իրողությունը փաստորեն նախապայման հանդիսացավ «երկբնեռ կառուցվածք»¹⁵ ունեցող արքայանիստ քաղաքի կազմավորման, կայացման համար:

¹² Տե՛ս **Ղաֆաղարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Երևան, 1982, էջեր 89-96:

¹³ **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի. Երևան, 1990, էջ 170 (III, Ը.), տե՛ս նաև **Քոչարյան Գ.Գ.**, «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ // Հանդես ամսօրեայ, 2004, թիւ 1-12, էջեր 415-428:

¹⁴ Արքունի ապարանքի + որսատեղ-անտառապուրակի համալիր կառույց=պարադիսների մասին մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.Գ.**, Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք // Բանբեր հայագիտության, 2014, № 1, էջեր 35-36:

¹⁵ Քաղաքի ճարտարապետական կառուցվածքում երկու իշխանությունների ունեցած ծագումնաբանական-կազմաբանական նշանակության մասին տե՛ս **Զարյան Ա.**, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986, էջեր 66-67 և այլն:

КРЕПОСТЬ-СВЯТИЛИЩЕ ДВИН В ИСТОРИКО-КУЛЬТУРНОМ КОНТЕКСТЕ

Кочарян Г. Г.

Ключевые слова: *крепость-святилище, последовательное развитие, историко-культурный контекст, светская и духовная власть, «двухполюсный» престольный город.*

Сравнительный анализ результатов исследования письменных и археологических источников позволяет проследить процесс последовательного развития крепости-святилища Двин в историко-культурном контексте. Двин был крепостью-святилищем с III тыс. до н. э. Та же пара как крупный административный и религиозный центр наглядно проявляется в эпоху раннего железа (X-VIII вв. до н. э.).

В античный период во II в. до н. э. в связи с основанием столицы Арташат восстанавливается крепость-святилище Двин (разоренный в первой половине VIII в. до н. э. во время урартских военных походов). На массивном каменном фундаменте, окружающем вершину Двинского холма, перестраивается мощная крепостная стена из сырцовых кирпичей, а у подножья холма продолжает функционировать традиционное святилище.

В 30-ые годы IV в. Хосров Котак Аршакид (330-338 гг.) перенес царский двор из Арташата в Двин. Огороженная площадка на вершине холма застраивается дворцовыми постройками (сохранились остатки «тронного зала Аршакидов»), а в древнейшем святилище устанавливается начало формирования одного из значительных раннехристианских духовных центров региона. Особый потенциал традиционной крепости-святилища Двин -совмещающий в себе светскую и духовную власть - явился решающей предпосылкой для становления «двухполюсного» престольного города Двин.

THE FORTRESS-SANCTUARY DVIN IN HISTORICAL AND CULTURAL CONTEXT

Kocharyan G. G.

Key words: *fortress-sanctuary, successive development, historical and cultural context, secular and spiritual powers, “two-polar” royal city.*

The comparative analysis of the results of investigations based on archaeological and written sources enable to reveal the process of successive development of the fortress-sanctuary Dvin in historical and cultural context. Dvin was a fortress-sanctuary since the 3rd millennium BC. The same pair was manifested most obviously as the considerable administrative and religious centre in the Early Iron Age (10-8th centuries BC).

In the Classical period in the 2nd century BC in connection with the foundation of capital Artashat was restored the fortress-sanctuary Dvin (destroyed and burnt in the 8th century BC by the Urartian military campaign). Thick mud brick walls were rebuilt on the massive stone base around the hilltop of Dvin, and the traditional sanctuary known since the 1st millennium BC had been functioning on the hill-foot.

Arshakid king Khosrov Kotak (330-338 AD) transferred the royal court from Artashat to Dvin in the thirties of the 4th century AD. On the hilltop platform the royal structures were built (have been preserved the remains of the “Arshakids’ throne-hall”), and in ancient sanctuary the process of formation one of the most important Early Cristian cultic centre was started.

A special potential of the traditional fortress-sanctuary Dvin (combining the secular and spiritual powers at the same time) became decisive precondition for establishing the “two-polar” royal city Dvin.

Գրականություն

1. Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՃ հրատ., 1983:
2. Ջարյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1986:
3. Խանգաղյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս., Մեծամոր, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1973:
4. Խանգաղյան Է. Վ., Էլառ-Դարանի, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1979:
5. Ղաֆաղարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1982:
6. Մարտիրոսյան Հ. Ա., Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտահայկական կրկնակները, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1973:
7. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 1990:
8. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, ԵՃ հրատ., 1990:
9. Քոչարյան Գ. Գ., Դվին տեղանվան վաղեմության հարցը // ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, № 2, էջեր 132-138:
10. Քոչարյան Գ., Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ) // Պատմա-բանասիրական հանդես, 2002, № 3, էջեր 206-214:
11. Քոչարյան Գ., «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ // Հանդես ամսօրեայ, 2004, թիւ 1-12, էջեր 411-428:
12. Քոչարյան Գ. Գ., Տիր/Տիր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում // ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, № 1, էջեր 130-141:
13. Քոչարյան Գ., Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք. Բանբեր հայագիտության, 2014, № 1, էջեր 26-46:
14. Քոչարյան Գ., Դվին բազմաշերտ հուշարձանի ձևավորման ընթացքը // Հանդես ամսօրեայ, 2017, թիւ 1-12, էջեր 1-20:
15. Քոչարյան Գ., Դվին հնավայրի շերտագրման ճշգրտումներ՝ ըստ 2013թ. պեղումների արդյունքների, Բանբեր Երևանի Համալսարանի. Հայագիտություն, 2019, № 2, էջեր 76-83:
16. Քոչարյան Գ., Դվին ամրոց-սրբավայրի մշտնջենական խորհուրդը // Պատմա-բանասիրական հանդես, 2021, № 1, էջեր 180-191:
17. Кушнарєва К. X. Древнейшие памятники Двина. Ереван. Изд-во АН Армянской ССР. -1977.

Ընդունվել է՝ 20. 08. 2021

Գրախոսվել է՝ 01. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Գայանե ՔՈՉԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հին Հայաստանի հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող,
Էլ. huugե՝ vruyr 2001@yahoo.com

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ

Սուսաննա Աղալյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Գեղարքունիք, վիմագիր, պեղումներ, խաչքար, նորահայտ, միջնադար, Դոմաշեն, հայկական:

Սույն հոդվածը ներկայացնում է Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքներում հեղինակի կատարած վիմագրագիտական ուսումնասիրությունները, որոնցով հայտնաբերվել են նորահայտ տասնյակ կոթողներ, ընդօրինակվել են հարյուրից ավելի վիմագրեր, տասնյակ վիմագրեր համեմատվել են նախորդ հրատարակիչների աշխատություններում տեղ գտած վիմագրերի հետ:

Նախաբան. ՀՀ Գեղարքունիքի մարզը հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով, որոնց թիվն ավելանում է հնագիտական պեղումների, շինարարական, հողագործական աշխատանքների շնորհիվ: Հուշարձանները հարուստ են վիմագրերով, դրանց ուսումնասիրությունն սկսվել է դեռևս միջնադարում¹: Արդեն XIX դարում մի խումբ հեղինակներ, լրացնելով իրար, հաղորդել են տեղեկություններ բնակավայրերում եղած հուշարձանների, դրանց որմերին պահպանված վիմագրերի վերաբերյալ: Այդ արձանագրությունների մեծ մասն ամփոփվել են «Դիվան հայ վիմագրության» պրակում²:

Վերջին տարիներին մեր կողմից արված վիմագրագիտական ուսումնասիրությունների արդյունքում գրառվել և ընդօրինակվել է ավելի քան 100 վիմագիր, որոնք

¹ Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

² Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1974:

ունեն հիմնականում հիշատակագրային բնույթ: Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին³:

Սևանի տարածաշրջանի Դդմաշեն⁴ (Դոդմաշեն, Տոտմաշեն, Տուտմաշեն): Բնակիչները տեղափոխվել են 1830 թ. Խոյ գավառի Դիադին և Մակու գավառի Տուտմա գյուղերից, ինչպես նաև՝ Բայազետից: Գյուղի անվան մասին տարբեր կարծիքներ կան: Ե. Լալայանը բնակավայրը հիշատակում է *Тотмашен* կամ *Тутмашен*, Ղարաբեշիշ (թարգմանաբար նշանակում է սև քահանա) անվամբ: Նա նշում է, որ «այստեղ մի ժամանակ շատ լաւ դղում են մշակել»⁵, որից էլ առաջացել է Դդմաշեն անվանումը: Կարծիք կա, որ Մակու քաղաքից այստեղ հաստատված բնակիչներն այն կոչել են իրենց նախկին բնօրրանի՝ Դուդմա կամ Տուտմա անվամբ⁶:

Տեղագիրներ Հովհաննես Էպիս. Շահխաթունյանցը⁷, Մեսրոպ արք. Սմբատյանցը⁸ չեն մեկնաբանում տեղանվան ստուգաբանությունը և թռուցիկ անդրադառնում են գյուղի հուշարձաններից միայն Ս. Թադեոս եկեղեցուն:

³ Գեղարքունիքի մարզի վիմագրերի մի մասը հրատարակվել է մեր կողմից առանձին հոդվածներով: Տե՛ս **Ս. Աղամյան**, Վիմագրական ուսումնասիրություններ Սևանա լճի արևելյան ափին // Մերձավոր Արևելք, VII-VIII, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան, 2016, էջեր 190-196: **Նույնի՝** Նորահայտ վիմագրերը Սևանա լճի արևելյան ափին // Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XI-XII հոդվածների ժողովածու, 2017, էջեր 190-197: **Նույնի՝** Նորահայտ արձանագրություններ Ծակքար գյուղից (Գեղարքունիքի մարզ) // Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ XIII հոդվածների ժողովածու, 2018, էջեր 91-98: **Նույնի՝** Նորահայտ վիմագրեր Մաղինայի տոհմական գերեզմանատնից, Սյունիքը կրթության և մշակույթի օջախ/ԳՊՀ հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, «Արմավ» հրատարակչություն, 2019:

⁴ **Լալայան Ե.**, Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), 1908 թ., 2, գիրք 18, էջ 127: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հատոր 2, Երևան, 1988, էջ 67: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Դդմաշենի տարածքը բնակելի է եղել ավելի քան 4000 տարի առաջ: Այդ ընթացքում Սևանա լճի ավազանը անընդմեջ բնակելի էր գրեթե բոլոր հատվածներում: Տե՛ս **Ա. Փիլիպոսյան, Ռ. Մկրտչյան**, Գեղեցիկի վանատսպյան (ուրարտական) քարայր-դամբարանը, Երևան, 2011, էջ 5:

⁵ **Լալայան Ե.**, նշված աշխ., էջ 128:

⁶ Մաշտոցյան Մատենադարանում պահվող մի ձեռագիր Ավետարանում (1494 թ.) բնակավայրը հիշատակվում է Դեմդեմաշեն: Տե՛ս Յուզակ ձեռագրաց, ձեռ. 4155, Ավետարան, 1494, գրիչ Ազարիա սարկավագ, ծաղկող՝ Ստեփաննոս Առնշեցի, ստացող՝ Արդրեաս քահանա և Ջրհանբախտ խաթուն: Մեկ այլ ձեռագրում էլ հիշատակվում է Դդմաշեն: Տե՛ս Յուզակ ձեռագրաց, ձեռ. 8906, Ավետարան, 988 թ., գրիչ Թումայ:

⁷ Հովհաննես Շահխաթունյանցը նշում է, որ XIX դարի առաջին կեսին Դդմաշենում (Դթմաշեն) բնակվում էին 61 տուն հայեր, ովքեր հին եկեղեցու տեղում կառուցեցին Ս. Թադեոս առաքյալի եկեղեցին: Տե՛ս **Յովհ. Շահխաթունեանց**, էջ 343:

⁸ Մ. Սմբատյանցը հիշատակում է, որ Դդմաշենում XIX դարի 60-ական թթ. կար արդեն 95 տուն և մեկ եկեղեցի, իսկ 70-ական թթ. 123 տուն: Տե՛ս **Սմբատեանց Մ.**, էջ 89:

Դդմաշենը հարուստ է միջնադարյան հուշարձաններով⁹։ յուրօրինակ է գյուղի կենտրոնում գտնվող Ս. Թադեոս եկեղեցին, որն ըստ մասնագետների՝ պատկանում է հայ ճարտարապետության VI դարի գմբեթավոր դահլիճի տիպին։ Ճարտարապետ Մ. Հասարայանը այն համարում է VII դարի կառույց, իսկ Ս. Ղազարյանը՝ IX-X դդ.¹⁰։ Շինության պատերը շարված են դեղնակարմրավուն ֆելզիտից, 1907 թ. վերանորոգման ժամանակ օգտագործել են նաև կարմրավուն բազալտ։ Եկեղեցին ունի երկու մուտք, որոնք զարդարված են եղել երկթեք ճակտոն ունեցող շքամուտքերով (ներկայումս քանդված են)։ Այս տիպի շքամուտքերը և եկեղեցու պսակված լուսամուտների մեծությունը բնորոշ է VII դարի հուշարձաններին (Արուճ, Թալին, Դվին, Ջվարթնոց)։ Եկեղեցու շրջակայքը լի է կանգուն և տեղահանված խաչքարերով, որոնց մեջ կան արձանագրեր։ Ս. Սմբատյանցը, չնկատելով դրանք, նշում է, որ հուշարձանը «ամենևին արձանագրություն չունի»¹¹։ Սակայն մեր կողմից գրառվել է հինգ վիմագիր, որոնցից երեքը հրատարակվել են նախկինում։

1. Տեղահանված խաչքար, XIII-XIV դդ., 1 տող։ (նկ. 1)

ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԵՂԵՇԻՆ

2. Եկեղեցու հարավային պատին, արտաքուստ, խաչաքանդակի վրա կա արձանագրություն, վերջին բառը հավանաբար ԲԱՐԵԽԱԻՍ է, 1 տող.

ՄԲ ԽԱՉՍՍ Է

3. Եկեղեցու հարավային մուտքի բարավորին երկու խաչաքանդակների միջև պահպանվել է մի արձանագրություն, որը նախորդ հրատարակիչի կողմից վերձանվել է հետևյալ կերպ. «Գրիգոր թվին ՋԻԵ. Մբ նշան Շամամին է. Մբ խաչերս բարեխաւս Շամամին եւ իւր տղոյն»¹²։ Մեր կողմից առաջին տառերը՝ ԳԲ վերձանվել են ԳԲՏՅԱԻ , 5 տող, (նկ.2)։

ԳԲ ԹՎ ԶԻԵ (1476 թ.) / ՄԲ ՆՇԱՆ / ՇԱՄԱՄԻՆ Է. /

ՄԲ ԽԱՉՆԵՐՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՇԱՄԱՄԻՆ / ԵԻ ԻԻԲ ՏՂՈՅՆ

Կարծիք կա, որ եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին ևս եղել է մեկ տողանի VII դարին բնորոշ արձանագրություն, որը հողմահարվել է¹³։

⁹ Գյուղի տարածքում հիշատակվում է նաև քարավանատան մասին, որն ավերակ է և ունեցել է արձանագրություն (XII-XIII դդ.)։ Տե՛ս **Հարությունյան Վ.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները։ Գյուղի երկու հատվածները միացել են Հրազդան գետի վրա կառուցված կամրջով։

¹⁰ Միջնադարյան արևելաքրիստոնեական արվեստը, ԵՊՀ, Երևան, 2016, էջ 25։ Տե՛ս նաև Հայկական ճարտարապետության պատմություն (այսուհետ՝ ՀՃՊ), հատոր 2, Երևան, 2002, էջ 288։

¹¹ Տե՛ս **Սմբատեանց Մ.**, էջ 89։

¹² **Սողոմոնյան Ֆ.**, Դդմաշեն, Երևան, 1997, էջ 29։

¹³ ՀՃՊ, հատոր 2, Երևան, 2002, էջ 285։

Զովաբեր համայնքը, ըստ տեղագիր Մ. Սմբատյանցի հիշատակության, XIX դարի 60-ական թթ. ուներ 45 տուն, իսկ 70-ական թթ.՝ 73 տուն¹⁴: Բնակիչները գաղթել են Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանի Մակու գավառից:

Բնակավայրը հարուստ է միջնադարյան հուշարձաններով (մատուռներ¹⁵, խաչքարեր, եկեղեցիներ): Գյուղի եկեղեցին՝ Ս. Ստեփաննոսը (XIX դ.), ուղղանկյուն շինություն է, կառուցվել է անմշակ քարից, շինության պատերի մեջ մի քանի տասնյակի հասնող խաչքարեր ու խաչքարի բեկորներ կան, որոնք թվագրվում են XI-XIV դդ.: Եկեղեցու մուտքը հարավից է, ունի խորան՝ կից ավանդատներով: Եկեղեցին միջնադարում գրչության կենտրոն է եղել¹⁶: Պահպանվել է նաև միջնադարյան քանդակագործությանը բնորոշ եկեղեցու լուսամուտի նրբահյուս պսակը:

4. Եկեղեցու հյուսիսային սյան արևմտյան քիվին ծեփի տակ աղոտ ընթերցվում է ինչ-որ արձանագրության մի մասը.

ԹՎ. –Լ

5. Գյուղամիջում, ձորակի եզրին Թուխ Մանուկ մատուռն է՝ կառուցված անմշակ քարից: Մատուռի բեմին ագուցված քարի վրա կա արձանագրություն, 3 տող:(նկ. 3)

.....ՍԲ ՆՇԱՆԻՄ Զ/ՍԲ ՊԱՏԱՐԱԳ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍ/ՁԻՔ Ի ՔՍ ԱՂԱՉԷՍ :ԹՈՒ: ՈՂԲ (1213):

Համայնքի միջնադարյան և գործող երկու գերեզմանատներում (VII-XX դդ.) կանգուն են տասնյակ խաչքարեր, որոնցից մեկն ունի թերի արձանագրություն:

6. Գյուղից դեպի արևմուտք՝ Խաչեր կոչվող մատուռում, կանգուն են երկու խաչքար XII-XIV դդ., որոնցից մեկն արձանագիր է, 1 տող: (նկ. 4)

ԹՎ: ՈՁ (1231 թ.)

Մեր կողմից ուսումնասիրություններ են կատարվել նաև Ճամբարակի ենթաշրջանի 16 համայնքներում: Այստեղից մեզ հաջողվեց վերծանել երկու տասնյակ վիմագիր, գտնել երկու նորահայտ խաչքար (IX-X դդ.), գրանցել ավելի քան քսան տեղահանված խաչքար: Ստորև ներկայացնում ենք մի քանի վիմագրեր:

Գետիկի հովտում Մարտունի գյուղն է՝ հիմնադրված 1921թ.: Գյուղի վերին հատվածում Շավարշավանքն է (կառուցված Շավարշ Ստեփանի Խաչատրյանի միջոցներով

¹⁴ **Սմբատեանց Մ.** նշվ.աշխ., էջեր 370-371: Ցավոք, տեղագիրը չի խոսում գյուղի հուշարձանների մասին:

¹⁵ Ս. Սանդուխտ մատուռը կառուցվել է 2010 թ., գտնվում է Հրազդանից Զովաբեր տանող ճանապարհի աջ հատվածում՝ բլրակի վրա, ներսում կա մարդաբոյ մի խաչքար, հավանաբար՝ XI-XIV դդ.: Ս. Ստեփանոս եկեղեցու հարևանությամբ գտնվող նորակառույց մատուռում տեղադրված է XI-XIV դդ. երկթեք վերջավորությամբ խաչքարի բեկոր, որի միայն հորիզոնական թևերից վեր հատվածն է պահպանվել: Ս. Գորուսան մատուռը գտնվում է Արամ Կոստանյանի տնամերձում: Խորհրդային տարիներին ծառայել է որպես հացատուն: 2011թ. նախկինում գոյություն ունեցող մատուռի հարևանությամբ կառուցվել է ուխտատեղի, որտեղ պահվում է գաղթի ժամանակ պարսկահայերի բերած խաչքարի մի բեկոր:

¹⁶ ՀՀՇՏԲ, հատոր 2, Երևան, 1988, էջ 315: 2021թ. ապրիլին վթարային վիճակում գտնվող եկեղեցու մի մասը փլուզվել է:

և Ռուբեն Մարտիրոսյանի նախագծով), որի ներսում տեղադրված է X-XI դդ. մարդաբոյ մի խաչքար:

7. Եկեղեցուց ոչ հեռու տեղահանված մի խաչքարի վրա (XIII-XIV դդ.) կա արձանագրություն, 2 տող: (նկ. 5)

ԱԾ ՈՂՈՄԻ ՌԸ/ՍՏԱԿԵՍԻ

Գետիկի հովտում է գտնվում Դպրաբակը. այն ունի կիսավեր եկեղեցի, որից պահպանվել է միայն ավագ խորանը: Եկեղեցու տարածքում կա երկու տապանաքար, մեկն արձանագիր է: (նկ. 6)

8. Հարթ տապանաքար, 4 տող.

ՍՏԵՓԱՆ/ԵԱՆԻՆ Է/ ՏԱՊ ԱՆԸ ԹՎ/ ՌՃՀԶ (1727 թ.)

Գետի ձախ ափին՝ բլրի վրա, պահպանվել են միջնադարյան գերեզմանատունը, կիսավեր եկեղեցին ու մատուռը: Միակ աչքի ընկնող կոթողը օրորոցաձև տապանաքարն է:

9. Տեղահանված օրորոցաձև տապանաքարի մի կողին քառախորան խաչեր են, մյուս կողին՝ խաչված ձեռքերով ձիավոր: Տապանաքարի նախշերը բնորոշ են XVI-XVII դդ. կոթողներին: Վայելչագիր արձանագրությունը խիստ եղծված է, հավանաբար 3 տող է վիմագիրը: (նկ. 7)

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐ ԳՄԻ ...ԿԻՆ

Ձորավանք համայնքի հարակից բլրի վրա կանգուն է կիսաքանդ, անմշակ քարից կառուցված մի եկեղեցի: Ենթադրում ենք, որ կառույցը միջնադարյան հիմքեր ունի և նորոգվել է XVII-XVIII դդ.: Նորոգության ընթացքում օգտագործվել են ոչ միայն եկեղեցու հին քարերը, այլև XIII-XIV դդ. տասնյակ գեղաքանդակ խաչքարերը: Հայտնի է, որ կառուցող վարպետները երբեմն սրբատաշ քարերը կտրել և հարմարեցրել են եկեղեցու կառույցին, սակայն խաչքարի երեսը տեսանելի են թողել: Ձորավանքում պատերի մեջ տեղադրվել են տասնյակ խաչքարեր (XIII-XIV դդ.): Նկատելի է մեկ այլ երևույթ նս. Խաչքարը երեսով ձեփել են եկեղեցու արտաքին պատին՝ հակառակ անմշակ մասը դարձնելով տեսանելի: Հետագայում խաչքարը տեղից պոկվել է, իսկ պատին մնացել են ոչ միայն խաչքարի նախշերի հետքերը, այլև վիմագրի հինգ տողերը: Ցավոք, այն դժվար ընթացքներին է, սակայն առաջին տողում կարդում ենք ...ՍԲ...ՆԻԻԾ, իսկ հինգերորդում նկատելի էՂԵՂԶ... տառաշարքը:

Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքներից հողաշինական, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ անտառի զանազան ծառախիտ հատվածներից հայտնաբերվել են տասնյակ նորահայտ խաչքարեր, որոնք միայն վերջին տարիներին են ընդգրկվել մարզի հուշարձանների ցանկում: Ներկայացնենք մի քանիսը:

Ճամբարակի տարածաշրջանի Աղբերք գյուղը գտնվում է Սևանա լճի արևելյան ափին, վերջին տարիներին մերձակա հանդերից գյուղ է տեղափոխվել XIII-XIV դդ. մի խաչքար: Դպրաբակից Բարեպատ տանող ճանապարհին նս կանգուն են երկու խաչքար (XIII-XIV դդ.): Անտառամեջ համայնքի տարբեր հատվածներում հայտնաբերվել է մեկ տասնյակ խաչքար: Նույնքան էլ կան հազարամյակների պատմություն ունեցող Կա-

լավան գյուղի հարակից տարածքներում՝ թվագրված IX-XIV դդ.: Սևանի տարածաշրջանի Գազարին համայնքը Սևան քաղաքի թաղամասերից է: Այստեղ պահպանվել են XI-XIV դդ. երկու նախազարդ խաչքար: Հուշարձանների ցանկում միայն վերջերս են ավելացվել մեր կողմից հայտնաբերված X-XI դդ. երկու նորահայտ խաչքար՝ Ճապկուտ-Ջիվըխլու¹⁷ լքված գյուղի տարածքից:

Եզրահանգում. Փաստորեն, ուսումնասիրված նյութի համաձայն, Ճամբարակի ենթաշրջանի բնակավայրերը գրեթե միաժամանակ ծաղկում են ապրել միջնադարում: Դրանց մասին են վկայում IX-XIV դդ. պարզունակ և գեղաքանդակ հորինվածքով խաչքարերը: Հետագայում բնակավայրերի մի մասը գոյությունը պահպանել է ուշ միջնադարում և նոր ժամանակներում: XVIII դարից մինչև XX դդ. 80-ական թթ. այս բնակավայրերի հուշարձանները, ունենալով այլադավան բնակչություն, ենթարկվել են վանդալիզմի, որի արդյունքում ջնջվել է ոչ միայն բնակավայրերի հայկական պատմությունը, այլև մի շարք կոթողների հետքերը: Համոզված ենք, որ մատենագիտական և պատմական աղբյուրները հնարավորություն կտան բացահայտելու նորահայտ փաստեր կոթողների վերաբերյալ և վիճաբեր:

ЭПИГРАФИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ В ГЕГАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ

Адамян С.

Ключевые слова: *Гегаркуник, эпиграфия, раскопки, хачкар, средневековый, средневековый, Ддмашен, памятник.*

Гегаркуникский регион РА богат историческими и архитектурными памятниками, количество которых увеличивается в результате археологических раскопок и строительных работ. В результате наших эпиграфических исследований, проведенных за последние годы, было записано и скопировано около 100 эпиграфий. В данной статье мы ссылаемся на расшифровки десятков эпиграфий, найденных в поселениях Ддмашен, Зовабер, Мартуни, Ддрабак, Дзорованк.

В окрестностях общин Антарамедж, Барепат, Гагарин и Цапкут обнаружено много новых хачкаров. Согласно исследованному материалу, эти поселения почти одновременно процветали в средние века. Позже часть поселений сохранилась в конце средневековья, а с XVIII в. до 80-ых годов XX в. имея нехристианское население, они подверглись актам вандализма, в результате чего было утрачено не только армянское наследие, но и следы ряда памятников.

¹⁷ 1897 թ. գյուղում բնակվել է 80, իսկ 1979 թ.՝ 360 աղրբեջանցի: 1989 թվից գյուղը լքված է:

EPIGRAPH STUDIES IN GEGHARKUNIK REGION

Adamyan S.

Key words: *Gegharkunik, historical, excavations, archeological, khachkar, medieval, Ddmashen, Armenian, article, epigraph.*

The Gegharkunik region of the Republic of Armenia is rich in historical and architectural monuments, the number of which is increasing as a result of archeological excavations and construction works. As a result of our epigraphic studies conducted in recent years, about 100 epigraphs have been recorded and copied. In this article we cover the decipherments of dozens of epigraphs found in Ddmashen, Zovaber, Martuni, Dprabak, Dzoravank settlements.

There are also many new cross-stones found in the vicinity of Antaramej, Barepat, Gagarin and Tsapkut communities.

According to the studied material, these settlements flourished almost simultaneously in the Middle Ages. Later, some of the settlements survived in late Middle Ages, and from the XVIII century to the 80s of XX century having a non-religious population, they were subject to vandalism, as a result of which it was erased only the Armenian of the settlements, but also the traces of a number of monuments.


Լուսանկարներ



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7

Գրականություն

1. Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1974:
2. Լալայեան Ե., Ազգագրական հանդէս, 1908 թ., գիրք 18:
3. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 2, Երևան, 1988:
4. Հայկական ճարտարապետության պատմություն, հատոր 2, Երևան, 2002:
5. Միջնադարյան արևելաքրիստոնեական արվեստը, ԵՂ հրատ., Երևան, 2016:
6. Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատայ, հատոր 1, Էջմիածին, 1842:
7. Մմբատց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, Վաղարշապատ, 1895:
8. Սողոմոնյան Ֆ., Դրմաշեն, Երևան, 1997, էջ 29:
9. Փիլիպոսյան Ա., Մկրտչյան Ռ., Գեղիովիտի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանը, Երևան, 2011:
10. Օրբելյան Մտ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

Ընդունվել է՝ 28. 05. 2021

Գրախոսվել է՝ 03. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Սուսաննա ԱՂԱՄՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, E-mail: susannaiae@mail.ru

ԼԱԳԱՇԻ ՏԻՐԱԿԱԼ ԷԱՆՆԱՏՈՒՄԸ ԵՎ ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿԻՐԸ¹

Ռոբերտ Ղազարյան, Ռուսյան Ցականյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Շուսեր, Լագաշ, Էաննատում, Էլամ, Սուբուր/Սուբարտու, Հայկական լեռնաշխարհ, Միջագետք:

Ինչպես հայտնի է, Վաղնջական Հայաստանի և նրա հարակից տարածքների վերաբերյալ, թեև սուղ, սակայն միաժամանակ բավականին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում շումերական սեպագիր արձանագրությունները: Դրանց թվին են պատկանում նաև շումերական Լագաշ քաղաքպետության տիրակալ Էաննատումի երեք հաղորդումները, որտեղ, ի թիվս այլ երկրների, հիշատակվում է նաև Սուբուր/Սուբարտու երկիրը: Սույն հոդվածը նվիրված է այդ արձանագրության հաղորդումների քննությանը:

Նախաբան. Այսօրվա աշխարհաքաղաքական միտումներն ու պատմության կեղծարարական միտումների շարունակականությունը հրամայական են դարձնում Հայաստանի, Հայկական լեռնաշխարհի ու նրա հարակից տարածքների վաղպետական կազմավորումների պատմության լուսաբանումը: Վերջիններիս թվին է պատկանում նաև շումերական արձանագրությունների մեջ հիշատակված Սուբուր/Սուբարտու երկրի ուսումնասիրությունը:

Սուբուր/Սուբարտու երկիրը շումերական արձանագրություններում հիշատակված է *ՏՍՍՍՍՍՍՍ*, *ՍՍ.ԲԻՐ⁴* (*ՍՍ⁶.ԲԻՐ⁴*)*ՍՍ*, *ՍՍ*, *ՍՍ.ԷԴԵՆ*, *ՍՍ.ԲԱԼ.ԲԻՐ⁴*, *ՍՍ.ԲԱՍՍԻՐ*, *ՍՍՍԱՐ*, աքադերեն *Տ/ՍՍՍԱՐՏՍ(Մ)*² ձևերով և այլն:

¹ Հոդվածը հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի «Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի և Հին Հունաստանի միջև» թեմատիկ ծրագրի (ծածկագիր՝ 20TTSH-047) շրջանակներում:

² *Ungnad A*, Subartu, Beiträge zur Kulturgeschichte und Völkerkunde Vorderasiens, Berlin/Leipzig -1936, pp. 24-30; *Gelb I.* Hurrians and Subarians // The Oriental Institute of the University of Chicago: Studies

Շումերում գերիշխանության է հասնում Ուրի I հարստությունը, որից հետո այն անցնում է Լագաշին³, որտեղ իշխանության էր եկել Ուր-Նանշեն⁴: Սկսվում է շումերական Վադդինաստիական IIIb շրջանը (մ.թ.ա. 2450-2350 թթ.⁵): Այս ժամանակաշրջանում շումերական քաղաք-պետությունների միջև գերիշխանության համար մղվող պայքարը հասնում է իր գագաթնակետին, որը Մ. Լիվերանիի բնութագրմամբ՝ կարելի է անվանել «նախակայսերական» շրջան⁶:

Լագաշի տիրակալներ Ուր-Նանշեի, որդի Ա-կուրգալի, ապա և վերջինիս որդու՝ Էաննատումի («É-AN-na-túm ÈNSI-LAGAŠ (NU₁₁.BUR.LA).^{K1} DUMU-A-kur-gal DUMU-Ur-^dNanše» - «Էաննատում, Լագաշի էնսի⁷, որդին Ա-կուրգալի, որդին Ուր-Նանշեի⁸») կառավարման ժամանակահատվածում՝ Լագաշը գերիշխանության պայքարում կարողացավ հաղթանակներ տանել Ուրուկի, Ուրի, Ումմայի, Քիշի, Ակշակի և շումերական այլ քաղաք-պետությունների նկատմամբ և իր գերիշխանությունը հաստատել ամբողջ Շումերում⁹:

Գերիշխանության պայքարում, Էաննատումի համար առիթ հանդիսացավ Գուեդենա բարեբեր հարթավայրի պատկանելության խնդիրը: Իր ժամանակին Քիշի տիրակալ և շումերական գերիշխան Մեսիլիման այն բաժանել էր Լագաշի և Ումմայի միջև: Ումմայի տիրակալ Գիշան օգնություն է խնդրում Քիշից: Վճռական ու արյունալի ճակատամարտում Էաննատումին հաջողվում է ջախջախել դաշնակիցներին: Այնուհետև նա նվաճում է Ուրը, Ուրուկը և շումերական այլ քաղաք-պետություններ, հաջող ռազմական գործողություններ ձեռնարկում Էլամի, Ակշակի, Մարիի ու Սուբարտուի դեմ¹⁰:

Էաննատումն իր երեք արձանագրություններում հիշատակում է նաև դեպի Հայկական լեռնաշխարհի մատույցներ կատարած արշավանքի ու Սուբուր/Սուբարտու

in Ancient Oriental Civilizations, No. 22, 1944, p. 28; **Speiser E. A.** Hurrians and Subarians // «Journal of the American Oriental Society», Vol. 68, № 1, -1948. p. 11; **O'Callaghan R. T.** Aram Naharaim: A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C. // *Analecta Orientalia* 26, Pontificium Institutum Biblicum. Roma. -1948. pp. 38, 42; **Архипов И. С.** Топоним «Субир/ Субарту» в Месопотамии III- первой половины II тыс. до н.э. // «Вестник древней истории». № 4. -2002. сс. 78-80; **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ սեպագիր գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջեր 48-55:

³ **Մովսիսյան Ա.**, Միջագետքը Ք.ա. III հազարամյակում // Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հ. 1: Հին շրջան, պատ. խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 2013, էջ 36:

⁴ **Kuhrt A.** նշվ. աշխ., էջեր 33-63; **Gadd C. J.** The Cities of Babylonia, The Cambridge Ancient History, vol. 1/2, 3rd edition. -1971. p. 116f.

⁵ **Liverani M.**, նշվ. աշխ., էջ 93:

⁶ Նույն տեղում, էջ 112:

⁷ Տիտղոսի վերաբերյալ մանրամասը տե՛ս **Ցակալյան Ռ.**, Արքայական տիտղոսաշարերն Աքքադում // «Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիր», Պրակ Ա, 2019, էջեր 116-118:

⁸ **Frayne D. R.** Presargonic Period (2700-2350 BC), Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods 1 (այսուհետև՝ **RIME 1**). Toronto-Buffa-London. -1998. E 1. 9. 3. 1; E1.9.3.4.

⁹ **Gadd C. J.**, նշվ. աշխ., էջեր 117-118:

¹⁰ **RIME 1**, E1.9.3.1.

երկրի մասին¹¹: Սուբուր/Սուբարտու երկրի դերակատարությունը համաշուրջաշխարհային գերիշխանության համար պայքարում գնահատելու նպատակով կքննենք Էաննատումի համապատասխան արձանագրությունները:

Առաջին արձանագրությունը Էաննատումի հայտնի «*Անգղերի կոթողն*» է, որտեղ նա նշում է, որ նվաճել է բոլոր երկրները Էլամից մինչև Սուբուր¹²

«Rev. col. VI	Rev. col. VII,
10. NIM.KI ŠUBUR. ^[K1]	1. [...]
11. kur GIŠ. NIG.GA	2. G[IN.ŠÈ bi-sè]
12. [GIN.ŠÈ bi-sè]	3. Su-sín. ^{K1} -na
(Lacuna)	4. GIN.ŠÈ bi-sè
	5. šu-nir-URUxA. ^{K1} -ka
	6. énsi-bi
	7. SAG mu-gub-ba»

«*Ջախջախեցի փայտանյութի ու գանձերի երկիր Էլամն ու Սուբուրը, ջախջախեցի GN³, ջախջախեցի Սուգան (Էլամի մայրաքաղաքը – հեդ.), [ջախջախեցի] Արավայի¹⁴ տիրակալին, որը զինանշանի (քաղաքի) հետ կանգնած էր առաջապահ դիրքերում ...*»¹⁵:

Երկրորդ արձանագրության մեջ նշված է, որ նա հետ է մղել դեպի իրենց երկիրը հետ է շարտել Էլամցիներին ու Ակշակի տիրակալին՝

«Col. VI
12. É-an-na-túm
13. ÉNSI-
14. LAGAŠ. ^{K1} -ke ₄
15. kur-gú-gar-gar-
16. ^d Nin-gír-su!-ka-ke ₄
17. NIM ŠUBUR. ^{K1}
18. URUxA. ^{K1}
19. A-suḫur-ta
20. GIN.ŠÈ bi-sè
21. KIŠ. ^{K1} AKŠAK. ^{K1}
22. Ma-ri!. ^{K1}
23. An-ta-sur-ra- ...»

¹¹ Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 32:

¹² Հետաքրքիրն այն է, որ «Մինչսարգոնյան ժամանակահատվածի» արձանագրությունների իր հայտնի դիվանում Դ. Ռ. Ֆռայնը «ŠUBUR.^{K1}»-ը անգլերեն թարգմանում է Subartu՝ RIME 1, E1.9.3.1., p. 139.

¹³ Արձանագրության մեջ տեղանունը վնասված է և հնարավոր չէ վերականգնել:

¹⁴ Արձանագրության մեջ նշված է «URUxA.^{K1}-ka»:Arawa-Արավա վերականգնումը՝ ըստ Դ. Ռ. Ֆռայնի:

¹⁵ RIME 1, E1.9.3.1., p. 139.

«*Լագաշի տիրակալ Էաննատումը, ով ենթարկեց օտար երկրները Նինգիրսու*¹⁶ *աստծու համար, Ասուխուրում ջախջախեց Էլամին, Սուբարտունին և Արավային: (Եվ) Անտատուրայի մոտ ջախջախեց Քիշին, Ակշակին (և) Մարիին*»¹⁷:

Եվ երրորդ արձանագրությունը՝

«Col. I

1. [d]Nin-gír-su-ra]
2. [É-an-na-tú]m
3. [ĒN]SI (PA.TE).SI-
4. [LAG]AŠ^[KI] ([NU₁₁.BUR].LA).^[KI]-ke₄
5. [kur-gú-gar]-gar-

Col. II

1. [d]Nin-[gí]r-sú-ke₄
2. [NIM] ŠUBUR
3. [g]ú mu-na-gar»

«*Նինգիրսուի պատվին, Լագաշի Էնսի Էաննատումը, ով Նինգիրսուի համար նվաճեց բոլոր օտար երկրները: Էլամը և Սուբարտուն ենթարկեց իրեն*»¹⁸:

Մի վարկածի համաձայն՝ Էաննատումի արձանագրության մեջ «ŠUBUR» բառի փոխարեն առաջարկվում է ընթերցել նախադասության համատեքստի համար անհասկանալի «DUN, NIM.DUN», որը բնականաբար փոխում է ամբողջ իրադարձությունների շղթան¹⁹: Սակայն, ելնելով շումերական արձանագրություններում «ŠUBUR» բառի այլ հիշատակություններից և մասնագիտական նոր գրականության մեջ նրա կիրառությունից, կարելի է ամենայն հավանականությամբ ընդունել, որ մենք գործ ունենք հենց Սուբուր/Սուբարտու երկրի հիշատակության հետ: Եվ դեռ ավելին, որ Լագաշի տիրակալ Էաննատումը կատարել է արշավանք դեպի Հայկական լեռնաշխարհի մատույցները՝ դեպի Սուբուր/Սուբարտու երկիր:

Ի մի բերելով իրադարձությունների ամբողջ շղթան՝ ստանում ենք հետևյալ պատկերը՝ Էաննատումը Ասուխուրայի մոտ, որն, ամենայն հավանականությամբ, մոտ է եղել Լագաշին, ջախջախել է Էլամին և նրա դաշնակիցներին: Այստեղ ակնհայտ է, որ նախահարձակ կողմը եղել են Էլամցիներն ու նրանց դաշնակիցները: Ելնելով արձանագրությունների համատեքստից՝ կարելի է եզրակացնել, որ Ասուխուրայի մոտ իր հակառակորդներին ջախջախելուց հետո Էաննատումն անցնում է հակահարձակման և պատժում էլամցիներին ու նրա դաշնակիցներին, որոնց թվում էր նաև Սուբուր/Սուբարտու երկիրը:

Եզրահանգում. Այսպիսով, շումերական Լագաշ քաղաք-պետության արքա Էաննատումը, ռազմական հաջողությունների հասնելով տարբեր ուղղություններով, ռազմարշավ է ձեռնարկել նաև դեպի հյուսիս՝ Սուբուր/Սուբարտու երկրի դեմ: Նրա թողած

¹⁶ Նինգիրսուն շումերական դիցարանի ռազմի աստվածներից էր և Լագաշի ամենապաշտելի աստվածը՝ Frayne D. R., Stuckey J. H., A Handbook of Gods and Goddesses of the Ancient Near East: Three Thousand Deities of Anatolia, Syria, Israel, Sumer, Babylonia, Assyria, and Elam, University Park, Pennsylvania: Eisenbrauns. -2021. p. 251f.

¹⁷ RIME 1, E1.9.3.5. p. 148.

¹⁸ RIME 1, E1.9.3.7a., p. 153.

¹⁹ Մանրամասն տե՛ս Աрхипов И. С., նշվ. աշխ., էջեր 79-80՝ հղված գրականությամբ հանդերձ:

արձանագրությունները գալիս են լրացնելու Հայկական լեռնաշխարհի երկրների վերաբերյալ մ.թ.ա. III հազարամյակի միջագետքյան աղբյուրների շարքը, որոնք անգնահատելի են տարածաշրջանի պատմության հարցերը լուսաբանելիս: Չնայած աղբյուրներում նշվում է, որ երկիրը ենթարկվել է Էաննատումին, սակայն քիչ հավանական է, որ այն մտել է նրա տերության կազմի մեջ: Ավելի հավանական է կարծել, թե դեպի հյուսիս հաջող արշավանքից հետո շումերները հետ են քաշվել, և նրանց իրական գերիշխանությունը հյուսիսային Միջագետքից անդին չի տարածվել (հյուսիսում հավանաբար հասել է մինչև Սարիի (Ժամանակակից Թեյլ-Հարիրի) տարածք):

ПРАВИТЕЛЬ ЛАГАША ЭАННАТУМ И СТРАНА СУБУР

Казарян Р. П., Цаканян Р. А.

Ключевые слова: *Шумер, Лагаш, Эаннатум, Элам, Субур/Субарту, Армянское нагорье, Месопотамия.*

Сегодняшние геополитические тенденции и продолжение тенденции фальсифицировать историю создают необходимость освещать историю раннегосударственных образований Армянского нагорья и прилегающих территорий. Среди последних - исследование истории страны Субур/Субарту, упомянутой в месопотамских письменных памятниках. Как известно, о Древней Армении и сопредельных территориях весьма скудную, но в то же время весьма ценную информацию дают также шумерские клинописные надписи. Среди них - сообщения Эаннатума (во времена шумерского раннединастического периода IIIb (2450-2350 гг. до н.э.)), правителя города-государства Лагаша. Эаннатум смог установить свою власть над всем Шумером, а также начать успешные военные операции против Элама, Акшака и Мари. В своих трех надписях Эаннатум также упоминает поход на север - в страну Субур/Субарту.

THE RULER OF LAGASH EANNATUM AND THE LAND OF SUBUR

Ghazaryan R. P., Tsakanyan R. A.

Key words: *Sumer, Lagash, Eannatum, Elam, Subur/Subartu, Armenian Highland, Mesopotamia.*

Today's geopolitical trends and the continuation of the tendency of falsifying history make it necessary to cover the history of the early state formations of the Armenian Highland and adjacent territories. Among the latter is the country of Subur/Subartu, mentioned in Mesopotamian written records, the study of the history of which is of great importance. As we know, very scarce but at the same time, very valuable information about Ancient Armenia and adjacent territories is provided by Sumerian cuneiform inscriptions as well. Among them are the inscriptions of Eannatum (during the Sumerian early Dynastic period IIIb (2450-2350 BC)), the ruler of the city-state of Lagash. Eannatum was able to establish his rule over all of Sumer, as well as launch successful military operations against Elam, Akshak and Mari. In his three inscriptions, Eannatum also mentions campaigns to the north, to the country of Subur/Subartu.

Գրականություն

1. Մովսիսյան Ա., Միջագետքը Ք.ա. III հազարամյակում // Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հ. 1: Հին շրջան, պատ. խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 2013, էջեր 29-53:
2. Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ սեպագիր գրավոր աղբյուրների), Երևան, 2005:
3. Ցակալյան Ռ., Արքայական տիտղոսաշարերն Արքայում//Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիր, Պրակ Ա, 2019, էջեր 115-125:
4. Архипов И. С. Топоним «Субир/Субарту» в Месопотамии III- первой половины II тыс. до н.э.// «Вестник древней истории». № 4. -2002. сс. 76-97.
5. Edzard D. O., Geschichte Mesopotamiens Von den Sumerern bis zu Alexander dem Großen, München, -2004.
6. Gadd C. J., The Cities of Babylonia // «The Cambridge Ancient History». vol. 1/2, 3rd edition. -1971, pp. 93-143.
7. Gelb I. J. Hurrians and Subarians // The Oriental Institute of the University of Chicago: Studies in Ancient Oriental Civilizations. No. 22. -1944.
8. Frayne D. R., Stuckey J. H. A Handbook of Gods and Goddesses of the Ancient Near East: Three Thousand Deities of Anatolia, Syria, Israel, Sumer, Babylonia, Assyria, and Elam, University Park, Pennsylvania: Eisenbrauns. -2021.
9. Frayne D. R. Presargonic Period (2700–2350 BC) // Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods 1. Toronto-Buffa-London, -1998.
10. Kuhrt A. The Ancient Near East c. 3000-330 BC. Vol. I, London-New York. -1995.
11. Liverani M. The Ancient Near East: History // Society and Economy. London-New York. -2014.
12. O'Callaghan R. T. Aram Naharaim: A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C., Analecta Orientalia 26, Pontificium Institutum Biblicum, Roma, -1948.
13. Speiser E. A. Hurrians and Subarians // «Journal of the American Oriental Society», Vol. 68. № 1. -1948. pp. 1-13.
14. Ungnad A. Subartu, Beiträge zur Kulturgeschichte und Völkerkunde Vorderasiens, Berlin/Leipzig, -1936.

Ընդունվել է՝ 05. 07. 2021

Գրախոսվել է՝ 03. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Ռոբերտ ՂԱԶԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ rghazaryan@orient.sci.am

Ռուսլան ՑԱԿԱԼՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, գիտքարտուղար, էլ. հասցե՝ rooslantsakanyan@yahoo.com

ՄԱՄՐՎԱՆԻ ԳԱՎԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆ
ԸՍՏ XVI ԴԱՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՅՈՒՑԱԿՆԵՐԻ

Արկադի Ակոպով

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Տայք, հայեր, մահմեդականներ, հարկացուցակներ, Օսմանյան կայսրություն, Օլթի, Ախա:*

Ուսումնասիրությունը նվիրված է Օսմանյան կայսրության Էրզրումի նահանգի կազմում ընդգրկված, Մեծ Հայքի Տայք աշխարհի տարածքում ձևավորված Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերին: XVI դարում գավառը բաժանված էր երկու գյուղախմբերի՝ Մամրվանի և Ախայի, որոնցում հաշվվում էր ավելի քան 9 տասնյակ բնակավայր: Այն մեծաամսամբ բնակեցված էր հայերով, սակայն առկա էին նաև այլ ազգերի ներկայացուցիչներ:

Նախաբան. XVI դարի սկզբին Հայաստանին տիրելու համար կատաղի մրցակցություն սկսվեց Օսմանյան կայսրության և Մեֆյան Պարսկաստանի միջև: 1555թ. Ամասիայի հաշտությամբ ընդմիջված պատերազմը վերսկսվում է 1578թ. : 1590թ. պարսից շահ Աբասը կնքում է պարսիկների համար ծանր մի պայմանագիր, որով ճանաչում է թուրքերի իրավունքները Հայաստանի, Վրաստանի և Ատրպատականի մի մասի վրա՝ Թավրիզ կենտրոնով:

Արևմտյան Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատելու հետ մեկտեղ՝ թուրքերը ձեռնամուխ են լինում տարածաշրջանի յուրացմանն ու օսմանյան վարչամիավորների ստեղծմանը: Այդպիսի վարչամիավորներից մեկն էր Էրզրումի նահանգի (Էյալեթ) կազմի մեջ ընդգրկված, Մեծ Հայքի Տայք նահանգի կենտրոնական հատվածում գտնվող Մամրվանի (Նարման) գավառը:

Մամրվանի գավառը զբաղեցնում էր պատմական Տայքի Բողխա գավառի կենտրոնական և հարավային շրջանները: Հարավից այն սահմանակից էր Էրզրումի նահանգի

Վերին Բասենի գավառին, արևմուտքից՝ Թուրքումի գավառին, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Ախալցխայի նահանգի Օլթիի գավառին: Որպես վարչական միավոր՝ այն ձևավորվել է XVI դ. երկրորդ կեսին՝ ի սկզբանե լինելով Էրզրումի էյալեթի կազմում¹: Թուրք հեղինակ Ֆերիդուն բեյը Մամրվանը հիշատակում է Էրզրումի նահանգի 15 գավառների շարքում²: XVII դ. վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած վարչական փոփոխությունների հետևանքով Մամրվանի գավառը հայտնվում է Ախալցխայի նահանգի մեջ, որի կազմում մնում է մինչև 1829 թ.:

Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերն ըստ XVI դարի օսմանյան հարկացուցակների

Մամրվանի գավառն ընկած էր Օլթի գետի վերին հոսանքի շրջանում՝ Օլթի գետի ակունքները ներառյալ և Միվրի-չայի ավազանում՝ ընդգրկելով նաև սրանց մեծ և փոքր վտակները: Օլթիի գավառի նկատմամբ այն գերիշխող դիրք էր զբաղեցնում շնորհիվ իր բարձրության: Օլթիից հարավ դադարում են ցածր բլուրները, և սկսվում են լեռները: Թուրքական տիրապետության հաստատման շրջանում Մամրվանի գավառը բաժանվում էր երկու գյուղախմբի՝ Մամրվանի և Ախայի, որոնցից առաջինն զբաղեցնում էր գավառի հյուսիսային և հյուսիս արևելյան, երկրորդը՝ հարավային և հարավ արևմտյան մասը:

Գավառի վարչական կենտրոնը Մամրվան բնակավայրն էր, որը գտնվում էր վարչամիավորի հյուսիսում՝ Օլթիի գավառի հարևանությամբ: Ինչպես գավառի կենտրոնի, այնպես էլ ամբողջ գավառի ու նրա բնակչության վերաբերյալ մանրամասներ է հաղորդում Հակոբ Կարնեցին. «Եվ անդի շրջեալ ի կողմն յարևելից է գաւառ մի մեծ, և բազում գիւղք. և բնակիչք երկրին Հայք և Վրացիք... և ունի բերդ մի բարձր և անառիկ, որ այժմ Մամրվան կոչեն, և ի մէջ բերդին վանք մի փառաւոր յանուն Սրբոյն Գեորգայ է կառուցեալ, որ այժմ Ուլթթ ասեն. և ինքն է պարոնանիստ և հացալից երկիր... և է ի մէջ մայրի անտառացն, որ փիճի ասեն և Ազատ մայրի կոչեն, որ ոչ սկիզբն տեսեալ ոք կայ և ոչ ծայրն հասեալ... և երկիրս այս լի է պաճարեղինօք և ամենայն բարութիւն և ունի սինօռ մինչև Օխտիք քաղաք, և միւս կողմն՝ մինչև Բասեն»³: Իր հերթին Էվլիա Չելեբին այսպես է նկարագրում Մամրվանի բերդը. «Էրզրումի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոն է: Բեյի խասը 203.000 ակչե է... Ունի բերդակալ, ազաբ-աղասի և բերդապահ զինվորներ: Բերդը ամրակուռ և քառակուսի ձևով է կառուցված: Դեպի հարավ նայող դարպասներ ունի»⁴:

Ինչպես պատմական Տայքի մյուս գավառների, այնպես էլ Մամրվանի գավառի պարագայում ժողովրդագրական պատկերի վերհանման գործում մեզ օգնության են

¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Մաֆրասոյանը (այսուհետև՝ Թուրքական աղբյուրները), հ. Բ, Երևան, 1964, էջ 219:

² Թուրքական աղբյուրները, հ. Ա, Երևան, 1961, էջ 219:

³ Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 18:

⁴ Թուրքական աղբյուրները, հ. Գ, Էվլիա Չելեբի, Երևան, 1967, էջ 114:

Արկարդի Ակոսով

				Մկրտիչ, Գաբրիել Փիրուլի, Կարաբեքիր Փիրուլի	
5	Օլորնուս	13000	33	Թաղբիքար Մանվելի, նրա եղբայրներ Զուլփիկար և Ամիր Նիշադ, Խանդուր Գիրքորի, Միրբել Կարապետի, Մարտի- րոս Նուրհադի, նրա եղբայր Սուլթան, Զանդուլի Գիրքորի, նրա որդի Խանդուր, Զան Վերդի Գիրքոր, Աթաբեկ Մամուլի, Սուլթան Փիրունի, Տիրատուր Փիրունի, Ղազար Փիրունի, Գիրքոր Կուլթուսի, Դուլբեկ Փիրունի	216
6	Արսոսս	10000	34	Գաբրիել Գորգի, նրա եղբայրներ Ռուբեն և Ամբրոս, Մութեսելիմ Բալիքի, նրա եղբայր Հակոբ, Չոբան, նրա որդիներ Խաչատուր և Լուսինք	217
7	Սուդկանիք	4500	7	Բուդաք Մկրտչի, Մկրտիչ Շահազիզի, Գիրքոր Բեժանի, նրա եղբայր Կիբադ, Բահադուր Կիրակոսի, Ջաքար Մկրտչի, Սադակ Շահազիզի	217
8	Աչքալուր	4000	6	Ավագ Թաթևուսի, Ջանազիզ Գիրքորի, նրա եղբայր Ալիբարի, Բանդուլ Վարագ Գիրքորի	218
9	Վերին Տաճարիկ	6000	7	-	218
10	Խոջա Ալի Փիրան	4000	4	-	219
11	Վարդանուտ	10000	7	Ալի Բադ Գելբադի, նրա եղբայրներ Գաբրիել և Եղիշե, Փարեմուզ Գեորգի, նրա եղբայրներ Ջաքար և Բայանդուր	219
12	Սամաղար	13000	34	Մուրադ Սարգսի, նրա եղբայր Մախո- րոբել, Դովլաթ Առաքելի, նրա եղբայր Դաբուր, Սուլթան Շմավոնի, նրա որդի Թոռնիկ, Փիրսուլթան Սարգսի, նրա եղբայր Խաչադ, Ջաքար, նրա որդի Կուրբեք, Բաագրատ Բուլմուշի, Վարթազիզ Սերոսի	220
13	Գոմփոր	10000	28	Սարգիս Զակուլի, Վաբերբեր Կարբիլի, Փարսադան Փարեմուզի, նրա որդիներ Ամիրզադե և Խաչիկ, Կարապետ Դաբեդիլիքի, նրա եղբայր Մախարոբել, Շահեն Խաչիկի	220
14	Փետկիր	5000	22	Դադուր Առաքելի, Կիրակոս Արսլանի, նրա որդիներ Կուբադ և Բալալում, Թորոս Գաբրիելի, Վարդան Բուլդանի /քրիստ./, նրա եղբայրը Մոսիկ /մուս./	221
15	Կոճղանիք	2000	2	Շեհրիբար Թորոսի	222

Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերն ըստ XVI դարի օտմանյան հարկացուցակների

16	Գուրբանիք	6000	8	Ալիլ Գաբրիելի, նրա եղբայր Փիրոուլի	222
17	Ոսկիձոր	5000	5	Մինաս Իվանի, նրա եղբայր Դուրլիք, նրա որդի, Քուրբան Գիրքորի, Փարսադան Սուրադի, Փիրազիզ Փիրուլի	222
18	Կուկարնիք	6000	10	Դավիթ Փիրումի, Եղիշե Իբրահիմի,	223
19	Վաչեի	6000	-	-	223
20	Բիլիթգիրթ	12000	18	Օվան Մանուկի, նրա եղբայր Եղիշե, Հակոբ Փարեմուզի, նրա եղբայր Օվան, Օվան Դավիթի	224
21	Սորիկ	4000	3	Արզենդի Դավթի, նրա եղբայր Գուրզենդի	224
Ախայի գյուղախումբ					
1	Ախա	21000	73	Դադուր Ամիարայի, Ամիարա Կիրակոսի, նրա եղբայր Քոռքմազ, Անդրեաս Քեշիշի, նրա որդի Գաբրիել, Մանուկ Մաքսիմեյի, Ավանես Ազիզի, Ղազար Փիրումի, Համգա Սուլեյմանի, նրա որդի Ամիրսարգիս, Կիրակոս Սամվելի, Ադուլթե Ավանեսի, Մարտիրոս Օվլեթի, Խաչադլաթ Բարբարի, Կիրակոս Չոբանի, Աթաբեկ Օվլեթի, Գուրթուլ Ավանեսի, Յանիկ Մխիթարի, Մարգիս Օնքուդնիկի, Անդրանիկ Սադի, նրա եղբայր Գաբրիել, Բուդաք Ավազի, Դանիել Մանդիլի, Գիրգոր Աթաբեկի, Ազատ Թեոդորի, Շիրակ Փիրումի, Բայանդուր Բարամի, Անդրեաս Իսմայելի, Քիրաջ Խաչազարի, Փիրում Ավանեսի, Կուրլեթ Դանիելի, Գրիգոր Կիրակոսի, Ամիրազիզ Շիրակի, Խաչատուր Մելիքբեկի	227
2	Խանիրվերք	10000	31	Հակոբ Շահբեկի, նրա որդի Խաչադար, Սմբատ Գիրգորի, նրա եղբայր Իստիար, Նազար Փիրվելի, նրա եղբայր Ջուլփիկար, Սմբատ Գիրիզի, Խվաջե Մարտիրոսի, նրա որդի Աբել, Օսքիվան Փիրումի, նրա եղբայր Միքել	229
3	Թողոր	5000	3	Սամվել Փիրումի	229
4	Գեղիկ	10000	19	Ջուլփիկար Սարգսի, Բաբենդրեկ Սուրադի, նրա որդի Համբիկ, Բուդաք Խաչիկի, նրա որդի Մեհերանի, Ավանիս Ալեքսանի, նրա եղբայր Անվարա, Քադրիե Մեհերի, նրա	229

Արկադի Ակոսով

				եղբայր Ասատուր, Ամիրարնո Ավագի, նրա եղբայր Վարդիգ, Թորոս Փիրուլի	
5	Վերին Խորխոր	4094	6	Խանդուր Առաքելի, նրա որդի Գիրքոր, Ղազար Գիրքգիլի, նրա որդի Փիրալի, Չոլա Փիրուլի, նրա եղբայր Ղազար	230
6	Չորմայրի	6000	5	Կակոս Փիրուլի, նրա որդի Վասիլ, Ավանես Փիրուլի, նրա եղբայր Աթանուլ, Կուսարբեկ Փիրուլի	231
7	Հայդ	10000	19	Վարդան Օրդալեթի, նրա եղբայր Մանուկ, Գիրքոր Բուլեթի, Անդրեաս Փիրումի	232
8	Պլտաջուր	6000	15	Կիրակոս Միրբեկի, նրա եղբայրներ Ռադասիր և Դունդար, Խաչատուր Փիրունի, Վարդան Փիրունի, Մկրտիչ Ջիդաջի, նրա որդի Հակոբ, Ջաքար Չորանի	232
9	Մկնաջուր	5000	6	Մելիք Միրբայելի, նրա որդի Ամիրխան, Անդրեկ Փիրումի, նրա որդի Հակոբ	233
10	Վերին Կանդախոր	3000	4	-	233
11	Աչքելուր	3000	6	Ավագ Ջանուսի, Ջանազիգ Գիրքորի, նրա եղբայր Հաղաբար, Բանդուլվան Գիրքորի	234
Ընդամենը		191000	531		

Հարկացուցակում հիշատակվում են նաև 64 այլ բնակավայրեր, որոնց բնակչության թվի կամ ընտանիքների ավագների վերաբերյալ տեղեկություններ չկան, բայց առկա են այդ բնակավայրերից գանձվող հարկերի տեսակների և չափերի վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 2

N	Բնակավայրի անվանումը	Հարկի չափը (ակչե)	N	Բնակավայրի անվանումը	Հարկի չափը (ակչե)
Մամրվանի գյուղախումբ			33	Վերին Քաջո	9000
1	Կարուն բաղ	3000	34	Վարին Քաջո	3000
2	Սուրբարենիքին	2000	35	Սուրբսարգիս	13000
3	Շավշատ	4000	36	Կարմիր Աղջա	3000
4	Ներքին Տաճարիկ	4000	37	Խաչի Քում	7000
5	Կըզըլ Քիլիսա	3500	38	Չիլեխանե	5000
6	Շիրեքիան	7000	39	Վարին Սուրսուր	4000
7	Բուլուրփիդ	7000	40	Վարին Կանտիր Ասուր	5000
8	Քելչիչ	4000	41	Խարաբգիր	5000
9	Քիամիսիս	4000	42	Փիրնուլեթ	8000
10	Մենդուքչե	3500	43	Ալբին	5000

Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերն ըստ XVI դարի օմանյան հարկացուցակների

11	Հանք	35000	44	Քուրմար	4000
12	Կարմիրակչե	5500	45	Օղունաթեփե	6000
13	Հարսնաջուր	3500	46	Վեդիխան	6000
14	Թափնշեիխ	3500	47	Բերդագրակ	4000
15	Սուրնեղե Ավրաք	3500	48	Էրենքում	6000
16	Մամանիք	7000	49	Վերինթափ	6000
17	Կուջանձոր	4000	50	Փիրնավիրան	5000
18	Շուրախ	5000	51	Զանգեձոր	5000
19	Միջինքար	6000	52	Փունջեղիք	5000
20	Քութիկու	4000	53	Բաշկալե	10000
21	Կարմիրքար	5000	54	Ջերմուկ	5000
22	Միլուփրեթ	6000	55	Արթուքար	5000
23	Թոփրակկալե	4000	56	Սաբդուլ	4000
24	Ջանջուր	4000	57	Բողբերդ	6000
25	Խոշափ	2000	58	Բրտանոց	6000
26	Խուրքաջ	4000	59	Բարջիք	4000
27	Սուղկանիք	-	60	Կըզըլքիլիսա	6000
28	Բաքիքիփե	4000	61	Հարջիք	3500
Ախայի գյուղախումբ			62	Կարունդար	4000
29	Զարս	5000	63	Քոշա Քիլիսա	6000
30	Քաբուն Աղասի	7000	64	Մկնառինջ	6000
31	Սուրգերեք	3000	Ընդամենը		345500
32	Բուրախաշիտ	3000			

Կարևոր է նշել, որ վերը թվարկված բնակավայրերում հանդիպում ենք նաև որոշակի քանակությամբ վրացական անձնանունների: Հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ հայրն ունեցել է վրացու, որդին՝ հայի, կամ եղբայրներից մեկը՝ հայի, մյուսը՝ վրացու անուն, որոնք վկայում են խառը բնակչություն ունեցող գյուղերի գոյության, նրանցում երկու ազգությունների միջև ոչ միայն հանդուրժողական, այլ նաև բարյացակամ վերաբերմունքի առկայության մասին: Այսպիսի իրավիճակը ձևավորվել էր դեռևս Սամցխեի իշխանապետության շրջանում և կարող էր լինել նաև հայության մեջ քաղկեդոնականության տարածման հետևանք⁶: Այսպես, Խանիրվերք գյուղի բնակիչ Մարտիրոսի հայրանունը Խվաջե էր⁷, Վերին Խորխոր գյուղի բնակիչ Ղազարի հայրանունը՝ Գիորգի⁸, Գոմփոր գյուղի բնակիչ Կարապետի եղբոր անունը Մախորոբեղ⁹:

⁶ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը XIX դ. XX դ. առաջին քառորդին, Երևան, 2003, էջեր 82-83:

⁷ *ოსმალური ვრცელი და მოკლე დავთრები ტაო-კლარჯეთის შესახებ (XVI-XVIII საუკუნეები)*, 83, 229:

⁸ *Նույն տեղում*, էջ 230:

⁹ *Նույն տեղում*, էջ 220:

Որքան էլ որ թերի են այս հաղորդումները և չեն արտացոլում գավառի ամբողջական էթնոկրոնական նկարագիրը, այսուհանդերձ, առաջին անգամն է, որ գավառի բնակչության ազգային կազմի վերաբերյալ որոշակի տվյալներ են ներկայացվում ըստ առանձին բնակավայրերի: Ինչպես տեսնում ենք՝ հարկացուցակում հայեր կային Մամրվանի գավառի գրեթե բոլոր բնակավայրերում, իսկ որոշ գյուղեր՝ ճնշող մեծամասնությամբ հայերով էին բնակեցված: Հարկացուցակում առկա տեղեկությունները թույլ են տալիս մեզ պնդել, որ Մամրվանի գավառի ազգաբնակչության մեծ մասը առնվազն մինչև XVII դ. կեսերի բռնի մահմեդականացման մեկնարկը ոչ միայն քրիստոնյա էր, այլ նաև հայ: Ինչ վերաբերում է այս ցանկում հանդիպող թուրքական և թուրքաձև անձնանուններին, ապա դրա վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Հ. Տաշյանը, որի համաձայն «... ժամանակամիջոց մը չափազանց սիրուած են հայ ազգէն եւ կգտնուին ամէն կողմը ...»¹⁰: Դրա վառ վկայությունն է այն, որ մինևույն ընտանիքի մեջ տարածված են եղել և՛ հայկական, և՛ թուրքական անձնանուններ: Օրինակ՝ Օլուրնուս գյուղի բնակիչ Նուրիհի որդիներից մեկի անունը Մարտիրոս էր, մյուսինը՝ Սուլթան¹¹, Մամրվանի բնակիչ Մանվելի հայրանունը Կարագոյոզ էր¹²: Այսպիսի բազմաթիվ օրինակների ենք հանդիպում Մամրվանի գավառի գրեթե բոլոր գյուղերում: Բնակավայրերում առկա հայկական և հայերի շրջանում լայն տարածում ունեցող անձնանունների մեծաքանակությունը թույլ է տալիս մեզ պնդել, որ հայությունը կազմում էր Մամրվանի գավառի բնակչության շուրջ երկու երրորդը: Ընդունելով, որ գյուղական հայ ընտանիքների անդամների թիվը բաղդատելիս՝ միջինը պետք է ընդունել 8-ը, թուրքերինը՝ 6-7, քրդերինը՝ ավելի պակաս¹³, և հաշվի առնելով Մամրվանի գավառի հարկացուցակում առկա 32 բնակավայրերում գոյություն ունեցող 531 ընտանիքները, ստացվում է, որ գավառի վերոնշյալ բնակավայրերում կար շուրջ 4250 բնակիչ, որոնք վճարում էին 191 հազար ակչե հարկ:

Հարկացուցակում առկա են նաև բնակավայրեր, որոնց բնակչության թվի վերաբերյալ չկան տվյալներ, սակայն առկա է այդ բնակավայրերից գանձվող հարկի չափը: Այդպիսի բնակավայրերը թվով 64-ն են, այսինքն՝ կրկնակի ավելի այն բնակավայրերից, որոնց ընտանիքների թվի վերաբերյալ որոշակիություն կա: Ըստ հարկացուցակի՝ վերոնշյալ 64 բնակավայրերից գանձվում էր 345 հազար ակչե, այսինքն՝ գրեթե կրկնակի ավելի, քան աղյուսակ 1-ում ներկայացված 32 բնակավայրերում: Այս փաստերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ Մամրվանի գավառի՝ հնարավորինս իրականությանը մոտ բնակչության թիվը ստանալու համար անհրաժեշտ է առկա թիվը եռապատկել: Այս դեպքում կստացվի, որ Մամրվանի գավառի 96 բնակավայրերում բնակվում էր ավելի քան 12000 մարդ, որոնցից հայեր էին (առաքելական և ուղղափառ քաղկեդոնական) շուրջ 8000-ը:

¹⁰ Տաշեան Յ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Բ, Վենետիկ, 1980, էջեր 224-225:

¹¹ ოსმალური ვრცელი და მოკლე დავთრები ტაო-კლარჯეთის შესახებ (XVI-XVIII საუკუნეები), გვ. 216:

¹² Նույն տեղում, էջ 213:

¹³ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին, Երևան, 1994, էջ 111-112:

Մամրվանի գավառը XVII դ. առաջին կեսին թուրք-պարսկական պատերազմների ընթացքում քանիցս ենթարկվեց ավերածությունների, թալանի և բռնագաղթի, իսկ XVII դ. կեսերին լայն թափ ստացած բռնի մահմեդականացման գործընթացը հանգեցրեց գավառի ուղղափառ քաղկեդոնական հայության կրոնափոխմանը և ժամանակի ընթացքում ազգային դիմագծի կորստին:

Եզրահանգում. Մամրվանի գավառը XVI դարի երկրորդ կեսին բաժանված էր երկու գյուղախմբերի՝ Մամրվանի և Ախայի, որոնցում հաշվվում էր 96 բնակավայր: Օսմանյան հարկացուցակներից պարզվում է, որ գավառի 32 բնակավայրերում առկա էր 531 ընտանիք, որոնք վճարում էին 191 հազար ակչե հարկ: Մնացած 64 բնակավայրից գանձվող հարկը կազմում էր 345500 ակչե: Մեր հաշվարկով XVI դարի II կեսին Մամրվանի գավառի բնակչության թիվն անցնում էր 12 հազարից, որից հայեր էին շուրջ 8 հազարը:

ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА МАМРВАНСКОГО САНДЖАКА СОГЛАСНО ОСМАНСКИМ НАЛОГОВЫМ СПИСКАМ XVI ВЕКА

Акопов А. А.

Ключевые слова: *Тайк, армяне, мусульмане, налоговые списки, Османская империя, Олти, Аха.*

Во второй половине XVI века Мамрванский санджак был разделен на две нахие – Мамрван и Акха, с 96 поселениями. Согласно османским налоговым спискам, в 32-х населенных пунктах санджака проживала 531 семья, которые платили 191 тысячу акче налогов. Налог, взимаемый с остальных 64 населенных пунктов, составил 345500 акче. По нашим подсчетам, во второй половине XVI века население Мамрванского санджака превышало 12 тысяч, из которых около 8 тысяч составляли армяне.

DEMOGRAPHIC IMAGE OF MAMRVAN SANJAK ACCORDING TO THE OTTOMAN TAX LISTS OF XVI CENTURY

Акопов А. А.

Key words: *Tayk, Armenians, Muslims, tax lists, Ottoman Empire, Olti, Akha.*

In the second half of the 16th century the Mamrvan Sanjak was divided into two nahiye - Mamrvan and Akha, with 96 settlements. According to the Ottoman tax lists, there existed the tax levied on the remaining 64 settlements amounted to 345,500 akche. According to our calculations, in the second half of the 16th century the population of the Mamrvan Sanjak exceeded 12 thousand, of which about 8 thousand were Armenians.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ
ԳՊՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ
Հասմիկ Ամիրջանյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *նպրոց, Ամենայն հայոց կաթողիկոս, Էջմիածին, Ղուկաս Կարնեցի, գիրք, կրթություն, սոցիալ-տնտեսական, գիտություն:*

Հայ պատմագրության մեջ Ղուկաս Կարնեցուն տրվել են իրարամերժ գնահատականներ՝ մեծարանքի խոսքերից ընդհուպ ուսման հակառակորդ: Ղ. Կարնեցու կրթամշակութային գործունեության գնահատման առնչությամբ ձևավորված ուրույն մոտեցումն ուներ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Մեր նպատակն է վեր հանել դրանք ու ներկայացնել ժամանակաշրջանի մշակութային կյանքի որոշակի անկման պատճառները:

Նախաբան. Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու (1780-1799թթ.) մշակութային գործունեության շուրջ ձևավորված մեղադրանքներն արտահայտվեցին նախևառաջ նրա նպրոցաշինական գործունեության առնչությամբ: Ամենաձանր մեղադրանքը, թերևս, Կարնեցուն՝ որպես կրթության հակառակորդի ներկայացնելն էր: Անդրադառնանք նշված որոշ կարծիքների: Այսպես օրինակ, Ղուկաս Կարնեցու նամակների հրատարակիչ, եկեղեցական, հասարակական գործիչ Գ. Աղանյանցն արտահայտում է իր անհամաձայնությունը հայ ազատագրական շարժման գործիչ, մանկավարժ, պատմագիր Եգոր Խուրովի (Գևորգ Խուրյան)¹ ու Մ. Մսերյանցի (բանաստեղծ, ազգագրագետ, աստվածաբան) այն մոտեցման դեմ, որ նրանք Ղուկաս Կարնեցուն ներկայացնում են

¹ Ե. Խուրովը նման կարծիք արտահայտել է իր աշխատության մեջ, որը ձեռագիր վիճակում պահվում է Մատենադարանում (Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ^փ 2766);

որպես «անուսումնասեր մեկը»: Գ. Աղանյանը մեղադրանքները համարելով «անիրավացի»՝ Ղուկաս Կարնեցուն անվանում է «գրասեր և ուսումնասեր»²:

Ըստ Գ. Աղանյանցի՝ Ղուկաս Կարնեցուն անուսումնասեր համարողները դա բացատրում են այն հանգամանքով, որ նա կրկնում էր հետևյալ խոսքերը «Մեծ է տունս այս, ինձ մարդիկ հարկաւորք են ի կառավարել. իմ միաբանք էթէ զՍուրբ ես Տէր, և զՀայր զթածը զհտենան, ինձ բաւական է. ես փիլիսոփայ միաբան ուզում չեմ»³: Ղուկաս Կարնեցու սույն խոսքերը մեջբերող Մսերյանը դատապարտում է կաթողիկոսին, որ նա հոգ չի տարել միաբանների շարքերը ուսումնական անձանցով համալրելու ուղղությամբ⁴: Ղուկաս Կարնեցու խոսքերին անդրադարձել է նաև պատմաբան, բանասեր, հետազայում Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը: Նա գրում է, որ Ս. Երևանցու աշակերտին չի կարելի անուսում կամ ուսումնաստյաց անվանել լոկ մեկ խոսքի համար⁵:

Հավանաբար Մ. Մսերյանցի խոսքերից ելնելով է Ա. Հովհաննիսյանը գրում, որ Կարնեցին բացահայտ խոստովանում է, որ առանձնապես չի սիրում «միաբան փիլիսոփաներին»⁶:

Կարծում ենք՝ Կարնեցու այդ արտահայտությունը չպետք է մեկնաբանել որպես նրա հաստատուն ու ամրագրված միտք: Սույնով կաթողիկոսը լոկ փորձել է նշել, որ կրթված ու գիտուն միաբանները շատ քիչ են և անգամ նվազագույն գիտելիքների տիրապետող հոգևոր գործիչների առկայությունը նրան բավական է: Պատահական չէ, որ

² Գ. Աղանյանը Խուրովի կարծիքը բացատրում է այն հանգամանքով, որ վերջինս, լինելով ազգակից Միմեն Երևանցուն, բացասաբար էր տրամադրված նրա հաջորդի նկատմամբ՝ նպատակ ունենալով նսեմացնելով նրան, ավելի բարձրացնել Երևանցուն, Իսկ Մսերյանը կրկնում էր իր լսածները: Տե՛ս **Աղանեանց Գ.**, Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ ԾԴ-ԾԵ:

³ Գ. Աղանյանը հակադարձում է Մսերյանցին՝ գրելով, որ Կարնեցու խոսքերում զարմանալի ոչինչ չկա, եթե հիշենք Միմեն Երևանցու կոնդակներից մեկը, որում ասվում է գրեթե նույնը. «Ի յարտաքին վիճակս զայնպիսի անձինս կարգիցէ Առաջնորդ, որք փորձեալք իցեն ի հաւատս և ի կրօնս ըստ Հայտանեայց սրբոյ եկեղեցոյ, և ի վարս պարկեշտս, զի լաւ է տգէտն որ ըստ հաւատոյն ուղիղ իցէ եւ ըստ վարուցն պարկեշտ, քան զիմաստունն սնապարծ որ ըստ հաւատոյն թերի իցէ եւ ըստ վարուցն անպարկեշտ»: Հիշյալ տողերը պարունակող Միմեն Երևանցու կոնդակը հրատարակված է Գ. Աղանյանցի Դիվանում: Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., Դ, էջ ԾԴ-ԾԵ, էջ 754:

⁴ **Մսերյանց Մ.**, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. ի Միմենսէ մինչ յՀովհաննէս Ը, Մոսկուա, 1870, էջ 12:

⁵ Օրմանյանն այնուհետև գրում է. «Այդ խօսքերը պարզապէս աթոռի շինութեան և պահպանութեան նախանձաւոր ըլլալուն վկայութիւնն են, և գրեթէ կրկնութիւն են Միմենի խօսքերուն թէ, լաւ է տգէտն՝ որ ըստ հաւատոյն ուղիղ իցէ և ըստ վարուցն պարկեշտ, քան զիմաստունն սնապարծ՝ որ ըստ հաւատոյն թերի իցէ և ըստ վարուցն անպարկեշտ...»⁵: Այնուհետև Օրմանյանը համեմատություն է անցկացնում. «Միմենի մասին կասկածող չկայ, նոյն է Ղուկասի ալ միտքը, և երկուքն ալ կականարկեն լատինամուլ ուսումներով ազգային եկեղեցին անարգող թեթեւամիտներուն»: Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, հ. Բ, 1914, էջ 3141:

⁶ Սույն փաստի կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը սկզբնաղբյուր չի վկայակոչում: Տե՛ս **Иоаннисян А.**, Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия. Ереван, 1990, с. 53.

Աղանյանցն այդ խոսքերը կրկնողներին անվանում է Կարնեցու թշնամիներ՝ հավանաբար առաջին հերթին նկատի ունենալով Մ. Մսերյանցին, ում ուսումնասիրության մեջ առաջին և միակ անգամ կարդում ենք Կարնեցու այդ խոսքերը:⁷

Վ. Գրիգորյանը Կարնեցուն ուսման հակառակորդ համարելը համարում է գուրկ փաստական հիմքից՝ զոնելով, որ կաթողիկոսն ուսման, գրի ու գրականության նշանակությունը քաջ զիտակցող անձ էր՝ փաստելով այն հանգամանքը, որ նա ծանր պայմաններում կարողացավ պահել Էջմիածնի դպրոցը:

Նշված տարակարծությունների ի հայտ գալու պատճառները բացահայտելու, դրանց նկատմամբ քննադատական կարծիք դրսևորելու և կաթողիկոսի՝ որպես մշակութային գործչի կերպարը վեր հանելու նպատակով անդրադառնանք նրա դպրոցաշինական գործունեությանը, ինչն ամբողջությամբ հայ պատմագիտության մեջ ներկայացված չէ: Դա, հիրավի, դժվարին գործ է, քանի որ առկա սկզբնաղբյուրները սուղ տեղեկություններ են պարունակում Կարնեցու դպրոցաշինական գործունեության վերաբերյալ: Պատճառներից մեկն էլ այն է, որ կաթողիկոսը չէր սիրում խոսել իր նախաձեռնությունների մասին: Նրա բավականին թիվ կազմող գրագրությունները գրեթե տեղեկություններ չեն պարունակում նշված հարցի վերաբերյալ: Միայն կողմնակի նյութերի շնորհիվ հասկանում ենք, որ Ղուկաս Կարնեցու օրոք շարունակում էր գործել Էջմիածնի տաճարի հյուսիսային կողմում տեղակայված վանական դպրոցը, որը դեռևս Միմեոն Երևանցու կողմից էր բարելավվել: Այնտեղ շարունակվում էին դասավանդվել ժամանակին հարիր գիտությունների կարևոր առարկաները՝ եկեղեցական ընթերցանություն, հոգևոր երաժշտություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, պատմություն: Վանքի ելից և մտից մատյաններում հիշվում են երկու վարժապետ՝ Մարգար (1786թ., 1791-1792թթ.) և Նիկողայոս վարդապետները (1787-1789 թթ.):⁸ Ղուկաս Կարնեցին վերանորոգում է դպրոցի շենքը, որտեղ կանոնավոր կերպով անց էին կացվում պարապմունքները:⁹ Դպրոցի կառույցի, հարակից շինությունների, սեփական կավածքների կամ ունեցվածքի վերաբերյալ տեղեկությունների չենք հանդիպում: Հայտնի է միայն, որ դպրոցն ունեցել է իր մրգատու այգին:

Էջմիածնի դպրոցը գիշերօթիկ էր, վանքն ապահովում էր սաների բոլոր կարիքները: Վ. Գրիգորյանն ուսումնասիրել ու հրատարակել է դպրատան աշակերտների համար կատարված հագուստի, գրքերի ծախսերի, վարժապետներին վճարված գումարների վերաբերյալ տվյալներ¹⁰: Ցավոք, սկզբնաղբյուրները հստակ տեղեկություններ չեն հաղորդում ուսման դրվածքի, ընթացքի, կազմակերպչական աշխատանքների մասին:

⁷ Տե՛ս Մսերյանց Մ., նշվ. աշխ., էջ 12:

⁸ Գրիգորյան Վ., Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի անտիպ նամակներում // «Էջմիածին», 1995, Զ-Է, էջ 84:

⁹ Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1786-1792), (այսուհետև՝ Դիվան...), աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, հ. Ա, Երևան, 1984, էջ 40:

¹⁰ Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1786-1792), հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 2003, էջ XXXIII (ներածություն):

Դպրոցում ուսանած և հետագայում վարդապետության շարքերը համալրած կամ վանքում զանազան պաշտոններ ստանձնած անձանց ցանկից ակնհայտ է, որ այնտեղ սովորել են ոչ միայն տեղացիներ, այլև Կ. Պոլսից, Զմյուռնիայից և Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից եկած սաներ: Դպրոցն ավարտողները, ամենայն հավանակա- նությամբ, ինչպես ընդունված էր ժամանակին, համալրել են վանքի նվիրակների շարքը՝ ուղարկվելով տարբեր վայրեր:

Աղքատիկ տեղեկություններ կան դպրոցում կազմակերպված մրցութային, մշա- կութային տարբեր միջոցառումների վերաբերյալ: Ելից մատյաններից տեղեկանում ենք, որ տոն օրերին՝ Նոր տարի, Բարեկենդան, Վարդանանց տոն և այլն, Վեհաբանի բակում կամ դրանից դուրս վարժարանի աշակերտները մասնակցել են հայկական ըմբշամար- տի մրցումների: Տեղեկություն կա կազմակերպված համերգի մասին¹¹:

Դպրոցը մշտապես գտնվել է կաթողիկոսի վերահսկողության տակ: Բավական է նշել միայն, որ նրա գահակալության ամբողջ ընթացքում այն գործել է և երբևէ չի փակվել: Կարնեցու ընտրվելուց հետո սաների թիվը 24-ից (1780 թ. դրությամբ) հասնում է 32-ի: 1785-1787թթ. դպրոցն ունեցել է 26-29 աշակերտ, 1789թ.՝ 24 աշակերտ, 1790թ.՝ 25, 1791թ.՝ 20, իսկ 1792թ.՝ 23¹²: Ինչպես տեսնում ենք, աշակերտների թվաքանակը ժամանակ առ ժամանակ նվազել է:

Ուսումնական բնագավառում նոր ձեռնարկումների բացակայությունը պայմա- նավորված էր երկրում առկա ծանր իրավիճակով: XVIII դարում Պարսկաստանի կողմից բռնազավթված Երևանի խանությունում տիրող քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակն անխուսափելիորեն իր ազդեցությունն էր թողնում երկրի մշակութա- յին կյանքի վրա: 1783 թ. հունվարին Մանուչարյան եղբայրներին¹³ կաթողիկոսի գրած նամակից տեղեկանում ենք, որ վերջիններս 1782 թ. օգոստոսի 23-ին գրած նամակում կաթողիկոսին օտար լեզուներով՝ «ըստ երոպական լեզուաց» դպրոց կառուցելու առա- ջարկ են արել: Կաթողիկոսը մերժում է՝ պատճառաբանելով վանքի սուղ վիճակն ու երկ- րի քաղաքական աննպաստ պայմանները: Նա պատասխանում է. «...Իսկ վասն դպրա- տուն հաստատելոյ ըստ երոպական լեզուաց, այսպես գիտասօջիբ: Զի մեր լեզուաւս դպրատուն գոր ունիմք ի Սուրբ Աթոռս՝ հազիւ պահեմք հաստատուն, ըստ որում՝ չէ մեզ ձեռնտու որպիսութիւն և կացութիւն երկրիս»¹⁴:

Ղուկաս Կարնեցու դիրքորոշումը բացատրվում է երկու հանգամանքով. նախ՝ Էջ- միածինն անհրաժեշտ միջոցներ չունենալով դպրոց պահելու համար (չնայած այն հանգա- մանքին, որ կրթական հաստատությունները բացվելու ու պահպանվելու էին հովանա- վորների կողմից, բայց, այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս փորձը, դրանք բավա- կան մասով բաժին էին ընկնում նաև Էջմիածնի եկամուտներին): Երկրորդ՝ կաթողիկոսը

¹¹ Գրիգորյան Վ., նշվ. հոդ., «Էջմիածին», էջեր 83-84:

¹² Նույն տեղում, էջ 83, Դիվան..., Ա, էջ 40:

¹³ Մարգար և Ֆիլիպ (Ֆիլիպոս) Մանուչարյանները ջուղայեցի առևտրական Աստվածատուրի որ- դիներն էին, որոնք հաստատվելով Սանկտ Պետերբուրգում, հիմնել էին մետաքսի գործարան: Նրանք բազմիցս ընդառաջում էին հայ տարբեր գործիչների մշակութային գործունեությունը:

¹⁴ Աղանեանց Գ., նշվ. աշխ., Դ, էջ 482:

վստահ չէր, որ դրանք ևս չեն ավերվի ու կործանվի թշնամի ժողովուրդների կողմից: (Նույն պատճառներով 1780-90-ական թթ. ավերվել էին դեռևս Սիմեոն Երևանցու (1763-1780) կողմից կառուցված Էջմիածնի տպարանն ու թղթի գործարանը): Հետևաբար, դպրոցական կյանքի որոշակի հետընթացը պետք է փնտրել ժամանակաշրջանի մշակութային ընդհանուր անկման համատեքստում:

Մոտ տասը տարի անց բարերար Հոհանջան (Յոհանջան) աղային¹⁵ գրած 1791 թ. դեկտեմբերի 31 թվակիր նամակից տեղեկանում ենք, որ վերջինս կաթողիկոսին առաջարկել էր Ս. Գայանե վանքում իր միջոցներով ուսուցիչ պահել՝ «...ուսուցիչ արտաքինոց գրեաց, որ թե աստուստ խնդրողաց և թե յայլուստ եկողաց՝ թե վանական իցեն և թե աշխարհական, անխնայորեն դաս ասասցէ և այլն»¹⁶: Առաջարկությունն արժանանում է Կարնեցու հավանությանը, ինչը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանում երկրի քաղաքական կյանքի որոշակի կայունացմամբ:

Փաստորեն, կաթողիկոսը սկզբունքորեն դեմ չէր նոր դպրոցի բացմանը: Ավելին, նա Կ. Պոլսից հրավիրում է վարժապետ Թեոդորոս սարկավազին՝ դասավանդելու դպրոցում: Մյուս կողմից նա նույն նամակով Հոհանջանին տեղեկացնում է նախաձեռնությանը սպառնացող բազմաթիվ վտանգները. «...վասն արտաքինոց դասասացութեանն, որ գրեալ էիր ի վանսն սրբոյ Գայիանեան լինիլ, բարի է և ազնիվ միտքոյ, բայց այնպիսի գործառնութիւն անդէն ոչ առնու զհաստատութիւն եւ ոչ տեւէ ընդ երկար, զի որպիսութիւն անտերունջ երկրիս, որ ի բազմիցս անգամ վրդովիլն ի խռովութեանց պէսպէս վնասք յառաջանան...», - գրում է Կարնեցին՝ նշելով, որ նմանօրինակ գործը պետք է կազմակերպվի Մայր Աթոռի պարիսպներից ներս. «յայլ ուրեք ոչ վարի եւ ոչ արդինաւորի»¹⁷:

Նույն նամակում Կարնեցին խոսում է նաև Էջմիածնի դպրոցի համար նոր շինությունների կառուցման նպատակի մասին: Նա նախատեսել էր վանքի արևելյան կողմում գտնվող վերնահարկը, որը նախկինում որպես ամառային դպրոց էր ծառայել, իսկ այդ պահին լքված վիճակում էր գտնվում, վերակառուցել՝ ներքին մասում ձմեռային, վերին մասում՝ ամառային դպրոցներ բացելով: «Որպէս զի յառաջին դպրոցին մանկունք զսաղմնոս, զշարական, եւ զկտակարան եւ զայլ այնպիսի գրեանս դաս առցեն եւ ընթերցցեն: Իսկ ի նորոգ շինելի դպրոցիս չափահասակ անձինք զքերականութիւն գտրամաբանութիւն եւ զայլ արտաքին գրեանս ուսցին»¹⁸, - գրում է Կարնեցին Գերաքյանին՝ նշելով, որ սպասում է դրական պատասխանի՝ աշխատանքները սկսելու համար: Այդ ընթացքում՝ հուլիսին Թեոդորոս սարկավազը, որին կաթողիկոսը պատրաստվում էր կարգել ուսուցիչ, Կ. Պոլսից գալիս է Էջմիածին:

Հայտնի չէ, բացվեց այդ դպրոցը, թե՞ ոչ, ամենայն հավանականությամբ՝ ոչ: Ուշագրավ է սակայն, որ կաթողիկոսը դրական պատասխանի է արժանացրել առաջարկը, որով նախատեսվում էր նաև աշխարհիկ գիտելիքներ դասավանդել:

¹⁵ Հնդկաստանի Սուրաթ քաղաքում Մայր Աթոռի գործակալ Հոհանջան Գերաքյան (Հակոբյան):

¹⁶ Դիվան..., հ. Բ, էջ 681:

¹⁷ Նույն տեղում, էջ 682:

¹⁸ Նույնը:

Ղուկաս Կարնեցու գրասեր և ուսումնասեր լինելը փորձ է արվում փաստել նրա գիտական գործունեության միջոցով: Այսպես օրինակ, Գ. Աղանյանը որպես ապացույց վկայակոչում է նրա պաշտոնական և մասնավոր գրությունները, որոնց մեծ մասը վերաբերում է հայ ժողովրդի ծանր վիճակին: Աղանյանը ավոսանք է հայտնում, որ Կարնեցու շատ գրագրությունները բացակայում են, այլապես առավել փաստեր կլինեին «...ջրել Ղուկասի հակառակորդների այն առարկությունները, թե ազգը ոչինչ շահեցաւ նորա կաթողիկոսութիւնից»¹⁹: Ղուկաս Կարնեցին զբաղվել է նաև թարգմանչական գործով, նա աշխարհաբարի է վերածել Մատթեոսի ավետարանը (տե՛ս ՄՄ, ձեռ. 8234), գրել է տաղեր, հոգևոր բանաստեղծություններ (աղոթքներ, ներբողներ)²⁰: Ավելին, Աղանյանցն ու Օրմանյանը Կարնեցուն են վերագրում Հ. Շմավոնյանի կողմից Մադրասում հիմնած «Ազգարարի» ոգեշնչման դերը²¹:

Եզրահանգում. Այսպիսով, Կարնեցու կողմից կրթության բնագավառի նոր միջոցառումների չխրախուսելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կաթողիկոսը վստահ չէր, որ դրանք չեն ձախողվի քաղաքական անկայուն իրավիճակի հետևանքով, և այդ նպատակով գործադրված ջանքերն իզուր չեն անցնի: Ամփոփելով՝ ընդգծենք, որ Ղ. Կարնեցու անձի և գործի համակողմանի քննությունը վեր է հանում այն բոլոր հանգամանքները, որոնց պատճառով չհաջողվեց էլ ավելի ընդլայնել ու բարեկարգել դպրոցը: Չնայած երկրում առկա ներքին սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր իրավիճակին՝ Ղուկաս Կարնեցուն հաջողվեց պահպանել Էջմիածնի դպրոցը, որը, լինելով փոքր և չունենալով աշակերտների մեծ քանակ, այնուամենայնիվ որոշակիորեն նպաստեց ժամանակի կրթական գործի զարգացմանը: Դպրոցը փոխանցվեց սերունդներին՝ դառնալով Արևելյան Հայաստանի դպրոցական կյանքի պատմության մի մասնիկը:

О ВОПРОСЕ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГУКАСА КАРНЕЦИ

Амирджанян А. О.

Ключевые слова: Школа, Католикос Всех армян, Эчмиадзин, Гукас Карнеци, книга, образование, социально-экономический, наука.

В статье на основе достоверных материалов мы представили деятельность Католикоса Гукаса Карнеци (1780-1799) в деле образования.

Во время предводительства Гукаса Карнеци упад и подъем школы в Св. Эчмиадзине были обусловлены целым рядом внутренних и внешних факторов. В этот период создание культурно-просветительских учреждений сталкивалось с трудностями из-за многочисленных экономических, социальных и политических проблем. Несмотря на этот факт, Католикосу Г. Карнеци удалось продолжить деятельность школы. В документах есть некоторые данные о

¹⁹ Մույն միտքը գրելով, Գ. Աղանյանը տողատակում նշում է Մսերյանցի անունը՝ ցույց տալով, որ նկատի ունի նրան: Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., Դ, էջ ԾԵ, ԽԲ:

²⁰ **Լեռ**, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1973, էջ 560:

²¹ Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., Դ, էջ ԾԶ: **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., Բ, էջ 3236:

финансовых вопросах, назначении учителей, об организации разных мероприятий. Школа имела значительный вклад в деле развития образования армянской общественности.

ABOUT THE EDUCATIONAL ACTIVITY OF CATHOLICOS OF ALL ARMENIANS GHUKAS KARNECY

Amirjanyan H. H.

Key words: *The school, Catholicos of All Armenians, Etchmiadzin, Ghukas Karnecy, book, education, social-economical, science.*

On the basis of reliable materials, we presented the educational activities of Catholicos of All Armenians Ghukas Karnecy (1780-1799). The decline and rise of school of Etchmiadzin during the Representative of Ghukas Karneci were stipulated by several internal and external factors. In this period the institutions of cultural and enlightenment mission were still covering a challenging route of establishment because of numerous social-economic and political issues. Thanks to the efforts of Ghukas Karnecy, the school continued its activity. The published documents related to the financial issues, teachers' assignation, organization of different measures, etc. The school had a key role in improving the educational process the Armenian society.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո լ ն

1. Աղանեանց Գ., Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, տպ. Մ.Շարաձէի, 1899:
2. Գրիգորյան Վ., Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի անտիպ նամակներում, «Էջմիածին», 1995, Զ-Է:
3. Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի: Կ. Ֆ, Երևան 2003:
4. Լեո, Հայոց պատմություն, Կ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 1973:
5. Մսերեյանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. Ի Սիմէօնէ մինչ յՀովհաննէս Ը, Մոսկուա, 1870:
6. Օրմանեան Մ., Ազգապատում, Կ. Պոլիս, Կ. Ֆ, 1914, հրատ. Վ. և Հ. Տէր-Ներսէսեան:
7. Иоаннисян А. Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия. Ереван. Изд. АН АССР. -1990.

Ընդունվել է՝ 01. 06. 2021

Գրախոսվել է՝ 03. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասցիկ ԱՄԻՐՋԱՆԻԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Էլ. հասցե՝ amirjanyan.hasmik@rambler.ru

УДК: 93/94

DOI: 10.52971/18294316-2021.2-118

ОДНА ИЗ ЗАДАЧ ТУРЕЦКОЙ ДЕЛЕГАЦИИ НА БРЕСТ-ЛИТОВСКИХ МИРНЫХ ПЕРЕГОВОРАХ (03-15. 12. 1917)

Роин Каврелишвили

Смацхе-Джавахетский государственный университет, Грузия

Ключевые слова: *Османская империя, Советская Россия, Германия, договор, Антанта.*

В статье рассматриваются пять турецких документов. Их анализ показывает суть одной из задач турецкой делегации на Брест-Литовских мирных переговорах - проблему эвакуации османских территорий, завоеванных российской армией после победы в Сарыкамышской операции. Из этих же документов видно, что османская делегация не смогла достичь своей цели, поставленной на первом этапе переговоров.

Введение. 2-ого августа 1914 года между Османской империей и Германией был подписан секретный договор, и он был направлен против России. В случае русско-германской войны турки обязывались принять участие в войне на стороне Германии¹.

Германия обязалась, что если противник завоюет османские территории, она не станет подписывать мирный договор до тех пор, пока эти территории не будут деокупированы. При этом, сделает доступным для Османского государства его связи с мусульманами, живущими на территории России вдоль восточных границ, повлияет на переговоры так, что Османское государство получит адекватную военную компенсацию (контрибуция, компенсация). По поводу этого обязательства посол Германии фон Вангенгейм 06.08.1914 г. письменно проинформировал премьер-министра Османского государства. При этом, немцы согласились с требованиями турок на то, что после поражения России они вынудят их оплатить контрибуцию османам и вернуть им Карс, Ардаган и Батуми. Однако, во время войны собы-

¹ Сзвандге Թ., Եւրոպայի օստորոյն, Երևան, 2007, ց. 352.

тия на Кавказском фронте стали развиваться иначе. После поражения османов в сарикамишской операции, российские войска перешли на атаку и заняли Ван, Эрзурум, Муш, Битлис, Трабзон и Эрзинджан².

Вопреки успехам на Кавказском фронте, Российская армия потерпела поражение на европейском фронте и к 1917 году потеряла довольно большую часть западных территорий страны.

25 октября-7 ноября 1917 г. после того, как большевики захватили власть в России, 8 ноября 1917 г. советское правительство издало декрет о *мире «без аннексий и контрибуций»*³. Большевистские власти дважды, 7-9/20-22 ноября 1917 г. приказывали начальнику Генерального штаба российской армии Духонину предложить перемирие немецкому военному командованию⁴. Духонин не подчинился этому приказу и был отправлен в отставку⁵ и приказом лейтенанта Крыленко⁶, назначенном на его место, 13-26 ноября 1917 года советские парламентарии перешли линию фронта и предложили немецкому военному руководству перемирие⁷, на что и получили согласие⁸. Правительство Советской России обратилось к воюющим государствам с призывом к перемирию⁹, но государства Антанты не приняли мирное предложение большевиков¹⁰. Военные действия на Восточном фронте в связи с мирными переговорами были приостановлены 19 ноября/2 декабря 1917 г.¹¹.

Османское государство с удовольствием приняло мирное предложение Советской России, о чем свидетельствуют выступления министра иностранных дел Ахмеда Несими Бея и других членов парламента в парламенте Турции 3 декабря 1917 года¹². Германия также готовилась к мирным переговорам. Город Брест-Литовск считался самым благоприятным местом для переговоров¹³. 2-15 декабря 1917г. мирные делегации из Советской России с одной стороны и Германии, Австро-Венгрии, Болгарии и Турции с другой, встретились в Брест-Литовске и приступили к переговорам¹⁴.

² Selami Kılıç, Türk-Sovyet İlişkilerinin Doğuşu, Brest-Litovs Müzakereleri (22 Aralık 1917 – 3 Mart 1918). İstanbul, 1998. ss. 19 -21.

³ Документы внешней политики СССР. Декрет о мире. М. -1959. ss. 11-14.

⁴ Документы. Правительственное предписание Верховному Главнокомандующему Духонину. М. -1959. ss. 15-16.

⁵ Документы. Разговор Правительства со Ставкой по прямому проводу. М. -1959. ss. 17-19.

⁶ Документы. Обращение Совета Народных Комиссаров к армии и флоту по вопросу о мире. -1959. ss. 19 -20.

⁷ Документы. Телеграмма из Ставки Верховного Главнокомандующего по поводу переговоров с Германским командованием о перемирии. М. -1959. ss. 25.

⁸ Документы. Сообщение Русской делегации о переговорах с Германским командованием о перемирии. М. -1959. ss. 26-28.

⁹ Документы. Обращение Советского Правительства к правительствам и народам воюющих стран с предложением присоединиться к переговорам о перемирии. М. -1959. ss. 28-30.

¹⁰ სვანძე მ., ბრესტის ზავი და საქართველო, ქართულის დიპლომატია (წელიწდეული), 3, თბილისი, 1996 გვ. 28-30.

¹¹ Документы. Сообщение Народного Комиссара Иностранных Дел о предстоящем открытии переговоров о перемирии. Москва. 1959. ss. 31-32.

¹² Enis Şahin, Trabzon ve Batum Konferansları ve Antlaşmaları (1917-1918), Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 2002, ss. 140-141.

¹³ Şahin. c. 149.

¹⁴ Akdes Nimet Kurat, Brest-Litovsk Müzakereleri ve Barışı (20 Aralık 1917 – 3 Mart 1918), Belleten, XXXI/121-124, Ankara, 1967, c.378.

Одной из основных задач османской делегации на переговорах было влияние на российскую делегацию с помощью союзников с целью того, чтоб они вывели российские войска из оккупированных территорий Османского государства и вернулись в пределах границы России 1914 года.

Турецкий историк Селами Кылыч опубликовал важные документы по поводу этого вопроса. Документы взяты из архива военно-исторических и стратегических исследований Генштаба Турции (ATASE). Все эти документы транслитированы с османского на латинский алфавит и переведены на современный турецкий язык.

В этой связи, интересна телеграмма главнокомандующего¹⁵ Османской армией Энвера-паши главе османской делегации в Брест-Литовске Зеки-паше от 3-16 ноября 1917 года. В нём Энвер-паша пишет: *«После начала мирных переговоров и встречи с нашими союзными делегатами, прошу передать российским делегатам следующее, что в случае возвращения российских войск в пределах границ России (тех российских войск, которые находятся на территории Ирана, а также развернуты напротив наших 2-й и 3-й армий на Кавказе), наши воинские части тоже перейдут из Ирана обратно в пределы наших границ. Наши кавказские армии не пойдут дальше наших границ и не будут следовать за российскими вооружёнными силами. Будем довольствоваться только отправкой местных властей в районы, эвакуированные русскими. Таким образом, мы не будем проводить никаких военных действий с нашей стороны»*¹⁶.

Зеки-паша на эту телеграмму 5-го декабря 1917 года дал следующий ответ: *«На основании отправленной вами экстренной телеграммы я встретился с нашими союзными делегатами по поводу эвакуации Ирана и вывода Российских войск от наших границ, стоящих перед нашими кавказскими армиями. Немецкие делегаты сочли необходимым получить разъяснения по Кавказскому фронту от германского генерального штаба. Что касается иранского фронта, то по моему настоянию они¹⁷ предложили эвакуацию Ирана. Ответ пока не получен»*¹⁸.

Достойна вниманию телеграмма Зеки-паши от 5 декабря 1917 г. Энвер-паше, в которой он выразил надежду, что эвакуация завоеванных Россией территорий Османского государства будет возможна: *«По запросу русских, содержание телеграммы, отправленная вами было им представлено со стороны верховных военачальников¹⁹. Им была передана одна копия телеграммы в подписанном, заверенном и расшифрованном виде. Вопрос о деокупации Ирана союзниками был добавлен в одну из наших статей в качестве инструкции. Ждём ответа завтра. Вопрос о выводе российских войск с Кавказского фронта будет поднят в ходе завтрашних переговоров. Я надеюсь, что по этому поводу будет достигнуто соглашение»*²⁰.

Надежды Зеки-паши на вывод российских войск с Кавказского фронта в пределах границ России не оправдались. Это подтверждается телеграммой, отправленной Энвер-паше советником османского посольства в Берлине, датированной от 5 декабря 1917 г. *«Для союзников это требование не является вопросом временного перемирия. Напротив, они рассматривают его как вопрос всеобщего перемирия и считают необходимым разрешить его в*

¹⁵ Формально главнокомандующим считался османский султан.

¹⁶ Kılıç, с. 61. ссылается на ATASE, A. 1/2, kls. 529. D. 2067-357. F.2.

¹⁷ Подразумеваются немецкие делегаты.

¹⁸ Kılıç, с. 61. ссылается на ATASE, A, 1/1. kls. 151. D. 678-200. F. 108-2.

¹⁹ Подразумеваются немецкие военачальники.

²⁰ Kılıç, с. 63, ссылается на ATASE, A. 1/1. Kls. 151. D. 678-200, F. 108-3,4.

ходе мирных переговоров. Если сделаем такое предложение от нашего имени, русские могут рассматривать его как разногласие между нами и нашими союзниками. Даже, если предложение будет сделано, россияне его категорически не примут. В таких обстоятельствах, то есть сделать или воздержаться от такого предложения, Зеки-паша должен действовать в соответствии с инструкциями главнокомандующего»²¹.

Проблема эвакуации завоеванных Россией территорий на Кавказском фронте была неприемлема для немцев, так как это осложнило бы переговоры и сопутствовало бы требованиям России. В этом случае, Германии пришлось бы вывести свои войска из завоеванных территорий России, что, конечно, не входило в планы Германии²².

4-го декабря стороны подписали временное соглашение о прекращении огня с 14:00 ч. 6 декабря по 14:00 ч. 17 декабря 1917 года²³. Согласно статье 2 этого договора, соглашение по прекращению огня было распространено также на российско-османский азиатский фронт²⁴. Вышеупомянутое решение и информация о прекращении огня было немедленно сообщено Османскому командованию на Восточном фронте²⁵.

Первая сессия второго раунда переговоров в Брест-Литовске, началась 12 декабря 1917 года в 17:00 ч.²⁶

Зеки-паша в своем ответе Энвер-паше на его телеграмму от 3-го декабря 1917 г. отмечает, что предложение Энвер-паши не принесло никаких результатов, хотя он все же не пожалел усилий для решения этого вопроса. В его ответе сказано: «Я убежден, что наше предложение Россиянам об эвакуации наших территорий, завоеванных Кавказскими войсками России, не принесёт никаких результатов и они будут отвергать даже правильное и разумное предложение вашего превосходительства. Основанием для этого является их отношение к переговорам и поведение. Возможно, подобное предложение способствовало бы завершению переговоров безрезультатно. Русские более претенциозны, чем ожидалось. До сих пор мы проявляли к ним терпение, чтобы немедленно начать мирные переговоры. Надеюсь, мы добьемся этого успешно. Наши естественные требования о мирных переговорах осуществятся. В противном случае, если война начнется снова, чего бы ни хотела российская армия, её боевой дух упадет настолько, что она больше не сможет его набрать. Таким образом, мы достигнем одной из самых важных целей, которую преследуем. Генерал Гоффман тоже так думает. Он не получил ответа от Генштаба по поводу ваших указаний. После подписания мирного договора, вместе с генералом мы обязательно внесём предложение, чтобы предотвратить зверства, совершённые против мусульман проживающих в наших оккупированных провинциях и об эвакуации этих территорий»²⁷.

15-го декабря 1917 г. завершились мирные переговоры и 17-го декабря 1917 г. между Советской Россией и центральными государствами было подписано 28-дневное временное перемирие. Подсчет начинался с 17 декабря. Перемирие было заключено на определенный

²¹ Kılıç... с. 63. ссылается на ATASE, A. 1/1/, kls. 151, D. 578-200, F. 108-5; Подразумевается главнокомандующий турецкими войсками.

²² სვანძღე მ., ბრესტის ზავი და საქართველო, გვ. 29.

²³ Документы. Договор о перемирии между армиями русского Западного фронта и германскими армиями, действующими против означенного фронта. М. -1959, с. 36-37.

²⁴ Şahin... с.152

²⁵ Şahin... с. 152.

²⁶ Kılıç.. с. 70.

²⁷ Kılıç.. с. 74, ссылается на ATASE, A, 1/1. Kls. 151. D. 678-200. F. 108-18.

срок. Однако, если одна из сторон не нарушит его за 7 дней до истечения срока, то его действие автоматически должно было продлиться²⁸.

Вторая статья этого перемирия также относилась к Кавказскому фронту, где говорилось, что одновременно должно было начаться временное перемирие на османско-российском фронте в Азии. А согласно статье 3 разделительные линии на османско-российском фронте и правила передвижения по ним должны были быть разработаны военными комиссиями сторон.

Выводы. В заключении можно сказать, что на первом этапе Брест-Литовских мирных переговоров попытка турецкой делегации эвакуировать восточные провинции Турции, завоеванные российской армией, не достигла своей цели. Однако, способствовало подписанию временного перемирия и прекращению огня на Кавказском фронте, достигнутому 15 декабря 1917 г. в Эрзинджане между Закавказским комиссариатом и командованием турецкой Кавказской армии. А 4-я статья Брест-Литовского мирного договора от 3 марта 1918 г., позволила Турции вернуть утраченные территории силой оружия. Более того, в 1918 г. турецкие войска пересекли русско-турецкую границу 1914 г. и заняли Батумские, Карсские и Ардаганские края.

ԲՐԵՍՏ- ԼԻՏՈՎՍԿԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(3-15. 12. 1917) ԹՈՒՐԿՄԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Կավրելիշվիլի Ռ.

Բանալի բառեր` *Օսմանյան կայսրություն, Խորհրդային Ռուսաստան, Գերմանիա, պայմանագիր, Անտանտ:*

Հոդվածում վերլուծված է հինգ թուրքական փաստաթուղթ: Վերլուծության արդյունքում պարզվել է Բրեստ-Լիտովսկի խաղաղության բանակցություններում թուրքական պատվիրակության առջև դրված խնդիրներից մեկի էությունը, այն է` Սարիղամիշի գործողություններում հաղթանակ տոնելուց հետո ռուսական բանակի կողմից օկուպացված Օսմանյան Թուրքիայի տարածքների տարհանման խնդիրը: Հենց այս փաստաթղթերը ցույց են տալիս, որ թուրքական պատվիրակությունը բանակցությունների առաջին փուլում չի կարողացել հասնել նպատակին:

²⁸ Документы. Договор о перемирии между Россией, с одной стороны, и Болгарией, Германией, Австро-Венгрией и Турцией, с другой стороны, заключенный в Брест-Литовске 2 (15) декабря 1917г. М. -1959. сс. 47-51.

ONE OF THE TASKS OF THE TURKISH DELEGATION AT BREST-LITOVSK PEACE TALKS (DECEMBER 3 -15, 1917)

Kavrelishvili R.

Key words: *Ottoman Empire, Soviet Russia, Germany, treaty, Entente.*

There are five Turkish documents analyzed in the article. The analysis resulted in revealing the essence of one of the tasks for the Turkish delegation at Brest-Litovsk peace talks, that is a problem of evacuating territories of Ottoman Turkey occupied by the Russian army after winning a victory in Sarikamish operation. These very documents show that Turkish delegation could not gain the aim at the first phase of the talks.

Б и б л и о г р а ф и я

1. სვანიძე მ., თურქეთის ისტორია (1299-2000), გამოცემა "არტანუჯი", თბილისი, 2007.
2. სვანიძე მ., ბრესტის ზავი და საქართველო, ქართულის დიპლომატია (წელიწდეული), 3, თბილისის სახელმწიფო უნივერსიტეტის გამომცემლობა, თბილისი, 1996
3. Selami Kılıç, Türk-Sovyet İlişkilerinin Doğuşu, Brest-Litovsk Müzakereleri (22 Aralık 1917 – 3 Mart 1918). İstanbul. -1998.
4. Документы внешней политики СССР. Декрет о мире. Москва. -1959.
5. Enis Şahin, Trabzon ve Batum Konferansları ve Antlaşmaları (1917-1918), Türk Tarih Kurumu Basımevi. Ankara -2002.
6. Akdes Nimet Kurat, Brest-Litovsk Müzakereleri ve Barışı (20 Aralık 1917 – 3 Mart 1918), Belleten, XXXI/121-124. Ankara.-1967.

Принята: 16. 06. 2021

Рецензирована: 03. 10. 2021

Сдана в печать.: 15. 10. 2021

Информация об авторе:

როინ კავრელიშვილი: доктор исторических наук,
профессор кафедры истории Самцхе-Джавахетского
государственного университета (Грузия),
E-mail: roinkav@gmail.com

ԻՆՉՈՒՐ ՓԱԿՎԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՏՎՈ ԲԼՈՒՐԻ
ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ
(ըստ ՀՀ ազգային արխիվի փաստաթղթերի)

Ինզա Ավագյան

Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան

Բանալի բառեր՝ քաղաքային դուռ, Դավիթ Խարաձե, միջնորդություն, խոլերա, տիֆ, բժշկական կանոնակարգ, հուղարկավորություն:

Հեղինակն ուսումնասիրել է Հայաստանի ազգային արխիվում պահպանվող 1262 ֆոնդի՝ ց. 2, գ. 340-ի փաստաթղթերը, որոնք վերաբերում են Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի զինվորական գերեզմանոցի փակման խնդրին՝ սկսած Ալեքսանդրապոլի քաղաքային դուռայի ձայնավոր (պատգամավոր) Դավիթ Խարաձեի դիմումից, որի հիման վրա Ալեքսանդրապոլի քաղաքապետը նահանգապետին միջնորդության գործընթաց է սկսում: Դրա արդյունքում Պատվո բլուրի նշանավոր գերեզմանոցը համարվում է փակված՝ հակառակ Ալեքսանդրապոլի կայազորի պետի և Թիֆլիսում տեղակայված Կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարի կարծիքների:

Նախաբան. Գյումրու Պատվո բլուրը մի հուշարձան է, որը պահպանվում է ի նշան այստեղ հանգչող հերոսների հիշատակի հանդեպ մեր հարգանքի: Մենք նախկինում անդրադարձել ենք Պատվո բլուրում թաղված հերոսներին՝ ներկայացնելով ճշգրտված վիճակագրական տվյալներ այստեղ նրանց թվի մասին: Սակայն գերեզմանոցի թեման ավելի հետաքրքրական դարձավ, երբ ՀՀ ազգային արխիվում 2019-2020 թթ. ընթացքում ուսումնասիրություններ կատարելու ժամանակ Ալեքսանդրապոլի հասարակական կյանքին վերաբերող նյութերի փնտրտուքը մեզ հանդիպեցրեց փաստաթղթերի մի տրցակի, որտեղ մանրամասն ներկայացվում է զինվորական գերեզմանոցի փակման մասին պաշտոնական նամակագրությունը (ՀԱԱ. ֆոնդ 1262, ց.2, գ. 340):

Վերջինիս ուսումնասիրությունը պարզեց, որ Ալեքսանդրապոլի քաղաքային դուման անցյալ դարասկզբին առաջ է քաշել Պատվո բլուրի գերեզմանոցը փակ գերեզմանոց դարձնելու նախագիծ՝ պատճառաբանելով, որ այն խոլերայի համաճարակի պատճառ է, և գերեզմանոցի հարևանությամբ ապրող բնակչության մեջ վարակի բռնկումները հավանաբար կապված են այստեղ թաղումներ կատարելու հետ:

Այս առումով, մասնավորապես, կարևորվում է արքունի խորհրդական Դավիթ Խարաձեի դիմումը՝ թվագրված 1899թ. հոկտեմբերի 19-ով: Համաձայն դիմումի՝ քաղաքային դուման չորս դեսյատին¹ հող է հատկացրել նոր զինվորական գերեզմանոց կառուցելու համար, մինչդեռ Պատվո բլուրում թաղումները շարունակվում են: Պատվո բլուրը, ըստ զեկուցողի, գտնվում էր քաղաքի բանուկ հատվածներից մեկի կենտրոնում՝ բնակեցված քաղաքային բնակչությամբ և սեփական տներում վարձով ապրող ռուս և այլազգի զինվորականներով: Ուստի գերեզմանոցում նոր թաղումների կազմակերպումը պետք էր դադարեցնել աճյունների քայքայման պատճառով առաջացող օդի և հողի աղտոտումից խուսափելու նպատակով: Խորհրդականը խնդրում էր միջնորդություն հարուցել, որով Պատվո բլուրում կդադարեցվեր հանգուցյալների հուղարկավորությունը²:

Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը իր 1899թ. դեկտեմբերի 16-ի №279³ զեկույցով «Նորին Պայծառափայլություն, Կովկասում քաղաքացիական մասի գլխավոր հրամանատար նահանգապետին» էր ուղարկել քաղաքային դումայի արքունի խորհրդական Դ. Խարաձեի դիմումը և Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի մատյանից նոյեմբերի 9-ի նիստի քաղվածքը՝ Պատվո բլուրում հանգուցյալների թաղումները դադարեցնելու միջնորդությամբ: Ինչպես պարզվում է սույն նամակագրությունից, այս գերեզմանոցը, չնայած 1892 թ. հրատարակված բժշկական կանոնակարգի 693-րդ հոդվածին, համարյա բոլոր կողմերից շրջապատված է քաղաքաբնակների տներով և ավելի մոտ է բնակելի կացարաններին, քան պահանջում էր օրենքը: Հաշվի առնելով Ալեքսանդրապոլի հողի աղտոտվածությունը, կոյուղիների աղետալի վիճակը, կանոնավոր ջրամատակարարման բացակայությունը, խմելու համար օգտագործվող ստորգետնյա⁴ ջրերի բարձրացումը հողի մակերես գերեզմանոցից ոչ հեռու՝ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը տեղին է համարում քաղաքի հողի հետագա աղտոտումը կանխելու նպատակով կողմ արտահայտվել գերեզմանոցի փակման՝ քաղաքային ինքնակառավարման միջնորդությանը:

Ի դեպ՝ զինվորական գերատեսչությունը, որի տնօրինության տակ էր Պատվո բլուրը, նույնպես ճանաչում էր այս գերեզմանոցի անբարենպաստ ազդեցությունը շրջապատող տների սանիտարական պայմանների վրա: Դա առկա է դեռևս 1888թ. գերեզմանոցին կից տներից մեկում ապրող Բաքվի գնդի ստորին աստիճանավորների՝ Կովկասյան օկրուգի շտաբին ուղղված դիմումի մեջ, որով նրանք բողոքում էին որովայնային տիֆի դրսևորումներից: Ալեքսանդրապոլի քաղաքագլխի միջնորդությանը կցվում են Խարաձեի դիմումը, 1899թ. նոյեմբերի 9-ին կայացած քաղաքային դումայի նիստի քաղվածքը

¹ Մեկ դեսյատինը հավասար է 2400 քառ. սաժենի կամ 1,09 հեկտարի:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1262, ց. 2, գ. 340, թ. 5, 5 շրջ.:

³ ՀԱԱ, ֆ. 1262, ց. 2, գ. 340, թ. 3, 3 շրջ., 4:

⁴ Գրունտային ջրեր:

մատյանից, նաև Ալեքսանդրապոլի կայազորի պետի 1890թ. փետրվարի 5-ի № 750 գրությունը, ըստ որի՝ Պատվո բլուրում հուղարկավորվում են բացառապես սպայական կոչում ունեցող անձինք:

Անդրադառնանք Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի 1899թ. նոյեմբերի 9-ին կայացած նիստի քաղվածքին, որի ութերորդ հոդվածը վերաբերում է Պատվո բլուրում հուղարկավորությունների դադարեցման պահանջով միջնորդության հարուցմանը: Քաղաքային Դումայի ձայնավորների մի մասը կողմ էր, որ հուղարկավորություններն այս բլուրում, որը գտնվում էր քաղաքի հատակագծի մեջ, բոլոր կողմերից շրջապատված բնակելի տներով և թունավորում ծայրամասի բնակչության օդն ու խմելու ջուրը, պիտի դադարեցվեին՝ համաձայն բժշկական կանոնակարգի 693 հոդվածի (հատոր XIII, 1892թ. հրատ), որն արգելում էր հարյուր սաժենից⁵ քիչ տարածություն ունենալ վերջին տան և գերեզմանոցի միջև: Դումայի մյուս ձայնավորները ենթադրում էին, որ Պատվո բլուրը գտնվում էր զինվորական ենթակայության ներքո, հետևաբար որևէ միջնորդության հարուցում գերեզմանոցի փակման վերաբերյալ ցանկալի չէ: Նիստի ընթացքում ձայնավորներ Ի.Ն Խոյցևը և Ե.Ի.Տեր-Մարտիրոսովը լքեցին նիստերի դահլիճը:

Հաշվի առնելով ձայների բաժանումը՝ նախագահը հարցը դրել էր կանգնելու միջոցով բաց քվեարկության, որից հետո 12 ձայնավոր կողմ է քվեարկել միջնորդության հարուցմանը, իսկ 12-ը՝ դեմ: Կողմ քվեարկողների մեջ է եղել նաև նախագահը, որն էլ հայտատարել է, թե դուման նախագահի ձայնի առավելությամբ որոշում է միջնորդություն հարուցել Պատվո բլուրում հուղարկավորությունները դադարեցնելու վերաբերյալ: Քաղվածքի տակ քաղաքագլխի՝ Գեղամ Տեր-Պետրոսյանի ստորագրությունն է՝:

Հաջորդ փաստաթուղթը, որ առկա է այս գործում, Թիֆլիսից ուղարկված Կովկասյան ռազմական օկրուգի տնտեսական մասի 1901թ. փետրվարի 16 №3323 գրությունն է, որն ունի «Գեներալների ու օբեր-օֆիցերների թաղումները Պատվո բլուր գերեզմանոցում» խորագիրը: Փաստաթղթի բովանդակությունից պարզ է դառնում, որ Ալեքսանդրապոլի կայազորի պետի բացատրության համաձայն՝ Պատվո բլուրում հուղարկավորություններ կատարվել են հազվադեպ՝ տարեկան երկու-երեք անգամ, ինչը ոչ մի կերպ չէր կարող աղտոտել օդը, քանի որ նման եզակի թաղումներ թույլատրվում էին նաև քաղաքների և մայրաքաղաքի եկեղեցիների մոտ: Այս ամենից բացի՝ Պատվո բլրի գերեզմանոցը չէր կարող պատճառ հանդիսանալ խմելու ջրի վարակման համար, քանի որ խմելու ջուրը բնակիչները վերցնում էին աղբյուրներից, որոնք գտնվում էին քաղաքի հակառակ կողմում, և այդ ջուրը չէր հոսում Պատվո բլուրով: Ինչ մնում է ստորգետնյա ջրերին, ապա սրանք գերեզմաններին չէին հասնում, քանի որ գերեզմանոցը գտնվում էր բարձունքի վրա, որի գառիվայրը իջնում էր դեպի հարթավայր, այլ ոչ թե քաղաքի ուղղությամբ:

Օկրուգի տնտեսական մասի պետը մեջբերում էր նաև 39-րդ հրաձգային դիվիզիայի բժշկի հայտարարությունն առ այն, որ հինգ տարվա իր ծառայության ընթացքում չի նկատվել հիվանդության որևէ դեպք ո՛չ Բաքվի, ո՛չ Կաբարդինյան գնդերի զորանոց-

⁵ Մեկ սաժենը հավասար է 2,134 մ:

⁶ ՀԱԱ, ֆ. 1262, ց.2, գ. 340, թ. 6:

ներում, ո՛չ էլ սլոբոդկայում, որտեղ ապրում էին սպաները և նրանց ընտանիքները: Երեխաները երկար ժամանակ էին անցկացնում և խաղում էին այստեղ: Ինչ վերաբերվում է տիֆին, որը բռնկվել էր 1888 թ. Պատվո թուրում կատարված հողային և ծառատնկման աշխատանքների ժամանակ գերեզմանոցին կից տներից մեկում, ապա հատուկ հանձնախումբը, որը նշանակվել էր կայագործի և հոսպիտալի բժիշկներից պատճառը քննելու համար, չէր եկել այն համոզման, որ պատճառն այդ աշխատանքներն էին: Տիֆի համաճարակը, որը բռնկվել էր 1900թ. Բաքվի գնդի՝ քաղաքի կենտրոնում տեղակայված վաշտերից մեկում, հավանաբար արդյունք էր խմելու ջրի աղտոտման՝ տների բակերում կուտակված կենդանական աղբով, որի տակով անցնում էին խմելու ջրի խողովակները: Նույնը կարելի էր ասել նաև երեք տարի առաջ 45-րդ դրագունյան Սևերսկի գնդում բռնկված տիֆի մասին, որի պատճառը գորանոցներին հարևան տարածքների աղտոտումն էր արտաքնոցների պարունակությամբ, ինչը, թափվելով քաղաքի կենտրոնով հոսող գետակի մեջ, Սևերսկի գնդի գորանոցների կողքով իջնում խառնվում էր Արփաչայ (Ախուրյան) գետին:

Ինչ վերաբերում էր Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության կողմից հղված օրենքին, որ գերեզմանոցը չպետք է տեղակայված լինի բնակարաններին 100 սաժենից մոտ (բժշկական կանոնադրություն հողված 693)⁷, պետք է նկատել, որ այս օրենքը բուրին չէր վերաբերում, այլ նոր գերեզմանոցներին, որտեղ անընդհատ թաղումներ էին կատարվում, իսկ Պատվո թուրում, ինչպես վերը նշված է, տարեկան ամենաշատը երկուերեք թաղում է կատարվել: Այսինքն՝ գերեզմանոցը չէ, որ մոտեցել էր քաղաքին, այլ բնակիչներն էին իրենց կառույցներով մոտեցել նրան:

Վերը շարադրվածին զուգահեռ՝ պետք է նաև հիշել, որ Պատվո թուրն ուներ պատմական նշանակություն: Այստեղ հուղարկավորված էին Անդրկովկասյան մարտերում զոհված կամ ստացած վերքերից մահացած շատ զեներալներ և բարձրաստիճան սպաներ, և այն համարվում էր այստեղ տեղակայված գորքերի սպայական անձնակազմի եղբայրական գերեզման: Սպաները շատ թանկ էին գնահատում այն, որ այստեղ հուղարկավորվելու իրավունք ունեն, ինչը բացատրվում էր կայսրության հեռավոր ծայրամասում ծառայող մարդկանց բնական ցանկությամբ՝ զոհվելիս հուղարկավորվել զինակից ընկերների կողքին: Այս ցանկությունը հարգանքի էր արժանի և չպետք է անտեսվեր Ալեքսանդրապոլի իշխանությունների կողմից, քանի որ քաղաքն իր զարգացմամբ և դիրքով բացարձակապես պարտական էր ռուսական զորքին:

Հաշվի առնելով այս ամենը՝ դիվիզիայի բժիշկն առաջարկում էր Պատվո թուրի գերեզմանոցը դեռ չփակել, բայց հուղարկավորել բացառապես բարձրաստիճան սպաներին, իսկ այդ նպատակով ամեն անգամ թույլատրության համար դիմել կայագործի պետին, որը կտեղեկացներ օկրուգի գորահրամանատարին օկրուգի շտաբի միջոցով: Այս կարծիքի կողմնակիցն էր նաև Երևանի նահանգապետ կոմս Տիգրանիանովը, որի հետ շտաբի պետը անձամբ էր զրուցել:

⁷ ՀԱԱ, ֆ. 1262, ց. 2, գ. 340, թ. 7, 7-ի շքջ., 8:

Ուշագրավ է նաև Ալեքսանդրապոլի բերդ-պահեստի կայագործի պետ Դուդիցկի-Լիշինի 1901թ. հունվարի 1-ի № 66 գրությունը⁸: Այստեղ կայագործի պետը հավաստիացնում է, որ Ալեքսանդրապոլի Պատվո բլուրում խիստ սակավաթիվ հուղարկավորվում են միայն կայագործի սպաները: Այսպես, 1900թ. ընդհանրապես որևէ թաղում չի կատարվել, 1898-1899 թթ. հուղարկավորվել է 5 սպա, միջին հաշվով՝ 2-3 մարդ մեկ տարում: Հետևաբար նման սակավաքանակ թաղումների պարագայում խոսք անգամ չի կարող գնալ օդի աղտոտման մասին: Կայագործի պետի հավաստմամբ՝ գերեզմանոցի հարևանությամբ ապրողների հարցուփորձից պարզվել է, որ ոչ մեկը չի լսել գերեզմանոցից եկող առանձնահատուկ հոտի մասին: Ընդհակառակը, հիշյալ վայրը միշտ ծառայել է սպաների երեխաներին և բնակիչներին որպես զբոսավայր: Հայտնի է, որ եկեղեցիներում և եկեղեցիների բակերում նույնպես, որոնք տեղակայված են սովոր բնակչություն ունեցող թաղամասերում, եզակի թաղումներ հազվադեպ թույլատրվում են: Կայագործի պետը համոզված էր, որ խմելու ջրի աղտոտումը նույնպես չէր կարող վերագրվել Պատվո բլուրին, քանի որ խմելու ջուրը բլուրով չի հոսում: Ինչ վերաբերում էր ստորգետնյա ջրերի բարձրացմանը, ապա կայագործի պետի կարծիքով՝ դրանք գերեզմաններին չեն հասնում, քանի որ Պատվո բլուրը, ինչպես վկայում է նրա անունը, քաղաքի բարձունքներից մեկն է, և նրա ձորակն իջնում էր ոչ թե դեպի քաղաք, այլ դեպի հարթավայր: «Ինձ վստահված դիվիզիայի բժիշկները, որոնք լավ գիտեն քաղաքի սանիտարային վիճակը և ջերմորեն հետաքրքրված են այս գործով՝ իմանալով, թե որքան է այն ազդում այստեղ բնակվող Բաքվի գնդի վրա, իմ հարցմանը Պատվո բլուրի մասին հաստատեցին վերոնշյալ կարծիքս: Ըստ դիվիզիայի բժշկի զեկույցի՝ վերջին հինգ տարիների ընթացքում որևէ հիվանդություն չի նկատվել, ո՛չ մտտակայքում գտնվող Բաքվի և Կաբարդինյան գնդերի զորանոցներում, ո՛չ էլ Պատվո բլուրի հարևանությամբ գտնվող սլոբոդկայում, որը ամբողջությամբ բնակեցված է սպաներով»:⁹

Ըստ կայագործի պետի՝ Ալեքսանդրապոլի դուման Պատվո բլուրի գերեզմանոցի փակման մասին իր խնդրագիրը չի հիմնավորում որևէ լուրջ փաստարկով ու դիտարկումով, և հավանաբար այս գաղափարը, որը մեկ ձայնավորի անհիմն ցանկության արդյունքն է, ունի պատահական բնույթ:

Երևանի նահանգապետի № 256 պատասխան արձագանքում, հօգուտ Ալեքսանդրապոլի դումայի խնդրագրի, նշվում է ընդհանրապես քաղաքի վատ վիճակի, հողի աղտոտվածության, կոյուղիների բացակայության մասին: «Իրոք, Ալեքսանդրապոլի կենտրոնով են հոսում գետակը և փոքր ջրանցքը, որոնց վրա են գտնվում տների արտաքնոցները, քաղաքի կենտրոնում՝ հասարակական արտաքնոցը, և խուսափելով վճարումներով այն մաքրելուց, նկատի են ունենում, որ գետակի և ջրանցքի ջուրը կլվանա աղտը: Իսկ այս ջրանցքների ջուրը, որը շարունակում է հոսել բացօդյա, իրոք վատ հոտ է արձակում: Քաղաքի բնակիչները վատ սովորություն ունեն արտաքնոցների պարունա-

⁸ ՀԱԱ, ֆ. 1262, ց. 2, գ. 340, թ. 9,9-ի շրջ., 10, 10 շրջ.:

⁹ Նույնը:

կությունը ձմռանը ձյան հետ թափել փողոց, որտեղ ձնհալի և անձրևի ժամանակ գոյանում են կոյանոցներ, իսկ չոր ժամանակ՝ փոշու գարշահոտ սյուներ: Սակայն քաղաքի այսպիսի վիճակը, որը պահանջում է արագ բարելավում, դժվար թե ծառայի այն գաղափարին, որ պետք է դադարեցվի սպաների թաղումը Պատվո բլուրում»:¹⁰

Նույն արձագանքում նշվում էր նաև, որ 1888թ.՝ տասներկու տարի առաջ, ռազմական գերատեսչությունը Բաքվի գնդում բռնկված տիֆի համաճարակի ժամանակ նույնպես ճանաչեց Պատվո բլուրի անբարենպաստ ազդեցությունը հարևան տների սանիտարային իրավիճակի վրա: Սակայն այս հարցի շուրջ պաշտոնյայի հավաքած տեղեկությունները չհաստատվեցին: Նշանակվել էր կայագործի բժիշկներից կազմված հանձնաժողով, որը պետք է բացահայտեր գերեզմանոցում շինարարական աշխատանքների ազդեցության աստիճանը, սակայն հանձնաժողովը չէր եկել եզրակացության, որ համաճարակի պատճառը այդ աշխատանքներն էին: Հետևաբար Պատվո բլուրի գերեզմանոցի վատ ազդեցության մասին ոչ ոք հարց չէր հարուցել: Բացի այդ՝ տարիների ընթացքում բնակիչներն ինքնակամ տներ են կառուցել ռազմական գերատեսչությանը պատկանող վայրում՝ անընդհատ մոտենալով Պատվո բլուրին: Ընդգծվում էր նաև, որ բժշկական կանոնադրության 712 հոդվածը չի արգելում կառավարության թույլտվությամբ թաղումներ կատարել քաղաքների այն վայրերում, որտեղ այդ թաղումները ըստ սովորության կատարվել էին նաև հնում:

Պատասխանում մեկ անգամ ևս շեշտվում էր Պատվո բլուրի պատմական մեծ նշանակությունը, որ գիտակցել են Կովկասի բոլոր գորահրամանատարները, նաև Նորին կայսերական մեծություն Մեծ իշխան Միխայիլ Նիկոլևիչը, որի կարգադրությամբ գերեզմանոցին կից նաև կառուցվել է տաճար հանգուցյալների հոգեհանգստի համար¹¹:

Ելնելով վերոշարադրյալից՝ ինչպես օկրուգի գորահրամանատարությունը, այնպես էլ Ալեքսանդրապոլի կայագործի պետը գտնում են, որ Պատվո բլուրի գերեզմանոցը չպիտի փակվի, և որ այնտեղ կայագործի պետի թույլտվությամբ հուղարկավորությունները պիտի շարունակվեն միայն բարձրաստիճան սպաների և զինվորական բժիշկների համար՝ խստիվ պահպանելով նոր գերեզմանների կառուցման բոլոր սանիտարական պահանջները (հատուկ լուծույթով ամրացված աղյուսի կամ քարի շարվածք և այլն):

Եզրահանգում. Այսպիսով, չնայած նահանգի և զինվորական օկրուգի բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների հիմնավորված առարկությանը, այնուամենայնիվ տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքագլխի գլխավորությամբ շտապեցին դադարեցնել Պատվո բլուրում թաղումները՝ ուղղափառ բարձրաստիճան սպաների հուղարկավորման համար հողահատկացում կատարելով Ալեքսանդրապոլի նոր հիմնված

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1262, ց. 2, գ. 340, թ. 9,9-ի շրջ. , 10, 10 շրջ.:

¹¹ Տե՛ս **Ավագյան Ի.**, Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր // ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. XXII, պր. 1-2, Գյումրի, 2019, էջ 152:

գերեզմանոցում (արդի Գյումրու Հին գերեզմանոց), որտեղ բազմաթիվ դամբարանա-
քարեր վկայում են, որ, իրոք, սկսած 1900-1901 թթ-ից՝ այստեղ սկսել են հուղարկավորել
նաև բարձրաստիճան ռուս և այլազգի բրիստոնյա սպաների և չինովնիկներին¹²:

**ПОЧЕМУ БЫЛО ЗАКРЫТО КЛАДБИЩЕ НА ХОЛМЕ ЧЕСТИ В
ГОРОДЕ АЛЕКСАНДРОПОЛЕ
(по документам Национального архива РА)**

Авагян И. Э.

Ключевые слова: *Городская дума, Давид Харадзе, ходатайство, холера, тиф, врачебный
устав, погребение.*

Представлены архивные материалы, относящиеся закрытию кладбища на Холме чес-
ти в городе Александрополь. В переписке представлены материалы-ходатайства, письма, заяв-
ления гласных (депутатов), председателя, городской головы, городской управы Александр-
ополя и отзывы, надписи, письма Эриванского губернского правления, начальника гарни-
зона Александропольской крепости, начальника штаба Кавказского военного округа.

**WHY WAS THE CEMETERY ON THE HILL OF
HONOR CLOSED IN THE CITY OF ALEXANDROPOL
(according to the Documents of the National Archive RA)**

Avagyan I. E.

Key words: *City council, David Kharadze, petition, cholera, typhus, medical regulations, burial.*

Presents archival materials related to the closure of the cemetery on the Hill of Honor in
the city of Alexandropol. It also introduces materials-petitions, letters, statements of the members
of city, Councils, some notes of the chairman, the mayor, the city council of Alexandropol. The
article touches upon the reviews, inscriptions and some letters of the Erivan provincial government,
the head of the garrison of the Alexandropol fortress, the chief of staff of the Caucasian military
district.

¹² **Ավագյան Ի.**, Գյումրու Հին գերեզմանոցը որպես պատմամշակութային պահպանական միավոր
// ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XXI, Գյումրի, 2018, էջ 200:

Գ ր ա կ ա ն ո թ յ ո Ւ Ն

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) , ֆ. 1262, ց. 2, գ. 340, թ. 3-3 շրջ., թ. 4, թ. 5- 5 շրջ., թ. 6, թ. 7- 7 շրջ., թ. 8, թ. 9-9 շրջ., թ. 10-10 շրջ:
2. Ավագյան Ի., Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր //ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ.22, պր. 1-2, Գյումրի, 2019:
3. Ավագյան Ի., Գյումրու Պատվո բլուրը որպես պատմամշակութային պահպանական միավոր // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 23, պր. 1, Գյումրի, 2021, էջեր 64-72:
4. Գյումրու հին գերեզմանոցը որպես մշակութային պահպանական միավոր // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XXI, Գյումրի, 2018, էջեր 195-210:

Ընդունվել է՝ 10. 09. 2021

Գրախոսվել է՝ 03. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝ պատմական զիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն,
Էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2021.2-132

ՌՄԴԲԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արմեն Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, հեղափոխություն, ոստիկանություն, ռազմական դրություն, կայազոր, սոցիալ-դեմոկրատ, թռուցիկ, կոչ:*

1905թ. հունվարի 9-ին Պետերբուրգում խաղաղ ցուցարարների գնդակոծմամբ սկսվեց Ռուսաստանում առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: Այն ալեկոծեց ողջ երկիրը՝ իր հորձանուտի մեջ առնելով նաև Ալեքսանդրապոլը:

Հոդվածի շրջանակներում գիտական գրականության, արխիվային վավերագրերի և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ՝ առանձին քննության առարկա է դարձել ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործունեությունը Ռուսական առաջին հեղափոխության տարիներին, ներկայացվել են շարժման պատճառները, ընթացքն ու արդյունքները, լուսաբանվել են հեղափոխական շարժումն արմատախիլ անելու ուղղությամբ իշխանությունների գործադրած քայլերը:

Նախաբան. 1905թ. սկսված Ռուսական առաջին հեղափոխությունը շարժման մեջ դրեց կայսրության հասարակական բոլոր դասակարգերին ու քաղաքական ուժերին: Հաղթանակի գլխավոր գրավականներից՝ մեկը համարելով բանակը՝ քաղաքական ուժերը ջանք չխնայեցին գորքերում հեղափոխական գաղափարների տարածման համար:

Սոցիալ-դեմոկրատական առաջին խմբերն Անդրկովկասում տեղակայված գործերում հայտնվեցին 1901-1902թթ.: Իշխանություններն առանձնահատուկ վերաբերմունք ունեին օկրուգի նկատմամբ: Վերջինս սահմանակից էր Օսմանյան կայսրությանն ու Իրանին, որոնց նկատմամբ Ռուսաստանն անտարբեր չէր:

Օկրուգի ամենախոշոր հենակետն Ալեքսանդրապոլն էր: Քաղաքն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ ուներ ռազմաստրատեգիական բացառիկ կարևոր նշանակություն, իսկ XIXդ. վերջից նաև վերածվել էր երկաթուղային խոշոր հանգուցակետի՝ մի կողմից կապվելով Կարսի, իսկ մյուս կողմից՝ Երևանի, Նախիջևանի և Ջուլֆայի հետ: Այստեղ էին տեղակայված Բաքվի 153-րդ ու Կաբարդինյան 80-րդ հետևակային գնդերը, 45-րդ դրագունյան պահեստային գունդը, 39-րդ հրետանային բրիգադը, ամրոցային հրետանին և այլ ստորաբաժանումներ¹:

Հասկանալի պատճառներով, հեղափոխության նախօրեին քաղաքական ուժերը չէին կարող ուշադրություն չդարձնել այդպիսի մեծ կայազորում խմբեր կազմակերպելու և զինվորների շրջանում քաղաքական աշխատանք ծավալելու անհրաժեշտության վրա: Ի դեպ, Ալեքսանդրապոլի կայազորի զորամասերը հիմնականում համալրվում էին Խարկովի, Պոլտավայի, Կովնոյի և Սարատովի նահանգների, այսինքն՝ հեղափոխական շարժման ու սոցիալ-դեմոկրատական ազդեցությամբ լայնորեն ընդգրկված շրջանների գյուղացիներից ու բանվորներից: Փաստ, որն անհամեմատ ավելի դյուրին էր դարձնում զինվորների շրջանում հեղափոխական գաղափարների տարածման գործը:

Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործունեությունը 1905-1907թթ.

Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական խումբը հիմնվել էր 1902 թ.: Քաղաքական շրջանակներում այն հայտնի էր «Սոցիալ-դեմոկրատական խմբի Ալեքսանդրապոլի բաժանմունք» անունով, ստեղծել էր ընդհատակյա քարոզչական աշխատանքի լայն ցանց, ուներ գաղտնի գրադարան և տարածում էր հեղափոխական բնույթի կոչեր, թուղիկներ ու բրոշյուրներ: Խումբը հեղափոխական մեծ աշխատանք ծավալեց կայազորի զինվորների և կրտսեր հրամանատարական կազմի շրջանում²: Ցավոք, խմբի անդամների թվի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Ըստ ժնևում լույս տեսնող բոլշևիկյան «Պրոլետար» թերթի՝ 1905թ. դրությամբ այն ուներ մոտ 100-150 անդամ, և այդ թիվն արագորեն աճում էր³:

Խումբը բացահայտվեց 1903թ. մարտի 5-ին պատահաբար, երբ կայազորի 39-րդ հրետանային բրիգադի առաջին մարտկոցի ֆելդֆեբել Ելյուտինը շարքային Իգրայիլ Յապպեի սենյակի վառարանի ծխնելույզի մեջ հայտնաբերեց կայազորի զինվորական սոցիալ-դեմոկրատական խմբին պատկանող գրականության ցանկը և 1902-1903 թթ.

¹ Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, 1956, էջ 78:

² Աղայան Մ., Հայաստանը 1905-1907թթ. ռևոլյուցիայի տարիներին, «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (հոդվածների ժողովածու), Երևան, 1955, էջեր 42-43:

³ «Пролетарий» еженедельная газета. Женева. -1905. № 11. 9 августа (27 июля).

աշխատանքային ծրագիրը⁴: Սկսված քրեական գործի շրջանակներում խմբի 9 անդամներ ձերբակալվեցին և 1904թ. սեպտեմբերին կանգնեցին Կովկասյան ռազմական օկրուգի դատարանի առջև⁵:

Դատաքննության ընթացքում պարզվեց, որ խումբը փականագործ Ֆեոդոր Գրաչովի միջոցով Թիֆլիսում գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից ստացել, գաղտնի ճանապարհով ներկրել ու 39-րդ հրետանային բրիգադի առաջին մատկոցի թնդանոթաձիգներ Յապպելի, Մորդուխվիչի, նույն բրիգադի երկրորդ մարտկոցի թնդանոթաձիգներ Լիֆշիցի և Վինիցկու մոտ պահել է հեղափոխական բնույթի զրքեր⁶: Ըստ ռազմական դատարանի մեղադրական եզրակացության՝ «Կաբարդինյան 80-րդ գնդի կրտսեր սպա Վուլֆովիչը, նույն գնդի շարքային զինվոր Մեբբ, Բաքվի 153-րդ հետևակային գնդի շարքային զինվորներ Էյդենսոնը, Շտրուսը և Միպոզը գործարար մասնակցություն են ունեցել Ալեքսանդրապոլում սոցիալ-դեմոկրատական խումբ կազմակերպելու գործում, աշխատել են նոր անդամներ հավաքագրել, երկաթուղային բանվոր Գրաչովի միջոցով կապեր են հաստատել Թիֆլիսի անբարեհույս անձնավորությունների հետ, ինչպես նաև կարդալու և Ալեքսանդրապոլի հակակառավարական ընկերության իրենց անդամների մեջ տարածելու նպատակով ձեռք բերել հանցավոր զրքեր»⁷:

Հրամանատարությունը, թեև ձերբակալեց Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական խմբի առավել աչքի ընկնող անդամներին, սակայն հեղափոխական շարժումները զորամասերում արմատախիլ անել չկարողացավ: «Ընթացիկ տարվա առաջին ամիսներին Ալեքսանդրապոլի կայագործի կրտսեր չինների շրջանում մեծ քանակությամբ տարածվել են հակակառավարական թռուցիկներ, -գրել է Ալեքսանդրապոլում Երևանի ժանդարմական վարչության պետի օգնականն իր 1905թ. ապրիլի 25-ի զեկույցում,-կայագործի զորքերի մեջ կազմվել է մի հանցավոր կազմակերպություն, որը զբաղված է հեղափոխական բովանդակություն ունեցող թռուցիկներ տարածելով: Դրանք զինվորներին դրդում են խախտել երդումը: Զորամասերում կան կրտսեր չիներ, որոնք համակրում են սոցիալիստների ուսմունքին»⁸:

Սեպտեմբերին Ալեքսանդրապոլի կայագործի զինվորական սոցիալ-դեմոկրատական խումբը վերածվեց կազմակերպության: «Նրա գործունեությունն ընդլայնվեց, ընդգրկվեցին զինվորականների նոր շրջաններ, -գրում է «Պրոլետար» պարբերականը,- նոր կապեր հաստատվեցին այլ քաղաքներում գործող սոցիալ-դեմոկրատական մարմինների հետ: Կազմակերպությունն ունի «ազատ զինվորական տպարան», որի նպատակն է առօրյա կյանքից վերցված դրվագներ լուսաբանող թռուցիկներով ոտքի հանել Կովկասի ազգաբնակչությանը»⁹:

⁴ Վրաստանի կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎԿՊԱ), ֆոնդ. 23, ցուցակ 1, գործ 15, թ. 19:

⁵ ՎԿՊԱ, ֆոնդ 23, ցուցակ 1, գործ 19, թ. 7:

⁶ ՎԿՊԱ, ֆոնդ 23, ցուցակ 1, գործ 19, թ. 23:

⁷ ՎԿՊԱ, ֆոնդ 23, ցուցակ 1, գործ 19, թ. 52:

⁸ ՎԿՊԱ, ֆոնդ 23, ցուցակ 1, գործ 19, թ. 61:

⁹ «Пролетарий» еженедельная газета. Женева. -1905. № 23. 31 октября (18).

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին կազմակերպությունը բազմացրեց և Ալեքսանդրապոլում ու Երևանի նահանգի այլ քաղաքներում տարածեց հեղափոխական բնույթի կոչեր ու թռուցիկներ: Ոստիկանական մի հաղորդագրության համաձայն՝ բնակչության շրջանում կազմակերպության թռուցիկները տարածելու կասկածանքով 1905թ. դեկտեմբերին Երևանում ձերբակալվել է Ալեքսանդրապոլի բնակիչ Լևոն Տեր-Հովսեփյանը¹⁰:

Կազմակերպության գործունեությունն առանձնապես մեծ ծավալներ ընդունեց 1905թ. հոկտեմբերյան համառուսաստանյան գործադուլի և դեկտեմբերյան զինված ապստամբության օրերին: 1905թ. նոյեմբերի 3-ին, դիմելով 1901-1902թթ. բանակ գորակոչվածներին, կազմակերպությունը կոչ արեց չճանաչելու ժողովրդին թշնամի իշխանություններին: «Ծառայության ժամկետը լրացած զինվորների համար պահանջ է քանհապաղ գորացրում, - գրված է թռուցիկում, - հրաժարվե՛ք ծառայությունից»¹¹: Առաջ քաշվեցին նաև տնտեսական ու քաղաքական բնույթի պահանջներ՝ ներում շնորհել քաղաքական համոզմունքների համար տույժ ստացած զինվորներին, կրճատել ծառայության ժամկետը, ավելացնել աշխատավարձը, կրտսեր չինների և սպաների մասնակցությամբ ստեղծել ընտրովի դատարան, տալ խոսքի, միությունների և մամուլի ազատություն և այլն:

Զինվորների համար հատկապես անտանելի էր ոստիկանական ֆունկցիաների կատարումը: Բանն այն է, որ Ալեքսանդրապոլում սկսված հեղափոխական ելույթները ճնշելու համար իշխանությունները քաղաքը հեղեղեցին զորքերով: Հաճախակի դարձան ցուցարարների ուղղությամբ համազարկային կրակ բացելու կարգադրությունները: Մինչդեռ այդ հրամանն ընդունելի էր ոչ բոլորի համար: Ավելի հաճախ պարզվում էր, որ գնդակոծումից հետո կամ բոլորովին զոհեր չկան, կամ նրանց թիվը շատ քիչ է: Բանակը չէր ցանկանում կրակել ժողովրդի վրա, դրա համար էլ «մեծամասնությունը գնդակը օդն էր արձակում, կրակում էին միայն փոքրաթիվ անպիտանները, որոնցից ամեն մի վաշտում կգտնվեր 2-3 հոգի»¹²:

1905թ. նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլում տեղակայված Բաքվի 153-րդ և Կաբարդինյան 80-րդ հետևակային գնդերը ապստամբեցին և կոչ արեցին միանալ բանվորների ընդհանուր գործադուլին¹³: «Հավաքույթի ժամանակ, - գրված է ոստիկանական հաղորդագրության մեջ, - արտահայտվում էին հեղափոխական բնույթի մտքեր, լսվում էին Նորին մեծության անձը վիրավորող արտահայտություններ: Շարքայինների մեջ

¹⁰ Հեղափոխական գործունեություն ծավալելու համար Լ. Տեր-Հովսեփյանը նախկինում արդեն պատիժ կրել էր. Երևանի 5-րդ հրաձգային գումարտակի զինվորների շրջանում հեղափոխական բնույթի թռուցիկներ և գրականություն տարածելու համար նա 1902թ. ձերբակալվել և երեք տարով աքսորվել էր Սիբիր: 1906թ. ապրիլին դատարանը Լ. Տեր-Հովսեփյանին դատապարտեց ևս մեկ տարվա ազատազրկման (Մանրամասն տե՛ս, ՎԿՊԱ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 195, թ. 1):

¹¹ **Հարությունյան Գ.**, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, «Հայպետհրատ», 1956, էջ 81:

¹² «Пролетарий» еженедельная газета. Женева. -1905. № 11. 9 августа (27 июля).

¹³ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902-1921)», ժողովածու, Երևան, 1960 էջեր 177-178:

սկսված խմորումները վերածվում են գոյություն ունեցող կարգերի նկատմամբ դժգոհության»¹⁴:

Չնայած ապստամբների նկատմամբ գործադրվող խիստ միջոցներին, զինվորական ելույթները չդադարեցին: Նոյեմբերի 22-ի ցերեկը Բաքվի 153-րդ հետևակային գնդի 300 զինվորներ, հավաքվելով Ալեքսանդրապոլի հայկական գերեզմանատանը, կրկին ապստամբեցին՝ կայազորի հրամանատար գեներալ-լեյտենանտ Տարանովսկուց պահանջելով «պահակային ծառայությունից ազատել և անմիջապես զորացրել պահեստից կանչված զինվորներին»¹⁵:

Նոյեմբերի 24-ին ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը հրապարակեց 33 կետից կազմված թռուցիկ, որում առաջ քաշեց Բանակի դեմոկրատացման, զինվորների իրավական-քաղաքական և տնտեսական դրության բարելավման խնդիրներ: Դիմելով զինվորներին՝ կազմակերպությունը հայտարարեց, թե իշխանությունները ծառայության ժամկետը լրացած զինվորներին չեն զորացրում, որովհետև ցանկանում են նրանց սվիններով խեղդել հեղափոխությունը¹⁶:

Հեղափոխական իրադրության հասունացումը 1905թ. դեկտեմբերին երկիրը հասցրեց զինված ապստամբության: Ալեքսանդրապոլը դրան արձագանքեց քաղաքական գործադուլներով: Հատկապես մեծ մասշտաբներ ընդունեց երկաթուղայինների շարժումը:

Իշխանություններն անգոր գտնվեցին գործադուլավորների դեմ: Փոխարքայի հրամանով դեկտեմբերի 19-ից քաղաքը հայտարարվեց ռազմական դրության մեջ¹⁷: Իշխանությունները դիմեցին սադրանքների: Օրինակ՝ քաղաքացիական իշխանություններին աջակցելու և «բանվորական ընդհարումները» հանդարտեցնելու պատրվակով Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի պահնորդության զորքերի հրամանատարը դեկտեմբերի 20-21-ին Ալեքսանդրապոլի կայարան գործուղված Դրագունյան 45-րդ գնդի զինվորներից պահանջեց «համազարկային կրակով ճնշել անհնազանդության ցանկացած փորձ»¹⁸: Եղան նաև այլ դեպքեր: Օրինակ, լուրեր տարածվեցին, թե ցուցարարները պատրաստվում են հարձակվել Ալեքսանդրապոլի ամրոցի վրա, կամ ծեծել են քաղաքի փողոցներում հանդիպած զինվորներին¹⁹:

Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ջանքերով Բանակի ու ցուցարարների միջև բախում հրահրելու իշխանությունների փորձերը ձախողվեցին: Դեկտեմբերի 20-ին դիմելով զինվորներին՝ կազմակերպությունը տեղեկացնում էր, որ Թիֆլիսում, Գորիում, Բաթումում և այլուր տեղակայված կայազորների զինվորները հրաժարվել են հրամանատարների պահանջները կատարելուց և միացել են ժողովրդին: «Կառավարության նպատակն է սվինների ուժով հետ վերցնել այն, ինչ

¹⁴ ՎԿՊԱ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 33, թ. 334:

¹⁵ Նույն տեղում, գործ 32, թ. 264:

¹⁶ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902-1921)», ժողովածու, Երևան, 1960 էջ 186:

¹⁷ ՎԿՊԱ, ֆոնդ 39, ցուցակ 1, գործ 2555, հ. 8, թ. 195:

¹⁸ Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 98:

¹⁹ Նույն տեղում, էջ 99:

խոստացել է մանիֆեստով,-գրված էր թռուցիկում,-գնդի հրամանատար գնդապետ Լևիցկին, փոխգնդապետ Մկովը, կապիտաններ Պատուլին և Կորսունսկին ու մյուսները, զինվորին հանձնարարում են կոտորել՝ հաշվի չառնելով սեռ, հասակ, աստիճան, կոչում, հարազատություն և ազգություն, որովհետև նպատակ ունեն զինվորի արյան մեջ խեղդել հասարակության բոլոր խավերը ու բանակը ողողած շարժումը, որովհետև իշխանություններն այդ շարժման մեջ տեսնում են իրենց անկումը»²⁰:

Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական զինվորական կազմակերպության ակտիվությունը հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին լուրջ անհանգստություն առաջացրեց կառավարող շրջանակներում: «Ըստ գործակալական տեղեկությունների,-զեկուցում էր փոխարքայի դիվանատունը Ոստիկանության դեպարտամենտին,-սոցիալ-դեմոկրատական քարոզչությունը մեծ զարգացում է ստացել Ալեքսանդրապոլում տեղավորված 39-րդ հրետանային բրիգադի զորամասերում և Բաքվի 153-րդ հետևակային գնդում: Այդ զորամասերի ճամբարային դասավորությունները հեղեղված են զինվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության քարոզչությունով»²¹:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում զինվորական էլույթները դաժանորեն ճնշվեցին, իսկ ապստամբության ղեկավարները ձերբակալվեցին, սակայն մթնոլորտը կայագործի զորամասերում չփոխվեց:

Հետաքրքիր է այն, որ հեղափոխության ամենաթեժ օրերին կառավարող շրջանակներում գտնվեցին մարդիկ, որոնք չվարանեցին տեղի ունեցածին ճիշտ գնահատական տալուց: Օրինակ՝ գեներալ-մայոր Շերենկինը դեկտեմբերի 3-ին Ռուսաստանի Ներքին գործերի նախարարին ներկայացրած իր զեկուցագրում Ալեքսանդրապոլի կայագործում սկսված հեղափոխական էլույթները բացատրում էր ծառայության ժամկետը լրացած զինվորների զորացրումը հետաձգելով և նրանց ոստիկանական գործողությունների մեջ ներգրավելով»²²:

Դեկտեմբերյան ապստամբության անհաջողությունից հետո հեղափոխական էլույթները բանակում թուլացան: Դրանք նոր թափով վերսկսվեցին 1906թ. մարտին՝ Թիֆլիսի կայագործի Մինգրելյան գնդի ապստամբությամբ: Զինվորների էլույթն իշխանությունները ճնշեցին, իսկ ապստամբության ղեկավարներին դատապարտեցին մահվան: Թիֆլիսը դրան պատասխանեց գործադուլներով և բողոքի ցույցերով:

Մինգրելցիների էլույթը ոտքի հանեց նաև Ալեքսանդրապոլի կայագործի զինվորներին: Ընդվզեց Կովկասյան սակրավորների բրիգադը, որ կանգնած էր քաղաքից հյուսիսարևմուտք՝ Արփաչայ գետի ձախ ափին: Հունիսի 23-24-ին բրիգադում լուրեր տարածվեցին, թե Թիֆլիսի կայագործի զինվորները հրաժարվել են դատարանի վճիռը կատարելուց և այժմ մինգրելցիներին տեղափոխում են Ալեքսանդրապոլ՝ գնդակահարությունը Կաբարդինյան 80-րդ հետևակային գնդում ի կատար ածելու: Ցանկանալով փրկել իրենց եղբայրներին՝ հունիսի 25-ին բրիգադի առաջին և երկրորդ գումարտակների 600 զինվորներ հրաժարվեցին ենթարկվել փոխգնդապետ Կիսիլյովի ու բրիգադի ժամանակավոր

²⁰ Աղայան Օ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, 1955, էջ 21:

²¹ Паризм в борьбе с революцией 1905-1907гг. Сборник документов. М. Соцэкгиз. -1936. с. 47.

²² Նույն տեղում., էջեր 17-18:

հրամանատար Բասկիչի հրամաններին և կոտրելով զենքի պահեստի դռները՝ զինվեցին²³: Հետագա իրադարձությունները Կովկասի ոստիկանապետը փոխարքային ուղարկած իր զեկուցագրում ներկայացրել է հետևյալ կերպ. «Միտինգի հավաքված զինվորները պահակային սպայի ցրվելու հրամանին ի պատասխան քարեր նետեցին նրա ուղությամբ, ապա կրտսեր չիներից մեկը հրացանի խզակոթով հարվածեց նրա գլխին»²⁴:

Ապստամբ զինվորները, սակայն, չձերբակալեցին իրենց հրամանատարներին, դուրս չեկան ճամբարից և կայազորի մյուս զորամասերի հետ միավորվելու փորձեր չարեցին: Օգտվելով նրանց անկազմակերպվածությունից՝ հունիսի 26-ի առավոտյան զնդապետ Գուրևի մեծաքանակ ուժերը 24 թնդանոթներով շրջապատեցին ճամբարը և ապստամբներին հարկադրեցին հանձնվել: Խռովարարներից 21-ը (զինվորներ՝ Լ. Գաստենկո, Ս. Դրոզդեն, Կ. Տումաչենկո, Պ. Բեժիտաձե, Ն. Մասյանիս, Պ. Պապուշ, Ա. Ղահրամանով, Ս. Խմելաձե, Վ. Հաբոյանց, Ս. Կուլագին, ենթասպա՝ Շումարին և ուրիշներ) ձերբակալվեցին²⁵:

Այս պատմության մեջ զավեշտալին այն է, որ իրենց ազնիվ մղումի մեջ սակրավորները նույնիսկ տեղյակ չէին, որ Թիֆլիսից Ալեքսանդրապոլ են փոխադրվել ոչ թե մահվան դատապարտված մինգրելցիները, այլ Թիֆլիսի երկաթուղային գումարտակի 19 զինվորներ, որոնք պահանջել էին ազատ արձակել մինգրելցիներին, իսկ մերժում ստանալուց հետո հրաժարվել էին գործադուլավոր երկաթուղայիններին փոխարինելուց:

Ձերբակալված սակրավորների դատավարությունը տեղի ունեցավ 1906թ. դեկտեմբերի 11-14-ին՝ Ելիզավետպոլում: Կովկասյան ռազմական օկրուգի արտակարգ դատարանը ենթասպա Շումարինին, շարքայիններ Գաստենկոյին և Մեմիսինովին որպես խռովության ղեկավարների՝ դատապարտեց առավելագույն պատժի՝ զնդակահարության: Շարքային Պապուշը դատապարտվեց ցմահ տաժանակիր աշխատանքի, եֆրեյտորներ Ռնինը, Մարիանիսը, շարքային Բեժիտաձեն՝ 20 տարվա, իսկ Կրժիմայլոն և Ղահրամանովը՝ 10 տարվա տաժանակիր աշխատանքների: Խռովության մյուս մասնակիցները ստացան առավել մեղմ պատժաչափեր:

Ձերբակալված սակրավորներին և Թիֆլիսից Ալեքսանդրապոլ փոխադրված զինվորներին իշխանությունների վրեժխնդրությունից փրկելու հույսով Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը թռուցիկով դիմեց կայազորի զինվորներին՝ կոչ անելով «կանգնել ազատության մարտիկների կողքին և խաղաղ ժողովրդի արյունով ներկված իրենց սվիններն ուղղել ժողովրդի թշնամիների դեմ»²⁶: Ձերբակալվածներին ազատելու պահանջով առանձին թռուցիկ տարածեց նաև Համառուսաստանյան զինվորական միության Ալեքսանդրապոլի կայազորի խորհուրդը²⁷: Սակայն, այս անգամ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կոչերն

²³ «Революционное движение... (Сборник)», сс. 359, 362. ՎԿՊԱ, ֆոնդ 22, ցուցակ 1, գործ 58, թ. 196:

²⁴ ՎԿՊԱ, ֆոնդ 63, ցուցակ 2, գործ 3915, թ. 196:

²⁵ Նույն տեղում, ֆոնդ 22, ցուցակ 1, գործ 58, թ. 86-87:

²⁶ ՎԿՊԱ, ֆոնդ 32, ցուցակ 1, գործ 253, թ. 7:

²⁷ Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան., «Հայպետհրատ», 1956, էջ 139:

արդյունք չտվեցին: Դատավարությունից 2 տարի անց մահվան դատավճիռն ի կատար ածվեց: «Համաձայն Կովկասյան սակրավորների բրիգադի հրամանատարի N 1919 գրության՝ Կովկասյան ռազմական օկրուգի արտակարգ դատարանի 1906թ. դեկտեմբերի 14-ի վճիռն ի կատար ածվեց 1908 թ. սեպտեմբերի 6-ին», -գրված է ռազմական օկրուգի դատախազի 1908թ. սեպտեմբերի 11-ին օկրուգի դատարանին ներկայացրած հատուկ գրության մեջ²⁸:

Սակրավորների անհաջողությունից հետո հեղափոխական շարժումներն Ալեքսանդրապոլի կայազորի զորամասերում թուլացան: 1906թ. թվագրված վերջին՝ փոքրիշատե գանգվածային դեպքը Բաքվի 153-րդ հետևակային գնդի հուլիսյան ելույթն է: 1906թ. հուլիսի 13-ին 150 զինվորներ, հավաքվելով ճամբարային հրապարակում, հրաժարվեցին սպայի հրամանները կատարելուց՝ պահանջելով գորացրել 1903-1904 թթ. բանակ գորակոչված կրտսեր չիներին և դադարեցնել երկրի հեղափոխությամբ բռնված շրջաններում ապրող իրենց հարազատների նկատմամբ կազակական գնդերի կողմից գործադրվող բռնությունները: Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի 1906թ. հուլիսի 29-ին Ոստիկանության Դեպարտամենտ ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ «երբ գնդացրային վաշտին հրամայվեց կրակել ապստամբների ուղղությամբ, հավաքվածները ցրվեցին»²⁹: Թե ապստամբությունն ի՞նչ շարունակություն ունեցավ, հայտնի չէ: Հայաստանի և Վրաստանի արխիվներում մեզ չհաջողվեց այդ մասին որևէ տեղեկություն գտնել:

Տեղեկություններ չկան նաև Ալեքսանդրապոլի կայազորի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հուլիս-դեկտեմբեր ամիսների գործունեության մասին: Հայտնի է միայն, որ օգոստոսի 12-ին ոստիկանությանը հաջողվել է գործակալական ցանցի միջոցով հավաքել կայազորի «Համառուսական զինվորական միության» տպագրած «Եղբայր կաբարդինցիներ» վերնագրով թռուցիկի 110 օրինակ: Նույն օրը քաղաքում հայտնաբերվել է նաև հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով հեղափոխական գրականության գաղտնի պահեստ³⁰:

1906թ. վերջերից հեղափոխական շարժումները երկրում անկում ապրեցին: Թուլացան խմորումները նաև բանակում: Դրանք այլևս չունեցան նախկին թափն ու ծավալները:

Եզրահանգում. Ամփոփելով Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ծավալած գործունեության համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. Հույս ունենալով ցարական իշխանությունների դեմ պայքարի մեջ ներգրավել նաև բանակը՝ քաղաքական ուժերը ջանք չխնայեցին գորքերում հեղափոխական գաղափարներ տարածելու համար: Ալեքսանդրապոլը Կովկասյան ռազմական օկրուգի ամենախոշոր հենակետերից մեկն էր և քաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում հայտնվեց արդեն XXդ. սկզբին:

²⁸ ՎԿՊԱ, ֆոնդ 22, ցուցակ 1, գործ 58, թթ. 89-90:

²⁹ Паризм в борьбе с революцией 1905-1907гг. Сборник документов. М. Соцэкгит. -1936, с. 64.

³⁰ ՎԿՊԱ, ֆոնդ 10, ցուցակ 2, գործ 207, թ. 14:

Կայագործի զինվորական սոցիալ-դեմոկրատական խումբը հիմնվեց 1902թ.: 1905թ. սեպտեմբերին այն վերածվեց կազմակերպության, իսկ նոյեմբերին ստեղծվեց «Համառուսական զինվորական միության» Ալեքսանդրապոլի կայագործի խորհուրդը: Հեղափոխության տարիներին կազմակերպությունը մեծ աշխատանք ծավալեց կայագործի զինվորների, կրտսեր հրամանատարական կազմի և աշխատավորության շրջանում հեղափոխական տրամադրությունները զարգացնելու գործում: Կազմակերպության թուրքիկներն ու կոչերը արձագանք գտան բանակում՝ առանձին զնդեր ու վաշտեր հրաժարվեցին կատարել գործադուլավոր բանվորների ու գյուղացիների նկատմամբ զենք գործադրելու հրամանները, իսկ ժողովուրդն սկսեց վստահել զինվորին՝ նրա մեջ այլևս չտեսնելով դահիճի:

АЛЕКСАНДРОПОЛЬСКАЯ ВОЕННАЯ СОЦИАЛ-ДЕМОКРАТИЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ РСДРП В ГОДЫ ПЕРВОЙ РУССКОЙ РЕВОЛЮЦИИ

Այրապետյան Ա. Ս.

Ключевые слова: *Александрополь, революция, полиция, военное положение, гарнизон, социал-демократ, листовка, призыв.*

Начавшаяся в 1905 г. Первая русская революция привела в движение все общественные классы и политические силы империи. Надеясь вовлечь армию в борьбу с властью, политические силы не пощадили усилий для распространения революционных идей в войсках.

Будучи одной из крупнейших баз Кавказского военного округа, Александрополь оказался в центре внимания политических сил уже в начале XXв.. Военный социал-демократический отряд гарнизона был основан в 1902 году. В сентябре 1905г. он преобразовался в организацию, а в ноябре был сформирован Совет александропольского гарнизона «Всероссийского военного союза». В годы революции организация проделала много работы над формированием революционных настроений у солдат, младшего командного состава гарнизона и в среде рабочих. Листовки и призывы организации получили отклик в армии: отдельные полки и отряды отказывались выполнять приказ применять оружие против бастующих рабочих и крестьян. Народ стал доверять солдату, не видя в нем больше палача.

THE RUSSIAN SOCIAL DEMOCRATIC LABOUR PARTY (RSDLP) ALEXANDROPOL MILITARY SOCIAL-DEMOCRATIC ORGANIZATION DURING THE FIRST RUSSIAN REVOLUTION

Hayrapetyan A. S.

Key words: *Alexandropol, revolution, police, martial law, garrison, social democrat, leaflet, call.*

The first Russian revolution, which began in 1905, set in motion all social classes and political forces in the empire. Hoping to involve the army in the struggle against the authorities, the political forces spared no effort to spread revolutionary ideas in the army.

Alexandropol was one of the largest strongholds in the Caucasus military district; it became the focus of political forces in the early XX century. The garrison military social-democratic group was founded in 1902. In September 1905 it was transformed into an organization, and in November the Council Alexandropol garrison of the “All-Russian Military Union” was formed. During the years of the revolution, the organization worked hard to develop the revolutionary mood of the garrison soldiers, junior command staff, and garrison staff workers. The leaflets and calls of the organization received a response in the army: individual regiments and detachments refused to carry out the orders to use weapons against the striking workers and peasants, and the people began to trust the soldier, seeing no more executioner in him.

Գրականություն

1. Աղայան Ծ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, ՀՍՍՌ քաղաքական և զինվորական գիտելիքների տարածման ընկերության հրատարակություն, 1955:
2. Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, «Հայպետհրատ», 1956:
3. «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902-1921)», Փաստաթղթերի ժողովածու, Երևան, «Հայպետհրատ», 1960:
4. Վրաստանի կենտրոնական պատմական արխիվ (ՎԿՊԱ), ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 195:
5. ՎԿՊԱ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 32:
6. ՎԿՊԱ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 33:
7. ՎԿՊԱ, ֆոնդ 10, ցուցակ 2, գործ 207:
8. ՎԿՊԱ, ֆոնդ 22, ցուցակ 1, գործ 58:
9. ՎԿՊԱ, ֆոնդ 23, ցուցակ 1, գործ 15:
10. ՎԿՊԱ, ֆոնդ 23, ցուցակ 1, գործ 19:
11. ՎԿՊԱ, ֆոնդ 32, ցուցակ 1, գործ 253:
12. ՎԿՊԱ, ֆոնդ 39, ցուցակ 1, գործ 2555, հ. 8:
13. ՎԿՊԱ, ֆոնդ 63, ցուցակ 2, գործ 3915:
14. «Пролетарий» еженедельная газета. Женева. -1905. № 11. 9 августа (27 июля).
15. «Пролетарий» еженедельная газета. Женева. -1905. № 23, 31 октября (18).
16. Революционное движение в Армении в 1905-1907 гг., Сборник материалов и документов. Ереван, «Айпетрат». -1955.
17. Царизм в борьбе с революцией 1905-1907гг., Сборник документов. М. Соцэкгиз -1936.

Ընդունվել է՝ 04. 09. 2021

Գրախոսվել է՝ 03. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Էլ. հասցե՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ՌՈՒԲԵՆ ՀԵՐՅԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հեղինե Հովհաննիսյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ *Հայոց ցեղասպանություն, ՀԲԸ միություն, Տեր-Չոր, որբա-
հավաք աշխատանք, ազատագրում, որբեր, որբանոցներ:*

Հոդվածի շրջանակներում ներկայացվում է «հայ որբերու հայրիկի»
Ռուբեն Հերյանի անձնվեր գործունեությունը որբերի հավաքագրման և որ-
բանոցներում տեղավորելու վերաբերյալ, ինչպես նաև Հերյանի համագոր-
ծակցությունը ՀԲԸ միության հետ: Հանգամանալից ներկայացվում է նաև
ՀԱԱ-ում պահպանվող Ռուբեն Հերյանի ֆոնդը (420) և ՀԲԸ միության կողմից
տրամադրված գումարային օգնությունը հայ որբերին, կանանց և աղջիկնե-
րին թուրքական սպանդից փրկելու, գերությունից ազատագրելու համար:

Նախաբան. ՀԲԸ միությունը հնագույն և ամենախոշոր բարեգործական կազմա-
կերպությունն է Սփյուռքում: Ստեղծվել է 1906թ. եգիպտահայ ազգային գործիչ Պողոս
Նուբարի կողմից, որը նաև կազմակերպության առաջին նախագահն էր: 1915թ. ողբեր-
գական իրադարձություններից հետո կազմակերպությունը որբանոցներ և ապաստա-
րաններ է հիմնել Կիլիկիայում, ապա Լիբանանում, Սիրիայում, Երուսաղեմում և այլուր:
Կազմակերպության հետ սերտ համագործակցել է նաև Ռուբեն Հերյանը¹: Վերջինիս
գործունեությունը և համագործակցությունը ՀԲԸ միության հետ բավականին ներկայաց-
ված են արխիվային փաստաթղթերի մեջ, որոնց հիման վրա կարելի է ուսումնասիրել,

¹ Ռուբեն Հերյանը ծնվել է 1869թ. Թոքատում՝ Եվրոկիա: Տե՛ս **Մարգարյան Ն.**, Միջագետքի անա-
պատների հայ որբախույզները (1918-1923) // ԵՊՀ Հայագիտության հարցեր, 1 (13), Երևան, 2018,
էջ 39:

թե որքան դրամական միջոցներ է կազմակերպությունը հատկացրել Ռուբեն Հերյանին, և ինչ ուղղություններով են ծախսվել այդ գումարները²:

Ուսումնասիրելով ՀՀ ազգային արխիվում պահպանվող փաստաթղթերը՝ տեսնում ենք, թե ինչ բարեխղճությամբ է Հերյանը կատարել իր աշխատանքը, անձնվիրաբար պայքարել յուրաքանչյուր որբի կամ հարեմում հայտնված հայ կանանց գերությունից փրկելու համար: 22 նոյեմբերի 1919թ. թվակիր նամակից տեղեկանում ենք, որ ՀԲԸ միության Հալեպի մասնաճյուղը Ամերիկայից ստացված 239,16 արժողությամբ անգլիական ոսկու չեկ է տրամադրել Հերյանին՝ աղջիկներին, կանանց անապատի հարեմներից ազատելու նպատակով: Ի հավելումն դրան՝ ժողովը, հաշվի առնելով Հերյանի անձնուրաց նվիրվածությունը իր գործին, որոշել է տրամադրել էր ևս 250 եգիպտական ոսկու չափով գումար Գիլիկիա մեկնած ժողովի անդամ Լ. Ասատուրի միջոցով: Նամակում Հալեպի կազմակերպությունը խնդրում էր տրամադրել տեղեկագիր և հնարավորության դեպքում ազատվածների լուսանկարները՝ հուսալով, որ տեղեկագիրը ստանալով կկարողանա նոր, ավելի խոշոր գումարներ տրամադրել Հերյանին որբերին ազատագրելու համար: Գումարների զգալի մասը ուղարկվելու էին Ամերիկայից:

25 դեկտեմբերի 1919թ. թվակիր նամակից տեղեկանում ենք, որ Հերյանին է ուղարկվել ժողովի կարևոր զեկուցումներից մեկի պատճենը և մի նամակ՝ ուղղված Հալեպի մասնաժողովին³: Բովանդակությունից պարզ է դառնում, որ ժողովը լրջորեն և դրականապես զորավիզ է կանգնել Հերյանին իր ստանձնած գործում և այդ իսկ մտահոգությամբ Հալեպում հաստատելու է ազատագրյալների հատուկ ապաստարան-աշխատանոց, որտեղ պիտի ընդունվեին և խնամք վայելեին ազատագրվածները: Կազմակերպությունը նույնիսկ միջոցների հայթայթման հարցում դիմում էր Հերյանին Հալեպի մասնաժողովին օգնելու համար՝ վստահեցնելով, որ ՀԲԸ միության կենտրոնական վարչական ժողովը մասնավոր կարևորություն է տալիս ազատագրման գործին և խնդրում է այդ մասին մանրամասն տեղեկություն, ցուցակ, լուսանկարներ ուղարկել:

ՀԲԸ միության կենտրոնական վարչական ժողովի ուղարկած 14 սեպտեմբեր 1920թ. թվագրվող հաջորդ նամակից պարզ է դառնում, որ ժողովը լսել է Դյորթ-Յոլի և շրջակա տարածքների կացության մասին Հերյանի հաղորդած մանրամասն տեղեկությունները և հաշվի առնելով նրա մատնանշած կարիքների անհետաձգելի հանգամանքը՝ տրամադրել է 2000 եգիպտական ոսկի գումար, որից 1000 ոսկին նա պետք է հատկացներ Դյորթ-Յոլ գաղթող ամանոսցիների աշխատանքը կազմակերպելու համար, իսկ մյուս 1000 ոսկին տեղական կարիքները հոգալու նպատակով⁴: Ժողովը խնդրում էր հոգավ գումարների բարվոք գործածությունը և այդ առթիվ ձեռնարկված գործերի մասին տեղյակ պահել՝ կանոնավոր հաղորդագրություններ և հաշիվներ ուղարկելով կենտրոնական վարչությանը:

Հաջորդ նամակը դարձյալ ուղարկված է Կահիրեից՝ 22 նոյեմբեր 1920թ.: ՀԲԸ միության կենտրոնական վարչական ժողովի որոշմամբ՝ մեծ եռանդով նվիրական գործը

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 1-1 շրջ.:

³ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 2-2 շրջ.:

⁴ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 3:

շարունակելու համար Հերյանին մասնավոր պաշտոն է շնորհվում: Դա արվում էր, միության բարոյական և նյութական օժանդակությամբ նրա գործունեությունը ավելի արդյունավետ դարձնելու համար⁵: Հերյանի պատրաստակամությանը ընդառաջելով և օգտվելով նրա՝ դեպի Ամերիկա կատարելիք առաջիկա ճամփորդությունից՝ ժողովը նրան լիազորում էր որպես կազմակերպության պատվիրակ՝ հանուն միության զբաղվել որբերի խնդրով՝ նրանց համար ձեռք բերելով պաշտպանություն և որբանպաստ նվիրատվություններ: Այդ նպատակին հասնելու համար նա պետք է համագործակցեր միության տեղական մասնաժողովների հետ, իսկ Ամերիկայում՝ Բոսթոնի շրջանային հանձնաժողովի և Նյու-Յորքի տիկնանց որբախնամ կենտրոնական հանձնախմբի հետ համատեղ ջանքերով քարոզչության նպատակով կազմակերպեր հանդեսներ՝ ստեղծելով հասույթի աղբյուրներ: Նամակից իմանում ենք, որ Միության որբանպաստ հիմնադրամը գոյանում էր որբերի պաշտպանների վճարած տարեվճարներով, հոգուտ որբերի կազմակերպված հանգանակություններով և այլազան նվիրատվություններով: Այդ հիմնադրամն էր հոգում ոչ միայն Միության սեփական որբանոցների ծախսերը, այլև որբերին տրամադրում էր բացառիկ նպաստներ: Այդ հիմնադրամից առաջ ստեղծված էր նաև Ազատագրման հիմնադրամ, որի նպատակն էր անապատի որբերին և հարեմների հայուհիներին ազատագրելու գործին սատարելը, սակայն աննշան նվերների պատճառով ազատագրման գործը անկարելի էր դարձել, բայց փոխարենը տարեկան 1200 եգիպտական ոսկի վարկով Հալեպում ստանձնել էին ապաստարան-աշխատանոցի ստեղծումը, որտեղ կրնդունվեին ազատագրված որբերը և հայուհիները: Մեկ որբի տարեկան պաշտպանության համար ծախսվել էր 12 եգիպտական ոսկի, իսկ Ամերիկայի համար՝ 60 դոլար կանխիկ վճարելի, նվազագույնը 3-5 տարի գրավոր հանձնառությամբ: Այս գումարը կազմում էր որբի տարեկան ամբողջ ծախսի մեկ քառորդից առավելը՝ մեկ երրորդը: Մնացածը հոգացվում էր պետական հացագնով և միության միջոցներով: Որբերի պաշտպանության ամբողջ հոգսը ստանձնելու պարագայում հարկ կլինեին վճարել միջին հաշվով 40 անգլիական ոսկի: Մանավանդ որդեգրության օրինական ձևակերպումը պահանջում էր դիմել Ազգային իշխանությանը, որը ձեռնհաս էր պատասխանելու այսպիսի դիմումներին: Յուրաքանչյուր որբապաշտպանի հանձնվում էր որբի լուսանկար-վիճակացույցը, դժբախտաբար ոչ բոլոր պաշտպաններին էր դա հնարավոր տալ, քանի որ դժվարություններ էին ծագում որբերի ճշգրիտ արձանագրությունները և հաջող լուսանկարները ձեռք բերելիս:

Ժողովը Հերյանին էր հանձնարարում մի ճար գտնել՝ երկաթյա մահճակալներով ապահովելու համար սիրելի որբերին, որոնք ստիպված քնում էին հատակին, այդ նպատակով առաջարկվում էր 1000 մահճակալի համար ֆոնդ ստեղծել և 8-13 տարեկան երեխաների համար ամենապարզ տեսակի մահճակալներ գնել և փոխադրել Կիլիկիա, ինչի շնորհիվ ավելացվելու էր որբանոցների քանակը:

Նամակը տեղեկացնում էր Հերյանին, որ Միությունը այդ պահին ուներ երեք որբանոց. մեկը՝ Մերսինում, երկուսը՝ Դյորթ-Յոլում, նաև հաղորդում էր Հաճնի որբանոցի

⁵ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 5-9:

նահատակության մասին: Ադանայի որբանոցի մասին սպասում էին Ֆրանսիայի զինվորական իշխանության հավանությանը, որտեղ տակավին 500 որբեր պիտի ապաստանեին: Չափահաս որբերի համար բացվելու էր որբանոց-արհեստանոց, իսկ որբուհիները հավաքվելու էին հատուկ որբանոցի մեջ՝ հրաժարվելով երկսեռ որբանոցի գաղափարից: Դյորթ-Յոլի «Միսուն» որբանոցը միությունը հանձնել էր Ամերիկայի նպաստամատուցին, որի հովանավորության տակ կատարվելու էր որբանոցի մատակարարումը: Որբանոցի համար հարկադրված կառուցել էին մասնավոր շենք, որի համար անհրաժեշտ էր 3000 եգիպտական ոսկու ծախս: Շենքի մեծ մասը պատրաստ էր, և որբերը հետզհետե տեղափոխվում էին այնտեղ:

Հաճնում ևս նախատեսված էր որբանոցի կառուցում, սակայն որբերի եղերական նահատակության պատճառով որոշվում է որբանոցը կառուցել մեկ այլ վայրում: Ժողովը նաև հայտնում էր Հերյանին, որ Հաճնի որբերի նահատակության քառասունքի օրը՝ դեկտեմբերի 30-ը, միության համար սգո օր պիտի լինի, և պիտի կատարվեն սգահանդեսներ: Ժողովը հանձնարարում էր Հերյանին Ֆրեզնոյի շրջանում անձամբ կատարել որբանպաստ քարոզչություն՝ այնտեղ առավելագույն չափով հաջողության հասնելու նպատակով՝ վստահ լինելով, որ Հերյանը կանի նույնիսկ անկարելին իր առաքելությունը հաջողությամբ պսակելու համար: Նամակի վերջում Միության կենտրոնական վարչությունը Հերյանին մաղթում էր բարի ճանապարհ և հաջող վերադարձ՝ կանխավ հայտնելով ջերմ շնորհակալություն և խորին հարգանք⁶:

ՀԲԸ միության Ամերիկայի կենտրոնական հանձնաժողովի 25 ապրիլի 1921թ. թվակիր հաջորդ նամակից հասկանում ենք, թե որքան բեղուն է եղել Հերյանի քարոզչությունը Ամերիկայում⁷: Միության գանձապահ Մ. Գարակեոզյանը հայտնում է Հերյանին, թե Կալիֆորնիայի շրջանի Ազգային Ռամկավարների նախաձեռնությամբ կազմակերպված ժողովների ընթացքում ի նպաստ որբերի կազմակերպված հանգանակությունների արդյունքում իրեն է ուղարկվել 14.000.00 դոլար: Այդ առթիվ Ամերիկայի կենտրոնական հանձնաժողովի քարտուղարությունը հրահանգել է իրեն՝ Հերյանին հաղորդել ամենախորին շնորհակալությունը իր կատարած անձնվեր ծառայության համար, որ նա անվերապահորեն ի սպաս է դրել մեր նահատակ ազգի բեկորները փրկելու գործին:

Կահիրեի ՀԲԸ միությունը, հետադարձ հայացք նետելով, հետևյալ կերպ է գնահատում Հերյանի գործունեությունը անապատում⁸. «ՀԲԸ միությունը իր կազմակերպած վարչական մեքենան լծեց այս փրկարար գործին և իր հայրենանվեր անդամներն ու անդամուհիները մղեց շինարար, կենսագործող, արդյունաբեր աշխատանքի, ի խնդիր տարագիր վերապրող զանգվածներու ազատագրության: Եվ եթե բարեգործականի հազարավոր անդամները չսակարկեին և չմասնակցեին բացված հանգանակությանը, ապա անհնար կլիներ հայրենանվեր նպատակի իրագործումը: Այս հայրենասերների շարքին առաջին պայծառ դեմքը կհանդիսանա ՀԲԸ միության Ամերիկայի շրջանի անդամներեն

⁶ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 5-9:

⁷ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 10:

⁸ Շալճյան Ս., Ռուբեն Հերյանի մասին // Կահիրեի ՀԲԸ միության «Տեղեկատու», է տարի, թիվ 4-5, նոյեմբեր-դեկտեմբեր 1963: ՀԱԱ, ֆ. 420, ց., 65, գ. 45, էջ 2:

Եվդոկացի Ռ. Հերյանը, ով իր առևտրական փայլուն ձեռնարկը հաշվեհարդարի ենթարկելով, կը փութա Մերձավոր Արևելքեն, կը զինվորագրվի հայկական լեգեոնին, ապա, երբ ռազմական գործողությունները ավարտված են և մեր հավերժական թշնամին զգեսնված, կը լծվի հայահավաքման աշխատանքին», -1963թ. գրում է Կահիրեի ՀԲԸ միության անդամ Ս. Շալճյանը:

Հոդվածից պարզ է դառնում, որ Շալճյանի ձեռքի տակ է գտնվել Եգիպտոսի բարեհիշատակ առաջնորդ Թորգոմ Եպիսկոպոսի ստորագրությամբ մի հրահանգ, որն ուղղված էր Հերյանին և նրա մյուս ընկերներին՝ Մկրտիչ Եփրեմյանին և Կարապետ Սեֆերյանին: Սրբազանը հանձնարարում էր⁹.

1. Այցելել բոլոր այն վայրերը, ուր հայեր կան (Սիրիա, Պաղեստին),
2. Ցրված անհատներին և խմբերին միացնել և տեղավորել ծովեզրային և շահաստան վայրերում,
3. Սարսափի ազդեցության տակ կամ բռնի կրոնափոխ եղածներին անպայման վերադարձնել մայրենի եկեղեցու գիրկը,
4. Կազմել տարագրյալների կամ որբերի ընդհանուր մարդահամար՝ վիճակագրական մանրամասնություններով (ինչը անհրաժեշտ էր տարագրված հայ բնակչության թվաքանակը ճշտելու և հայրենի բնակավայրի անունը իմանալու, բնակավայրերից գաղթի ճանապարհին զոհվածների թվաքանակը ճշտելու համար),
5. Գործ հայթայթել տարագրությունից վերադարձողների համար,
6. Պետական բյուջեից նպաստ ապահովել նրանց համար,
7. Անտեր որբերին ազգային որբանոցներ փոխադրել,
8. Թուրքական վարչության օրոք թրքական կամ գերմանական որբանոցների մեջ գետեղված որբերին գտնել և առանձին շենքերի մեջ պատսպարել, որ հայ որբերը հայկական մթնոլորտի մեջ ապրեն և մեծանան հայ հսկողության ներքո,
9. Ապահովել Ամերիկյան Կարմիր խաչի նպաստի աջակցությունը հայ որբերի և կորուսյալների համար:

ՀԲԸ միությունը Հերյանին համարում է ընկերության անդամ, շարքերի անկաշառ գործիչ, հերոսական խմորով թրծված նվիրակալ, որի կյանքի միակ նպատակն էր անսալ Գրիգոր Զոհրապի պատգամին և «փրկել կարելիության սահմանին մեջ հայ որբերեն, տարագիրներեն մեծ թիվ մը»: Բարեգործականը հպարտ է, որ գիտի Հերյանի նման հարազատ և անհունորեն զոհաբերող հային, ով հայրենասեր է և ունի ազգային գիտակցության բարձր ոգի, և ընկերությունը նրան սատարել է թե՛ բարոյապես, թե՛ նյութապես՝ հավատալով նրա բոլոր ձեռնարկներին¹⁰:

Միքայել Նաթանյանը 1949թ. հունվարի 29-ին «Հայաստանի կոչնակի» 5-րդ համարում Բեյրութում հրատարակել է մի հոդված «Ռուբեն Հերյան. Կիլիկիան հուշեր» խորագրով¹¹: Հոդվածի հեղինակը արժևորում է Մերձավոր և Միջին Արևելք եկած երկու

⁹ Շալճյան Ս., նշվ. աշխ., էջ 2:

¹⁰ Նույն տեղում, էջ 3:

¹¹ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 47, թ. 4-4 շրջ.:

իրենց գործունեությամբ անմոռաց դեմքերի, զինվորական Ջիմ Չանգայանին¹² և ազգային-հանրային ծառայող Ռուբեն Հեքյանին՝ երկուսն էլ վաղաժամ կյանքից հեռացած: Ըստ հողվածագրի՝ Հեքյանը որբահավաքման հարցով հաջողել էր Պոլսի և ուրիշ կենտրոնների մեջ որբախնամ հանձնախմբեր կազմել, հետագայում ՀԲԸ միության հետ ևս միակամ դառնալով մտադրվում և ամբողջովին նվիրվում է իր այդ նվիրական գործին: Իսկ նրա վաղաժամ մահը համարում է «...Գիլիկիոյ համայն ժողովուրդին և որբերուն վերապահված ճակատագիրը»:

Օգտվելով Ազգային Պատվիրակության Գիլիկիայի ներկայացուցիչ Մ. Տամատյանի թղթածրարներից՝ Մ. Նաթանյանը գտել է Հեքյանի մտերմիկ ոճով գրված հիշատակագրերից մեկը՝ ուղղված Գիլիկիայի ֆրանսիացի կառավարիչ գնդ. Պրեմոնին: Նաթանյանը այդ հուշագրի բնագիրը ֆրանսերենից թարգմանել է հայերեն: Ձեռագիրը Հեքյանի ստորագրությամբ է՝ Ադանա, 24 ապրիլ 1920, և անվերապահորեն պարզում է որբահավաքի անելիքները, ծրագրերը և երազները: Ստորև բերում ենք այդ հուշագիրը. «Միրելի Գոլժնելս, Անցեալ հոկտեմբեր ամսոյ մեջ Ձեր գիտակցութեամբ և հավանութեամբ մեկնեցայ Պոլիս, անապատի հայ որբերը հավաքելու համար Հայոց մեջ հանգանակություն մը ընելու: Պոլսոյ մեջ իմ ջանքերս հրապարակային ժողովներով և մամուլի միջոցով մեծ յաջողութիւնն է գտած, այս պրօպականտը արձագանք գտավ աշխարհի ամեն կողմերը գտնուող հայութեան մեջ: Այնպէս որ Պոլսեն վերջ Եգիպտոսէն, Պուլկարիայէն, Անգլիայէն և Ամերիկայէն հետզհետէ այդ նպատակին համար գումարներ հասան՝ Պոլսոյ Պատրիարքարանի հովանավորութեամբ կազմուած Որբահավաք յանձնախումբերուն: Այս նպատակին համար յանձնախումբեր կազմուեցան Պոլիս, Ատանա և Հալէպ:

Նոյեմբերին մեջ երկրորդ շրջան մ՝ ըրի Տեր-Չորի անապատները և հազիվ հարիւրի չափ որբեր ազատած էի, երբ Տեր-Չորի խառնաշփոթութիւնները վրայ հասնելուն և կեանքիս սպառնալիքին տակ ստիպուեցայ առժամանակեայ կերպով նահանջել Տեր-Չորէն»: Հեքյանը շարունակում է,- «Ես արդէն դիմում ըրած եմ՝ իմ զինվորական ծառայութենէս ազատ արձակուելու համար: Բժշկական քննութիւնը արդէն զիս զինուորութեան անյարմար գտած է, և յոյս ունիմ, որ ի մօտոյ պիտի ստանամ արձակմանս թուղթը: Մտադիր եմ անմիջապէս վերսկսիլ որբահավաք գործս և ջանք չխնայել ազատելու համար 3-4000 հայ որբուկները, որոնք տակավին կը տառապին արապներու և վայրենի թուրքերու մոտ:

Սակայն ինծի մեծ մտածման առարկայ մը եղած է թէ՛ ուր պիտի զետեղուին այդ որբերը: Կը մտածեմ թէ Հալէպի որբանոցի շէնքն անբավական է նոր որբեր ընդունելու: Այս մտածումներու տակ ընկճուած համարձակութիւն կունենամ դիմելու Ձեր վսեմութեան և խնդրելու Ձեզմէ, որ հաճիք շէնք մը տրամադրել կամ նոր մը կառուցանել, որպէսզի կարենամ զետեղել ազատագրուած հայ որբերը այդ շէնքին մեջ: Շատ պիտի փափաքեի, որ այդ շէնքը երկուքի բաժանուած ըլլար, աղջկանց և մանչոց զատ յարկաբաժիններով:

Կը յուսամ թէ մեկնելէ առաջ պիտի ստանամ Ձեր հրամանը և շէնքի կառուցման պետք եղած կարգադրութիւնները Որբահավաք Յանձնախումբի հետ ընելէ յետոյ

¹² Մահացել է 1947թ., Նյու-Յորքում:

մեկնիլ անապատ: Կ'ապահովցնեմ Ձեզ, Միրելի Գօլօնէլս, որ այդ որբուկները և ամբողջ հայ ազգը երախտապարտ պիտի մնան Ձեզ հանդէպ»:

Եզրահանգում. Այսպիսով Հայոց ցեղասպանության տարիներին ազգափրկիչ կարևորագույն միջոցներից մեկը դարձավ որբահավաք աշխատանքների իրագործումը, ինչպես նաև հայկական որբանոցների ստեղծումը: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Ռուբեն Հերյանը սերտ համագործակցություն է ունեցել ՀԲԸ միության հետ, ինչի պատճառով Միությունը Հերյանին համարում էր իր պատվավոր անդամը, բարձր է գնահատում նրա անձնուրաց, տքնաջան աշխատանքը և փորձում էր վարձահատույց լինել նրան՝ երկար տարիներ վառ պահելով նրա հիշատակը:

СОТРУДНИЧЕСТВО РУБЕНА ГЕРЯНА С АРМЯНСКИМ БЛАГОТВОРИТЕЛЬНЫМ ОБЩИМ СОЮЗОМ

Օգաննիսյան Գ. Ա.

Ключевые слова: *Геноцид армян, Армянский Всеобщий Благотворительный Союз, Дейр-эз-Зор, сиротская работа, освобождение, сироты, детские дома.*

В статье рассмотрены вопросы, которые относятся к области сотрудничества Рубена Геряна с Армянским благотворительным общим союзом. В Историческом архиве РА есть фонд Рубена Геряна (ф. 420, с. 65, д. 42), где довольно большое количество составляют документы, которые содержат информацию об этом. Среди этих документов особое место занимает статья С. Шалчяна, которая была издана 1963 г. В статье представлен архивный материал, по которому можно понять, как епископ армянской диаспоры Египта сотрудничал с Геряном и помогал ему в деле освобождения армянских сирот из мусульманского рабства.

COOPERATION OF RUBEN HERIAN WITH THE ARMENIAN CHARITABLE GENERAL UNION

Hovhannisyan H. A.

Key words: *Armenian genocide, Armenian General Benevolent Union, Der-Zor, orphan gathering work, liberation, orphans, orphanages.*

The article discusses issues that relate to the field of cooperation between Ruben Heryan and the Armenian General Benevolent Union. There is Ruben Heryan's fund (f. 420, p. 65, d. 42) in the Historical Archives of the Republic of Armenia, where a fairly large number of documents contain information about this. Among these documents a special place occupies an article by S. Shalchyan, which was published in 1963. The article presents archival material, according to which one can understand how the bishop of the Armenian diaspora in Egypt collaborated with Heryan and helped him in the liberation of Armenian orphans from Muslim slavery.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո լ ն

1. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 1-1 շրջ., թ. 2-2 շրջ., թ. 3, թ. 5-9, թ. 10:
2. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 45, էջ 2-3:
3. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 47, թ. 4-4 շրջ., 5:
4. Մարգարյան Ն., Միջազգային անապատների հայ որբախույզները (1918-1923) // ԵՊՀ Հայագիտության հարցեր, 1 (13), Երևան, ԵՀ հրատ., 2018, էջեր 39-57:
5. Շալճյան Ս., Ռուբեն Հերյանի մասին // Կահիրեի ՀԲԸ միության «Տեղեկատու», Է տարի, թիվ 4-5, նոյեմբեր-դեկտեմբեր 1963, էջեր 1-4:

*Ընդունվել է՝ 01. 06. 2021
Գրախոսվել է՝ 03. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Հեղինակը՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ Երևանի պետական համալսարանի
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի մագիստրոս,
Էլ. հասցե՝ elligence.hovhannnysyan@mail.ru

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2021.2-150

1920 Թ. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նարինե Մովսեսյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ քաղաքական հարաբերություններ, թուրք-հայկական պատերազմ, պատմագրություն, հայ-վրացական, պետական գործիչներ, Հայաստանի Հանրապետություն, պետական, սահման:

Հոդվածում ներկայացված են ժամանակի հայ պատմագրության գնահատականներն ու վերլուծությունները 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակին հայ-վրացական հարաբերությունների առնչությամբ: Դրանք մեծ հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում, քանի որ ունեն սկզբնաղբյուրային նշանակություն և օգտակար են նշված շրջանի իրադարձությունների շատ հարցերի նորովի լուսաբանման համար:

Նախաբան. Հայաստանի առաջին Հանրապետության գոյության տարիների (1918-1920թթ.) մեր ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող այդ ժամանակահատվածի գրեթե բոլոր հիմնահարցերը ժամանակի հայ պատմագիտական միտքը դարձրեց իր քննարկման առարկան: Այդ տեսանկյունից խիստ կարևոր ու ուշագրավ են ժամանակի քաղաքական ու հասարակական գործիչների աշխատություններն ու հուշերը¹, ինչպես նաև հայկական մամուլի թղթակիցների հոդվածները, աղբյուրներ, որոնք ականատեսի աչքերով են ներկայացնում դեպքերի ու իրադարձությունների ընթացքը²:

¹ Չնայած այդ հեղինակները գործել են 1920թ-ից հետո ընկած ժամանակահատվածում, բայց նրանց գրվածքները համարվում են մինչխորհրդային պատմագրության արգասիքներ:

² Տե՛ս Քաջազնունի Հ., Հ. Հ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1923: Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պեյրոյթ, 1953: Նույնի՝ Հայաստանի Հան-

Ժամանակի հուշագրությունները ոչ միայն իրադարձությունների պարզ նկարագրություն ու շարադրանք են, այլև իրականության վերլուծություն ու լուսաբանում՝ եզրահանգումներով ու անձնական մտորումներով, ինչը դրանց սկզբնաղբյուրի կարևորություն է հաղորդում:

Հեղինակները Թիֆլիսում Հայոց կենտրոնական Ազգային խորհրդի և ՀՀ կառավարության ձևավորումից ու Երևան տեղափոխվելուց հետո (1918 թ. հուլիսի 19-ին), երկրում առկա ներքաղաքական խնդիրներին համընթաց՝ անդրադառնում են երկրի առաջ ծառայած արտաքին հարցերին՝ նախևառաջ՝ հարևան պետությունների հետ վիճահարույց խնդիրներին: «...Երկիրը կատարյալ քառսի և անիշխանության մեջ էր՝ պետք էր կարգ ու օրենք հաստատել: ...Մահմանների վրա ընդհարումներ էին տեղի ունենում, ...պետք էր հաշտությունը գործնականացնել արտաքին ու ներքին թշնամու հետ»³:

Այդ համատեքստում կարևորվում են հատկապես հայ-վրացական հարաբերությունները Թուրքիայի կողմից սանձազերծված 1920 թ. պատերազմի նախօրյակին: Ժամանակի հայ պատմագրական միտքը կարևորում է թուրք-բոլշևիկյան արշավանքի նախաձեռնի հյուսիսային հարևան Վրաստանի արտաքին քաղաքական դիրքորոշումը Հայաստանի և առհասարակ տարածաշրջանի նկատմամբ: Թուրք-բոլշևիկյան արշավանքը մեր երկրի վրա «...այնքան լուրջ վտանգ է, որ հայ ժողովուրդի բովանդակ ուժերի ծայրահեղ լարումն է պահանջում»⁴, -գրում էր «Մշակը»:

Ժամանակի հայ պետական ու հասարակական գործիչները եզրահանգում են, որ Հայաստանի վրա հարձակումից առաջ Թուրքիան կարգավորել էր հարաբերությունները Վրաստանի հետ՝ ապահովելով վերջինիս չեզոքությունը⁵: Չնայած այն հանգամանքին, որ վրացական կառավարությունը դատապարտեց թուրքերի ներխուժումը Հայաստան, սակայն «Թուրքիայի պատվիրակներն արդեն իսկ զաղտնի բանակցություններ էին վարում Թիֆլիսում՝ հավաստիացումներ տալով, որ թշնամական մտադրություններ չունեն և անգամ ակնարկելով, որ Թուրքիան չի առարկի, եթե Վրաստանը գրավի Հայաստանի հետ վիճարկվող որոշ տարածքներ»⁶:

Հայկական կողմը հույս էր փայփայում անխուսափելի դարձած առաջիկա թուրքական հարձակման դեպքում ձեռք բերել Վրաստանի ռազմատնտեսական աջակցությունը: Մինևույն ժամանակ հայկական կողմի մտահոգության առարկան էր, որ դա

րապետություն, Երևան, 1993: **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Հալեպ, 1969: **Տեր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921: **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1991: **Туманян М.** Дипломатическая история Республики Армении 1918-1920 гг. Ереван. -2012 և այլք:

⁴ «Մշակ», Թիֆլիս, հոկտեմբերի 7, 1920, N 106, էջ 1:

⁵ **Տեր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջեր 23-25:

⁶ Խոսքը Կարս գետից այն կողմ ընկած Արդահանի Գյուլե և Չըլդըր շրջանների մասին է, որոնք վրացական զորքի կողմից հետախուզվում էին, և ի վերջո այնտեղ զորք մտցվեց: Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, 2016, էջեր 258-259:

չկատարվի «...հայկական հողերի զիջման հաշվին, ինչպես նաև վրացական գորքը դուրս հանվեր Արդահանի հարավային տարածքներից»⁷:

Այս ամենի արդյունքը եղավ միայն այն, որ վրացական կողմը Հայաստան ուղարկեց դիվանագիտական նոր ներկայացուցչություն՝ ռազմական նախկին նախարար Գեորգաձեի գլխավորությամբ: Իսկ բանակցությունների արդյունքում պարզ դարձավ, որ «...վրացական կառավարությունը քեմալականների դեմ ոչ մի դեպքում պայմանագիր չի կնքի, իսկ Ռուսաստանի (ՌՄՖՍՀ) դեմ՝ միայն այն դեպքում, եթե վերջինիս կողմից հարձակման վտանգ լինի»⁸: Պատահական չէ, որ Վրաստանը Ռուսաստանի հետ 1920թ. հունիսի 7-ի կնքած դաշնագրով ապահովեց իր անձեռնամխելիությունը: Մասնավորապես Վրաստանի զինվորական և ներքին գործերի նախարար Ռամիշվիլին հայտարարել էր. «Վրաստանը պայմանագրային հարաբերությունների մեջ է մտել Խորհրդային Ռուսաստանի հետ և չի ցանկանում պատերազմ հրահրել...»⁹: Հայ հեղինակները փաստում են, որ Վրաստանը կարողացավ իր դիվանագիտական ճկուն քաղաքականությամբ խուսափել կորուստներից¹⁰: «Վրաստան՝ չունենալով սուր թիրիմացութիւններ Թուրքիոյ հետ՝ շատ ալ չէր վախնար Թուրքերէն, թէւ Ռուսներէն կը վախնար»¹¹: «...Իրենք՝ վրացիները՝ հայերի թիկունքից Փեթրոկրատում Չխենկելիի եւ Ծերեթելիի միջոցով իրենց գործերը կը դարձրնէին (արդէն դրանք էին Ռուսաստանի տէրերը), իսկ միւս կողմից Ռուսաստանի հանդէպ թիկունքային քաղաքականութիւն կանէին ձեռք տալով գերմանացիներին եւ թուրքերին»¹²:

Հասկանալի է, որ Արևմտյան Հայաստանի նվաճումը Թուրքիայի կողմից էապես նվազեցնում էր Հայաստանի կշիռը տարածաշրջանում և բարձրացնում Վրաստանի դերն Անդրկովկասում, հանուն ինչի վրացական կողմը պատրաստ էր ողջունելու թուրքական նվաճումները Հայաստանում: Փաստերը վկայում են, որ հայ գործիչները իրատեսորեն են գնահատել տարածաշրջանի միակ քրիստոնյա հարևան պետության դիրքորոշումը թուրքական արշավանքի նախօրյակին, վրացական պետական գործիչների քաղաքական ճարպկությունը, որոնք, հաշվարկելով թուրք-ռուսական, ինչպես նաև եվրոպական պետությունների հավակնությունները, կարողացան բոլոր կողմերի հետ վարել հավասարակշռված քաղաքականություն՝ ապահովելով իրենց անվտանգությունն ու պահպանելով անկախությունը: «...Վրացիները տաճկական հովանաւորութիւն չէին ու-

⁷ Туманян М., Дипломатическая история Республики Армении 1918-19200 гг. Ереван. -2012. сс. 275-276.

⁸ Туманян М., նշվ. աշխ., էջեր 363-364:

⁹ Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 262:

¹⁰ «Ժամանակ», Կ. Պոլիս, 1920, 14 մայիսի, թիւ 3825, էջ 1: Տէր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջեր 77-78: Վրացյան Ս., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պէրուրթ, 1953, էջեր 121-122:

¹¹ Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Հալէպ, 1968, էջ 253:

¹² Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1991, էջ 132:

զեր, բայց հայերի կշիռը չնչին դարձնելու համար Անդրկովկասում կը բաղձային, որ տաճիկները խլեն հայերի ձեռքից Տաճկահայաստանը...»¹³, - գրում է նախկին ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը՝ շեշտելով, որ վրացիները արտաքուստ ունեին ռուսական և եվրոպական (նկատի ունի Անտանտի պետություններին) կողմնորոշում, սակայն իրականում հակված էին թուրքերի ու գերմանացիների կողմը:

«Հայրենիք» թղթակից Ա. Մասուրյանն ընթերցողի ուշադրությունը հրավիրում է վրացական կառավարության «վերին աստիճանի հաճոյակատար» վերաբերմունքի վրա Անտանտի նկատմամբ՝ ներկայացնելով Վրաստանի դիվանագիտական համագործակցությունը Գերմանիայի ու Անգլիայի հետ և գալով վերջնական համոզման. «Իրօք որ, ճարպիկ մարդիկ են վրացի մենշեիկները...»¹⁴:

«Մշակի» թղթակիցը ձգտում է ցույց տալ, որ Թուրքիայի հետոն գնացող նվաճողական պլանները նախնառաջ վտանգավոր էին վրացիների համար, մատնանշում է Թուրքիայի երկդիմի խաղը նաև Վրաստանի նկատմամբ (Անկարայի գործակալները Վրաստանում, մանավանդ 1920 թ., մահմեդական շրջաններում ապստամբեցնում էին ոչ քրիստոնյա ազգաբնակչությանը վրացական կառավարության դեմ)¹⁵:

Հատկանշական է վրացական կողմի դիրքորոշումը նշված հարցերի նկատմամբ: «Մշակը» հետագայում, 1920թ. հոկտեմբերի 24 թվակիր համարում մեջբերում է վրացական «Սաքարթվելո» թերթի (թիվ 125) առաջնորդող հոդվածն այն մասին, թե խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ է Թուրքիայի հետ միանալ, որպեսզի Ասիայի նախաշեմից վտարի Անտանտի պետություններին, նախնառաջ՝ անգլիացիներին և արևելյան ազգերի մեջ ապստամբության հրդեհ առաջ բերի եվրոպական իմպերիալիզմի հանդեպ¹⁶: Հետևաբար, Վրաստանի վարչապետ Նոյ ժորդանիայի զեկուցումը ներկայացնում է վրացական կողմի վերաբերմունքը դեպի բոլշևիզմը և դրա դաշինքն ասիական ազգերի հետ: Ն. Ժորդանիան մատնանշում է բոլշևիզմի և՛ առաջադիմական, և՛ հետադիմական գծերը՝ գալով այն եզրակացության, որ բոլշևիզմը ռուսական բռնակալության նոր ձև է, չբացահայտելով, սակայն, թե ինչ հեռանկարներ է բացում ռուս-պանիսլամական շարժումը Անդրկովկասի և հատկապես Վրաստանի համար: Մյուս կողմից նա խոսում է թուրքերի՝ Վրաստանի նկատմամբ թշնամական գործողությունների մասին¹⁷: Այս ամենը, սակայն, չի խանգարում, որ վարչապետը լավատես գտնվի իր երկրի ապագայի նկատմամբ, ինչը բխում է այն համոզվածությունից, որ Վրաստանը ներքուստ ուժեղ է և միացյալ, իսկ բոլշևիզմը պարտված է երկրի ներսում, և վրաց ժողովուրդը երբեք չի գնա դրա ետևից¹⁸:

¹³ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 134:

¹⁴ Մասուրյան Ա., Վրացի մենշեիկները և Անգլիական Զորավարները // «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 3, էջ 146, փետրուար, թիւ 4, էջ 147:

¹⁵ Տե՛ս «Մշակ», 1920, մայիսի 9, N 13, էջեր 1-2, հոկտեմբերի 9, 1920, N 108, էջ 1, նոյեմբերի 6, 1920, N 129, էջ 1, նոյեմբերի 24, 1920, N 144, էջ 1:

¹⁶ «Մշակ», հոկտեմբերի 26, N 119, 1920, էջ 2:

¹⁷ Մասուրյան Ա., նշվ. աշխ. // «Հայրենիք», Պոսթըն, 1928, փետրուար, թիւ 4, էջ 146:

¹⁸ «Մշակ», նոյեմբերի 4, N 127, 1920, էջ 1:

Ըստ այդմ՝ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը վրացիների դիրքորոշումը համարում է երկդիմի՝ գտնելով, որ նրանք արագացրին թուրքերի մուտքը Հայաստան, մասնավորապես՝ Կարս, իսկ հայկական զորքը մոտ ապագայում ստիպված էր պաշտպանել Հայաստանը թուրքերից, թիկունքից հարվածող թաթարներից և երկդիմի դիրք բռնած վրացիներից¹⁹:

Ակնհայտ է, որ ժամանակի հայ գործիչները հասկացել են Վրաստանի չեզոք դիրքորոշման դրդապատճառները, ինչը հետագայում նպաստեց, որ թուրքական կողմն առավել ինքնավստահ հարձակման անցնի: Այդ ճանապարհին 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակին ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առաջնային հարցերից մեկը Վրաստանի հետ վիճահարույց հարցերի կարգավորումն էր, ինչը կարևոր կտվան էր կառավարության առաջ հետագա անելիքների ճանապարհին: Այնինչ, մինչ այդ հայ-վրացական բանակցությունները հիմնականում տարվում էին «...ոչ այնքան տարածքային հարցերի, որքան քաղաքական կողմնորոշման (այդ թվում՝ դեպի Ռուսաստան) և Հայաստանի՝ արտաքին աշխարհ ազատ ելք ունենալու շուրջ»²⁰: Միայն ռազմաճակատում հայկական բանակի կրած անհաջողություններից հետո Հայաստանի կառավարության համար առաջնային էր դարձել Վրաստանի հետ թուրքերի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու, հայ-վրացական դաշինք կնքելու խնդիրը²¹:

Հայ-վրացական զինակցությունը, ինչին ձգտում էր հայկական կողմը առաջիկայում սպասվող թուրք-հայկական պատերազմում, այդպես էլ իրողություն չդարձավ²²: Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցիչներն «...իզուր փորձում էին Վրաստանի համագործակցությունը ապահովել՝ Թուրքիոյ դեմ միացեալ ճակատ կազմելու»²³: Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Վրացյանը (ՀՀ չորրորդ վարչապետ) նշում են վրացական կողմի անզիջում վերաբերմունքը Հայաստանի հետ սահմանների վերանայման հարցում. նրանք ցավով են ներկայացնում ի հայտ եկած թշնամանքը հայ և վրացի ժողովուրդների միջև, հայ-վրացական լարված հարաբերությունները, ինչը, ի վերջո, հանգեցրեց պատերազմի²⁴:

«Մշակն» անդրադարձել է Վրաստանի հիմնադիր ժողովի՝ մայիսի 11-ի հայտարարության ժամանակ որդեգրած այն թեզին, որով կարևորվում էր Վրաստանի սահմանների անվտանգության ապահովումը որևէ հարևանի հետ՝ «բնական ամրութիւններ գրաւելով ու ամրացնելով»²⁵: Հայ հեղինակները շեշտադրում էին հատկապես Ախալքալաքն ու Լոռին վրացական սեփականություն համարելու վրացական կողմի նկրտումները:

Հիրավի, Անդրկովկասի արտաքին անվտանգության տեսանկյունից անժխտելի իրողություն էր այն, որ եթե Հայաստանը ոչնչանա, դա նաև Վրաստանի անկախության

¹⁹ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 136:

²⁰ Туманян М., նշվ. աշխ., էջեր 381-382:

²¹ «Մշակ», հոկտեմբերի 9, N 108, 1920, էջ 1:

²² Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 325:

²³ Փիրումեան Ռ., Հայաստանը Հ. Յ. Դ.- Բոլշևիկ Յարաբերությունների Ոլորտում 1917-1921, Երևան, 1997, էջ 253:

²⁴ Ռուբեն, նշվ. աշխ., էջեր 129-131: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջեր 184-185:

²⁵ «Մշակ», մայիսի 15, N 16, 1920, էջ 3:

ավարտն է Թուրքիայի և բուլղարիկների հարվածների ներքո, ինչի մասին մայիսի 11-ին հայտարարեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ, մենջևիկ Ի. Շերեթելին²⁶: Ավելին, վրացական «Էրթորա» թերթը գրում է, որ Հայաստանը մեծ ողբերգություն է ապրում, և նույնին չարժանանալու համար Վրաստանի սահմանների անվտանգության ու պահպանության համար ոչ մի եռանդ պետք չէ խնայել²⁷:

Պատահական չէ, որ պատերազմի ավարտից հետո «Բորչալուի սահմանների մասին» առաջնորդողում վրացական «Մաքարովելո» թերթը (թիվ 157) Հայաստանի կողմից Թուրքիայի նախնական հաշտության պայմանների ընդունումը դիտում է այն տեսանկյունից, որ եթե Ալեքսանդրապոլից մինչև Կարս երկաթուղին տրվեր թուրքերին, դրանով Վրաստանի ամրությունը կսասանվեր և Թուրքիան կգրավեր նաև Բորչալուի դաշտավայրերը: Հետևաբար, պարտված Հայաստանին պաշտպանելու համար անհրաժեշտ է, որ Վրաստանն ամուր մնար և նրա անկախությունն աներեր լիներ: Այդպիսով, թերթը Վրաստանի կողմից Հայաստանի «պաշտպանությունը» պատկերացնում էր Բորչալուի հարավային մասի գրավմամբ²⁸: Նույն կարծիքն էր արտահայտում վրացական սոցիալ-դեմոկրատիայի պաշտոնաթերթ «Էրթորան»՝ «Վրաստանն ու Հայաստանը» թղթակցության մեջ հրապարակելով. «Բորչալուի հարցում Հայաստանի կառավարությունը ստիպված էր հայ ազգի փրկության նպատակով համաձայնել այնպիսի պայմանների, որոնք Վրաստանի իրավունքների խախտում են նշանակում, մի թե դա նշանակում է, որ Վրաստանը պետք է լռի ու համաձայնի նույն պայմաններին»²⁹:

Նկատի ունենալով այսպիսի իրավիճակում Վրաստանի արտաքին դիվանագիտության ճկուն քաղաքականությունը՝ Ա. Ջամալյանը (Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ) ավելի ուշ բնորոշում է. «Խաղը շատ ճարպկորեն էր արված»³⁰:

Վրացական կողմն այդպես էլ չքննարկեց պատերազմում փոխադարձ համագործակցության հարցեր, ինչին ձգտում էր Հայաստանի կառավարությունը: Վրաստանի զինվորական և ներքին գործերի նախարար Ռամիշվիլին հայտարարեց, որ «...Աջարիայի, Ախալցխայի և մյուս սահմանամերձ շրջանների մահմեդական բնակչությունը խիստ հակառակ կլինի Մուստաֆա Քեմալի դեմ ուղղված որևէ քայլի»³¹:

Այսպիսով, ժամանակի հայ պատմագիտական միտքն իրավացիորեն կարևորում է նախապատերազմյան իրավիճակում հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների ու ռազմական դաշինքի գաղափարը: Հայ քաղաքական գործիչներն իրենց հուշագրություններում, հետադարձ հայացք նետելով, անցյալում մնացած սխալների ուղղումներ են կատարում. պատերազմները պետք էր կանխել, իսկ սահմանային

²⁶ Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիորը, «Հայրենիք», 1928, նոյեմբեր, թիվ 1, էջ 117:

²⁷ Ջամալյան Ա., նշվ. աշխ., նոյեմբերի 21, 1920, N 142, էջ 2:

²⁸ Նույն տեղում, նոյեմբերի 27, 1920, N 147, էջ 2:

²⁹ Նույն տեղում, դեկտեմբերի 4, 1920, N 153, էջ 2:

³⁰ «Հայրենիք», 1928, օգոստոս, թիվ 10, էջ 108:

³¹ Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 262:

վեճերը լուծել խաղաղ, դիվանագիտական ճանապարհներով, պետք էր «...հաշտությունը գործնականացնել արտաքին ու ներքին թշնամու հետ»³², ինչը նաև կդառնար ամբողջ տարածաշրջանում քաղաքական իրադարձությունների խաղաղ ու վստահելի ճանապարհով լուծելու գրավական:

Եզրահանգում. Ժամանակի պատմագիտական միտքը փաստում է, որ արդեն իրողություն դարձած առաջիկա թուրք-հայկական պատերազմում հայերը ոչ միայն չստացան տարածաշրջանում միակ քրիստոնյա պետության աջակցությունը, այլև միաժամանակ ստիպված էին վերջինիս դեմ պայքարել՝ հայկական հյուսիսային տարածքները չկորցնելու համար: Նրանք, օբյեկտիվորեն ներկայացնելով հայերի համար ստեղծված քաղաքական աննպաստ իրավիճակը, միանգամայն իրական գույներով տալիս են տարածաշրջանում հայ-վրացական ուժերի հարաբերակցությունը:

ОСВЕЩЕНИЕ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЙ 1920 ГОДА В ИСТОРИОГРАФИИ АРМЕНИИ ТОГО ВРЕМЕНИ

Мовсесян Н. М.

Ключевые слова: *Политические отношения, турецко-армянская война, историография, армяно-грузинское, государственные деятели, Республика Армения, политический, граница.*

К числу наиболее важных вопросов накануне турецко-армянской войны 1920 г., было урегулирование и возобновление армяно-грузинских политических отношений. В статье раскрываются позиция и отношение очевидцев и партийно-политических деятелей к вопросам армяно-грузинских отношений. На основании фактических материалов мы попытались представить политические подходы грузинского правительства в отношениях с Арменией. Среди спорных вопросов между Арменией и Грузией особое место занял вопрос о межреспубликанских границах. РА придавала большую важность укреплению связей с соседними республиками.

COVERAGE OF THE ARMENIAN-GEORGIAN RELATIONS OF 1920 IN THE HISTORIOGRAPHY OF CONTEMPORARIES OF ARMENIA

Movsesyan N. M.

Key words: *Political relations, Turkish-Armenian War, historiography, Armenian-Georgian, figures, the Republic of Armenia, politic, The border.*

The Regulation and reestablishment of Armenian-Georgian political relations was one of the problems for the Republic of Armenia on the eve of the Turkish-Armenian War of 1920. The

³² Քաջազևունի Հ., Հ. Հ. Դաշնակցությունը..., էջ 45: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 190:

article illustrates the position and attitude of eye-witnesses, party-political leaders over the problem of the Armenian-Georgian relations. In the base of factual material, we have tried to present the political attitude of the Georgian Government towards the Armenia. The border issue was of great importance amongst the disputable issues between Armenia and Georgia.

Գրականություն

1. «Ժամանակ», Կ. Պոլիս, 1920, թիւ 3825:
2. Մասուրեան Ս., Վրացի Մենշեիկները և Անգլիական Զորավարները // «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 3, թիւ 4:
3. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Տպարան համազգային, Հալէպ, 1968:
4. «Հայրենիք», 1928, օգոստոս, թիւ 10:
5. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 4, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2016:
6. Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2003:
7. «Մշակ», Թիֆլիս, 1920, N 13, N 16, N 106, N 108, N 119, N 129, N 142, N 144, N 147, N 153:
8. Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը // «Հայրենիք», 1928, թիվ 1:
9. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1991:
10. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, «Հայաստան» հրատ., Երևան, 1993:
11. Վրացյան Ս., Հայաստանը բոլշեիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, տպ. «Համազգային ընկերութեան», Պէրոթ, 1953:
12. Տէր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղետը, տպագր. Մ. Տէր-Սահակեան, Կ. Պոլիս, 1921:
13. Փիրումեան Ռ., Հայաստանը Հ. Յ. Դ.-Բոլշեիկ յարաբերությունների ոլորտում 1917-1921, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1997:
14. Քաջազնունի Հ., Հ. Հ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, Պոլիգր. Բամ, 4-րդ տպարան, Թիֆլիս, 1923:
15. Туманян М., Дипломатическая история Республики Армении 1918-1920 гг. Типография «Айкарли», Ереван, -2012.

Ընդունվել է՝ 12. 06. 2021

Գրախոսվել է՝ 03. 07. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Նարինե ՄՈՎՍԵՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
ավագ լաբորանտ, էլ. հասցե՝ narinem2006@gmail.com

УДК: 93/94

DOI: 10.52971/18294316-2021.2-158

**ВКЛАД АРМЯН В ОТКРЫТИЕ И ОСВОЕНИЕ МОРСКИХ
НЕФТЕГАЗОВЫХ МЕСТОРОЖДЕНИЙ СОВЕТСКОГО
АЗЕРБАЙДЖАНА**

Գայկ Մելիկ-Ադամյան, Խրիստոֆոր Խաչանով

Институт геологических наук НАН РА

Ключевые слова: *армяне, вклад, нефтегазовые месторождения, Азербайджан.*

В статье впервые рассматривается огромный вклад армянской научно-технической мысли в обнаружение и эксплуатацию Каспийских морских нефтегазовых месторождений Азербайджанской ССР, которые по сей день обеспечивают более 90% нефтегазовой прибыли этой республики. Вопреки фальсификациям современных азербайджанских историков, замалчивающих роль армянских специалистов, доказывается, что, благодаря именно армянским геологам и инженерам, выходцам из Арцаха (преимущественно, из Шуши), лауреатам Госпремии и Ленинской премии СССР В.С. Мелик-Пашаеву, Р.А. Ионнесяну, Д.К. Мзреуляну, З.И. Мелик-Тангиеву и др., в 1950-1980 гг. были открыты и до сих пор эксплуатируются месторождения «Нефтяные камни», «Гюргяны-море» и др. Из них только в постсоветский период было добыто более 42 млн т сырой нефти на сумму минимум 20 млрд долларов США по ценам 15.05.2021, что в свою очередь способствовало наращиванию военной мощи этого государства-агрессора.

Введение: В становлении и развитии морского нефтегазового сектора Азербайджанской ССР огромен вклад разнопрофильных специалистов армянской национальности: геологов, нефтедобытчиков, геофизиков, нефтемашиностроителей, инженеров-конструкторов нефтедобывающих морских платформ, специалистов нефтегазового бурового оборудования и технологии бурения. Однако в многочисленных публикациях по истории нефтегазовой промышленности, в таких крупных монографиях как «Нефть и нефтяной фактор в экономи-

ке Азербайджана»¹ и «Краткая история азербайджанской нефти»², а также в многочисленных статьях на эту тему в постсоветском Азербайджане армянские фамилии полностью или почти полностью игнорируются, в том числе фамилии 22 армян лауреатов Государственных премий и 2 лауреатов Ленинской премии СССР в период 1942-1983 гг.³, значительная часть которых внесла огромный вклад в открытие и освоение морских нефтегазовых месторождений. В частности в вышеуказанных монографиях азербайджанских ученых постсоветского периода злостно нарушается как минимум авторское право и игнорируется репутация подавляющего большинства армянских крупных ученых и производственников, особенно тех, фамилии которых заканчиваются на -ян и неоспоримо свидетельствуют об их армянском происхождении. Так в монографии М.Ф. Мир-Бабаева (2009) вскользь упоминаются только фамилии крупнейшего нефтяного геолога Врама Самсоновича Мелик-Пашаева (но не отмечается его первооткрывательство морских месторождений), нефтехимика Петра Ивановича (Петроса Оганесовича) Маркосова и инженера-конструктора крупноблочных морских оснований для морского нефтегазового бурения Левона Арсеновича Межлумова,⁵ а в монографии Натига Алиева (2010) – фамилии всех армян разнопрофильных специалистов советского периода совершенно отсутствуют.

Одним из наиболее вопиющих фактов умышленного игнорирования армян – отсутствие имени выдающегося инженера, изобретателя турбобура, дважды лауреата Госпремии СССР, доктора тех. наук, профессора, выходца из Арцаха **Ролена Арсеновича Иоаннесяна** (1907 Баку -1995 Москва). В этой связи Н. Алиев⁶ отмечает: «В 1939 г. началось промышленное применение безредукторного турбобура (П.П. Шумилов, Э.И. Тагиев и др.)», а М.Ф. Мир-Бабаев пишет: «1936 г. впервые в мире группой советских инженеров (П. Шумиловым, Э. Тагиевым и др.) создан многоступенчатый безредукторный турбобур»⁷ и «Впервые в мировой нефтяной практике бурения в 1936-1940 гг. (под руководством П.П. Шумилова, Э.И. Тагиева и др.) был создан мощный многоступенчатый безредукторный турбобур, способный конкурировать с роторным бурением»⁸. Во всех перечисленных цитатах имя Р. Иоаннесяна подпадает под графу «и др.», хотя хорошо известно, что с 1941 г. он был главным инженером Экспериментальной конторы турбинного бурения при объединении «Азнефть» и как при изобретении турбобура, так и при изобретении способов наклонно-направленного бурения глубоких скважин, наряду с М.Т. Гусманом, Э.И. Тагиевым, П.П. Шумиловым, в 1947 г. вторично получил Госпремию – Сталинскую премию II степени, причем в обоих случаях его фамилия стояла первой в списке. Турбобуром, созданным под руководством Р. Иоаннесяна, были пробурены и бурят десятки миллионов метров пород нефтегазовых скважин территории СССР, в том числе в советском и современном Азербайджане

¹ Алиев Н. Нефть и нефтяной фактор в экономике Азербайджана. Баку. Letter Press. -2010.

² Мир-Бабаев М.Ф. Краткая история азербайджанской нефти «Азерншер». Баку. - 2009.

³ Մոլիբդենի և Զարմախիտի // Հայկական սովետական հանրագիտարան. Երևան, 1987, էջեր 668 – 674:

⁴ Горная энциклопедия. Т.2. М. Недрa. -1986. С. 151-153.

⁵ Мир-Бабаев М. Ф. Краткая история азербайджанской нефти «Азерншер». Баку. -2009. сс. 167, 243, 245.

⁶ Алиев Н. Нефть и нефтяной фактор в экономике Азербайджана. Баку. Letter Press. -2010. с. 24.

⁷ Мир-Бабаев М. Ф. Краткая история азербайджанской нефти «Азерншер». Баку. -2009. с. 24.

⁸ Там же. с.196.

и в акватории Каспийского моря, что до сих пор приносит колоссальную экономическую выгоду⁹.

Полностью игнорируется также имя одного из старейших геологов, профессора **Самсона Месроповича Апресова** (1874 Шуши – 1969 Баку). Еще в начале 1930-х гг. С.М. Апресов одним из первых выдвинул геологически обоснованное предположение о перспективности нефтегазоносности шельфа Каспийского моря, и таким образом он является одним из отцов-основателей морской нефтегазовой геологии, в том числе первого в Азербайджане морского месторождения «Нефтяные камни» в 40 км к востоку от Баку, за участие в открытии которого был награжден государственной денежной премией^{10 11}. Другой выдающийся нефтяной геолог, коренной бакинец с арцахскими корнями, лауреат Госпремии СССР, доктор геолого-мин. наук **Гурген Павлович Оганесов** (1909 Баку – 1993 Москва)¹² также является первооткрывателем этого месторождения¹³. Еще одним первооткрывателем данного месторождения является дважды лауреат Госпремии СССР **Врам Самсонович Мелик-Пашаев** (1909 Баку–1994 Москва), троюродный брат известного дирижера, народного артиста СССР Александра Мелик-Пашаева из армянского знатного рода Мелик-Пашаевых, выходцев из Шуши. Вторую Госпремию (Сталинская премия I степени), вместе с армянскими инженерами Николаем Варгановичем Сааковым, Гургеном Мовсесовичем Тер-Аваковым и Леоном Арсеновичем Межлумовым, этот выдающийся геолог получил в 1951 г. за открытие и освоение морских нефтяных месторождений Азербайджана, в том числе «Нефтяных камней»^{14 15}. Промышленная разработка этого месторождения была начата в 1951 г. и продолжается по сей день. За всю историю его эксплуатации с 1951 г. до сих пор отсюда было извлечено около 176 млн т сырой нефти и более 13 млрд м³ попутного нефтяного газа (пик добычи нефти 7,4 млн т в 1967 г., а газа – 794 млн м³ 1970 г.)¹⁶, из которых ориентировочно около 20 млн т в постсоветский период, т.е. около 0,7 млн т в год. Остаточные извлекаемые запасы нефти на начало 2018 г. оценивались около 21 млн т на сумму более \$10 млрд по цене 1 барреля (150 л = 0,14 т) \$70 по ценам середины мая 2021 г. После вычета себестоимости и разнообразных налогов, чистая прибыль, по самым скромным подсчетам, может составить не менее \$3-4 млрд.¹⁷ С 1949 по 1953 гг. В.С. Мелик-Пашаев работал на ответственном посту главного геолога крупнейшего объединения «Азморнефть», а с 1954 г. был переведен в Москву. Кроме «Нефтяных камней», В.С. Мелик-Пашаев является также первооткрывателем таких морских месторождений как «Гюрганы-море», открытое в 1947 г. с начальными запасами в 50 млн т нефти, «Банка Дарвина», «Сангачалы-море» и месторождение острова Булла. Нефтегазовое месторождение «Банка Дарвина» обнаружено в 1950 г. с остаточными извлекаемыми запасами на начало 2017 г. в 3 млн т нефти на сумму \$0,9 млрд по ценам середины мая 2021 г. и 0,5 млрд м³ попутного газа. За прошедшие 53 года (с 1950

⁹ **Иоаннисян Ролан Арсеньевич** (1907-1997). Нефтяное хозяйство. -2007. 1. сс. 122-123.

¹⁰ **Апресов С. М.** Материалы к истории геологии СССР. Библиографический словарь. М. Наука. - 1965. Вып.1. с. 276.

¹¹ Известия АН СССР. Серия геологическая. -1969. 6. с. 136.

¹² Горная энциклопедия. -1986. Т. 2. с. 151.

¹³ **Оганесов Г. П.** Профессионалы нефтегазовой отрасли. ОАО Нефтяник. М. -1996. с. 335-336.

¹⁴ Госпремии в области горной науки и техники. Горная энциклопедия. М. Недра. -1986. Т. 2. с. 152.

¹⁵ ՄՍՀՄ մրցանակի դափնեկիրներ. Մովսեսյան Հայաստան. Հայկական սովետական հանրագիտարան. 1987, էջ 670.

¹⁶ [https:// az.sputniknews.ru/infographics](https://az.sputniknews.ru/infographics) (20191107)

¹⁷ [https:// wiki2.org/ru](https://wiki2.org/ru) Нефтяные камни.

по 2003 г.) здесь добыто 16,2 млн т сырой нефти, а с 2003 по 2020 – предположительно 5 млн т, как минимум. Нефтегазоконденсатное месторождение «Сангачалы-море» было открыто в 1963 г. с начальными запасами нефти в 30 млн т и 10 млрд куб м природного газа, а газоконденсатное месторождение острова Булла эксплуатируется с 1974 г. и имело начальные запасы газа 17 млрд куб м^{18 19 20 21}.

Таким образом, из четырех вышеуказанных месторождений, открытых при участии В.С. Мелик-Пашаева, судя по данным Википедии, которые эксплуатируются по сей день азербайджанскими нефтяными компаниями ГНКАР и SOCAR, по неполным и самым скромным подсчетам за весь постсоветский период было извлечено более 42 млн т сырой нефти на общую сумму более \$20 млрд и природного газа на несколько миллиардов долларов, принося значительную прибыль государственной казне Азербайджана, в том числе при закупке современного оружия, используемого против Нагорно-Карабахской Республики. Крупный вклад в разработку морских нефтегазовых месторождений Азербайджана внесли также армянские инженеры: начальник отдела «Гипроморнефть», Заслуженный нефтяник Азербайджанской ССР **Давид Константинович Мзреулян** (Мзреулов) (1906 Баку – 1980 Москва) и главный инженер треста «Азморнефтьстрой» **Завен Иванович Мелик-Тангиев** (1905 Шуши – 1966 Баку). За комплексное освоение морских нефтяных месторождений Азербайджана и, в первую очередь, «Нефтяных камней», в 1961 г. они были удостоены звания лауреатов Ленинской премии^{22 23}.

Значительный вклад в морскую нефтеразработку внесли также замначальника треста «Азморнефтьстрой» (1948-1953), Почетный нефтяник **Виктор Иванович Мнацаканов** (1913 Баку-1985 Москва), замдиректора электромеханического треста «Азморнефтьстрой» **Рафаэл Искандерович Мелкумянц** (1927 Баку), начальник Сангачальского морского УБР объединения «Каспморнефть» **Торник Григорьевич Восканов** (1928 Баку – 2002) и многие другие²⁴. Имена всех этих специалистов также полностью игнорируются в вышеперечисленных постсоветских монографиях азербайджанских ученых и в других публикациях по истории нефтегазового комплекса Азербайджана. Исключением является крупнейший инженер-нефтяник, кандидат тех. наук, один из создателей техники двухствольного бурения скважин и крупноблочного основания морских буровых установок ЛАМ и МОС, директор проектного института «Гипроморнефть» ПО «Азморнефть» (1949-1952), лауреат Госпремии СССР (1951) **Ашот Арсенович Межлумов** (1908 Баку – 1983 Тюмень) из рода Межлумянов, выходцев из села Мюришен Мартунинского района Арцаха^{25 26}. В июле 1946 г., по предложению талантливого бакинского инженера-нефтяника **Артака Газаровича Асцатурова**, впервые в истории нефтяной промышленности СССР было осуществлено передвиже-

¹⁸ Мелик-Пашаев Врам Самсонович. Геология нефти и газа. -1995. 1. с. 62.

¹⁹ Профессионалы нефтегазовой отрасли. М. ОАО Нефтяник. -1996. сс. 296-297.

²⁰ Апанович Ю. Г., Байков И. М., Берлин М. А. Нефть СССР (1917-1987). М. Недра. -1987. с. 200.

²¹ Гулиев И. С., Федоров Д. Л., Кулаков С. И. Нефтегазоносность Каспийского региона Баку. М. Nafta -Press.-2009. сс. 144, 146.

²² Горная энциклопедия. М. Недра. -1987. с. 183.

²³ Профессионалы нефтегазовой области. М. ОАО Нефтяник. -1996. с. 299.

²⁴ Там же. с. 108, 297, 307.

²⁵ Межлумов Л. А. Профессионалы нефтегазовой области//Книга 3. М. ЗАО Нефтяное хозяйство. с. 299.

²⁶ Евдошенко Ю. В. Из истории управления разведкой и разработкой морских месторождений нефти и газа в СССР // Нефтяное хозяйство. 6. М. -2008. с. 75.

ние по морю нефтегазовой буровой вышки высотой 28 метров в предварительно собранном виде²⁷.

Одним из пионеров разработки наклонно-направленного бурения, широко применяемого в морском бурении, являлся доктор тех. наук, профессор **Сергей Аванесович Оганов** (1927 г. Баку). Из акватория всего советского Каспия только в 1983 г. этим объединением было добыто 290 млн т сырой нефти и конденсата и 160 млрд м³ природного газа^{28 29 30}. В 1980-х гг. (до 1988 г.) заместителем начальника «Каспморнефтегаза» (до 1976 г. «Каспморнефть») был крупный организатор производства, кандидат эконом. наук **Рафаэль Степанович Багриянц**. Ответственную должность начальника «Каспморнефти» до 1978 г. занимал кандидат тех. наук, бакинец **Арменак Мехакович Варданиян**^{31 32}. Значительный вклад в развитие нефтегазовой геологии СССР, в том числе в открытие и освоение морских месторождений Азербайджана внесли бакинцы с арцахскими корнями: замминистра нефтяной промышленности СССР (1948-1955) **Вартан Александрович Калмакаров** и профессор **Григорий Аркадьевич Габриелянц**, который в 1989-1991 гг. Министерство геологии СССР^{33 34}.

К настоящему времени более 90% нефтегазового промысла современного Азербайджана приходится на морские месторождения Каспийского моря. Огромный вклад в обнаружение и дальнейшую эксплуатацию этих месторождений в 1950-1980 гг. внесли армянские геологи и инженеры, выходцы из Арцаха (преимущественно, из Шуши), в частности, лауреаты Госпремии СССР Г.П. Оганесов, В.С. Мелик-Пашаев, Р.А. Ионнесян, лауреаты Ленинской премии Д.К. Мзреулян, З.И. Мелик-Тангиев и др. Благодаря их усилиям из месторождений «Нефтяные камни», «Гюрдяны-море», «Сангачалы-море» и других морских месторождений только в постсоветский период было добыто более 42 млн т сырой нефти на сумму минимум 20 млрд долларов по ценам 15.05.2021 и природного газа на сумму несколько миллиард долларов, таким образом способствуя экономическому, в том числе военному, процветанию Азербайджана.

Важно отметить, что с 1980 г. была введена в разработку западная мелководная часть месторождения им. 28 апреля («Гюнешли»), из которой за весь постсоветский период было добыто более 31 млн т нефти³⁵. К настоящему времени это месторождение, наряду с суперместорождениями «Азери» (26 комиссаров) и Чираг (Коверочкина), которые начали разрабатывать в постсоветский период, вместе производят львиную долю нефти и конден-

²⁷ **Мовсумзаде Б. Н., Мастобаев Ю. Б. и др.** Морская нефть. Развитие технических средств и технологий. СПб. Недра. -2005. с. 38.

²⁸ **Аббасов К. А.** Пройденный путь за 35 лет // Азербайджанское нефтяное хозяйство. -1984. 11. с. 6.

²⁹ Оганов Александр Сергеевич. Энциклопедия фонда «Хайазг». Ru.hayazg.info

³⁰ Каспморнефтьгазпром. Горная энциклопедия. М. Советская энциклопедия. -1986. Т. 2. с. 567.

³¹ **Евдошенко Ю. В.** Из истории управления разведкой и разработкой морских месторождений нефти и газа в СССР // Нефтяное хозяйство. М. -2008. 6. сс. 76-77.

³² **Вовк В. С., Османов В. Г., Евдошенко Ю. В.** Вышки над волнами (к 30-летию Главморнефтегаза) // ЗАО «Нефтяное хозяйство. М. -2008. сс. 82, 135.

³³ **Мелконян Р. Л., Хачанов Х. В., Мелик-Адамян Г. У.** Григорий Аркадьевич Габриелянц // Известия НАН РА. Науки о Земле. -2019. 1. сс. 67-70.

³⁴ **Мелик-Адамян Г. У., Мелик-Адамян Т. Г.** Вклад армян в развитие нефтегазового комплекса Поволжья. Армяне Поволжья и юга России: История и современность // Материалы II Всероссийской конференции Саратов. -2016. сс. 252,255.

³⁵ Исследования интенсификации закачки воды на основе моделирования процесса разработки месторождения «Гюнешли». SOCAR Proceedings. -2012. 1. с. 16.

сата Азербайджана.

Выводы: Таким образом, становлению Азербайджана как великой нефтегазовой державы в значительной степени способствовал совокупный вклад армянской научно-технической мысли, а многие разработки армянских, в особенности шущинских, специалистов в разнообразных областях нефтегазового сектора до сих пор, в несколько модифицированных вариантах используются в постсоветском Азербайджане, принося колоссальную экономическую прибыль стране, где армянофобия и армяноненавистничество возведены в ранг официальной государственной политики.

При этом хорошо известно, что, любая работа в сфере наук о Земле и смежных областях – геологические отчеты, прогнозные карты, подсчет запасов, технико-экономические обоснования, документации, научные статьи и монографии – согласно классификации Всемирной организации интеллектуальной собственности ООН (WIPO), членом которого является Азербайджан, а также Всемирной торговой организации ВТО, где Азербайджан – страна-наблюдатель, - относится к интеллектуальной собственности физических и юридических лиц, включая торговые аспекты прав интеллектуальной собственности, согласно 73 статьи ВТО со всеми вытекающими отсюда правовыми последствиями неимущественного (на авторство, защиту репутации автора) и имущественного (разнообразные формы материальной компенсации) характера^{36 37}.

ՀԱՅԵՐԻ ԱՎԱՆԴԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՂԻՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ
ԾՈՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵՁ

Մելիք-Աղամյան Հ. Հ., Խաչանով Հ. Վ.

Բանալի բառեր՝ հայեր, ներդրում, նավթագազային, հանքավայրեր, Ադրբեջան:

Ներկայումս Ադրբեջանի նավթագազարդյունահանման 90%-ից ավելին ստացվում է Կասպից ծովի հանքավայրերից, որոնց բացահայտման և շահագործման ասպարեզներում դեռևս 1950-1980 թթ. խոշորագույն ավանդ ունեն բաբվեցի, ծագումով արցախցի (առավելապես շուշեցի) հայազգի երկրաբաններ և ճարտարագետներ՝ ՄՍՀՍ պետական մրցանակների դափնեկիրներ Գ.Պ. Հովհաննեսովը, Վ.Ս. Մելիք-Փաշանը, Ռ.Ա. Իրաննիսյանը, Լենինյան մրցանակի դափնեկիրներ Դ.Կ. Սզրեուլյանը, Բ.Ի. Մելիք-Թանգիևը և այլն: Նրանց ջանքերի շնորհիվ «ծովային քարեր», «Գյուրգյանի ծով», «Մանգաչալիվի ծով» և այլ հանքավայրերից միայն հետխորհրդային շրջանում արդյունահանվել է նվազագույնը \$20 մլրդ արժողությամբ (15.05.21 գներով) 42 մլն տ-ից ավելի հում նավթ և մի քանի միլիարդ դոլարի բնական գազ՝ նպաստելով Ադրբեջանի Հանրապետությանը բարգավաճմանը, այդ թվում՝ նաև ռազմական:

³⁶ **Зайченко В. Ю.** Определение рыночной стоимости информационно-геологических объектов авторского права создаваемых при геологическом изучении и использования недр // Геология нефти и газа. -2004. 6. с. 41.

³⁷ **Зайченко В. Ю.** Что должны знать авторы обобщений геологической информации о недрах и своих правах в условиях рыночной экономики // Геология нефти и газа. -2004. 5. с. 61.

ARMENIANS' CONTRIBUTION TO THE DISCOVERY AND EXPLOITATION OF MARINE OIL DEPOSIT OF SOVIET AZERBAIJAN

Melik-Adamyany H. H., Khachanov Kh. V.

Key words: *Armenians, contribution, oil and gas deposits, Azerbaijan.*

At present more than 90% of Azerbaijan's oil and gas production is obtained from the Caspian Sea oil deposits the discovery and exploitation of which dates back to the 1950-1980s was largely made by Baku-based Armenian geologists and engineers of Artsakh origin (Nagorno-Karabakh, predominantly Shushi) – recipients of the USSR state prize G. Hovhannesov, V. Melik-Pashayev and R. Ioannisyany, recipients of the Lenin prize D. Mzreulyany, K. Melik-Tangiyev and others. Due to their efforts more than 42 mln tons of raw oil of minimum of \$20 billion (prices as of 15.05.21), and natural gas of several billion dollars was produced from Neft Daşları – Gurgan Sea, Sangachal Sea and other mines contributing to the prosperity of the Republic of Azerbaijan, including the military one. These figures are counted for the post-Soviet period only and the total figures for the entire period are more.

Библиография

1. Аббасов К. А. Пройденный путь за 35 лет. Азербайджанское нефтяное хозяйство. -1984. 11.
2. Абдуллаев В. Д. Исследования интенсификации закачки воды на основе моделирования процесса разработки месторождения «Гюнешли». SOCAR Proceedings, -2012.
3. Алиев Н. Нефть и нефтяной фактор в экономике Азербайджана. Баку. Letter Press. -2010.
4. Апанович Ю. Г., Байков И. М., Берлин М. А. Нефть СССР (1917-1987). М. Недр. -1987; Апресов С. М. Материалы к истории геологии СССР. Библиографический словарь. М. Наука. -1965. Вып.1.
5. Азербайджанская ССР. Горная энциклопедия. Т.1.
6. Вовк В. С., Османов В. Г., Евдошенко Ю. В. Вышки над волнами (к 30-летию Главморнефтегаза). М. ЗАО «Нефтяное хозяйство». -2008.
7. Горная энциклопедия. Т.2. М. Советская энциклопедия. -1986.
8. Горная энциклопедия. Т.3. М. Советская энциклопедия. -1987.
9. Гулиев И. С., Федоров Д. Л., Кулаков С. И. Нефтегазоносность Каспийского региона Баку. М. Nafta-Press. -2009.
10. Евдошенко Ю. В. Из истории управления разведкой и разработкой морских месторождений нефти и газа в СССР. М. Нефтяное хозяйство. 6. -2008.
11. Зайченко В. Ю. Определение рыночной стоимости информационно-геологических объектов авторского права создаваемых при геологическом изучении и использования недр // Геология нефти и газа. -2004. 6.
12. Зайченко В. Ю. Что должны знать авторы обобщений геологической информации о недрах и своих правах в условиях рыночной экономики // Геология нефти и газа. -2004. 5.
13. Иоаннесян Ролан Арсеньевич (1907-1997) // Нефтяное хозяйство. -2007. 1.
14. Известия АН СССР. Серия геологическая. -1969. 6
15. Каспморнефтегазпром. Горная энциклопедия. М. Советская энциклопедия. -1986. Т. 2.
16. Мелик-Адамян Г. У, Мелик-Адамян Т. Г. Вклад армян в развитие нефтегазового комплекса Поволжья. Армяне Поволжья и юга России: История и современность // Материалы II Всероссийской конференции. Саратов. Центрнаука. -2016.
17. Мелик-Пашаев Врам Самсонович // Геология нефти и газа. -1995. 1.

18. Мелконян Р. Л., Хачанов Х. В., Мелик-Адамян Г. У. Григорий Аркадьевич Габриелянц // Известия НАН РА. Науки о Земле. -2019. 1.
19. Межлумов Л. А. Профессионалы нефтегазовой области // Книга 3. М. ЗАО Нефтяное хозяйство.
20. Мир-Бабаев М. Ф. Краткая история азербайджанской нефти «Азершпер». Баку. -2009.
21. Мовсумзаде Б. Н., Мастобаев Ю.Б. и др. Морская нефть. Развитие технических средств и технологий. СПб. Недра. -2005.
22. Оганесов Г. П. Профессионалы нефтегазовой отрасли. ОАО Нефтяник. М. -1996.
23. Оганов Александр Сергеевич. Энциклопедия фонда «Хайазг». Ru.hayazg.info u
24. ՄԱԶՄ ւրցանակի դափնեկիրներ. Մովեստական Հայաստան. Հայկական սովետական հանրագիտարան -1987:
25. [https:// az.sputniknews.ru/infographics/2019.11.07](https://az.sputniknews.ru/infographics/2019.11.07).
26. [https:// wiki2.org/ru Neftyaneye kamni](https://wiki2.org/ru/Neftyaneye_kamni).

Принята: 10. 06. 2021

Рецензирована: 03. 10. 2021

Сдана в пч.: 05. 10. 2021

Информация об авторах:

Гайк МЕЛИК-АДАМЯН - кандидат геологических наук,
старший научный сотрудник Института геологических
наук НАН РА, E-mail: hmelik-adamyan@ru

Христофор ХАЧАНОВ - кандидат геолого -мин. наук,
советник директора Института геологических наук НАН РА,
E-mail: khristkhachanov@gmail.com

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻԻ ԵՎ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՎԱՐՏԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հասմիկ Արրահամյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Ավագ շաբաթ, Վերջին ընթրիք, Քառասնորդաց պահք, Հաղորդություն, Հարություն կամ Զատիկ, Հայոց եկեղեցի, ասպաշխարություն:*

Հոդվածը նվիրված է Ավագ հինգշաբթի օրը հաղորդություն տալու և Մեծ պահքը լուծելու խնդիրներին: Քննարկվել են այն հարցերը, թե երբ և ինչու է հայոց մեջ տարածված եղել Ավագ հինգշաբթի օրը Մեծ պահքը լուծելը, վաղ միջնադարում Հայոց Եկեղեցին ինչ դիրքորոշում է որդեգրել այդ խնդրի վերաբերյալ, Հովհան Օմեցի Հայրապետն ինչ լուծում է ձևակերպել, և հետագա դարերում ինչպես է այդ սովորույթը կենսագործվել Հայոց եկեղեցում և ժողովրդի մեջ:

Նախաբան. Հիսուս Քրիստոսի տնօրինական առաքելության առանցքային դեպքերը կատարվում են Ավագ շաբաթվա ընթացքում: Այն Հարության կամ Զատիկի տոնին նախորդող Քառասնորդաց կամ Մեծ պահքի վերջին շաբաթն է: Հաճախ դիտարկվում է որպես Զատիկին նախորդող շաբաթապահք: Ավագ շաբաթվա բոլոր օրերն ունեն իրենց խորհուրդը, որոնք կյանքի են կոչվում եկեղեցական և ժողովրդական ծիսակարգերի միջոցով: Ընդհանրական Եկեղեցու հայրերի միաբերան մեկնությամբ՝ Ավագ հինգշաբթի առանցքը Հաղորդության խորհրդի հաստատումն է, որը կատարվեց Հիսուսի՝ առաքյալների հետ անցկացրած Վերջին ընթրիքի ժամանակ¹, երբ Հիսուս հացն ու գինին հոշակեց իր մարմնի և արյան խորհրդանիշներ. «Առէ՛ք, կերա՛յք՝ ա՛յս է մարմին իմ», «Արբե՛ք ի

¹ Իսրայելացիները, ի հիշատակ եգիպտական գերությունից ազատագրման, ամեն տարի նշում են Պասեքի տոնը: Հիսուս իր աշակերտների հետ մասնակցում էր այդ օրվա ընթրիքին, որը եղավ նրանց միասնական վերջին ընթրիքը:

ղման է ամենեքին, զի ա՛յդ է արին իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողու-
թիւն մեղաց» (Ավետարան ըստ Մատթեոսի, ԻԶ 17-30, Ավետարան Մարկոսի, ԺԴ 12-25,
Ղուկասու, ԻԲ 7-23, Ավետարան Հովհաննէսի, ԺԳ 21-30 (տե՛ս նաև՝ Զ 35, 54-59), Պողոս
առաքյալի Կորնթացիներին ուղղված Ա թուղթ, ԺԱ 23-25):

Հայոց եկեղեցու դիրքորոշումն Ավագ հինգշաբթիի և Մեծ պահքի ավարտի վերաբերյալ: Ավագ հինգշաբթին Մեծ պահքի այն եզակի օրերից է, երբ խորանի վարա-
գույրը բացվում է, մատուցվում է բաց Պատարագ, և հաղորդություն է տրվում: Հայ Առա-
քելական եկեղեցու ծեսի համաձայն՝ Մեծ պահքի առաջին չորեքշաբթի օրը կատարվում
է մեղավորներին ապաշխարության կանչելու կարգ, քանի որ Մեծ պահքն ապաշխարու-
թյան ամենամեծ շրջանն է: Իսկ Ավագ հինգշաբթի՝ Սբ Պատարագից առաջ, կատարվում
է ապաշխարողների արձակման կարգ, և տրվում է հաղորդություն²: Սակայն պահքը շա-
բունակվում է մինչև շաբաթ օրվա ճրագալույցի Սբ Պատարագի ավարտը, որի ժամա-
նակ տրվում է Հարության ավետիսը³: Դրանից հետո Նավակատիքով (կթեղեն սննդի ճա-
շակմամբ) պահքը մեղմացվում է⁴, իսկ Հարության կիրակնօրյա Պատարագից հետո լուծ-
վում է (վերանում է նաև կենդանական ծագման սննդի արգելքը):

Ավագ հինգշաբթի հաղորդությունից առաջ կամ հետո Մեծ պահքը լուծելը միջ-
եկեղեցական հարաբերություններում ծիսական խնդրահարույց հարցերից է եղել: Քրիս-
տոնեական եկեղեցու վաղ շրջանում վիճելի է եղել, թե երբ է Հիսուս հաստատել
Հաղորդության խորհուրդը՝ մինչև Վերջին ընթրի՞քը, թե՞ այդ ընթրիքի ժամանակ⁵: Դեռևս
վաղ միջնադարի կանոնական գրվածքներում հրահանգվում է այդ օրը պահքը չլուծել և
պահել մինչև Զատիկ, այլապես ամբողջ Մեծ պահքն ընդունայն կլինի:

² Սկզբում Հայոց եկեղեցին ունեցել է Ապաշխարության խորհրդի կատարման հատուկ օր, որը եղել
է Ավագ հինգշաբթին: Կատարվել է «Կարգ ապաշխարողաց» ժամերգությունը, ապա մատուցվել
է Սբ Պատարագ՝ ի հիշատակ Հաղորդության խորհրդի հաստատման (տե՛ս **Տեր-Միքելյան Ա.**,
Հայաստանյայց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը, Սբ Էջմիածին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի
հրատ., 2007, էջ 422: **Սեպուհ ծ. վրդ. Սարգսեան**, Հայոց եկեղեցու խորհուրդներն ու ծեսերը, «Գան-
ձասար» աստուածաբանական հանդէս, Ա, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ, Երևան,
1992, էջ 77): Հայ Առաքելական Սբ եկեղեցու մի խումբ հոգևորականների նախաձեռնությամբ վեր-
ջին տարիներին այս կարգը վերականգնվել է: Տե՛ս Մեղավորներին ապաշխարության կանչելու
կանոն, կազմ.՝ **Մինասյան Է.**, Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցի, Արարատյան Հայ-
րապետական թեմ, Երևան, հեղինակային հրատ., 2019: Ապաշխարողների արձակման կարգ,
կազմ.՝ **Մինասյան Է.**, Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցի, Արարատյան Հայրապետա-
կան թեմ, Երևան, հեղինակային հրատ., 2017:

³ Ուշագրավ է, որ Մեծ պահքը չորեքշաբթի օրվանից սկսելու և Ավագ հինգշաբթի լուծելու վերա-
բերյալ տեղեկություն ենք գտնում նաև ժողովրդական կենցաղը լուսաբանող սկզբնաղբյուրում
(տե՛ս **Գևորգյան Գ.**, Ղզլար // Հայ ազգագրություն և բանահյուսություն, պրակ 10, Երևան, ՀՄԱՀ
ԳԱ հրատ., 1980, էջ 69):

⁴ Նավակատիքի պահքի մասին տե՛ս **Աբրահամյան Հ.**, Նավակատիքի պահքի հաստատումը Հայոց
եկեղեցում // Էջմիածին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատ., 2020, Ը, էջեր 22-44:

⁵ Վերջին ընթրիքի օրվա քննությունը տե՛ս **Վաչե ծ. վրդ. Իզնատոսյան**, Մեր Ս. Պատարագը, Մար-
սել, 1979, էջեր 15-34:

Գանգրայի ժողովի սահմանած (340 կամ 370 թ.⁶) ԻԱ. կանոնը ասում է. «Եթե որ զՔառասունսն պահեսցե սուրբ եւ ի Զատկի հինգշաբթի արն քան զհաղորդել արինացն եւ բաժակին սրբելոյ, եթե այլ ինչ աւելի համարձակիցի ուտել՝ զպահսն զոր պահեսց ընդունայն են եւ ի մեծ ժողովոյն նզովեալ լիցի»⁷: Լավոդիկիայի ժողովի (365 թ.⁸) ԽԵ. կանոնը հրահանգում է. «Չէ արժան ի Քառասներորդսն յաւագ շաբաթուն հինգշաբթի ար բերան լուծանել, զի մի՛ամենայն պահք Քառասներորդացն անարգեսցին, այլ արժան է զամենայն Քառասներորդսն պահել եւ լոկ աշտուճ (ցամաք⁹ - Հ. Ա.) հացի մխիթարել զանձինս»¹⁰: Կանոնագրքի՝ Հովհան Օձնեցի Հայրապետի (717-728 թթ.) կատարած խմբագրությունում տեղ գտած այս կանոններից հետևում է, որ վաղ միջնադարում Ավագ հինգշաբթի պահքը լուծելը տարածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև ուրիշ քրիստոնեական երկրներում, քանի որ Գանգրայի և Լավոդիկիայի ժողովները տեղական արտաքին ժողովներ են, այսինքն՝ դրանց որոշումները դուրս են եկել մեկ առանձին Աթոռի կամ թեմի շրջանակներից¹¹:

Մահակ Ա. Պարթև Հայրապետի (387-439 թթ.) տեսիլքում հիշատակություն կա այն մասին, որ Նիկիայի 325 թ. տիեզերածոդովի հայրերն են կանոնել Ավագ հինգշաբթի հաղորդությունից հետո պահքը չլուծել. «... եւ էի ես ի մեծի հինգշաբաթոջն ի զատկի աղուհացիցն ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման՝ սրբոյ եւ մեղսաքաւիչ խորհրդոյ կենարարին, ճաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ՝ բայց հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնելոյ մեծի եւ սուրբ ժողովոյն երեք հարիւր ութ եւ տասացն, որք ի Նիկիացոց քաղաքին այսպէս կանոնագրեալ հաստատեցին»¹²: Այդ կարգը Նիկիայի ժողովին վերագրվելու մասին է նշված նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԸԾԶ՝ «Վասն կերողաց զաւագ հինգշաբթին» վերտառությամբ կանոնում. «Եթե որ զքառասունսն պահեսցե սուրբս եւ զատկի հինգշաբթս օրն քան զհաղորդել օրինացն և բաժակին սրբոյ աւելի ինչ համարձակեսցի ուտել, զպահոցն, զոր պահեսց, ընդունայն է և ի մեծ ժողովոյս նզովեալ եղիցի» (կրկնում է Գանգրայի ժողովի ԻԱ. կանոնը- Հ. Ա.): Զայս եւ ի Նիկիայ ժողովն եղին՝ յայնմ աւուր չորակեր լինել սակաւ»¹³:

⁶ Ղազարյան Ա., Եկեղեցական ժողովներ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան (այսուհետև՝ ՔՀ), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2002, էջ 297:

⁷ Կանոնագիրք հայոց, հտ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 198: Վ. Հակոբյանը, հիմնվելով այն փաստի վրա, որ ԻԱ. կանոնը հունարեն չունի, ենթադրում է, որ այն կազմվել է Կանոնագիրք է ներմուծվել հետագայում (տե՛ս նշվ. աշխ., էջ 584):

⁸ Ղազարյան Ա., նշվ. աշխ., էջ 297:

⁹ Ղազարեան Ա., Գրաբարի բառարան, հտ. 1, Երևան., ԵՀ հրատ., 2000, էջ 159:

¹⁰ Կանոնագիրք հայոց, հտ. Ա, էջ 239:

¹¹ Ղազարյան Ա., նշվ. աշխ., էջ 297:

¹² Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց // Մատենագիրք հայոց, Ա. հտ., Ե. դար, Անթիլիաս, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2003, էջեր 2225-2226:

¹³ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, ԳԱ հրատ., 1975, էջ 362: Ուշագրավ է, որ Ավագ հինգշաբթի չորակեր լինելու (այսինքն՝ միայն չոր ուտելիքներով կամ հացով սնվելու. տե՛ս Ազարեան Ա., Գրաբարի բառարան, հտ. 1, Երևան, 2000, էջ 374) կարգը, ըստ վերը բերված կանոնների, հաստատվել է Նիկիայի ժողովում, սակայն Հայոց կանոնագրքում տեղ գտած նիկիական

Մահակ Պարթևի անունով հայտնի, սակայն VI դ. կեսերին Ներսես Բ. Բագրևանդեցու և Ներշապուհ եպիսկոպոսի գրչին պատկանող «Նորին սրբոյ Մահակայ. Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշման վանաց» կանոնախմբի¹⁴ Խ. կանոնում հիշատակվում են այն ուխտի օրերը, որոնց ժամանակ ստացված հասույթը պետք է հատկացվեր վանքերին, և այն տոները, որոնց հասույթը պետք է տրվեր ամուսնացյալ քահանաներին: Տոների շարքում հիշվում է նաև Ավագ հինգշաբթին. «Արդ՝ պարտ է մեզ զհատուցումն շնորհից սահմանադրելով հաստատել յայտարարութեամբ թէ ո՞րպէս պարտ է հատուցանել ի վանս եւ կամ ամուսնացելոց քահանայից: ... Տաւն միջնոց քառասներորդացն Ջատկի, ... մեծ հինգշաբթի Ջատկին, յորում Կենարարն մեր աւանդեաց աշակերտացն զխորհուրդս նորոյ ուխտի»¹⁵: Այս կանոնը վկայում է, որ Ավագ հինգշաբթի ևս, որպէս տոնական օր, ժողովրդի հոծ բազմություն է գնացել ուխտի, ինչից ստացված հասույթն էլ պետք է փոխանցվեր ամուսնացյալ քահանաներին:

Նովիան Օձնեցին հրահանգում է Ավագ հինգշաբթի ժողովրդին հաղորդություն չտալ, քանզի նրանք մեղքերը չեն խոստովանել և անմաքուր են, ուստի քառասներորդացը ապականած կլինեն. «Դարձեալ յարինաւոր սուրբ Ջատկին ի մեծի Հինգշաբթւոջն, ո՛չ հրամայեմք հաղորդել ժողովրդեան մարմնոյ եւ արեան Տեառն, ... և մի՛ անմաքրապէս հպեալք մերձեցին ի մարմինն Տեառն, ոչ խոստովանեալք զյանցանս անձանց իւրեանց: ... Եւ մանաւանդ զճաշակս իմն կերակրոց անխտրապէս զկնի հաղորդելոյ նոցա ի մարմնոյ և յարենէ Տեառն, և ապականեցին գլխովին զամենայն պահս քառասներորդացն»¹⁶: Իր հրահանգը հիմնավորելու համար Օձնեցին փաստաբերում է ավետարանական այն դրվագը, որում Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուս միայն տասներկու աշակերտներին կերակրեց իր մարմնի և արյան խորհրդանիշ հաց ու գինով, ինչը եղավ հնի ավարտը և նորի սկիզբը, իսկ հաղորդության խորհուրդը ժողովրդին հասու եղավ մեծ Ջատկին (Հարությունը – Հ. Ա.): Այդ պատճառով Օձնեցին հրահանգում է ժողովրդին տրոհել Մեծ հինգշաբթիի խորհուրդից, քանի որ «... ազատութիւն երախայիցն»¹⁷ չն ևս է կատարեալ, ... թիւ պահոց պասեքին չն ևս կատարեալ, և լուծումն ազատութեան չն ևս եղեալ է ի ծառայութենէ մեղսածին ախտիցն, յորում լինի թողութիւն ծառայից, ... զի Տէր մեր Յիսուս

քսան կանոններում այդ մասին հիշատակություն չկա: Նիկիայի ժողովի արձանագրությունները չեն պահպանվել (տե՛ս **Մեսրոպ քին. Արամյան**, Նիկիայի Ա. տիեզերական ժողով. 325, ՔՀ, էջ 796), որոնցում, միգուցե, քննարկվել է նաև խնդրո առարկա հարցը: Մխիթար Գոշն այդ տեղեկությունը, ըստ ամենայնի, քաղել է այլ աղբյուրներից, որոնք նա թվարկում է Դատաստանագրքի Ժ. հոդվածում:

¹⁴ Այս մասին տե՛ս **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), Երևան., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 108:

¹⁵ Կանոնք Սրբոյն Մահակայ Հայոց Հայրապետի, //Մատենագիրք հայոց, Ա. հտ., Ե. դար, Անթիլիաս, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2003, էջ 192-195: Հմմտ. Կանոնագիրք հայոց, հտ. Ա, էջեր 397-399:

¹⁶ **Յովիաննու Իմաստասիրի** Հայոց կաթողիկոսի սակս ժողովոց որ եղեն ի հայք, Գիրք թղթոց, Թիֆլիս, տպ. Տ. Ռոսինեանց եւ Մ. Շարաձե, 1901, էջեր 227-228:

¹⁷ *Երախա* նշանակում է չմկրտված անձ (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1, Վենետիկ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836, էջ 666):

Քրիստոս չն ևս խաչեալ և զմահ լուծեալ և անարգեալ, և ոչ ի գերեզմանի եղեալ, և ոչ ետարեայ գյարութիւնն ի մեզ ցուցեալ, և ոչ զաւետիս յարութեանն ընկալեալ ուրուք յումեքէ. զայս ամենայն ի հինգշաբաթոջն ոչ գտանեմք այսպէս եղեալ»¹⁸: Նա եպիսկոպոսներին հրահանգում է հինգշաբթի հաղորդություն տալ միայն քահանաներին, իսկ աշխարհականներին դուրս հրավիրել. «...և մեք Քրիստոսի մարմնովն սպասաւորեալք յարինակ Տեառն մերոյ Փրկչին իւրով աշակերտաւքն, որպէս և այժմ վերադիտողին միայն հրամայեմք քահանայիք հաղորդել ահաւոր խորհրդոյն և գոեհիկան արտաքս ելանել»¹⁹: Ի դեպ, Ավագ հինգշաբթին հայոց առաջին տոնացույցի՝ «Կանոնք Ընթերցվածոցի» մեջ, որը խմբագրել է Սահակ Ա. Պարթևը²⁰, Ավագ հինգշաբթին դեռևս հիշատակվում է «Հինգշաբթի ար՝ հին Զատկին...»²¹ որպէս նախաքրիստոնէական Զատկի հիշատակ: Եվ միայն ՄԼդ. կեսերից է այն կոչվում «Մեծ հինգշաբթի»²², երբ նշվում է որպէս **Հաղորդության խորհրդի հաստատման օր՝ նախորդելով մեծ կամ նոր Զատկին՝ Հարությանը:**

Հայոց Եկեղեցու դավանանքի գիտակ և Հովհան Օմեցու գործակից Խոսրովիկ Թարգմանիչն Ավագ հինգշաբթի աշխարհականներին հաղորդություն չտալը բացատրում է այսպէս. այդ օրը հաղորդվելը չպետք է պահքը լուծելու պատճառ դառնա, քանի որ համաձայն առաքյալների սահմանած կարգի, որը բազմիցս վկայակոչել են նաև Հայոց Եկեղեցու հայրերը, պահքը պետք է անխափան պահել, մինչև Հարություն²³:

Ներսէս արք. Մելիք-Թանգյանի աշխատությունից տեղեկանում ենք, որ «*Աւիրիկայի (Ա.Ֆրիկայի – Հ. Ա.) Եկեղեցին* (վաղ շրջանում Ա.Ֆրիկայում քրիստոնէական մեծ կենտրոններ են եղել Եգիպտոսը և Եթովպիան – Հ. Ա.) *Աւագ Հինգշաբթին պատի շարունակութիւն չէր համարում: Է դարում 6 ընդունուած շաբաթի վրայ աւելացրին մի շաբաթ՝ շարչարանաց շաբաթը, եւ դարձավ 7 շաբաթ: Չարչարանաց շաբաթուայ մէջ շատերն Աւագ հինգշաբթի օրն էին թաթախում՝ իբրև յիշատակ Քրիստոսի երեկոյին, ոմանք էլ թաթախում էին ուրբաթ կամ շաբաթ օրը*²⁴: Ապա վկայակոչելով Եվսեբիոս Կեսարացուն (III-IV դդ.)՝ գրում է. «... *Զատկի տօնի հանդէսը ... Ասիայում տօնուով էր հինգշաբթի օրը՝ հին ուխտի զատկին նմանելով, հետեւելով Յովհաննէս առաքեալի աւանդութեան, իսկ հռոմայեցիք՝ կիրակի օրը՝ հետեւելով Պետրոս առաքելոյն*»²⁵: Բանն այն է, որ Հռոմի Վիկ-

¹⁸ **Յովհաննու Իմաստասիրի** Հայոց կաթողիկոսի սակս ժողովոց որ եղեն ի հայք, էջ 228:

¹⁹ Նույն տեղում, էջ 229:

²⁰ **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջեր 25-41: Ավագ շաբաթվա բոլոր օրերի կանոնների հեղինակը Սահակ Ա. Պարթևն է (տե՛ս **Ղազարյան Ա., Նավոյան Մ.** և ուրիշներ, Ավագ շաբաթ, ՔՀ, էջ 120):

²¹ **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 41:

²² Նույն տեղում, էջ 109:

²³ **Խոսրովիկ Թարգմանիչ**, Բան վարդապետութեան յաղագս քառասնորդացն ասացեալ Տեառն Խոսրովայ, //Մատենագիրք հայոց, Զ. հ., Ը. դար (Յալուած), Անթիլիաս, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2007, էջեր 704-706:

²⁴ **Ներսէս արք. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրաւունքը, Սբ Էջմիածին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատ., 2011, էջ 73:

²⁵ Նույն տեղում, էջ 457: Հմմտ. **Խոսրովիկ Թարգմանիչ**, նշվ. աշխ., էջ 703: Մույն խնդրի մասին մանրամասն տե՛ս նաև **Անասեան Հ.**, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ //

տոր պապը փորձում էր Արևմտյան եկեղեցուց անջատել Արևելյան (Ասիայի) եկեղեցիներն այն բանի համար, որ վերջիններս Չատիկը տոնում էին հրեական Պասեքի օրը²⁶: Մեջբերելով Իրենիոս Լուկոնացուն (II դ.)՝ Մելիք-Թանգյանը հավելում է. «Մբ. Իրենիոսը, հաշտարար դուրս գալով ասաց՝ եթե ճշմարիտ հաւատքը միեւնոյն է, այդպիսի տարբերությունները չպիտի խռովութեան տեղիք տան»²⁷: Ասվածը թույլ է տալիս ենթադրելու, որ վաղ միջնադարում հայոց մեջ տարածված է եղել Արևելյան սովորույթը, այն է՝ պահքը լուծել Ավագ հինգշաբթի, որի հիմքում եղել է հրեական ավանդույթը: Ավագ հինգշաբթին առնչվում է հրեական Չատիկի՝ Պասեքի հետ, որը հրեաների՝ Եգիպտական գերությունից ազատվելու հիշատակի տոնն է: Այն սկսվում է հրեական լուսնա-արեգակնային օրացույցով Նիսան ամսի 15-ից (տևում է յոթ օր): Վերջինս համընկնում է զարնանային գիշերահավասարին, որը լինում է Գրիգորյան տոմարի մարտ կամ ապրիլ ամիսներին: Որպեսզի քրիստոնեական Չատիկը՝ Հարությունը, որը խորհրդանշում է մահվան հանդեպ հաղթանակը, չհամընկնի Պասեքին, Նիկիայի Ա. տիեզերաժողովը (325 թ.) որոշել է Հարության տոնը նշել զարնանային գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակին²⁸: Ուստի Ավագ հինգշաբթի օրը պահքը լուծելը ուղղափառ քրիստոնյաների կողմից մերժելի է. քրիստոնյա եկեղեցիները Ավագ հինգշաբթին նշում են որպես հաղորդության սրբազան խորհրդի հաստատման՝ հիշատակ և հաղորդություն են տալիս, սակայն պահքը չեն դադարեցնում, այլ շարունակում են մինչև քրիստոնեական Չատիկ՝ Հարության տոն²⁹: Հայոց եկեղեցին, հետևելով Նիկիայի տիեզերաժողովում ընդունված կարգին, ըստ որի՝ Չատիկի օր էր սահմանվում զարնանային գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակին, կանոնել է Մեծ պահքը չլուծել Ավագ հինգշաբթի, այլ շարունակել մինչև Չատիկ, քանի որ հակառակ դեպքում տոնախմբությունը ևս կլիներ Ավագ հինգշաբթի, և քրիստոնեական Չատիկի խորհուրդը կերկրորդվեր: Սակայն Օմեցին փորձել է համահարթեցնել Արևելյան և Արևմտյան ավանդույթները՝ առաջարկելով Ավագ հինգշաբթի հաղորդություն տալ հոգևորականներին, իսկ

Բագմավեպ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 1968, թիւ 7-12, էջ 276: II դ. վերջերին առնչվող այս իրավիճակի նկարագրությունը մանրամասն տե՛ս **Եւսեբիոս Կեսարացի**, Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 1877, էջեր 394-402:

²⁶ **Եւսեբիոս Կեսարացի**, նշվ. աշխ., էջեր 397-398: **Ներսես արք. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 49:

²⁷ **Ներսես արք. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 457: Հմմտ. **Ирений Лионский**, Против ересей. Глава X. Единство веры Церкви во всем мире. / <https://azbyka.ru/> (վերցված է՝ 25.04.2020), «ebook»:

²⁸ **Մարգայան Լ.**, **Նավոյան Մ.** և ուրիշներ, Չատիկ, ՔՀ, էջ 347:

²⁹ **Յովհաննու Իմաստասիրի** հայոց կաթողիկոսի սակս ժողովոց, որ եղեն ի հայք, էջեր 227-230: Այդ մասին նշվում է նաև Յուրտավի եպիսկոպոս Մովսեսի «Պատճառք Դ ժողովոյն երկարնակացն, Մովսեսի վրաց ուղղափառ եպիսկոպոսի» 604-607 թվագրվող թղթում. «Արդ՝ որպէս առաք պատուէր ի սուրբ հարցն ոչ հաղորդել անխտիր ընդ ամպարիշտս, և ոչ միաբանել և զուգել գտան մեծի գատկին ընդ հրեայսն» (տե՛ս **Մովսես Յուրտավեցի**, Պատճառք Դ ժողովոյն երկարնակացն, Մովսեսի վրաց ուղղափառ եպիսկոպոսի, Գիրք թղթոց, Թիֆլիս, տպ. Տ. Ռոտինեանց եւ Մ. Շարաձէ, 1901, էջ 124):

Հարության տունին՝ ժողովրդին: Այսպիսով կարող ենք արձանագրել, որ Ներսես Շնորհալույց դեռևս չորս դար առաջ Հովհան Օձնեցին բարձրաձայնել է փոխադարձ հանդուրժողականության և սիրո վրա հիմնված միության խնդիրը:

Պարզելու համար, թե ինչպես է կենսագործել Օձնեցու սահմանած կարգը և հետագայում ինչ փոփոխությունների է ենթարկվել, անհրաժեշտ է կատարել հավելյալ ուսումնասիրություն: Ուշագրավ է XIX դ. վերջին վերաբերող մի վկայություն այն մասին, որ Ավագ հինգշաբթի օրը հաղորդվել են միայն որբնայրիները. «Աւագ հինգշաբթի ... պապը թոռների հետ գնում է եկեղեցի, որտեղ տերտերը խոստովանեցնում էր որբնայրի մարդկանց և կանանց: Գյուղում ինչքան որբնայրի կա, Ավագ Հինգշաբթի է ճաշակվում, բանի որ այդ օրը երկնքում ճաշակվում են բոլոր սրբերը, հրեշտակներն ու ճգնավորները: ... Խոստովանությունը վերջանալուց հետո քահանան սկսում է արձակում տալ ամբողջ Մեծ պատը միաժամ պահողներին»³⁰: Սա արժեքավոր վկայություն է ոչ միայն այն բանի, որ պահպանվել է որևէ առանձնացյալ խմբին Ավագ հինգշաբթի հաղորդություն տալու սովորույթը (ինչպես Օձնեցու հրահանգով՝ միայն հոգևորականներին), այլ նաև այն մասին, որ XIX դ. վերջին Շիրակի գյուղական որոշ բնակավայրերում կատարվել է ապաշխարողների արձակման կարգ:

Մեր օրերում Ավագ հինգշաբթի հաղորդություն է տրվում այն հավատացյալին, որը Եկեղեցու սահմանած կարգի համաձայն, պատրաստվել է խորհրդին մոտենալու:

Ազգագրական բազմաթիվ սկզբնաղբյուրներ վկայում են՝ XIX-XXդդ. հայ ժողովրդի կենցաղում Մեծ պահքը կենսունակ է եղել և շարունակվել է մինչև ճրագալույցի Սբ Պատարագ: Նույնիսկ հանդիպում են վկայություններ Ավագ հինգշաբթից սկսած ծոմ պահելու մասին³¹: Սակայն պահպանվել են նաև նույն օրը Հաղորդությունից հետո խաշած հավկիթ, երբեմն նաև այլ սննդատեսակներ (յուղ են) ճաշակելու³² կամ հավկիթ ներկելու

³⁰ Եր. Մովսիսեան, Չարչարանքի շաբաթ (Շիրակի գիւղական կեանքից) // Արարատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1899, թիւ Գ-Դ, էջ 147:

³¹ Յոթ տարեկանից սկսած՝ հեղինակն Ավագ հինգշաբթի մեծ մոր հետ ծոմ է պահել (տե՛ս Մ. Թիթինջեան, Մանկական յիշատակներից, //Մշակ, Թիֆլիս, Մարտիրոսեանցի հրատ., 1878, թիւ 65, էջ 1): Ավագ հինգշաբթի օրվանից մինչև շաբաթ օրվա կեսը շարուրցիները կենդանական ոչինչ չէին ուտում և ծոմ էին պահում: Սա կամավոր զրկանք էր, որին ոչ բոլորն էին դիմանում (տե՛ս Ս.Ավագյան, Շարուր, Երևան., «Տիգրան մեծ» հրատ., 1998, էջ 43): Սեբաստիայի Խանձառ և Կովտուն գյուղերում Ավագ հինգշաբթի ծոմ են պահել (տե՛ս Կ. Գաբրիելեան, Բաղդիքք սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1952, էջ 673): «Աւագ հինգշաբթի պտի ճաշակուէինք,ինչարի ցորեկ (ցերեկ-ՉՏ.Ա.) ծոմ ինք պահել»(տե՛ս Եր. Մովսիսեան, նշվ. աշխ., էջ 147):

³² Ավագ հինգշաբթի յոթ ձու են ներկում՝ ի հիշատակ Մեծ պատի յոթ շաբաթների անցնելու ու Ջատկի մոտենալու (տե՛ս Աղ. Մխիթարեանց, Փշրանք Շիրակի ամբարներից, //Էմինեան ազգագրական ժողովածոյ, պրակ Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց հրատ., 1901, էջ 270): Ավագ հինգշաբթի օրը յոթ հավկիթ են խաշում և ուտում՝ հավատալով, որ ուտողների ատամները չեն ցավի (տե՛ս Ե. Լալայեան, Ջավախք, Նշանաւոր տօներ, //Ազգագրական հանդէս (այսուհետև՝ ԱՀ), գիրք Բ, Թիֆլիս, տպարան Ա. Մահտեսի Յակոբեանց, 1897, էջեր 270-271): Ս. Մկրտչյան, Հայոց սոնածիսական մշակույթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջեր 78-79:

և մինչև շաբաթ օրը պահելու սովորույթները³³։ Մեր օրերում դրանք կենցաղավարում են կամ գոնե հայտնի են Հայաստանի տարբեր բնակավայրերում³⁴, սակայն Ավագ հինգշաբթի հաղորդվելը շատերին անհայտ կամ անվազն ոչ պատաղիր պայման է։

Եզրահանգում. Հիմնվելով եկեղեցական ժողովների կանոնների և մատենագրական սկզբնաղբյուրների վրա՝ կարելի է եզրակացնել հետևյալը.

ա) մինչև VIII դ. սկզբները հայոց մեջ տարածված է եղել Արևելյան քրիստոնեական ավանդույթին բնորոշ Ավագ հինգշաբթի Հաղորդությունից հետո Մեծ պահքը լուծելու սովորույթը (ըստ ամենայնի՝ գուգահեռաբար կենցաղավարել է նաև պահքը Ջատկին լուծելու կարգը)։

բ) Հովհան Օձնեցին, «հաշտեցնելով» Արևմտյան և Արևելյան ավանդույթները, հրահանգել է Ավագ հինգշաբթի հաղորդություն տալ միայն հոգևորականներին, իսկ Հարությանը՝ աշխարհականներին։

գ) XIX դ. տեղ-տեղ պահպանվել է «առանձնաշնորհյալ» խմբի (ի դեմս այրիների) հաղորդելու սովորույթը։

դ) XIX դ. մինչև մեր օրերը առանձին բնակավայրերում կենսունակ է Ավագ հինգշաբթի օրը խաշած հավկիթ ճաշակելու սովորույթը։

ВЕЛИКИЙ ЧЕТВЕРГ И ПОСЛЕДНИЙ ДЕНЬ ВЕЛИКОГО ПОСТА

Абраамян А. А.

Ключевые слова: *Страстная седмица, Тайная вечеря, Четырдесятница, причастие, Воскресение или Пасха, Армянская Апостольская церковь, Покаяние.*

Завершение Великого поста в раннее средневековье было одним из спорных вопросов межцерковных отношений. С самого начала Армянская Апостольская церковь приняла решение завершить Великий пост не в Великий четверг, который совпадал с еврейской Пасхой, а в день христианской Пасхи, который отмечался в первое воскресенье после полнолуния весеннего равноденствия (так было определено в Никейском соборе в 325 году). Католикос Ован Одзнецци (717-728 гг.), заравнивая восточно-христианское и западно-христианское

³³ Յ. Մուրադեանց, Համշէնցի հայեր. Տօներ, //ԱՀ, գիրք Զ, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1900, էջ 157: Գ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 69: Մ. Թիթիւնջեան, նշվ. աշխ., էջ 1:

³⁴ Գեղարքունիքի մարզի Բատիկյան գյուղում «Կոլլնջանի (փորացավ – Հ. Խ.) ձուն ներկում են հինգշաբթի, տան նաֆարների համար, ամեն մեկին՝ մի հատ, աններկել ուտում են: Էդ ձուն հիվանդություն ա բուժում, տան հաջողություն ա, ամեն ինչ ա» (տե՛ս Հ. Խառատյան, Տոնը և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, Եր., «ՄԱՐՎԱՐԴ-հրատ», 2009, էջ 298): Շիրակի մարզի Գոգհովիտ գյուղում «Մամաս անպայման հինգշաբթի օրը ամեն մեկիս համար մի հատ աններկել ձու է խաշում ու ատում է, որ պիտի պարտաղիր ուտենք» (տե՛ս նշվ. աշխ., էջ 302): Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում «Ավագ հինգշաբթի օրը գաթեն ենք թխում, ձուն ենք ներկում սոխի կլեպով» (տե՛ս նշվ. աշխ., էջ 309): Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում «Հինգշաբթի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տասու մի ձու էր խաշում, դա «դոլինջ» էր կոչվում: Էտի պտի անպայման ուտեին, որ փորացավ չունենային» (տե՛ս նշվ. աշխ., էջ 310):

традиции, призвал в Великий четверг совершить причастие духовенству, а в Пасху совершить причастие для мирских. Этот порядок изменился в последующие века. В наши дни Армянская Апостольская Церковь Великий четверг дает причастие тем, которые духовно и физически готовились к приближению таинства.

THE MAUNDY (HOLY) THURSDAY AND THE LAST DAY OF LENT

Abrahamyan H. A.

Key words: *Holy Week, Last Supper, The Lent, Holy Communion The Ressurrection, Armenian Apostolic Church, The Repentance.*

The completion of Lent in the early Middle Ages was one of the controversial issues of interchurch relations. From the early ages Armenian Apostolic Church decided to end Lent not on Maundy Thursday, which coincided with the Pesach, but on the day of Christian Easter, which was celebrated on the first Sunday after the March equinox (as was determined in the First Council of Nicene in 325). Catholicos Hovhann Odznetsi (717-728), comparing Eastern Christian and Western Christian traditions, decided that the clergy can take communion to the on Holy Thursday, and the secular - on Easter. This order has changed among centuries. Today, Maundy Thursday the Armenian Apostolic Church gives communion to all those who spiritually and physically prepared for the approach of the sacrament.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Անասեան Հ., Վարդան Այգեկցիի իր նորայայտ երկերի լոյսի տակ // Բազմավէպ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 1968, թիւ 7-12:
2. Ավագյան Ս. , Շարուր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 1998:
3. Գաբրիէան Կ. , Բառգիրք սեբաստահայ զաւառալեզուի, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1952:
4. Գևորգյան Գ., Ղզլար //Հայ ազգագրություն և բանահյուսություն, պրակ 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
5. Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցոյ, Վենետիկ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 1877:
6. Լալայեան Ե. , Ջավախք, Նշանաւոր տօներ // Ազգագրական հանդէս, գիրք Բ, Թիֆլիս, տպարան Ա. Մահտեսի Յակոբեանց, 1897:
7. Խառատյան Հ., Տոնը և տոնահանդէսի մշակույթը Հայաստանում, Երևան, ՍԱՐՎԱՐԴ հրատ, 2009:
8. Խոսրովիկ Թարգմանիչ, Բան վարդապետութեան յաղագս քառասնորդացն ասացեալ Տեանն Խոսրովայ // Մատենագիրք հայոց, Զ. հտ., Ը. դար (Յաւրտած), Անթիլիաս, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2007:
9. Կանոնագիրք հայոց, հտ. Ա, աշխատասիրութեամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964:
10. Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի, //Մատենագիրք հայոց, Ա. հտ., Ե. դար, Անթիլիաս, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2003:
11. Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հտ. 1, Երեւան, Երեւանի համալսարանի հրատ., 2000

12. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց // Մատենագիրք հայոց, Ա. հտ., Ե. դար, Անթիլիաս, տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2003:
13. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, ԳԱ հրատ., 1975:
14. Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից // Էմինեան ազգագրական ժողովածու, պրակ Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ., 1901:
15. Սկրտչյան Ս., Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016:
16. Մովսիսեան Եր., Չարչարանքի շարք (Շիրակի գիղական կեանքից), // Արարատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1899, թիւ Գ-Դ:
17. Մուրադեանց Յ., Համշէնցի հայեր. Տօներ, // Ազգագրական հանդէս, գիրք Զ, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1900:
18. Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի սակս ժողովոց որ եղեն ի հայք, Գիրք թղթոց, Թիֆլիս, տպ. Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարաձէ, 1901:
19. Մելիք-Թանգեան Ներսէս արք., Հայոց եկեղեցական իրաւունքը, Սբ Էջմիածին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատ., 2011:
20. Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
21. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2002:

*Ընդունվել է՝ 05. 06. 2021
Գրախոսվել է՝ 02. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,
Էլ. հասցե՝ hasmikabrahamyanihase@gmail.com

ՄԵՏԱՂՅԱ ՋՐԽՄԻԿՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մերի Ավետիսյան

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի ազգային թանգարան

Բանալի բառեր՝ մետաղ, ջրիմիկ, ջուր, խոհանոցային սպասք, կիսազնդաձև ներդիր, Ալեքսանդրապոլ:

Հոդվածում ներկայացված են ջրիմիկների մետաղյա տարբերակներ, որոնց տարածվածությունը կենցաղում կապված էր XIX-XX դարերում Հայաստանի և Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներում պղնձագործության զարգացման ծավալների մեծացման հետ: Փորձ է արվել դիտարկել ջրիմիկների արտաքին ձևի և տարածաշրջանային առանձնահատկությունները Հայոց ազգագրության թանգարանի պղնձե ջրիմիկների հավաքածուի ուսումնասիրության, ինչպես նաև ժամանակակից պղնձագործ վարպետների փոխանցած տեղեկությունների հիման վրա:

Նախաբան. XIX-XX դարերում հայոց ավանդական կենցաղում ջուր խմելու նպատակով լայնորեն կիրառվել են պղնձե, կավե, փայտե 0,5լ.-1լ. տարողությամբ, 10-25 սմ բարձրությամբ տարաներ, որոնք, ելնելով կենցաղում ունեցած գործառնությունից, ստացել են ջրիմիկ անվանումը, ինչը նշանակում է ջուր խմելու աման:¹ Շատ հաճախ ջուր խմելու համար օգտագործվող սպասքը արտաքին ձևով կրկնել է ջուրը պահելու համար նախատեսված սպասքի տեսակներին, սակայն ունեցել է փոքր չափեր: Այս է պատճառը, որ երբեմն հանդիպում ենք նույն անունը կրող, ձևով նման, տարողունակությամբ տարբեր ջուր խմելու և ջրի պաշար հավաքելու համար նախատեսված սպասքի տեսակների: Հայաստանի տարբեր պատմագրագրական շրջաններում նմանատիպ սպաս-

¹ Սուրիայան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 962:

քը կրել է տարբեր անվանումներ. Վանում՝ թոսիկ, Սյունիքում, Տավուշում, Գուգարքում՝ փարչ, Գեղարքունիքում՝ շարբիկ, Արարատյան դաշտավայրում՝ խորխորա:²

Պղնձե սպասքի այսպիսի նմուշները պատրաստում էին փախրջի³ վարպետները՝ կիրառելով կոման, դրվագման, փորագրման, զողման, ամրակայման տեխնիկաներ: Որպես կանոն՝ յուրաքանչյուր պատմագագազրական շրջանին բնորոշ կենցաղային սպասք ունենում էր իր առանձնահատկությունները, և ջուր խմելու համար նախատեսված սպասքը նույնպես բացառություն չէր: Չնայած կենցաղում ունեցած միևնույն գործառույթին, այնուամենայնիվ դրանք տարբեր պատմագագազրական շրջաններում ունեցել են արտաքին ձևի, չափի, գեղագարդման առանձնահատկություններ, իսկ անվանումների տարբերությունը կապված են եղել տվյալ տարածաշրջանի բարբառային առանձնահատկությունների հետ: Հայոց ազգագրության թանգարանի «Ազգագրություն և կենցաղ 3» (ԱԿ-3) պահոցում պահպանվում է շուրջ յոթանասուն պղնձե ջրխմիկների հավաքածու, որը համալրվել է տարբեր ժամանակներում Շիրակի, Արցախի, Սյունիքի, Տավուշի, ինչպես նաև Ախալցխայի, Նախիջևանի շրջաններից և Երևանի գիտարշավների ընթացքում հավաքված, XIX դարի կեսերից մինչև XX դարի կեսերը կենցաղավարած նյութերով:

Պղնձե ջրխմիկները, ըստ արտաքին ձևի, կարելի է տիպաբանել երկու մեծ խմբի: Առաջին տիպին հատուկ են նստուկավոր, միականթ, ուռուցիկ իրանով, քիչ դեպի դուրս կտրված շուրթով ջրխմիկները, որոնք հայտնի են «մուշուրբա» կամ «կլկլյան» անվանումներով, իսկ երկրորդ խումբը ներկայացնում են քիչ գոգավոր հատակներով, միականթ, գլանաձև, ուղիղ իրանով ջրխմիկները, որոնք բարբառային խոսույթում հայտնի են «դոլչա» անվանումով:

Դոլչա նշանակում է ջրաման, պղնձե փարչ:⁴ Դոլչա կոչվող ջրխմիկները բնորոշ էին Արցախի, Սյունիքի, Նախիջևանի պատմագագազրական շրջաններին և լրացնում էին կենցաղում կիրառվող խոհանոցային սպասքի համալիրը: Դրանք մոտ 10-12 սմ բարձրություն ունեցող պղնձե բաժակներ են՝ պատրաստված կոման տեխնիկայով, առանձին պատրաստված, այնուհետև գամերով ամրակայման կամ զողման տեխնիկաներով ամրացված կանթերով: Դոլչա ջրխմիկները շատ հաճախ զարդանախշվել են փորագրման տեխնիկայով: Իրանը գոտևորող առանձին զարդագոտիների մեջ հանդիպվող զարդամոտիվներից են բուսական, երկրաչափական, նշան նախշերը: Այսպիսի գեղագարդումներով դոլչա ջրխմիկները Սյունիք – արցախյան տարածաշրջանին հատուկ բնորոշում ունեն, իսկ Տավուշի մարզի Նոյեմբերյանի Կողբ գյուղին հատուկ են հարթ հատակներով, գլանաձև դեպի վեր ձգվող իրանով, ուղիղ կտրված շուրթով, միա-

² **Марутян А.** Интерьер армянского народного жилища // Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հատոր 17, Երևան, 1989, էջ 135:

³ *Փախրջի* բառի արմատը *փախրն* է, ինչը նշանակում է պղինձ, իսկ *փախրջին*՝ պղնձագործ, գործածական է *փախր աման* արտահայտությունը, որն ունի *անագը թափված, գործածությունից մաշված* իմաստ, Տե՛ս **Ադայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հատոր 2, էջ 1505:

⁴ **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, 2001, հ. 1, էջ 343:

կանթ, մոտ մեկ լիտր տարողությամբ, սովորականից ավելի բարձր՝ 18-20 սմ իրանի երկարությամբ տեսակները: Մրանք օգտագործվել են սեղանին ջուր դնելու և ջուր խմելու համար: Նմանատիպ դուշա – ջրխմիկների իրանը գոտևորված է լինում ելուստներով կամ փորագրման տեխնիկայով արված շրջագծերով: Պետք է նշել նաև, որ նկարագրված ջրխմիկները այժմ կենցաղում հազվադեպ կիրառելի են, բացառությամբ ջրխմիկների «մուշուրբա» տիպի, որ մինչև այսօր էլ ն՛արտադրվում են, ն՛ կիրառվում:

Մուշուրբա ջրխմիկը համարվում է խոհանոցային սպասքի համալիրը լրացնող պարագա, իր կիրառելիության և արտադրության տարածվածությամբ հատուկ է Շիրակի պատմագագազրական շրջանին, սակայն բառի ստուգաբանությունը և նախապատմությունը տանում են դեպի Արևմտյան Հայաստան: Ըստ Հր. Աճառյանի՝ *մուշուրբա* բառը արաբերենից փոխառություն է և արդյունք XX դարասկզբին Արևելքում կազմված «միջազգային բառարանի»⁵ -ի հայոց լեզվի վրա ունեցած ազդեցության: Պոլսի բարբառում հանդիպում է «մօշուփա», իսկ Վանի բարբառում՝ «մուշուրբա» ձևերը, ինչը նշանակում է «ջրի թիթեղյա ըմպանակ»:⁶

1820-30-ականներին՝ ռուս-թուրքական պատերազմից հետո, այնուհետև 1915թ.-ի կոտորածներից հետո Արևմտյան Հայաստանի բնակչության ներգաղթը Ալեքսանդրապոլ ենթադրում էր նոր մշակույթի ներմուծում և իրացում: Կարինից, Էրզրումից գաղթած արհեստավորները շատ արագ Ալեքսանդրապոլը դարձրին Արևելյան Հայաստանի արհեստավորական խոշոր կենտրոն, և XIX դարի վերջին XX դարի սկզբին Ալեքսանդրապոլում կար ավելի քան հարյուր արհեստ:⁷ Հատկապես մետաղամշակությունը մեծ ծավալով դարձավ գերիշխող: Պղնձագործ վարպետների արտադրանքի գերակշիռ մաս կազմեցին պղնձե սպասքի տեսակները, որոնցից մուշուրբաները հետագայում դարձան ալեքսանդրապոլցիների քաղաքային մշակույթի խորհրդանիշներից մեկը: Մեկ ավանդական մուշուրբա պատրաստելու համար պահանջվում է գրեթե 8 ժամ, որպեսզի թիթեղագործ վարպետը կոման տեխնիկայով ստանա մուշուրբան, իսկ պատրաստման որակն ու հմտությունները գյուրեցի վարպետները գնահատում են հատուկ չափորոշիչներով: Օրինակ՝ հմտության չափորոշիչ է, երբ մուշուրբայի իրանը թիթեղի մեկ կտորից է պատրաստվում: Որպես պատրաստման հումք օգտագործվում են պղինձը, արույրը, մելքիորը, վերջին ժամանակներում նաև՝ արծաթն ու ոսկին: Կիրառվում են մետաղամշակության մեջ ընդունված կոման, զողման, դրվագման, փորագրման, կոկման, փայլեցման տեխնիկաները: Ջողանյութի ճիշտ ընտրությունից են կախված թի-

⁵ **Խաչատրյան Մ., Զաքարյան Ս.**, Արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառությունները Գյումրիի խոսվածքում, Շիրակի պետական համալսարանի (ՇՊՀ) Գիտական տեղեկագիր, հատոր 1, պրակ Բ, Գյումրի, 2018, էջեր 60-61:

⁶ **Աճառյան Հր.**, Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մեջ համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներում, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 241:

⁷ **Աղանյան Գ., Բազեյան Կ.**, Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Շիրակի հնագիտական և պատմագագազրական ուսումնասիրություններ» մատենաշար, պրակ 2, Գյումրի, 2015, էջեր 19-20:

թեղյա ջրխմիկների որակն ու գեղագիտական տեսքը: Կարևոր է, որ զողանյութի հարգանիշը ցածր լինի օգտագործվող մետաղի հարգանիշից, որպեսզի տաքացման փուլում զողանյութը ավելի շուտ հավլի, քան առարկայի բուն նյութը: Արծաթի պարագայում, եթե հարգանիշը 925 է, ապա զողանյութի հարգանիշը պետք է լինի 875 ից ոչ բարձր:⁸ Եթե ջրխմիկ մուշուրբայի պատրաստման համար մետաղ է ընտրվում պղինձը կամ լատունը, շատ կարևոր է, որ զողանյութը արծաթ պարունակի, ինչը նպաստում է զողման ամրությանը, միացումների հարթ ու աննկատ լինելուն: Որպես կանոն՝ կենցաղում կիրառվող դասական մուշուրբան գուրկ էր զարդանախշումներից, հատակին ունենում էր միայն պատրաստող վարպետի կնիքը՝ անվան սկզբնատառերով:

Մակայն արդեն տասը տարուց ավել է, ինչ նկարիչ գծագրողի ակադեմիական կրթություն ստացած և այժմ Գյումրու Շիրակի պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնում մետաղի գեղարվեստական մշակում դասավանդող գյումրեցի Յոլակ Կոչտոյանը մուշուրբաների գեղարվեստական տեսքը ապահովում է Գյումրվա ավանդական զարդամոտիվներով արծաթագործությամբ զբաղված պապերից: Վարպետ Յոլակը, որ արծաթագործությամբ զբաղվող Կոչտոյանների տոհմի չորրորդ սերունդն է, առանձնակի խնամքով է ներկայացնում արդեն 120 տարվա պատմություն ունեցող զարդերի կաղապարներն ու հատ-հատ նշում զարդամոտիվների անվանումները՝ «ջուխտ չիբուխ», «ձգված նախշ», «մաղադանոս», «խաչեր» և այլն: Կապված պատմիրատուի ճաշակից ու նախասիրություններից՝ երբեմն նախշազարդումները դալամով՝ փորագրում է ծծմբի և սողայի խառնուրդից ստացվող սև հիմնագույնի վրա: Վարպետ Յոլակի պատրաստած արծաթաջուր և ոսկեջուր մուշուրբաները որպես սպասք կենցաղում գրեթե չեն օգտագործվում և համարվում են Գյումրու ավանդությանին կենցաղը ներկայացնող հուշանվերներ:

1895-1896թթ. Էրզրումից Ալեքսանդրապոլ գաղթած պղնձագործ վարպետների ժառանգներից Սուրեն Ժամակոչյանը Ալեքսանդրապոլի առաջին մուշուրբա սարքողն էր, որն իր արհեստը ժառանգել էր պապերից և փոխանցել որդուն՝ Էդուարդ Ժամակոչյանին: Ըստ բանասացի փոխանցած տվյալների՝ հենց վարպետ Սուրենն է առաջին անգամ ստեղծել մուշուրբայի հատակի կիսագնդաձև ներդիրը, որի վրա գտնվող իրար զուգահեռ երկու անցքերի շնորհիվ ջուր խմելիս առաջանում է հատուկ ձայն, ինչի պատճառով էլ գյումրեցիները մուշուրբային տվել են երկրորդ անվանումը՝ կլկլան:¹⁰ Էրզրումցի պապերից ընտանեկան արհեստի հմտությունները ժառանգած մետաղագործ Ժամակոչյանների արհեստը այժմ շարունակում է Էդուարդ Ժամակոչյանը, որը ցավով է նշում, որ արհեստավորներ քիչ են մնացել Գյումրիում, հատկապես 1988-ի երկաշարժից հետո, և որ ավանդույթները պահպանելու և սերունդներին փոխանցելու խնդրի առջև են կանգնած: Վարպետ Էդիկը աշխատում է տանը, հորից մնացած գնդա-

⁸ Ավետիսյան Մ., Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), բանասաց՝ Յ.Կոչտոյան, Գյումրի, 2021:

⁹ Արաբերենից փոխառություն է, թարգմանաբար նշանակում է *գրիչ, մետաղե գործիք փորագրության համար*, Աճառյան Հր., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1974, հ. 3, էջ 427:

¹⁰ Ավետիսյան Մ., ԴԱՆ, բանասաց՝ Է. Ժամակոչյան, Գյումրի, 2021:

նի և ութ մուրճերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը աշխատանքի տարբեր փուլերում է գործածում՝ իր առջև խնդիր դնելով պահպանել և փոխանցել դասական մուշուրբա պատրաստելու ավանդույթները: Բանասացը պատմում է. պապը՝ Միլիտոսը, Ալեքսանդրապոլում արհեստանոց և խանութ է ունեցել, մինչդեռ ինքը՝ նման ճոխություն իրեն թույլ տալ չի կարող, քանի որ արտադրանքի ծավալները մեծ չեն և հումքի հայթայթման հետ կապված դժվարություններ կան: Հաշվի առնելով մուշուրբայի արտադրության և սպառման ներկայիս դժվարություններն ու խնդիրները՝ մուշուրբա պատրաստող վարպետները մտավախություն ունեն, որ կգա ժամանակը, երբ մուշուրբայի հանդեպ հասարակության հետաքրքրությունը կպակասի, ինչը կհանգեցնի արտադրության վերացման: Այս է պատճառը, որ ըստ ՀՀ կառավարության 2011թ հունվարի 20-ի որոշման՝ ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը համալրվեց մուշուրբայով՝ որպես վերացող մշակութային արժեք: Այսօր մուշուրբան Գյումրու բրենդներից մեկն է ու հարյուրավոր զբոսաշրջիկների փնտրտուքի առարկան:

Մետաղի գեղարվեստական մշակումով զբաղվող ժողովրդական վարպետ Մամիկոն Մխիթարյանը ևս պատրաստում է մետաղե ջրխմիկներ: 1996-ից Հայաստանի նկարիչների միության անդամ վարպետը կարծում է, թե քարացած ավանդույթներով առաջնորդվող արհեստավորը նման է թևերը կտրած թռչունի, և որ պետք է յուրովի ստեղծագործել, ավանդույթը ներկայացնել ժամանակին համընթաց, որպեսզի ասելիքդ տեղ հասնի:

Մետաղի գեղարվեստական մշակման հմտություններին վարպետ Մամիկոնին ծանոթացրել է Կարսից գաղթած և Ալեքսանդրապոլի որբանոցում մեծացած հայրը՝ Մնացականը, որը, 1960-ին որդուն նվիրելով մետաղագործ պապի աշխատանքային գործիքները, կարծես ուղղորդում է նրան հետագա մասնագիտության ընտրության հարցում: Ստանալով մասնագիտական կրթություն (1971-ին ուսանելով Երևանի գեղարվեստատեխնիկական ուսումնարանում, այնուհետև՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի նկարչագծագրական ֆակուլտետում)՝ սկսում է առավել մասնագիտացված զբաղվել մետաղամշակությամբ: Արծաթե, պղնձե կամ լատունե ջրխմիկ պատրաստելու համար վարպետը կիրառում է վեց տեխնիկա՝ կոման, հավաքման, դրվագման, փորագրման, գոդման, ձուլման: Բուն մետաղի գործին անցնելուց առաջ յուրաքանչյուր ջրխմիկի համար կազմվում է տեխնիկական գծագիր, փռվածք, որի հիմքի վրա էլ ստեղծվում է ջրխմիկը և անկախ պատրաստման նյութից՝ անպայման ներսից արծաթապատվում է: Բանասացը կլայեկման տեխնիկական համարում է հնացած և հիզիենայի տեսանկյունից ոչ ճիշտ:¹¹ Արծաթով աշխատելու պարագայում, կապված հարգանիշի հետ՝ Մամիկոնյանը շրջանցում է ընդունված կարգը՝ աշխատելու համար ընտրելով 960 հարգի արծաթը: Հարգանիշի այսպիսի ընտրությունը թույլ է տալիս կառուցվածքային առումով ավելի բարդ գործեր ստեղծել, քանի որ բարձր հարգի արծաթը ավելի մոտ է պղնձի փափկությանը և ապահովում է առարկայի պլաստիկությունը: Վարպետ Մխիթարյանի պատրաստած ջրխմիկները ամբողջովին գեղազարդված են բուսանախշ և

¹¹ Ավետիսյան Մ., ԴԱՆ, բանասաց՝ Մ.Մխիթարյան, Երևան, 2021:

կենդանակերպ ոճավորված զարդամոտիվներով, երբեմն էլ հայ թագավորների դեմքերը կրկնող մարդակերպ իրաններով: Զարդամոտիվի ընտրության հարցում Մ. Մխիթարյանը օգտվում է բացառապես հայ մանրանկարչությունից և խաչքարագործությունից: Զարդամոտիվը մետաղի վրա դրվագելուց կամ փորագրելուց առաջ անցնում է մշակման փուլ՝ թղթի վրա նախագծվում է, հարմարեցվում մետաղի առանձնահատկություններին, որպեսզի, ինչպես Վարպետն է նշում, «նստեցվի» մետաղի վրա: Այսպիսով՝ Մխիթարյանի պատրաստած ջրխմիկները արտաքին ձևի լուծումներով, գեղագարդման առանձնահատկություններով, կիրառվող տեխնիկաների նորամուծություններով կարելի է համարել մետաղի գեղարվեստական մշակության նորագույն դպրոցի լավագույն նմուշներ:

Մետաղե ջրխմիկները մետաղագործ վարպետների արտադրանքի մաս են կազմում և չեն համարվում արհեստի առանձին ճյուղ: Այսօր տարբեր պատճառներով պղնձյա սպասքի կիրառությունն ու արտադրությունը նվազել են, իսկ մուշուրբանների առկայությունը պայմանավորված է հուշանվերային արտադրությամբ: Ժամանակի ընթացքում մուշուրբան կամ, ինչպես գյումրեցիներն են սիրում անվանել, կլկլանը, կորցրել է բուն գործառույթը, ստացել խորհրդանշային իմաստ և դարձել Գյումրվա ավանդական մշակույթի ամենաբնութագրիչ տարրերից մեկը:

Եզրահանգում. XIX-XX դարերում մետաղյա ջրխմիկները բնորոշ են եղել գյուղական և քաղաքային կենցաղին՝ լայնորեն կիրառվելով Հայաստանի գրեթե բոլոր պատմագագարական շրջաններում: Ըստ ջրխմիկների տարածաշրջանային, արտաքին ձևի, գեղագարդման առանձնահատկությունները՝ դրանք տիպաբանվել են երկու մեծ խմբի: Առաջին տիպը ներկայացնող նստուկավոր, միականթ, ուռուցիկ իրանով ջրխմիկների օգտագործումը պայմանավորված է հատկապես XIX դարի 30-ականներին Արևմտյան Հայաստանից արհեստավորների ներգաղթով: Երկրորդ տիպի՝ հարթ հատակներով, գլանաձև, ուղիղ իրանով, միականթ ջրխմիկները հատկապես տարածված են եղել Սյունիք-Արցախի, Տավուշի պատմագագարական շրջանների սպասքի համալիրում:

ТИПОЛОГИЯ МЕТАЛЛИЧЕСКИХ ЧАШ ДЛЯ ПИТЬЯ ВОДЫ

Аветисян М.

Ключевые слова: металл, чаша, вода, полусферическая вставка, кухонная утварь, Александрополь.

В XIX-XX вв. металлические чаши для питья воды были характерны для сельского и городского быта и широко применялись почти во всех историко-этнографических регионах Армении. Исходя из региональных, внешних и декоративных особенностей металлических чаш, типологически их можно разделить на две основные группы. Использование металлических чаш, представляющих первый тип, с поддоном, одной ручкой и выпуклым туловом, обусловлено миграцией ремесленников из Западной Армении в 30-ые годы XIX века. Чаши второго типа, с плоским дном, цилиндрическим туловом, одной ручкой, были в основном распространены в комплексе посуды историко-этнографических регионов Сюник-Арцах и Тавуш.

TYOLOGICAL FEATURES OF METAL WATER PEWTERS

Avetisyan M.

Key words: *metal, pewter, water, kitchen utensils, hemiaperical base, Alexandropol.*

Metal water pewters were typical in the rural and urban everyday life in the XIX-XX centuries and were widely used in almost all the historical-ethnographic regions of Armenia. The pewters were classified into two large groups based on their areal, shape and ornamentation peculiarities. The use of the first type stands is conditioned especially by the immigration of craftsmen from western Armenia in the 1830 s. The second type flat-bottomed, cylindrical, straight-bodied, one-handled pewters were mainly used in dinner sets of the historical-ethnographic regions of Synik-Artsakh, Tavush.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն ի ն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1976:
2. Աղանյան Գ., Բազեյան Վ., Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ // ԳՍԱ ՇՀՀ կենտրոնի «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» մատենաշարի 2-րդ պրակ, Գյումրի, 2015:
3. Աճառյան Հր., Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մեջ համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն, Մոսկվա-Վաղարշապատ, 1902:
4. Աճառյան Հր., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974:
5. Աճառյան Հր., Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Երևան, 2001:
6. Խաչատրյան Մ., Զաքարյան Ս., Արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառությունները Գյումրիի խոսվածքում // ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր, հ. 1, պրակ Բ, Գյումրի, 2018:
7. Մուքիսսիան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009:
8. Марутян А., Интерьер армянского народного жилища. // ՀԱԲ, հատոր 17, Երևան, 1989:

Ընդունվել է՝ 03. 07. 2021

Գրախոսվել է՝ 02. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Մերի ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի ազգային թանգարանի ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ meryavetisyan1984@gmail.com

ՇԻՐԱԿԻ ԿԱՆԱՑԻԱԿԵՐՊ ԱՂԱՄԱՆՆԵՐԸ

Կարինե Բազեյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի
պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Բանալի բառեր՝ Շիրակ, խեցեգործություն, կանացիակերպ աղաման, կարաս, պաշտամունք,

Հոդվածը նվիրված է Շիրակի պատմագագազրական մարզի կավե կանացիակերպ աղամանների բնութագրմանը: Դրանց համեմատական վերլուծությունը Անիի XIIIդ. աղամանի ու Վ. Բոդյանի կողմից ներկայացված աղամանների հետ մի շարք բնորոշ հատկանիշներ է ի հայտ բերել, որոնց հիման վրա առանձնացվել է կանացիակերպ աղամանների Շիրակյան դպրոցը: Հոդվածում տրված է Շիրակի աղամանների տիպաբանությունն ըստ կառուցվածքային-ձևական ու գեղարվեստական կերպավորման հատկանիշների:

Նախաբան. Բոդյանն իր «Հայկական աղամաններ» գրքում¹, ներկայացնելով Հայաստանի տարբեր բնակավայրերում կանանց կողմից պատրաստված կավե կանացիակերպ աղամանները, դրանք համարում է Անահիտ դիցուհուն նվիրված արձաններ ու նրա ծպտված պաշտամունքի դրսևորումներ: Հեղինակը կանացիակերպ աղամանները դասակարգել է ըստ ձևական և կառուցվածքային հատկանիշների: Առաջին դեպքում, ըստ գեղարվեստական կատարման ձևերի, նա առանձնացրել է հինգ՝ Արարատյան, Վասպուրական-ապարանյան, Պարսկահայկական-բազրևանդյան, Մակու-Գառնիի և Սասուն-հանձիթյան ձևական դպրոցները: Ելնելով կառուցվածքային հատկանիշներից՝ կավե աղամանները խմբավորել է ըստ կերպավորման՝ մարդակերպ (կանացի դիմավոր և անդեմ), կանացիակերպ-գմբեթավոր և մարդակերպ-կենդանակերպ տիպերի:

¹ Բոդյան Վ., Հայկական աղամաններ, Երևան, 1986:

Չնայած այն հանգամանքին, որ հեղինակն իր ուսումնասիրության համար, ի թիվս տարբեր հավաքածուների, օգտվել է նաև Շիրակի երկրագիտական թանգարանի հավաքածուից ու գրքում ընդգրկել Շիրակի կանացիակերպ աղամանների լուսանկարներ², սակայն տարածաշրջանը դուրս է մնացել ոչ միայն վերը նշված դպրոցներից, այլև ընդհանրապես ուսումնասիրությունից: Փոխարենը քարտեզում՝ Ալեքսանդրապոլ (Գյումրի) քաղաքի շուրջ դրված պայմանական նշանների միջոցով Բդոյանը փաստել է Շիրակում գոյատևող դիմավոր ու անդամ կիսանդրի աղամանների, կճուճ աղամանների ու հասարակ աղաթասերի առկայությունը XIX դարավերջին- XX դարասկզբին:

Մեր կարծիքով, դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նա ձեռքի տակ չի ունեցել բավարար քանակի շիրակյան կանացիակերպ աղամանների նմուշներ՝ դրանք նկարագրելու և դասակարգելու համար: Այդ բացը լրացնելուն է միտված այս հետազոտությունը, որը կատարվել է Շիրակի երկրագիտական և Մարդարապատի հայոց ազգագրության թանգարանների, ԿԳՄՍ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ու Հոռոմ գյուղի բնակիչ Նարեկ Դավթյանի անձնական հավաքածուների մաս կազմող կանացիակերպ աղամանների հիման վրա:

Մինչ բուն վերլուծությանն անցնելը հարկ է նշել, որ Շիրակում է հայտնաբերվել կանացիակերպ աղամանի (նկ.1) ամենահին օրինակը, այսինքն՝ տարածաշրջանը պետք է համարել այս առարկայի պատրաստման ու կիրառության հնագույն տեղավայրերից մեկը: Աղամանը հայտնաբերվել է Շիրակի մարզի Հայկաձոր գյուղի տարածքում՝ Ախուրյան գետի ձախ ափին, Անիի հյուսիսային արվարձան քարանձավային բնակավայրի պեղումներից 2005 թ. և թվագրվում է XIII դարով:

Աղամանը ձեռածեփ է, պատրաստված է բաց շագանակագույն ավազախառն կավից և վատ է թրծված: Երկթեք իրանն ավարտվում է նեղ վզի վրա նստած բարակ շուրթով և ոչ խորը թաս-ճրագթաթով: Աղամանի վիզն իրանին է միացել իրար հակադիր աղեղնաձև զույգ ունկերով, որոնցից միայն մեկն է ամբողջական: Իրանի երկթեք հատվածից 5 սմ բարձր արված է 8,5 սմ տրամագծով շրջանաձև բացվածք:

Աղամանը զարդարված է վերադիր պատկերներով, որոնք սկսվում են իրանի փքուն հատվածից և ավարտվում ճրագթաթի տակ (նկ.2): Պատկերված է շուրջպար բռնած վեց մարդ, որոնցից մեկը երեխա է: Բոլոր ֆիգուրները, բացառությամբ ամենափոքրի, գլխից վեր ունեն բարակող ծայրերով աղեղնաձև դետալ: Շրջանաձև բացվածքի երկու կողմերում մեկական օձ է, որոնցից մեկի գլուխը հպված է ֆիգուրներից մեկի ոտքին, իսկ մյուսինը՝ մանկան ոտքին: Աղամանի տարբեր մասերում՝ ունկերի վրա և վզի տակ, ևս վերադիր գալարներ են, որոնցից մեկը սկսվում է ունկի տակ դրված շրջանաձև տափակ ելուստից և բոլորելով ունկը՝ ավարտվում նույն տեղում, որտեղից սկսվել էր: Ի տարբերություն իրանը գոտևորող և բացվածքի կողքերին պատկերվածների, որոնց օձ լինելն ընդգծված է նաև մարմնի վրա մատնասեղմումով արված փոսիկներով, այս

² Բդոյան Վ. - 1986, էջեր 8, 99, 122:

գալարներն անզարդ են:³ Ինչպես տեսնում ենք՝ աղամանը, չնայած հարուստ գեղարվեստական հարդարմանը, բացի փորի վրա արված բնորոշ բացվածքից, կանաչիակերպ այլ հատկանիշեր չունի:

Մեր ուսումնասիրության առարկա Շիրակի պատմազգագրական մարզի (հետայսու՝ ՊԱՄ) կանաչիակերպ աղամանները թվագրվում են XIX դարավերջով-XX դարի սկզբով և ծագումով մարզի Հառիճ (5 օրինակ), Սառնաղբյուր (2 օրինակ), Ազատան (1), Քեթի (1) գյուղերից են, մեկը՝ Գյումրիից, և երկուսը՝ Սպիտակից:⁴ Մրանց համեմատական վերլուծությունը Անիի աղամանի ու Վ. Բդոյանի կողմից ներկայացված աղամանների հետ մի շարք բնորոշ հատկանիշներ է ի հայտ բերում, որոնք թույլ են տալիս առանձնացնել կանաչիակերպ աղամանների Շիրակյան տիպը:

Ըստ ազգագրական նյութերի՝ Շիրակի բնակչության տնտեսական զբաղմունքների մեջ մեծ տեղ էր զբաղում խեցեգործությունը, որով զբաղվել են մարզի բոլոր բնակավայրերում, սակայն առավել հայտնի են եղել Սառնաղբյուր, Ջաջուռ, Հողմիկ գյուղերը:⁵ Մրանց մեջ իր ավանդույթներով առավել նշանավորը Սառնաղբյուրն է, որին անդրադարձել է Ե. Սարգսյանն իր «Հայաստանի խեցեգործական արվեստը» մենագրության մեջ այսպես. «Ձեռքի դուրզի զարգացման ընթացքին կարելի է հետևել Շիրակի ազգագրական շրջանի նյութերի հիման վրա: Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում առկա էին խեցե իրերի պատրաստման երկու հարմարանք: Առաջինը արխաիկ հարմարանքն էր, որը ներկայացնում էր հարթ մակերեսով ծանր քարե սալ, ինչի վրա դրվում էր մշակվելիք կավագունը: Երկրորդը ձեռքի դուրզն էր: Միևնույն տեխնիկական հնարքով կավամանների ձեփակերտման համար օգտագործվող երկու հարմարանքների զուգահեռ գոյությունը թույլ է տալիս հետևել պարզունակ պատվանդանից դեպի պտտվող ձեռքի դուրզ զարգացման ընթացքին⁶»:

Հետազոտության առարկա աղամանները պատրաստված են սև, կարմիր ու կարմրամոխրագույն կավահումքից⁷ ինչպես առաջին՝ արխաիկ-ձեռածեփ, այնպես էլ՝ ձեռքի դուրզի միջոցով: Ըստ կատարման ձևերի տիպաբանման՝ Շիրակյան աղամանները

³ **Եգանյան Լ.**, Անիի կանաչիակերպ աղամանը. // Միջազգային գիտաժողով «Անիի միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի, 2011 թ., Զեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջեր 301-313. **Yeganyan L.** Du foyer domestique à la naissance du monde Un pot à sel du XIII siècle découvert près d'Ani. - Revue des études Arméniennes, t.32, Paris. -2010, p.215.

⁴ Շիրակի պատմազգագրական մարզն ընդգրկում է Անիի, Ախուրյանի, Արթիկի, Աշոցքի, Սպիտակի տարածաշրջանները և Գյումրիի քաղաքը: Տե՛ս **Վարդույան Դ.**, Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XX դդ.), Պատմաբանասիրական հանդես, 2004, № 2, էջ 57:

⁵ **Բազեյան Կ.**, Շիրակի արդի խեցեգործությունը // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 97:

⁶ **Саркисян Е.** Гончарное искусство Армении. Ереван. -1978. сс. 44-45.

⁷ Շիրակի սարահարթի բարձրադիր գոտիները հարուստ էին բարձրորակ սև ու միջին պլաստիկություն ունեցող կարմիր կավերով: Այս մասին մանրամասն տե՛ս **Саркисян Е.**-1978, էջեր 10-11:

որը երկու խմբի կարելի է բաժանել՝ Վասպուրական-ապարանյան և ինքնուրույն՝ Շիրակյան ոճերի: Առաջին խմբին պատկանող աղամանները լայն նստուկով ու դեպի վեր կոնաձև կամ գլանաձև բարձրացող իրան ունեն, որն ավարտվում է փոքր գլխով ու վզից դեպի ուսերն իջնող կարճ կանթերով (նկ. 3,4): Արտաքին հարդարումը պարզ է՝ վերադիր ու հախճապակու կտորներով գեղազարդմամբ: Ոճական այս ընդհանրությունը պայմանավորված է Շիրակի և Արագածոտնի ՊԱՄ-երի բնակչության նույնական ծագումով, քանի որ երկուսում էլ կան Տուրուբերանից ու Վասպուրականից ներգաղթած արևմտահայերը⁸:

Երկրորդ՝ Շիրակյան խումբը, որը կարելի է դիտարկել որպես կանացիակերպ աղամանների ինքնուրույն դպրոց, առանձնանում է մյուս բոլորից իր կճուճաձևությամբ: Այս աղամանները փոքր նստուկ ունեն, իրանը փոքրի մասում լայնանում, ապա աստիճանաբար նեղանում է՝ ավարտվելով համեմատաբար կարճ պարանոցով ու դրա վրա արված գլխով (նկ. 5): Իրենց ձևով սրանք ավելի նման են Անիի աղամանին, որը ևս ուռուցիկ փոքր ունի, սակայն իրանի վրայի բացվածքն անմիջապես փոքրին է՝ ի տարբերություն ավելի ուշ ստեղծվածների, որոնց բացվածքները կրծքի վրա են արված: Շիրակյան ոճը ձևավորվել է ՊԱՄ-ում հաստատված, ծագումով Բարձր Հայքից, Բասենից ու Մուշից բնակչության⁹ կավագործության ավանդույթների հիման վրա և մեծ ընդհանրություն ունի այդ տարածաշրջանների խեցեգործական մշակույթի հետ:

Հետազոտվող կավե աղամանները, ըստ կերպավորման, երեք տիպի են՝ դիմավոր աղամաններ, անդեմ կիսանդրի աղամաններ և կճուճ աղամաններ, ինչը համընկնում է նաև Բդոյանի կազմած քարտեզի տվյալներին: Կճուճ աղամանի մեկ օրինակ ունենք, որը ծագումով Հառիճից է (նկ. 6): Այս տիպին պատկանող այլ տարածաշրջանների օրինակները Բդոյանն անվանում է «գմբեթավոր արձան»՝ գտնելով, որ «տափակ գմբեթները դրանց անհատական էությունը թաքցնելու և քրիստոնեական եկեղեցու հետ կապելու միջոց էին»¹⁰: Այս տիպաբանությունը, կարծում ենք, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ գմբեթը ենթադրում է «շենքի՝ կառույցի վրայի ուռուցիկ կիսագնդաձև կամ կոնաձև մասը»¹¹, այսինքն՝ տափակ գմբեթ գոյություն չունի, ուստի սրանք ավելի համապատասխանում են կճուճ-աղաման տեսակին:

Անդեմ կանացիակերպ աղամանները չորսն են (Հառիճից, Ալեքսանդրապոլից, Մառնադըրյուրից ու Մալիտակից (նկ.4,5,7,8)): Ըստ Բդոյանի՝ այս տիպը ժամանակագրորեն ավելի հին է, քան դիմավորը, ինչը երևում է նաև շիրակյան աղամաններում: Դրա լավագույն վկայությունը Անիի աղամանն է, որը ևս, ինչպես տեսանք, անդեմ է: Բացի Հառիճի (XX դ. սկիզբ) կարմիր կավից պատրաստված աղամանից, որը նույնական է գյուղի դիմավոր աղամաններին (միայն առանց դիմագծերի է), մյուսները, որ թվագրվում

⁸ Վարդույան Գ.-2004, էջ 64:

⁹ Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005, էջեր 106-107, աղյուսակ 8:

¹⁰ Բդոյան Վ.-1986, էջ 14:

¹¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969, էջ 420:

են XIX դարի վերջով, հստակ տարբերվում են իրենց արտաքին գեղագարդամբ, որտեղ առկա են հնագույն հավատալիքների խորհրդանշաններով ներկայացնող պատկերներ:

Ալեքսանդրապոլի (նկ.5) սև կավից պատրաստված աղամանի հարդարումը որոշակի նմանություն ունի Անիի աղամանին. սրա փորի բացվածքի շուրջ օձագալարի փոխարեն կեռիկներ են, որոնք Անիի օձերի նման, մատնասեղմումով արած փոսիկազարդ են: Նույն փոսիկներով են զարդարված բացվածքը եզերող շրջանակը, թներն ու ճակատնոցը: Բդոյանը բացվածքի (որը դիտում է որպես կտեխ) շուրջ արված կեռերին երկու նշանակություն է վերագրում՝ որպես սեռային երկրորդային նշաններ և որպես մերձավորման ակտ կատարող թռչունների խումբ, ինչը, կարծում ենք, հիմնավորված չէ:¹²

Մառնաղբյուրի ու Արջուտի (նկ.4,8) աղամանները շատ նման են թե՛ կառուցվածքով, թե՛ գեղագարդամբ: Երկուսի հարդարման մեջ գերակշռում է ուռուցիկ, ատամնաձև ելուստներով զարդաշարը, որով պատկերված են Մառնաղբյուրի կանացիակերպ աղամանի ճակատնոցը, վզնոցն ու փորի բացվածքի տակ արված երկու աղեղնաձև զարդակախիկները, իսկ Սպիտակի աղամանի բացվածքի եզրերն ու թները՝ ներսի կողմից: Մառնաղբյուրի աղամանի կանթերի տակ մեկական նմանատիպ ելուստավոր շրջանակ է արված, որը արևի սկավառակ է հիշեցնում:

Դիմավոր աղամանները յոթն են (մեկական Մառնաղբյուրից (նկ.9), Ագատանից (նկ.3.), Քեթիից (նկ.10), Սպիտակից (նկ.11) և երեքը Հառիճից): Մառնաղբյուրի աղամանի լուսանկարն է պահպանվել, որը ներկայացրել է Բդոյանն իր գրքում՝ այն համարելով բավականին ռեալիստորեն քանդակված դեմքով, հասակով մեկ կերտված աղամանի հազվագյուտ օրինակ:¹³

Ագատանի աղամանի քիթն արտահայտիչ է ու դուրս ցցված, աչքերն ու բերանը նշված են հախճապակիներով, թներն իջնում են կողերի վրա, հետևում չորս ուռուցիկ գծերով պատկերված են մազերը: Աղամանի վերնամասը զարդարված է հախճապակու կտորներով: Կրծքին արված բացվածքի տակ խոշոր վերադիր եռանկյունաձև զարդանախշ է՝ կազմված վերին մասում ատամնավոր ութ ելուստներով գծից ու դրա կենտրոնից դեպի ցած կեռիկազարդ պատկերից, որը, թերևս, կրծքազարդ է ներկայացնում:

Քեթիի ու Հառիճի կանացիակերպ աղամանները (այդ թվում նաև անդենը) գրեթե նույնական են կավի տեսակով, կառուցվածքով, ոճով ու չափերով՝ գեղագարդման չնչին տարբերություններով: Այսպես. դրանցից երկուսը հախճապակեզարդ վերադիր վզնոցներով են, մեկը՝ ճակատնոցով, մեկի թները մատնասեղմումով են զարդարված, մյուսներինը՝ հախճապակիներով: Տարբերվում են նաև դիմագծերի պատկերմամբ՝ մի դեպքում միայն հախճապակիների կտորների միջոցով, մյուսները՝ քանդակված քթով ու բերանով, մեկը՝ նույնիսկ ականջներով: Այս ընդհանրությունները թույլ են տալիս ենթադրել դրանց ընդհանուր ծագումը, իսկ գեղագարդման տարբերությունները բացատրել օժիտի համար պատրաստվելու նպատակադրմամբ, քանի որ օժիտի համար պատրաստվող ցանկացած առարկա անպայման ամենագեղեցիկը պետք է լիներ: Կարծում

¹² Բդոյան Վ.- 1986, էջ 87:

¹³ Բդոյան Վ.-1986, էջ 8, նկարագիրը՝ էջ 80:

ենք՝ հենց այդ ձևով է Հառիճում պատրաստված կանացիակերպ աղամանը հայտնվել Քեթիում:

Իր տեսակով առանձնանում է Սպիտակի կանացիակերպ արձան-աղամանը (նկ.11), որն ունի երկու տարբերակ. մեկը, որ ներկայացված է Բդոյանի գրքում, Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից է (նկ.12), մյուսի լուսանկարը համացանցից է (նկ.13), դրա գտնվելու ու ծագման վայրը, ցավոք, հնարավոր չեղավ ճշտել: Աղամանները հետաքրքիր են նրանով, որ սրանք ներկայացնում են կնոջը ողջ կեցվածքով՝ քաղաքային կամ եվրոպական հագուստով. կարճաթև, բարձր օձիք ունեցող բաձկոնակով ու կիսաշրջագետտով, մեջքին գոտիով, երկուսը՝ եռանկյունաձև ու պայտաձև կախիկ ունեցող վզնոցներով, իսկ Սպիտակինը՝ թիթեոնիկ փողկապով: Երեքի դիմագծերն էլ շատ նման են. տափակ, դեպի դուրս արտաճված այտերով, վերադիր, խիստ արտահայտված քթով ու հոնքերով, հախճապակե կամ անցքերով արված աչքերով, առանց բերանի (բացառությամբ մեկի): Ինչպես տեսնում ենք, այս աղամանները գրեթե նույնական են, իրենց կառուցվածքով ու ռճով եզակի, քանի որ արված են քաղաքային հագուստի նմանակմամբ: Սա միաժամանակ հաստատում է աղամանների կանացի նախասկիզբը, որը փոփոխվել է ժամանակի ընթացքում՝ ներկայացնելով այն ստեղծողների աշխարհընկալումներն ու պատկերացումները:

Եզրահանգում. Այսպիսով կարելի է ասել, որ Շիրակի կանացիակերպ աղամանները ներկայանում են որպես ինքնուրույն տիպ՝ դրսևորելով որոշակի ընդհանրություններ ու առանձնահատկություններ Հայաստանի մյուս ՊԱՄ-երի աղամանների հետ: Դրանք գեղարվեստական, պատմամշակութային մեծ արժեք ունեն և կարիք ունեն ավելի լուրջ ու բազմակողմանի հետազոտության:

АНТРОПОМОРФНЫЕ СОЛОНКИ ШИРАКА

Базеян К. Р.

Ключевые слова: *Ширак, керамика, антропоморфная солонка, кувшин, культ.*

В статье представлены глиняные солонки в виде женской фигуры из историко-этнографической области Ширак. Их сравнительный анализ с подобной солонкой 13 века, обнаруженной в Ани, а также с опубликованными в работе В. Бдояна, выявил ряд характерных черт, на основании которых нами был выявлен ширакский тип солонок. В статье солонки Ширака классифицированы по структурно-стилистическим и художественным признакам.



նկ.1



նկ.2



նկ.3



նկ.4



նկ.5



նկ.6



նկ.7



նկ.8



նկ.9



նկ.10



նկ.11



նկ.12



նկ. 13

WOMANLIKE SALT CELLARS OF SHIRAK

Bazeyan K. R.

Key words: *Shirak, pottery, womanlike salt, karas, cult.*

The article is dedicated to the characterization of the womanlike clay salt cellars of the historic-ethnographic region of Shirak. The comparative analysis of those salt cellars with the 13th century one of Ani and the ones that V.Bdoyan has described, has revealed a number of characteristic features, on the basis of which the Shirak school of womanlike salt cellars was singled out. The article gives also the typology of Shirak salt cellars on the basis of their structural-stylistic and artistic illustration features.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Բազեյան Կ., Շիրակի արդի խեցեգործությունը // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 97:
2. Բրդյան Վ., Հայկական աղամաններ, Երևան, 1986:
3. Եգանյան Լ., Անիի կանացիակերպ աղամանը // Միջագային գիտաժողով «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի, 2011 թ., Զեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջեր 301-313:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969:
5. Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005:
6. Վարդումյան Բ., Հայաստանի հիմնական պատմագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XX դդ.), Պատմա-բանասիրական հանդես, 2004, № 2, էջեր 48-64:
7. Саркисян Е. Гончарное искусство Армении. Ереван. -1978.

Ընդունվել է՝ 05. 06. 2021

Գրախոսվել է՝ 02. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ԲԱԶԵՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արժեք-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտահետազոտական բաժնի պետ, էլ. հասցե՝ bazeyan60@mail.ru

ԱՋԳԱԳՐԱԿԱՆ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՂՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիաննա Գևորգյան

ՀՀ ԿԳՄՄՆ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան

Բանալի բառեր՝ թանգարան, ցուցադրություն, առարկա, սկզբնաղբյուր, ազգագրություն:

Սույն հոդվածում քննարկվում է հասարակության գործունեության արդյունքը հանդիսացող և սոցիալ-մշակութային առարկայացված տեղեկատվություն կրող ազգագրական հավաքածուի թանգարանային առարկայում կողմնորված յուրահատուկ խորհրդանշական տեքստը, որով էլ ցուցանանքները «հաղորդակցում են մեզ հետ»: Այս առումով, նյութական և ոչնյութական մշակութային ժառանգության տարրը, ներառվելով թանգարանի ազգագրական հավաքածուի մեջ, ձեռք է բերում սկզբնաղբյուրի կարգավիճակ, իսկ ցուցադրության մեջ վերածվում է մշակութային տեքստով միավորված միասնական խորհրդանշական հաղորդակցական միջավայրի:

Նախաբան. Թանգարանային հավաքածուների հանրահոշակման ամենատարածված ձևերից մեկը մշտական և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպումն է: Թանգարանի՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, կայացումն ի սկզբանե կապված էր հավաքածուներն ի ցույց դնելու գաղափարին: Հենց այդ առումով էլ վերջին տարիներին թանգարանին առանձնահատուկ տեղ է հատկացվում հասարակության տարբեր խավերի կողմից իր արմատների ու ինքնության նկատմամբ աճող հետաքրքրության ձևավորման ու ակտիվացման համար: Թանգարանային հավաքածուների հիման վրա ստեղծված ցուցադրությունները յուրահատուկ գիտազեղարվեստական հաղորդակ-

ցական միջավայր են, որտեղ բնօրինակ թանգարանային առարկաների միջոցով վերականգնվում է սոցիալական հիշողությունը: Ուստի, ցուցադրությունը թանգարանի այն բնորոշող առանձնահատկությունն է, որով վերջինս աներկբա տարբերում է գիտահետազոտական կազմակերպություններից, արխիվներից և գրադարաններից¹:

«Թանգարանային ցուցանմուշները, – գրում էր Յու.Վ.Բրունլեյը, – իրենց մեջ թաքնված տեղեկատվություն են կրում, քանի որ վերլուծության մեթոդի զարգացումը, հենց այդ նութերի ծավալների ավելացումը մշտապես նոր մոտեցումներ և ընդհանրացումներ իրականացնելու **հնարավորություններ** են ընձեռում»²:

Այսպիսով, տվյալ հասարակության գործունեության արդյունքը հանդիսացող և սոցիալ-մշակութային առարկայացված տեղեկատվություն կրող ազգագրական հավաքածուի մաս կազմող թանգարանային առարկայում կողավորված է յուրահատուկ խորհրդանշական տեքստ, որով էլ ցուցանմուշները «հաղորդակցում են մեզ հետ»: Այս առումով, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության տարրը, ներառվելով թանգարանի ազգագրական հավաքածուի մեջ, ձեռք է բերում սկզբնաղբյուրի կարգավիճակ, որի ուսումնասիրմամբ, ցուցադրմամբ, հրատարակմամբ և հանրահռչակմամբ սերնդեսերունդ փոխանցվում է ազգային մշակույթը՝ ակտիվացնելով պատմական հիշողությունը և ներազդելով ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացի վրա:

Ազգագրության հետագա զարգացումն ու թանգարանային աշխատանքի երկարամյա փորձի համադրումը ցույց են տալիս, որ ազգագրական թանգարանը, հենվելով պատմական³, հնագիտական⁴ և հասարակագիտական⁵ սկզբնաղբյուրների կամ, այլ կերպ ասած, արտեֆակտային տեղեկատվության վրա, ի գործու է խմբավորման ենթարկելու և ուսումնասիրելու ինչպես անցյալի, այնպես էլ արդի մշակույթը⁶՝ չբացառելով նաև առկա իրականությունը՝ հասարակության «հիշողության համակարգում»⁷ այն պահպանելու

¹ **Բարսեղյան Լ. Ա.**, Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության կազմակերպման մի քանի հարցեր//Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2002, № 6, էջ 3:

² *Этнография*. Под ред. **Бромлей Ю. В., Маркова Г. Е. М.** -1982. с. 28.

³ **Նահապետյան Ռ.**, Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին // Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2015, № 1, էջ 208-230:

⁴ **Նահապետյան Ռ.**, Ազգագրական տեղեկություններ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում // ՊԲՀ, 2013, № 1, էջ 85-103: **Նույնի՝** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, N 3, էջեր 132-148:

⁵ **Каган М. С.** *Философия культуры*. СПб. -1996. с. 206.

⁶ **Баранова И. И.**, *Этнография и музей // Этнографические музеи: проблемы и принципы*, Museum, № 139. 1983. с. 48; **Галкина Е. Л.**, *Этнографические источники в музее: проблемы интерпретации*. М. -1998. с. 3; **Бромлей Ю. В.** *Современные проблемы этнографии*. сс. 355-356.

⁷ **Мастеница Е. Н.**, *Информационный потенциал музейного предмета: этнокультурный аспект // Музей. Традиции. Этничность, XX-XXI вв.*, Материалы международной научной конференции, посвящ. 100-летию Российского Этнографического музея. СПб. Кишинёв, Nestor-Historia. -2002. с. 328.

համար, ինչն իր հերթին թույլ կտա խոսել մշակույթի տարրի արմատների ու ձևափոխումների մասին:

XX դ. սկզբին կոնկրետ թեմայի շուրջ կառուցվող ազգագրական ցուցադրության հիմնաքարը առարկան էր: Ժամանակակից թանգարանի ցուցադրությունը չի ընկալվում միայն առանձին ինքնաբավ երևույթ, այլ որպես գործընթացների ու մարդկանց, արտադրողների ու օգտագործողների, նրանց փոխհարաբերությունների և կոնկրետ ցուցադրվող առարկայի նկատմամբ վերաբերմունքի ամբողջություն:

Օրինակ, ոչ ամեն ոք, այլ միայն համայնքում հարգված դարբինն իրավունք ուներ լուսնի լույսի ներքո հմայիլներ (ուրբաթարուկ) պատրաստելու: Այսպիսով դրանց «տեքստը» ոչ այնքան դարբնության, որքան մարդկանց պատկերացումների, փոխհարաբերությունների հետ է կապված: Ուրբաթարուկները ցուցադրվում են այլ հմայիլների հետ մեկտեղ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի (ՀԱՊԹ)⁸ ցուցադրության «Հավատալիքներ» ցուցադրական համալիրում: Առարկաների միջոցով բացահայտվում է դարբինի հատուկ դերը համայնքի տոնածիսական կյանքում: Մասնավորապես՝ չար ուժերը քշելու համար Ամանորի նախօրեին դարբինն էր մուրճով զնդանին հարվածում, երաշտի ժամանակ դարբինն էր կատարում անձրևաբեր ծեսը⁹:

Նույն թանգարանի «Գյուղատնտեսություն» ցուցադրական համալիրում ցորենի չափման առարկան՝ կոտր, ներկայացվում է ոչ միայն որպես կենցաղային, այլ նաև հարևանների միջև հարաբերություններ կարգավորող:

Ցուցանմուշը, բնօրինակ թանգարանային առարկան, բացառիկ գրավչությամբ և արտահայտչականությամբ օժտված սկզբնաղբյուր է¹⁰, կարող է ուշադրություն գրավել, առաջացնել զգացմունքներ, ստեղծել իրական կենցաղավարման միջավայրի կամ պատմական ժամանակաշրջանի համապատկերի պատրանք, ամբողջական (էկո և էթնո թանգարաններ) կամ մասնակի (քաղաքային բնակարանի ներքնատեսքի վերակազմություն Երևանի քաղաքի պատմության թանգարանում կամ Գյումրու քաղաքային կենցաղի և ժողովրդական ճարտարապետության թանգարանում, գյուղական, ինչպես նաև քաղաքային բնակարանի ներքնատեսքի վերակազմություն Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում, «Իլիջանի քաղաքային կենցաղը XIXդ.-ի վերջին XXդ. սկզբին» ցուցահանդեսը և այլն):

Եթե արտասահմանցի այցելուի համար բնօրինակ սկզբնաղբյուրի հիման վրա ստեղծված ցուցադրությունը՝ որպես հայկական մշակույթի ճշգրիտ պատկեր, վստահություն է ներշնչում, ճանաչողական իմաստ ունի, ապա հայի համար դա իր հիշողությունն

⁸ Այժմ թանգարանը կոչվում է «Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան»:

⁹ **Тадевосян А. З.** Кузнечное ремесло // Армяне (Народы и культуры). Отв. редакторы: Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц, М. -2012. с. 173.

¹⁰ **Самарина Н. Г.** Музейное источниковедение: проблемы изучения и преподавания // Материалы Международной научной конференции «Музеология – музееведение в XXI веке: проблемы изучения и преподавания». СПб. -2009. с. 54; **Գևորգյան Լ.**, Թանգարանային ցուցադրության կազմակերպման հիմունքներ, Երևան, 2014, էջ 4:

է և ինքնությունը հաստատող փաստ: Անձնական փորձը հնարավորություն է ընձեռում այցելուներին զգալու անցյալի շունչը և զգացմունքայնորեն «վերապրել այն»: Այսինքն՝ նրանք կայուն «հեռավոր հորիզոնը» զգացողությունների մակարդակում ձևափոխում են անընդհատ փոփոխվող «մոտ հորիզոնի», որտեղ հիշողությունը ավելի ընկալունակ է դառնում ամենատարբեր հակադրությունների ու համադրությունների համար¹¹: Այսպես, ցուցադրության բացման ժամանակ «Դիլիջանի քաղաքային կյանքը XIX–XX դ. սկզբին» ցուցահանդեսի հեղինակին բավականին բարձր մասնագիտական որակավորում ունեցող այցելուներից մեկն ասաց. «Կարծես թե այցելեցի տատիկիս տուն»:

Ուստի պետք է արձանագրել, որ միայն ազգագրական ցուցադրությունում հնարավոր է վերստեղծել այնպիսի պատմական միջավայր, որտեղ ժամանակին պատրաստվել և «ապրել» են առարկաներն ու զաղափարները և հետևել, թե ինչպես են մարդկանց միջև հարաբերություններն իրականանում և զարգանում, ոչ թե առանձին, այլ այդ «առարկայացված երևույթների» հետ օրգանական միասնության մեջ: Ժամանակակից ազգագրական թանգարանի նպատակը պետք է դառնա «ներգրավված այցելուն»¹², այսինքն՝ պետք է մոդելավորել ու ստեղծել այնպիսի ցուցադրություն, որ այցելուն մտովի և հոգեբանորեն խորհրդանշական ներդաշնակության մեջ լինի մոդելավորված և վերարտադրված ցուցադրության ազգագրական արտեֆակտի և/կամ կոնկրետ միջավայրի հետ: Ավելին, ազգագրական ցուցադրությունում հնարավոր է դրանք դիտարկել ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղությամբ՝ ինչպես իր պատմական զարգացման, այնպես էլ աշխարհագրական տարածման նկատելի սահմաններում:

ՀԱՊԹ-ում, օրինակ, աշխատանքային գործիքների, արտադրանքի, հավաստալիքների և այլ թեմաների ներկայացումը սկսվում է առաջին «Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության մշակույթը» սրահից, այնուհետև շարունակվում «Վանի թագավորության (Ուրարտուի) մշակույթը», «Միջնադարյան Հայաստանի մշակույթը» ցուցադրական տարածքներում, և, վերջապես, հաջորդ սրահներում մանրամասն ներկայացված են հայերի XIX – XX դդ. կենցաղն ու մշակույթը: Հետահայաց մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռում ազգագրական ցուցադրությունների հեղինակներին բացահայտումը սկսելու պալեոազգագրական նյութերից (ՀԱՊԹ) կամ ներկայացնել այն զուգահեռ (ՀՊԹ)¹³:

Ժամանակակից ազգագրական թանգարանի ցուցադրության արդյունավետությունը պայմանավորված է նաև ոչ նյութական մշակութային ժառանգության համակողմանի հրամցման աստիճանով, ինչպես նաև նախնիների աշխարհ, կնոջ և հողի պտղաբերություն, հարստություն, ճակատագիր, բարեկեցություն, սերնդաձ, վարքագծային կարծրատիպեր, արժեքային համակարգ և այլ զաղափարների ու հասկացությունների նորովի ներկայացմամբ, արժևորմամբ ու մեկնաբանմամբ¹⁴:

¹¹ Хирш М., Память и контрпамять будущего, <https://urokiistorii.ru/article/53875> (Дата посл. обр. 28. 04. 2021).

¹² Абрамян Л., Визит в музей кинорежиссёра, обернувшийся праздником // Թանգարան, Երևան, 2011, էջ 9:

¹³ Հայաստանի պատմության թանգարան:

¹⁴ Галкина Е. Л. Этнографические источники в музее: проблемы интерпретации. М. -1998. с. 21.

XIX դ. գյուղական բնակարանի ներքնատեսքի մասնակի վերակազմությունը ՀԱՊԹ-ում, ինչպես նաև բնօրինակ առարկայական ցուցանմուշների, լուսանկարների, փաստաթղթերի, պատկերների, կենաց ծառի, սեռատարիքային և էթնիկական տեղայնական առանձնահատկությունների շեշտմամբ ավանդական տարազով մանեկենների ցուցադրության հիմնական նպատակը հայ մեծ ընտանիքի՝ որպես իրավական և սոցիալական հարաբերությունների կարգավորման հաղորդակցական միջավայրի ստեղծումն է, ինչը մեծ դեր է խաղացել սոցիոնորմատիվ մշակութային հարաբերությունների միջոցով հայ ինքնության պահպանման համար: Ցուցադրության մեջ, օրինակ, շեշտված են ընտանիքի անդամների որոշակի հիերարխիան՝ յուրաքանչյուրի տեղը, իրավունքները և պարտականությունները, ներկայացված է օժիտը որպես աղջկա անձնական սեփականություն¹⁵ և այլն:

Ցուցադրության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գորգերի միջոցով առանձնացված, այսպես կոչված, «Հարսնացուի անկյունը»: Մանեկենի վրա ցուցադրվում է երիտասարդ հարսնացուին բնորոշ տարազը, բերանը ծածկված է թաշկինակով՝ որպես չխոսկանության, տարեց անդամների հետ զրույցների արգելքի խորհրդանիշ, ներկայացված է օրորոցն իր ատրիբուտներով՝ հմայիլ պահպանակներ երեխային չար աչքից պահպանելու համար, հիգիենայի խնամքի միջոցները և այլն, դրանով իսկ ընդգծելով, որ հայ ընտանիքի ամենակարևոր չափանիշը նրա շարունակականությունն է:

Առարկա-խորհրդանիշների միջոցով կառուցվել է ՀԱՊԹ-ի «Հավատալիքներ» ցուցադրական համալիրը: Այսպես, օրինակ, գորտաձև ճարմանդը ներկայացվում է ոչ միայն որպես գոտու մի մաս, այլև ջրի ու պտղաբերության խորհրդանիշ, եռանկյունաձև արծաթե կախազարդը ոչ թե որպես զարդարանք, այլ կանանցի հմայիլ-պահպանակ¹⁶, կանացիակերպ կավե աղամանները՝ ոչ միայն որպես աղ պահելու համար նախատեսված անոթ, այլև Անահիտ աստվածուհու պաշտամունքի խորհրդանիշ և այլն: Հավատալիքները ներկայացված են տոնածիսական մշակույթի հետ համատեղ (հմայիլներ, «սուրբ ծառի» վերակազմություն՝ վրան հանգուցված թաշկինակներ, գլխաշորեր և այլն): Այս ամենը վկայում է, որ մինչ օրս «սուրբ վայրեր» և «ուխտագնացություն» հասկացությունները, ինչպես նաև քրիստոնեական «երանգավորում» ստացած նախաքրիստոնեական որոշ արարողություններ ու պատկերացումներ շարունակում են մնալ հայ ինքնության կայուն խորհրդանիշներ:

Խորհրդանշական է նաև «Տոներ և ծեսեր» ցուցադրական համալիրը: Տոները՝ Նոր տարին, Բարեկենդանը, Տեառնընդառաջը (կրակի պաշտամունք, պտղաբերությանն ու արգասաբերությանն ուղղված մոգական խորհրդանիշներ), Վարդավառը (ջրի պաշտամունք), Ծաղկազարդը (բույսերի պաշտամունք, պտղաբերության խորհրդանիշներ), Զատիկը, Ակլատիզը, Նուրի-նուրին (մեռնող-հառնող աստվածություն)՝ ներկայացված են իրենց ատրիբուտներով և ծիսական ուտեստով (տարի հաց, բլիթներ, գաթա, Զատիկի

¹⁵ **Շազոյան Գ.**, Յոթ օր, յոթ գիշեր. հայոց հարսանիքի համապատկեր, Երևան, 2011: **Գևորգյան Լ. Պ.**, Համայնքային սովորությունների դրսևորումները հայոց ավանդական հարսանեկան ծիսաշարում // Հայաստանի բնակչության հասարակական կենցաղի և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությունը (գիտական նստաշրջանի թեզիսներ), Երևան, 1985, էջեր 12-13:

¹⁶ **Իսրայելյան Ա. Ռ.**, Հայկական հմայական պահպանակները XVIII-XX դդ., Երևան, 2012, էջ 35:

ձվեր): Նման նյութի ցուցադրումը կարևոր է, քանի որ հասարակական ու ընտանեկան կենցաղը, սովորույթները, ծեսերն ու տոնակատարությունները կամ «ծիսական հաղորդակցությունը»¹⁷ ինքնության պահպանման համար անհրաժեշտ գիտելիքների վերատարրումն են:

Վերոհիշյալ խնդիրների առավել ամբողջական լուսաբանման համար անհրաժեշտ է նաև հետաքննել նյութական մշակույթի տարրերի փոխհարաբերությունները սոցիալական կարգավիճակի, սեռի, տարիքի, արտաքինի (հագուստ, ոսկերչական իրեր, սանրվածք, կեցվածք), կրոնական հավատալիքների, ծեսերի ու արվեստի հետ (ժողովրդական ճարտարապետության և հագուստի գեղարվեստական ձևավորման ընդհանրություն, ճարտարապետական զարդարանքի ու հագուստի ասեղնագործության ընդհանրություն և այլն)¹⁸ լուրջ առանձնահատկությունների համատեքստում:

Այս առումով ՀԱՊԹ-ի ցուցադրության մեջ գործվածքը (գորգեր, կարպետներ, անկողնապարկեր, աղամաններ, խուրջիներ, ասեղնագործության և ժանեկագործության նմուշներ), ինչպես նաև տարազը և զարդերը ներկայացված են «Բարձր Հայք», «Մյունիք-Արցախ», «Տավուշ-Լոռի», «Շիրակ» ցուցադրական համալիրներում: Այսպիսի կառուցվածքը հնարավորություն է ընձեռում ցուցադրության մեջ ընդգծել մեկ պատմագագարական շրջանի ներսում առարկաների կատարման տեխնիկայի, գունային լուծումների, ճաշակի դրսևորման ընդհանրությունները, ընդգծել տարբերությունները¹⁹:

Երկրագիտական թանգարանների ցուցադրությունները տեղայնական են՝ ցուցադրվում են միայն տվյալ տարածաշրջանի պատմության, մշակույթի և կենցաղի մասին պատմող առարկաները: Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարանի ցուցադրության ազգագրության բաժնում ցուցադրում են կարպետներ ու գորգեր, որոնք տեղափոխված են տարածքի այժմյա բնակչության մեծամասնության պատմական հայրենիքից՝ Պատմական Հայաստանի Բայազետ, Մուշ, Ալաշկերտ քաղաքներից և հարակից բնակավայրերից: Թանգարանում վերակառուցած է XIX և XX դ. սկզբի ավանդական գյուղական բնակարանի ներքնատեսքը: Ցուցադրության հեղինակները վերակառուցել են բնակարանի տանիքի հազարաշեն տիպի ծածկը: Տան ներսում ցուցադրվում է գյուղական բնակարանի համար բնորոշ կահույք՝ զգեստապահարան, թախտ, ցածր սեղան և մեկ այլ սեղան, որի վրա դրված են գրտնակը, դարակների մեջ տեղադրված են խոհանոցային տարբեր պարագաներ, ինչպես նաև խնոցի, երկանք, կաթսա, կարաս, հյուսած զամբյուղ: Հատակին ու թախտին փռված է քեչա, իսկ պատից կախված է կարպետ: Սահմանափակ տարածքը և ավանդական կյանքում օգտագործվող առարկաների առավելագույն քանակությունը ցույց տալու ցանկությունը հանգեցրել են ցուցադրության գերհագեցման. բնակարանի

¹⁷ **Ассман Ян**, Культурная память. Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности (пер.с немецкого М. М. Сокольской). М. -2004. с. 154.

¹⁸ Նույնը:

¹⁹ **Գևորգյան Լ. Պ.**, Գորգագործ թանգարանային առարկաների պահպանության և ցուցադրման առանձնահատկությունները //Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները: Միջազգային գիտաժողով: 20-22 նոյեմբերի 2013թ.: Ջեկուցումներ, Երևան, 2016, էջեր 126-137:

ներքնատեսքում միաժամանակ ցուցադրվում են մի քանի տոների բաղադրամասեր՝ Մեծ Պասի (երդիկից կախված Ակլաստիզ) և Չատկի (ներկված ձվեր):

Դիմացի սրահում XX դ. կեսի քաղաքային բնակարանի սենյակի վերակազմությունն է: Այստեղ արդեն ցուցադրվում է բացարձակ այլ կահույք՝ երկփեղկ բուֆետ, «բնա-պատկերային» նկարներով զարդարված մահճակալ, որի վրա ժանեկագործ եզրագծով ծածկոց է և ասեղնագործ բարձի երեսներ: Պատին կախված ժամացույցը, հատակին դրված սնդուկը, ասեղնագործ ծածկոցով ծածկված կոմոդը, հատակին փռված գորգը, պատին կախված գորգը և կարպետը, վերջինիս վրա՝ լայն փայտե շրջանակի մեջ ավանդական գլխազարդով տան տիկնոջ լուսանկարը ստեղծում են ժամանակի ու կենցաղի հետաքրքիր միջավայր: Կոմոդի վրա դրված է ավագ սերնդի կնոջ լուսանկար, ինչի մասին հուշում են ավանդական գլխաշորը և թաշկինակը, որով ծածկված է կնոջ բերանը: Մահճակալի կողքին օրորոցն է և բազմոցը, սենյակի կենտրոնում՝ ասեղնագործ սփռոցով ծածկված կլոր սեղանի շուրջը տեղադրված, այսպես կոչված, «վիեննական» աթոռները: Մեղանի վրա՝ ճենապակե ապուրամաններ և ափսեներ են ցուցադրվում: Անկյունում միայն քաղաքային ինտերիերին բնորոշ գրադարակ (Էտաժերկա) և ասեղնագործ ծածկոցով ծածկված փոքրիկ ձվածիր սեղան, որի վրա ցուցադրվում է կերոսինի լամպ՝ ճենապակյա պատվանդանով:

Ներկայացված ցուցադրական համալիրները հնարավորություն են ընձեռում համեմատելու նույն ժամանակաշրջանի և պատմագագրական շրջանի քաղաքային և գյուղական բնակարանները, ներքնատեսքը, կենցաղը, զբաղվածությունը և սննդի վերամշակումը գյուղական վայրերում²⁰ (խնոցի, երկանք, սեղան, գրտնակ, կարաս, կահկարասի, խեցեղեն), վերլուծել եվրոպական մշակույթի ազդեցությունը քաղաքային կենցաղի վրա (կահույք, ժամացույցներ, քաղաքին բնորոշ ասեղնագործության նմուշներ, ճենապակյա սպասք, կերոսինի լամպ): Նկատելի է սերունդների իրավահաջորդության փաստի շեշտման ցանկությունը (լուսանկարներ, օրորոց):

Եզրահանգում. Այսպիսով, ազգագրագետի և թանգարանի աշխատողի կողմից փաստացի նյութի և ազգագրական հետազոտությունների հիման վրա վերծանված և գրանցված թանգարանային առարկայի տեղեկատվական ներուժը նկարիչ-ձևավորողի երևակայության ու մասնագիտական կարողությունների շնորհիվ ցուցադրության մեջ վերածվում է մշակույթային տեքստով²¹ միավորված միասնական միջավայրի, «թանգարանային կերպարի», որի մեջ ընդգրկված թանգարանային առարկաների խմբերը կազմում են ժամանակակից ազգագրական բնույթի ցուցադրության խորհրդանշական հաղորդակցական միջավայրը:

²⁰ Обоян С. Г., Габриелян М. Р., Земледелие и обработка зерновых культур // Армяне (Народы и культуры). сс. 118-124.

²¹ Баранов Д. А. Этнографические музеи сегодня // Антропологический форум. -2007. № 6. сс. 22-23. http://anthropologie.kunstkamera.ru/06/2007_6_rus/

**ОТБРАЖЕНИЕ ИНФОРМАЦИИ ЭТНОГРАФИЧЕСКИХ
ИСТОЧНИКОВ В МУЗЕЙНОЙ ЭКСПОЗИЦИИ**

Геворгян Л. П.

Ключевые слова: музей, экспозиция, предмет, источник, этнография.

Одним из самых распространённых способов пропаганды, обнаружения музейных коллекций являются экспозиции: постоянные и временные, т.е. создание уникальной научно-художественной коммуникационной среды, в которой с помощью музейных предметов восстанавливается социальная память. Музейный предмет из этнографической коллекции, в котором закодирован уникальный символический текст, является результатом деятельности общества и содержит социокультурную объективированную информацию, посредством которой экспонаты «общаются с нами». В этом смысле элемент материального и нематериального культурного наследия, входящий в этнографическую коллекцию музея, приобретает статус источника.

**DISPLAYING INFORMATION OF ETHNOGRAPHIC SOURCES
IN MUSEUM EXHIBITION**

Gevorgyan L. P.

Key words: museum, exposition, object, source, ethnography.

One of the most widespread methods of propaganda of museum is the exposition which conveys a unique symbolic text (encoded) and is the result of society's activities. It contains objectified sociocultural information through which the exhibits "communicate with us." In this sense, the element of tangible and intangible cultural heritage included in the ethnographic collection of the museum acquires the status of a source.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Բարսեղյան Լ. Ա., Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության կազմակերպման մի քանի հարցեր // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցերը, Երևան, 2002, № 6, էջեր 3-8:
2. Գևորգյան Լ., Թանգարանային ցուցադրության կազմակերպման հիմունքներ, Երևան, 2014:
3. Գևորգյան Լ. Պ., Համայնքային սովորությունների դրսևորումները հայոց ավանդական հարսանեկան ծիսաշարում // Հայաստանի բնակչության հասարական կենցաղի և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությունը (գիտական նստաշրջանի թեզիսներ), Երևան, 1985, էջեր 12-13:
4. Գևորգյան Լ. Պ., Գորգագործ թանգարանային առարկաների պահպանության և ցուցադրման առանձնահատկությունները // Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները: Միջազգային գիտաժողով: 20-22 նոյեմբերի 2013 թ.: Ջեկուցումներ, Երևան, 2016, էջեր 126-137:
5. Իսրայելյան Ա. Ռ., Հայկական հմայական պահպանակները XVIII-XX դդ., Երևան, ՀՊԹ, 2012:
6. Նահապետյան Ռ., Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին // ՊԲՀ, 2015, № 1, էջեր 208-230:
7. Նահապետյան Ռ., Ազգագրական տեղեկություններ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում // ՊԲՀ, 2013, № 1, էջեր 85-103:

Փոքր Միերը հոր յոթ տարվա բացակայությունից հետո որոշում է գտնել նրան: Ճանապարհին հայր ու որդի առանց իրար ճանաչելու մենամարտում են: Դավիթը, Միերի բազկին տեսնելով իր ապարանջանը, նրան հասկացնում է, որ իր որդին է:

Տղան իրիշկեց վեր իր թնին, /Տեսավ՝ ոսկի բազբանդ կապած է.

Լացեց, հասավ Դավթի ձեռք պագեց, ասաց./-Իմ հեր դու՞ն ես, ես քե՞ մեղա¹⁹:

Բայց չներելով իր հետ մենամարտած որդու հանդգնությունը՝ Դավիթը նրան անիծում է. «Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»²⁰:

Դավիթը սպանվում է Չմշկիկ Սուլթանի աղջկա թունավոր նետից, որի պատճառը՝ մի կողմից հոր և դստեր սառեցված հարաբերությունների հետևյալ ֆիլիտային վարքն է, մյուս կողմից՝ Չմշկիկ Սուլթանի իգական կոնֆլիկտի վրեժը: Անիծված Փոքր Միերը, այնուամենայնիվ, քաջաբար կռվում և հաղթում է իր հոր թշնամի յոթ թագավորներին, սպանում է Չմշկիկ Սուլթանին՝ լուծելով իր հոր վրեժը և ամուսնանում գեղեցկուհի Գոհարի հետ: Սակայն հոր անեծքը կատարվում է, և անմահ ու անժառանգ Միերը փակվում է Վանա քար կոչված մի ժայռի մեջ:

Որդին հոր անեծքով քարի մեջ գտնում է իր մահը (անպտություն) և, միաժամանակ, քարի մեջ փակվելով, անմահանում է՝ հակամարտությունը քողարկելով սոցիալական առավել բարվոք կեցության և արդարության հնարավորություններ որոնելու մեջ:

Եզրահանգում. «Փոքր Միեր» ճյուղով վիպական սերնդափոխությունն ընդհատվում է, հերոսավեպը վերջանում է, բայց Սասնա վերջին դյուցազունը շարունակում է մնալ հակամարտության մեջ թե՛ իր, թե՛ աշխարհի հետ, քանի դեռ արդարություն ու բարոություն խորհրդանշող հացահատիկների՝ ֆիզիկական չափերի աննախադեպ մեծացումը շարունակում է մնալ ժայռից դուրս գալու առասպելաբանական նախապայման՝ հին աշխարհի կործանման ու նորի վերաշինման համար, ինչը դարձյալ կոնֆլիկտ է բանականի (ռացիոնալի) և ոչ բանականի (իրացիոնալի) կարգավորման միջև:

КОНФЛИКТ В ЭПОСЕ «САСУНСКИЕ УДАЛЬЦЫ»

Այրաпетян Т.

Ключевые слова: фольклор, эпос, конфликт, агрессия, примирение.

Героический эпос «Сасунские удальцы» был достаточно детально исследован с точки зрения филологии и мифологии. Целью данной статьи является изучение эпических героев четырех ветвей, их связь между поколениями, поведение в конфликтных ситуациях (близнецы, родители и дети - общий конфликт, свой – чужой, этническая дифференциация с точки зрения религии, преднамеренное истребление поколений противником, агрессия против

¹⁹ Նույն տեղում, էջ 285:

²⁰ Նույնը:

вида, жизненного пространства и ресурсов и т. д). Предпринята попытка выявить ситуативные, стратегические и культурные факторы, при помощи которых герои находят пути выхода из конфликтных ситуаций и нахождения возможных путей примирения.

CONFLICT IN THE EPIC “DAREDEVILS OF SASOUN”

Hayrapetyan T.

Key words: *folklore, heroic epic, conflict, aggression, reconciliation.*

Armenian heroic epic the “Daredevils of Sasoun” has undergone rather detailed examination from the point of view of philology and mythology. The aim of the article is to study the heroes of the epic from the four branches and their generations in conflict situations (twins, parents and children - a common conflict, ethnic differentiation, with emphasis on religion and generations, aggression against each other, living space and resources, etc.). An attempt has been made to identify the situational, strategic and cultural factors of the heroes' steps for finding a way out from conflict and its reconciliation.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն ի ն

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:
2. Դենիս Սանդոլի Ջ.Դ., Տիպաբանությունը// Կոնֆլիկտ (խմբագիրներ՝ Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ.Ֆասթ), Երևան, 2007, Ջանգալ-97 հրատ., Հայաստանում ԱՄՆ Դեսպանություն, էջեր 68-86:
3. Թամրա Փիրսոն դե Էսթրիե, Դինամիկան // Կոնֆլիկտ (խմբագիրներ՝ Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ. Ֆասթ), էջեր 103-128:
4. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
5. Ռուբինշտեյն Ռ. Ե., Սկզբնապատճառները // Կոնֆլիկտ (խմբագիրներ՝ Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ. Ֆասթ), էջեր 87-102:
6. Սահակյան Ա., «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, 1975, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:
7. Սասնա ծռեր, հ. Ա, Երևան, 1936, Հայպետհրատ:
8. Սասնա ծռեր, հ. Բ, մաս Բ, Երևան, 1951, Հայպետհրատ:
9. Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, 1981, «Լույս» հրատ.:
10. Бутовская М. Л., Тайны пола, мужчина и женщина в зеркале эволюции, Фрязино, «БЕК 2», 2004.
11. Sandole D. J. D., Capturing the Complexity of Conflict: Dealing with Violet Ethnic Conflicts of the Post-Cold War Era. London: Pinter.
12. Lorentz K., On Aggression. New York, 1974, Harcourt Brace.

Ընդունվել է՝ 16. 06. 2021

Գրախոսվել է՝ 02. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Թամար ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող,

Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ

Էլ. հասցե՝ tamar.hayrapetyan@gmail.com

ՀՏԴ՝ 39

DOI: 10.52971/18294316-2021.2-220

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ 19-Ը Դ.

ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-Ը Դ. ՄԿՋԲԻՆ (ըստ պատմագագազրական նյութերի)

Աշխունջ Պողոսյան, Լուսինե Պողոսյան

Գավառի պետական համալսարան

Բանալի բառեր՝ Նոր Բայազետ, արհեստ, ոսկերչություն, փայտագործություն, ժողովրդագրական նկարագիր, դարբնություն, գորգագործություն:

Սույն աշխատանքի ընձեռած հնարավորությունների սահմաններում ներկայացված են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Գեղարքունիքում և մասնավորապես Նոր Բայազետում գոյություն ունեցած շուրջ քառասուն արհեստներից մի քանիսը: Բավականին հանգամանորեն բնութագրված են դարբնությունը, ոսկերչությունը, գորգագործությունն ու փայտագործությունը:

Նախաբան. Գեղարքունիքում ավանդաբար հայտնի են եղել ամենօրյա կենցաղում օգտագործվող առարկաների և աշխատանքային գործիքների պատրաստման համար անհրաժեշտ արհեստներ՝ այդ թվում դարբնությունը, բրուտագործությունը, ոստայնանկությունը, զինագործությունն ու ոսկերչությունը, որոնց արտադրանքը առաջնային նշանակություն է ունեցել կենսապահովման պահանջների բավարարման հարցում: Կարևոր է նկատի ունենալ, որ տարածաշրջանում գոյություն են ունեցել նաև համապատասխան հումքային միջոցներ, որոնք էլ հնարավոր են դարձրել համապատասխան աշխատանքային գործիքներով, կենցաղային, ինչպես նաև արդուզարդի առարկաներով բավարարել եղած պահանջները:

Տարածաշրջանում կատարված հնագիտական պեղումների արդյունքները վկայում են, որ վերը նշված արհեստները գոյություն են ունեցել նաև վաղ ժամանակաշրջաններում, մասնավորապես՝ էնեոլիթում ու բրոնզե դարում: Այդ դարաշրջաններում արհեստների՝ մետաղամշակման, բրուտագործության ու փայտամշակման

զարգացման բարձր մակարդակի վրա գտնվելը վկայում են Լճաշենի հանրահայտ դամբարաններից հայտնաբերված մշակութային արժեքները:

Դաշտային ազգագրական նյութերից ու գրավոր սկզբնաղբյուրներում եղած տեղեկություններից պարզ է դառնում, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Գեղարքունիքում շարունակվում էին գոյություն ունենալ վերը նշված ու ևս մի քանի տասնյակ արհեստներ: Դժբախտաբար, տարածաշրջանի բնակչության նմանատիպ զբաղմունքների մասին դեռևս չկա համապարփակ ուսումնասիրություն: Սույն աշխատանքով մենք փորձել ենք ներկայացնել Գեղարքունիքում առավել լայն տարածում ու կարևոր նշանակություն ունեցած արհեստների համառոտ նկարագիրը: Այս առումով օգտվել ենք հրապարակված դաշտային-ազգագրական նյութերից, գրավոր և արխիվային սկզբնաղբյուրներից ու նաև թեմային վերաբերող հրատարակված հետազոտություններից: Մեր աշխատանքին մեծապես նպաստել են Գավառի երկրագիտական թանգարանում պահվող հավաքածուներն ու արխիվային վավերագրերը:

Խնդրո առարկա հարցերի լուսաբանման համար պետք է նկատի ունենալ, որ ինչպես տնտեսության ընդհանուր համակարգը, այնպես էլ արհեստները անմիջականորեն կապված են աշխարհքաղաքական պայմանների հետ: Հայտնի է, որ Գեղամա երկիրը Բագրատունիների ու նրանց հաջորդած Զաքարյանների օրոք գտնվել է քաղաքական բուռն իրադարձությունների ոլորտում, և այդ ընթացքում իրար են փոխարինել մի քանի իշխանական տներ. Այստեղ իրենց իշխանությունն են հաստատել Զաքարյանները, այնուհետև՝ նրանց ազգական Դոփյանները:¹

Սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունները թույլ են տալիս նկատել, որ այդ ժամանակաշրջանում Գեղարքունիքում, ինչպես հարակից տարածաշրջաններում՝ Սողոքում, Գարդմանում, Խաչենում, Սյունիքում և այլն, գոյություն ունեցած իշխանական տների կարիքների բավարարման համար եղել են անհրաժեշտ առարկաների՝ արդու-զարդեղենի, զգեստի, տարատեսակ գործվածքեղենի պատրաստման արհեստանոցներ²: Հետագա զարգացումների առումով էլ պետք է կարևորել տարածաշրջանի ժողովրդագրական նկարագրի ձևավորման գործընթացների նշանակությունը:

Այս առումով նկատի ունենք հատկապես 19-րդ դ. կեսերից սկսած արմատական փոփոխությունները տարածաշրջանի ժողովրդագրական նկարագրում, երբ Բայազետից և դրան մերձակա գավառներից այստեղ տեղափոխվեցին հազարավոր հայեր՝ 1328 տուն՝ իրենց պատմամշակութային ավանդույթներով հանդերձ: 1880-ական թվականներին Գեղարքունիքում գոյություն ունեցած արհեստների մասին որոշ պատկերացում են տալիս Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի դիտարկումները, ըստ այդմ՝ բնակչության մի մասը զբաղվել է զանազան արհեստներով, որոնք հիմնված էին բացառապես

¹ Տե՛ս **Հակոբյան Թ.Խ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, «Միտք» հրատ., 1981, էջեր 216-217:

² Տե՛ս **Ա. Պողոսյան, Մ. Բալայան**, Արցախի պատմաերկրագիտական թանգարանի արձայնա զարդերի հավաքածուն, կատալոգ, Երևան, «Զանգակ» հրատ., 1920, էջեր 6-8:

ձեռքի աշխատանքի և պրիմիտիվ գործիքների վրա՝ բավարարելու հենց արտադրողների անմիջական կարիքները³: 20-րդ դ. սկզբներին, Երվանդ Լալայանի ունեցած տվյալների համաձայն, քաղաքում կար մոտ հարյուր արհեստավորական կրպակ կամ արհեստանոց⁴: Ընդ որում, արհեստավորների արտադրանքը, բացի տեղական պահանջները բավարարելուց, արտահանվում էր նաև արտաքին շուկա: Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ) արհեստների զարգացման գործում վճռական նշանակություն են ունեցել Հին Բայազետին բնորոշ ավանդույթները⁵: Տարածաշրջանի խոշոր արհեստագործական կենտրոններից են եղել Նոր Բայազետի գավառն ու հարակից մեծ բնակավայրերը: Արհեստագործությունը հարգի է եղել ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում և առհասարակ ամբողջ գավառի տնտեսական կյանքում ունեցել է էական նշանակություն: Ըստ ՀՀ ազգային արխիվում պահպանված վիճակագրական տվյալների՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում արհեստի բնագավառում ընդգրկված էր քաղաքի ամբողջ բնակչության 12,7%, այսինքն՝ մոտավորապես միջին հաշվով յուրաքանչյուր 9 բնակչից մեկը զբաղվում էր արհեստով: Իսկ գավառի բնակչության շրջանում 50 մարդուց մեկն էր արհեստավոր: Հայոց բնորոշ արհեստների ուսումնասիրման երախտավոր Վալենտինա Աբրահամյանի հրապարակած տվյալների համաձայն՝ 1865 թ. Նոր Բայազետում կար 4500 բնակիչ, որոնց թվում՝ 381 արհեստավոր⁶: Նույն աղբյուրի համաձայն՝ դրանք զբաղվում էին 32 արհեստներով: Նոր Բայազետի գավառի բնակիչները զբաղվում էին հիմնականում կավագործությամբ, ջուլիակությամբ, դարբնությամբ, պայտարությամբ, կաշեգործությամբ, թամբագործությամբ, ոսկերչությամբ, զինագործությամբ, քարտաշությամբ, դերձակությամբ, ներկարարությամբ, թաղիքագործությամբ, որմնադրությամբ, փայտագործությամբ և այլն: Արհեստանոցներ կային նաև խոշոր գյուղերում, օրինակ՝ Նորատուսում⁷:

Արհեստների շարքում առանձնահատուկ էին ոսկերչությունը, դարբնությունը, ոստայնակությունը, մասնավորապես՝ գորգագործությունը: Արտադրանքը իրացվում էր տարբեր եղանակներով՝ փոխանակում էին բնամթերքի դիմաց, վաճառում էին խոշոր գնորդներին, բացի դրանցից կատարում էին նաև պատվերային աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ արհեստների ոլորտում ներգրավված էր բավականին մեծաթիվ բնակչություն: 19-րդ դ. վերջում և 20-րդ դ. սկզբներին հատկապես մեծաթիվ էին գորգագոր-

³ Տե՛ս Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի: Վաղարշապատ հրատ., 1896, էջեր 380-389:

⁴ Տե՛ս Լալայան Եր., Նոր Բայազետի քաղաք. // Ազգագրական հանդես, գիրք 18, էջ 115:

⁵ Տե՛ս Պողոսյան Ա., Սկրոչյան Տ., Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ավանդույթների մասին//«Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, Երևան, 2011, էջեր 179-187: Տե՛ս նաև Աբրահամյան Վ. Ա. Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, 1971, էջ 17:

⁶ Տե՛ս Աբրահամյան Վ. Ա., Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, «Հայաստան» հրատ., 1971, էջ 61:

⁷ Նույն տեղում, էջեր 63-64:

ծությամբ զբաղվողները: Այս արհեստը չափազանց սերտորեն էր կապված հասարակության տարբեր շերտերին: Մասնավորապես դրանում ներգրավված էին ոչխարաբուծությամբ զբաղվողները, բուրդ մշակողները, ներկարարները և այլն: Գորգագործությամբ ու կարպետագործությամբ անմիջականորեն զբաղվում էին կանայք, իսկ արտադրանքը պահանջարկ էր վայելում ինչպես ունևորների (առաջին հերթին՝ գորգեր), այնպես էլ միջին խավի շրջանում (կարպետներ ու նմանատիպ գործվածքներ): Գորգերի առևտրի հանդեպ աճող հետաքրքրությունը նպաստեց, որ Նոր Բայազետում 1901 թվականին ստեղծվի մի ընկերություն, որը բրդի պաշարները օգտագործելու և գորգագործությունը զարգացնելու նպատակով հիմնում է գորգագործական մանուֆակտուրաներ:⁸ Դրանով հնարավորություն է ստեղծվում ընդլայնելու արտադրության ծավալներն ու այդ ոլորտում զբաղվածների քանակը, մյուս կողմից՝ որոշակիորեն կանոնակարգվում է դրանում ներգրավված տնտեսվարողների համագործակցությունը: Ինչպես նշվում է «Մշակ» թերթում՝ «Մեզանում շատ հարմար է տարածել այդ արհեստը, որովհետև ամեն տուն ունի իր բուրդը, որը շատ էժան գնով ծախում է իբրև հում նյութ»:⁹ Բացի Նոր Բայազետից՝ արհեստանոց-մանուֆակտուրաներ են հիմնվում նաև Գեղարքունիքի այլ բնակավայրերում՝ Բասարգեչարում, Վարդենիսում և այլն: Ձեռնարկատերերը գործողներին ապահովում էին հումքով, հետևում աշխատանքի ողջ ընթացքին, ապա գնում արտադրանքն ու իրականացնում դրա հետագա վաճառքը:¹⁰ Գլխավոր գնորդ-առևտրական և վերը նշված ձեռնարկի հեղինակը նորբայազետցի մեծահարուստ և բարեգործ Հայրապետ Խաչատրյանն էր (Կոլոտ Հայրապետ):¹¹

Գավառ քաղաքի երկրագիտական թանգարանում պահպանված արխիվային վավերագրերում հիշատակվում են բնակչության հիմնական զբաղմունք հանդիսացող մոտ մեկ տասնյակի հասանող արհեստներ, դրանցում տեղեկություններ կան նաև Նոր Բայազետի անվանի արհեստավորական տոհմերի մասին: Ինչպես վերև ասվեց, հիմնական արհեստներից մեկը *դարբնությունն էր*: Դարբնությունը մետաղագործության մայր արհեստներից է: Դարբին էին անվանվում այն վարպետներին, որ երկաթից և պղնձից ամեն տեսակի իրեր էին պատրաստում: Դարբիններ կային բոլոր խոշոր բնակավայրերում և, անշուշտ, նաև Նոր Բայազետում: Դարբինները երկաթից պատրաստում էին երկրագործական գործիքներ՝ գութանի և արորի խոփեր, բահ, գերանդի, մանգաղ, եղան, սայլի երկաթե մասեր և այլն: Բացի այդ՝ դարբինները պատրաստում էին նաև բազմատեսակ կենցաղային իրեր ու հարմարանքներ՝ մուրճեր, կացիններ, բրիչներ, շամփուրներ, խաչերկաթ, տաշտաքեր և այլն: Դարբնության ոլորտում աչքի ընկնող աշխատանք է Հին Բայազետի բերդի երկփեղկ դուռը, որը 1835 թվականին տեղափոխվել էր Երևան, տրվել Մուրբ Պողոս-Պետրոս եկեղեցուն, իսկ հետագայում էլ հանձնվել Երևանի պատմության թանգարանին: Դռների յուրաքանչյուր փեղկը կշռում է մոտ 800 կգ:

⁸ Տե՛ս **Պողոսյան Ա., Մկրտչյան Տ.**, նշվ. աշխ., էջեր 189-190:

⁹ Տե՛ս «Մշակ», 1901, 13 հոկտեմբերի, N227, էջեր 3-4:

¹⁰ Տե՛ս **Հարությունյան Հ.Մ.**, Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Երևան, «Գիտություն» հրատ., 2008, էջեր 215-216:

¹¹ Տե՛ս «Մշակ», 1906, 27 հունվարի, N19:

Նոր Բայազետում բարձրակարգ դարբին էր Հովսեփյանների տոհմից Մելքոնը, որն աշխատել է շուրջ 40 տարի, և որի գործն էլ ավանդաբար շարունակել են որդիները: Նշանավոր տոհմիկ դարբիններ էին Բաղայանները, Եզդողյանները, Թոռյանները:¹²

Նոր Բայազետում իր կարևորությամբ առանձնահատուկ նշանակություն ուներ նաև *ոսկերչությունը (զարգարություն)*: Առհասարակ, Հայկական բարձրավանդակում ոսկերչությունը զարգացած է եղել դեռևս հնագույն ժամանակներից: Հայ ոսկերիչ վարպետները տիրապետել են ոլորտում հայտնի տեխնիկա-տեխնոլոգիական բոլոր հիմնական հմտություններին՝ դրվագում, ձուլում, ներգարդում, սևադապատում, փորագրում, արծնապատում, հատիկագարդում և այլն: Պատմական Հայաստանի տարբեր վայրերում իրականացված պեղումներից հայտնաբերված ոսկե և արծաթե զարդերն ու առարկաները՝ վզնոցներ, ականջօղեր, արձանիկներ, կրծքագարդեր, ապարանջաններ, թասեր, սափորներ, զարդատուփեր և այլն, վկայում են ոսկերչության զարգացման բարձր մակարդակի մասին¹³: Գավառի երկրագիտական թանգարանում է պահվում նման նմուշներից մեկը՝ 1940թ-ին Նոր Բայազետում՝ այժմյան Հացառատ թաղամասում, գտնված կրծքագարդը՝ Անահիտ աստվածուհու պատկերով: Ոսկերչությունը, ըստ էության, քաղաքային արհեստ է: 19-20-րդ դարերում էլ ոսկերիչ վարպետները ձեռքի աշխատանքում օգտագործում էին միևնույն ավանդական աշխատանքային գործիքներն ու տեխնոլոգիաները: Նոր Բայազետում աշխատած ոսկերիչները պատրաստում էին կենցաղային ու պերճանքի առարկաներ՝ բաժակներ, բաժակակալներ, սափորներ, ափսեններ, կնոջ ու տղամարդու արծաթե գոտիներ, ապարանջաններ, զարդատուփեր, ծխախոտի տուփեր, նաև եկեղեցական սպասք ու զարդեր: Նոր Բայազետում 19-րդ դ. վերջին քառորդում և 20-րդ դ. սկզբներին աշխատած ոսկերիչների թվում իրենց վարպետությամբ հայտնի էին Մանուկ Բաղայանը, Բաղալ Վարդանյանը, Մկրտիչ Ենգոյանը, Եփրեմ Մարգարյանը և այլք¹⁴: Ժամանակի նշանավոր ոսկերիչ է եղել Հակոբջան աղան: Հայտնի ոսկերիչներ էին Զարգարադոյանների տոհմի ներկայացուցիչները, ընդ որում, այս տոհմի ազգանունը առաջացել է զարգար՝ ոսկերիչ և Ադո անուններից:

Նոր Բայազետում բավականին զարգացած էր նաև *փայտագործությունը*: Պետք է նկատել, որ հայոց մեջ փայտամշակումը տարածված է եղել դեռևս վաղ ժամանակներից, այդ մասին են վկայում Լճաշենից հայտնաբերված գտածոները: Հատկապես նկատի ունենք նշանավոր հնագետ Հ. Մնացականյանի հայտնաբերած **քառանիվ փայտյա կառքը**, որը թվագրվում է մ.թ.ա. 15-14-րդ դդ.: Հատկանշական է, որ այդ կառքը ներառված է ՀՀ մշակութային ժառանգության առանձնակի արժեք ներկայացնող մշակութային արժեքների ցանկում:¹⁵ Նոր Բայազետում 19-րդ դ. վերջին քառորդում և 20-րդ դ.

¹² Տե՛ս **Հովեյան Հ.**, Իմ Պայազատը, Երևան, «Մուղնի» հրատ. , 2013 էջեր 164:

¹³ <https://www.inheritage.am/post/%D5%B8%D5%BD%D5%AF%D5%A5%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8D6%82%D5%B6%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4>

¹⁴ Տե՛ս **Асвацатрян Э.** Мастера серебряного дела Закавказья в XIX- начале XX в. Справочник. Часть II. Изд. Наука. М. -1978. сс. 232-323:

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=14536>

սկզբներին էլ կային անվանի փայտագործներ, որոնց կատարած աշխատանքներից մի քանիսը պահպանվել է մինչ մեր ժամանակները: Այդպիսին են, օրինակ, Նոր Բայազետի մեկենաս Հայրապետ Խաչատրյանի՝ Կոլոտի բնակարանի դռները: Ըստ Գավառի երկրագիտական թանգարանում տեղ գտած նյութերի՝ Նոր Բայազետում լավագույն փայտագործ վարպետ էր Պողոս Միրիբյանը, որն ավելի շատ հայտնի էր Պողոսենց Նաջարանունով: Նաջարները պատրաստում էին կենցաղային ու տնտեսական իրեր: Արտադրանքի թվում մեծ տեղ էին զբաղեցնում գյուղատնտեսական փայտե գործիքները՝ կամր, լուծը, արորը, գերանդին, կշեռքը, փուքը և այլն: 2008 թվականին Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի վերանորոգման աշխատանքների ժամանակ գտնվել է մի հուշատախտակ, որը 1913թ-ին այդ դպրոցի փայտի աշխատանքները ավարտելուց հետո տեղադրել էին փայտագործ վարպետները: Այնտեղ փորագրված էր հետևյալը՝ «1913 թ. ամիս հուլիս – երեսունին, մենք բայազետցի՝ հուստեք երեք անձս ընկերներով՝ Զալիբեկ Մարդոյանցս, Դադիկո Թորգոմյանցս և Ենոք Ժամհարյանցս, շինեցինք այս ուսումն վրայի փայտե գործերն մաքուր և շանասիրությամբ: Հիշեք, կարդացողնիր, եթե, որ մեռած լինինք պարտավորեցնումիմ յիշիք մեզ, որովհեղիվ իմանալով Հայրապետ Խաչատուրովն վարձքի շինեց, մինքել աշխատեցինք շատ լավ շինել: Յիշիք մատյանումը մեր երեք անձին, հավիտեանս հավիտենից Ամեն»:¹⁶

Թանգարանում պահվող փայտյա իրերի շարքում տեղ են գտել կժկալ-կժանոցը, գդլնոց, շաքարկոտրիչ, լավաշի թխման բոլոր պարագաներն ու նաև երկրագործական աշխատանքներին անհրաժեշտ այլ գործիքներ ու հարմարանքներ:

Եզրահանգում. Մահմանափակվելով այսքանով՝ արձանագրենք, որ Գեղարքունիքում, ի թիվս բնակչության հիմնական զբաղմունքների, կարևոր նշանակություն են ունեցել նաև արհեստները, որոնցից միայն մի քանիսին հնարավոր եղավ այստեղ անդրադառնալ: Տարածաշրջանի և ընդհանրապես Սևանի ավազանի արհեստների ամբողջական բնութագիրը ներկայացնելու համար անելիքները շատ են, և այս առումով անհրաժեշտ է իրականացնել ազգագրական ու աղբյուրագիտական ծավալուն հետազոտություններ:

РЕМЕСЛА В ГЕГАРКУНИКЕ В КОНЦЕ XIX в. И В НАЧАЛЕ XX в.

(по историко-этнографическим материалам)

Погосян А. А., Погосян Л. А.

Ключевые слова: *Новый Баязет, ремесло, ювелирное дело, деревообделочное дело, демографическое описание, кузнечное дело, ковроткачество.*

В данной работе по мере возможностей и основываясь на архивных материалах краеведческого музея Гавара, представлены краткие описания некоторых из сорока

¹⁶ Տե՛ս Հովեյան Հ., նշվ. աշխ., 2013, էջեր 61:

ремесел, которые были основным занятием населения Гегаркуника и в особенности Нор Баязета в конце 19-го и в начале 20-го веков. В частности, подробно описано кузнечное дело, ювелирное дело, ковроткачество и обработка дерева, которые в Новом Баязете были довольно развиты. В работе также представлены архивные статистические данные о населении, занимающемся ремеслами в Нор Баязете.

CRAFTS IN GEGHARKUNIK AT THE END OF THE 19TH CENTURY AND
AT THE BEGINNING OF THE 20th CENTURY
(according to historical and ethnographic materials)

Poghosyan A. A., Poghosyan L. A.

Key words: *Nor Bayazet, craft, jewelry, woodworking, demographic description, blacksmithing, carpet weaving.*

Within the frames of the article we present the, brief descriptions of several of the forty crafts that were the main occupation of the population of Gegharkunik and especially of Nor Bayazet in the late 19th and early 20th centuries based on the archival materials of the Gavar Geological Museum. In particular, blacksmithing, jewelry making, carpet weaving and woodworking, which were quite developed in Nor Bayazet, are mainly described in details.

This work also elucidates the archival statistical data of the population involved in the field of crafts in Nor Bayazet.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Արրահամյան Վ. Ա., Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, «Հայաստան» հրատ, 1971:
2. Լալայան Եր., Նոր Բայազետի քաղաք // Ազգագրական հանդես, գիրք 18:
3. Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն: Երևան, «Միտք» հրատ., 1981:
4. Հարությունյան Հ.Մ., Նոր Բայազետի զավառը 1828-1913 թթ., Երևան, «Գիտություն» հրատ., 2008:
5. Հովեյան Հ., Իմ Պայազատը, Երևան, «Մուղնի» հրատ. , 2013:
6. «Մշակ», 1901, 13 հոկտեմբերի, N227:
7. «Մշակ», 1906, 27 հունվարի, N19:
8. Պողոսյան Ա., Բալայան Մ., Արցախի պատմաերկրագիտական թանգարանի արծաթյա զարդերի հավաքածուն, կատալոգ, Երևան, «Զանգակ» հրատ., 1920:

9. Պողոսյան Ա., Մկրտչյան Տ., Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ավանդույթների մասին // «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, Երևան, 2011, էջեր 179-187:
10. Սմբատեանց Մեսրոպ Արքեպիսկոպոս, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի: Վաղարշապատ հրատ., 1896:
11. Асвацатрян Э. Мастера серебряного дела Закавказья в XIX- начале XX в. Справочник. Часть II. Изд. Наука. М. -1978.
12. <https://www.int-heritage.am/post/%D5%B8%D5%BD%D5%AF%D5%A5%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4>
13. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=14536>

Ընդունվել է՝ 11. 06. 2021
Գրախոսվել է՝ 02. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 13. 10. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Աշխունջ ՊՈՂՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի դոցենտ, էլ. հասցե՝ ashkhunjoghosyan@gmail.com

Լուսինե ՊՈՂՈՍՅԱՆ՝ Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության 4-րդ կ. ուսանողուհի, էլ. հասցե՝ poghosyanlusine@list.ru

ԲԱՂՆԻՔԻ ԾԵՍԸ ՀԱՅՈՑ ՄԵՁ

Սվետլանա Պողոսյան

Հայոց ազգագրության թանգարան

Բանալի բառեր՝ գյուղ, քաղաքային կենցաղ, հաղորդակցում, հիգիենա, սովորույթ, անցումային ծես, կին, տղամարդ, երեխա:

Հայոց կենցաղում նկատելի տեղ են զբաղեցրել բաղնիքները, որոնք Հայաստանում կառուցվել են հնագույն ժամանակներից: Բացի պալատական ու եկեղեցական համալիրներում կառուցված բաղնիքներից, հասարակական մեծ բաղնիքներ կառուցվել են նաև քաղաքներում¹: Բոլոր բաղնիքների տեխնիկական կարևոր կողմերից էր այն, որ դրանք ունեցել են գետնից բավականաչափ բարձր հատակներ և շենքի պատերի ու սյուների մեջ կառուցման ընթացքում զետեղված ջրի և գոլորշու մղման համար՝ կավե խողովակներ: Տաքացվող ջրի կրակի ողջ զորությունը վարպետորեն մղվել է հատակի տակ, իսկ տաք ջուրն ու գոլորշին՝ խողովակների մեջ, որոնցով ապահովվել է բաղնիքի հատակի ու պատերի տաքացումը, ջրի ու շոգու մատակարարումը²:

Նախաբան. 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին բաղնիք գնալը գերազանցապես քաղաքային երևույթ էր հայոց մեջ: Գյուղերում լողանում էին ձմռանը տանը, ամռանը

¹ Сехбосян К. В., Погосян С. Г. Народная гигиена: бани //Армяне. М. -2012., сс. 442-445: Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, էջեր 16, 59: Халпакчьян О. Х. Гражданское зодчество Армении. М. -1971. с. 211.

² Մեղրույան Կ. Վ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեռնականացիների կենցաղում //Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6. Երևան, 1974, էջեր 159-252: Նույնի՝ Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ:

բակում՝ հատուկ առանձնացված մասում, գոմում ևս: Բաղնիք այցելելը վերածվել էր իսկական արարողության: Բաղնիքը հանդիսանո հանդիպման, գրույցի, ժամանցի, շփման և հաղորդակցման վայր էր: Այստեղ, ժամանակավորապես կտրվելով առօրյա հոգսերից, հաղորդակից էին դառնում համայնքի իրադարձություններին: Բաղնիքը նաև աղջիկ-տեսի և հարսնացու ընտրելու վայր էր: Բաղնիքը և դրան առնչվող ծեսերը կապված էին անցման, նվիրագործման արարողությունների հետ՝ հանդես գալով որպես յուրատեսակ սահման առօրյայի և տոնի միջև: Ավանդաբար թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ բաղնիք էին այցելում նույն սեռի հարազատների, ընկերների և հարևանների հետ: Հատկանշական է, որ նման նախընտրությունը կենցաղում պահպանվել է բավական երկար: Այս սովորույթի ինքնատիպ ձևափոխում կարելի է համարել ժամանակակից սաունաները՝ նոր դրսևորումներով:

Երևանի բաղնիքների մասին հիշատակված է 17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենի գրառումներում³: 18-19-րդ դդ. Երևանում լայն տարածում են ունեցել միաբաժին (Կոնդի, Թափաբաշու) և երկբաժին բաղնիքներ (օր.՝ Եղիազարովներինը), որոնցում եղել են առանձին մասնաբաժիններ կանանց և տղամարդկանց համար: Առաջին տիպի բաղնիքներում կանայք լողացել են շաբաթվա հատուկ հաստատված օրերին: Երկբաժին բաղնիքների յուրաքանչյուր բաժին ունեցել է 2-3 խոշոր դահլիճ և փոքրիկ շինություններ, իսկ կենտրոնական շատրվանով հանդերձարանը հեռու է գտնվել քառասյուն, հայկական ժողովրդական գլխատուն հիշեցնող լողարանից⁴:

19-րդ դ. կեսերից հայկական բաղնիքները մեծ տարածում են գտնում քաղաքներում: Հանդես են գալիս ոչ միայն կանանց ու տղամարդկանց հասարակական մեծ բաղնիքներ, այլև առանձին համարներով բաղնիքներ, որոնք ավելի ուշ տեղաբաշխվում են բաղնիքների երկրորդ հարկերում: Բաղնիքների կառուցվածքում պահպանվում էին ավանդական տարրեր՝ գմբեթաձև տանիքները, արևելյան տիպի գուռեր, խճազարդ ավազաններ, մերսման ու քիսայման թմբեր հատակի վրա⁵: Երևանում մի քանի բաղնիք կամ, ինչպես ժողովուրդն անվանում էր, «համամ» կար: Առաջին մեծ բաղնիքը գտնվել է այժմյան Հանրապետության հրապարակում: Բաղնիքի մուտքը Տեր-Ղուկասովսկայա (Նալբանդյան) փողոցից էր: Ուներ տղամարդկանց և կանանց ընդհանուր բաժիններ, կային նաև համարներ: Միջանցքից մտնում էին լայն կլորավուն մեծ նախաբաղնիքը՝ հողե հատակով: Պատերին կպած շրջանաձև, մոտ կես մետր լայնության, այդքան էլ բարձրության վրա տախտակապատ էր՝ ոտքերի համար, վրան խսիր փռած: Երկրորդ հարկաբաժինը, նույնպես տախտակից էր՝ նստելու և հագուստը դնելու համար: Նախաբաղնիքից մուտքը տանում էր բաղնիք: Լողանալու սրահը բավականին մեծ էր: Ուղիղ մեջտեղում մոտ երկու մետր տրամագծով մարմարե մեծ կլոր քար էր դրված: Քարը միշտ տաք վիճակում էր: Դրա վրա նստում էին լողացողները, քրտնում և կարպետե քիսայով մաքրում մարմինը: Հետո ձիլոպե քիսայով օձառ էին քսում: Պատերի մոտ՝ 5-6 տեղ, կային

³ Шарден Ж. Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. Тифлис. -1802. сс. 191, 243, 366.

⁴ Халпакчян О. Х. Гражданское зодчество Армении. М. -1971. сс. 211, 214, 224-225.

⁵ Մեղրոսյան Կ. Վ., ԴԱՆ:

փոքրիկ գուռեր (ավազան)՝ տաք և սառը ջրի համար: Յուրաքանչյուր ավազանի մոտ երկու կողմից կար քարից փոքր նստարան: Ընդհանուր բաժնում մի քանի տեղ քարից պառկելու տեղ կար՝ քիսայվելու համար: Հասուն այցելուներին բաղնիքի հաշվին տրվում էր արշին ու կես երկարության և մեկ արշին լայնության, սովորաբար մուգ կարմիր ներկած բյազ կտոր, որը փաթաթում էին կոնքերին: Լողանալն ավարտելուց հետո ոտքերին հագնում էին փայտե մաշիկներ և, մոտենալով դռանը, կանչում սպասավորին: Նախաբաղնիքից գալիս էր սպասավորը՝ ձեռքին սպիտակ բյազից սավան, և գցում էր լողացողի վրա: Մավանը նույնպես բաղնիքի հաշվին էր: Քաղաքացիներից շատերն իրենց հետ բերում էին սեփական ֆիթան ու սավանը: Ընդհանուր բաժնում լողանալն արժեր մի աբասի (20 կոպեկ), համարում լողանալը երկու անձի համար՝ ժամը 10 շահի (50 կոպեկ):

Հետաքրքիր էր կանանց լողանալու ծեսը բաղնիքում: Երևանում կանայք բաղնիք գնում էին ամիսը մեկ կամ երկու անգամ, ոչ ավելի շուտ: Բաղնիք գնում էին ամբողջ ընտանիքով՝ մայրը, հարսները, աղջիկները, թոռները: Տանում էին նաև մինչև 5-6 տարեկան տղաներին: Կանանց բաղնիք գնալը մեծ արարողություն էր, մանավանդ երբ ընտանիքը մեծ էր լինում: Իրենց հետ վերցնում էին դույլ, թաս՝ գլուխները լվանալու համար: Այդ օրվա համար պատրաստում էին դարչինով թեյ, թերմոն, բաղնիքից հետո տանը խմելու համար: Ընտանիքի մեծ մայրը, մեծ հարսը բաղնիքում մնում էին համարյա մինչև երեկո, լողացնում նաև ուսումնարան գնացող աղջիկներին: Վերջում իրենք էին լողանում և վերադառնում տուն: 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին Երևանում գործում էին հետևյալ բաղնիքները՝ «Եղիազարովի», «Ֆանտազիա», «Ռուսական», «Մոլդկանսկայա» (նախկին Կարմիր Բանակի փողոցի վրա՝ Գետառի մոտ, միահարկ), «Կոնդի» (Ս. Հովհաննես եկեղեցուց մի քիչ ներքև, դեպի Հրազդան գետի կիրճը), «Եվրոպական» (Նովա-Ցերկովնայա, հետագայում՝ Սովետների փողոցում, այժմյան Չարենցի անվան դպրոցի կողքին, բակի կողմից), որը երկհարկանի էր⁶: Եվրոպական բաղնիքը կառուցվել է 20-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին: Քաղաքում դա միակ բաղնիքն էր, որն ուներ ցնցուղներ և մարմարյա վաննաներ:

1850-ական թթ. Ալեքսանդրապոլում գործում էին երեք նշանավոր բաղնիք՝ Տիգրանովների, Վեքիլովների ու հույների՝ Ուռմնոց: Հետագայում դրանց ավելացան նաև Յակոնների, Կոստանովների, Տեր-Մարտիրոսովների, Կենտրոնական, Գեոր աղի, Ֆանտազիա, Չիթոզոնց և այլ բաղնիքներ, որոնք հայտնի էին ոչ միայն ջրամատակարարման հնարամիտ լուծումներով, այլև լողասրահների տաքացման և լուսավորման ավանդական եղանակներով⁷: Ուռմնոց բաղնիքի հանդերձարանն ունեցել է ջրավազան, լողարանի մի կողմում առանձնացված են եղել փոքր խցիկներ՝ մեկական գուռով յուրաքանչյուր ընտանիքի համար, իսկ «Ցենտրալին» ունեցել է հարթ տանիք և առանձին համարներ: Բաղնիքներն ունեին հետևյալ դասավորությունը՝ փոքր նախասրահ, ընդարձակ հանդերձարան՝ պատերի տակ լայն փայտյա թախտերով: Դրանց վրա դրվում էին շո-

⁶ Մադոյան Վ. Ա., Երևանի և շրջակայքի ազգագրական նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրական և բանահյուսական նյութերի արխիվ (ԱԲԱ), թիվ 24, էջեր 160-161:

⁷ Մեղրոսյան Կ. Վ., ԴԱՆ:

րերը, հանվում էին, հագնվում, նստում, հանգստանում: Թախտի մի ծայրն առանձնացված էր ճաղերով կամ փայտով: Այդ մասը ծածկվում էր ներքնակով, վրան բարձ` հենվելու համար: Առջևում դրված էր լինում փոքր սեղան` վրան բաժակ, լամպ և գանձարկղ: Այստեղ է նստել բաղնեցյանը կամ նրա կինը և ներս մտնողից գանձել լողանալու վարձը` մեծահասակներից` 15-20 կոպ., փոքրերից` 8-10 կոպ., մինչև 5 տարեկանը անվճար էր: Բաղնեցյանի մոտ կանգնած էին լինում միջին տարիքի ծառայող կանայք (կանանց բաժնում)` «ղափրչիներ», որոնք ներս եկողի ձեռքից վերցնում էին բաղնիքի գորգը կամ ջեջիմը և փռում թախտի վրա⁸:

Բաղնիք գնալը 19-20-րդ դդ. սկզբներին առավելապես քաղաքային կենցաղի երևույթ էր, հատուկ գլխավորապես քաղաքաբնակներին: Գյուղերում լողանում էին ձմռանը տանը, ամռանը բակում` հատուկ առանձնացված մասում: Բաղնիքը հայտնի էր նաև «տաք տուն», «լողարան», «լոգարան» անուններով⁹: Հովսեփ Օրբելի արևելյան բաղնիքների մասին գրել է. «Բաղնիքը Կովկասում, ինչպես և ամբողջ արևելքում քաղաքագլխի և ցեղային կազմակերպությունների և առանձին հարուստների հատուկ հոգածության առարկա է ..., որովհետև բաղնիքը ծառայում է ոչ միայն լողանալուն, այլև ուժերը ամրապնդելուն, տրամադրության բարձրացմանը, հանգստին, մտերիմների հետ հանդիպմանն ու բարեկամական զրույցին, առփին և վաճառքին վերաբերող հանդիպմանն ու զրույցին, առևտրական գործարքներին, ինչպես նաև շախմատ կամ նարդի խաղալու մեջ վարպետություն ցուցաբերելուն¹⁰: Ուշագրավ է, որ Երևանի ներկայիս ամենահայտնի Ոսկու շուկան նախկինում եղել է բաղնիք, որտեղ խորհրդային շրջանում գաղտնի կերպով իրականացվել է նաև ոսկու արգելված առքուվաճառք¹¹:

Ինչպես Կ. Պոլսում, Թիֆլիսում, հայկական Կարին, Երևան, Ալեքսոպոլ և այլ քաղաքներում ևս բաղնիք գնալը վերածվել էր մի մեծ արարողության: Սեբաստիայում Նոր տարվան պատրաստվելու մեջ մտնում էր նաև բաղնիք գնալը: Սեբաստիա քաղաքի բաղնիքները հայերին հատկացված օրերին անընդհատ գործում էին մինչև ուշ գիշեր: Առավոտից մինչև հետմիջօրե հաճախում էին կանայք, «անչափահաս մանչերն էլ միասին առած, իսկ այնուհետև` տղամարդիկ»¹²: Թուրքերը սովորաբար այլ օր էին լողանում: «Քաօղուլ, տեսնուած բան է, որ թուրք կինը մեր օրին բաղնիք գայ, հայ կիներու հետ լոգնայ»¹³: Լոգանքը վերջացրած կանայք սպիտակ խավլուով փաթաթված դուրս էին գալիս և նստում իրենց հանդերձի ծրարի մոտ: Առանձին սրբիչով նախ փաթաթում են իրենց մազերը: Աղջիկները և նորահարսները նախ հանում էին իրենց վերնազգեստները, շապիկը, նախապես գլխի վրա կապելով խավլիի փաթոց, որը սքողում էր կուրծքն ու կոնակը: Քղանցքն ու շապիկները հանելուց առաջ մեջքին փաթաթում են դենջակը` մուգ կարմիր և դեղին գծերով գործված մետաքսյա մի կտոր, որի մի ծայրը թիկունքն ի վար առկախ

⁸ Գյուլեցյան Հ., Գյումրի (ազգագրական ակնարկ), 1976, էջ 96:

⁹ Մալխասյանց Մտ., Հայերեն բացատրական բառարան, Երևան, հ.1, Բ տառ:

¹⁰ Орбели И. А. Бани и скоморох XII века. Избранные труды. Бр. -1963. сс. 316-323.

¹¹ Պողոսյան Մ., ԴԱՆ, Երևան, 2021:

¹² Պատրիկ Ա., Արծուվիկը // Մշակ, Բեյրութ, 1968, էջ 11:

¹³ Նույն տեղում, էջեր 12,14:

նետված, ծածկում էր կուրծքը, իսկ մնացած մասով վարագուրում էր մեջքից մինչև սրունքները:

Կենցաղային սովորությունների տեսակետից առանձնահատուկ են Ալեքսանդր-լե-նինականցիների բաղնիք գնալու արարողությունները: Բաղնիքն այստեղ ևս դիտվել է ոչ միայն լողանալու, այլև մարդկանց հետ հանդիպելու, զրուցելու, կանանց միջավայրում հարսնացու ընտրելու, ժամանցի, նույնիսկ սզվորներին սզից հանելու վայր, որոնց մասին կան բազմազան նկարագրություններ: Բաղնիքի հիմնական դերը, անկասկած, սանիտարահիգիենիկ, բուժական նշանակությունն էր: Սակայն այն հանդիսացել է որոշ իմաստով նաև հավաքատեղի, շփման, հաղորդակցման, ազատ ժամանցի և հանգստի վայր մանավանդ կանանց համար: Եթե ծանրաբարո այրերը իրենց հանգիստը անց էին կացնում առավելապես սրճարաններում, արհեստավորները, առևտրականները, չափահաս ու երիտասարդ տղամարդիկ՝ նաև միկլիտաններում, գինետներում, ապա բաղնիքները կանանց համար յուրատեսակ «կանանց տուն» էին, «ակումբ»: Այստեղ, օրվա հոգսերից ժամանակավորապես կտրված, կանայք հաղորդակից էին դառնում քաղաքի, համայնքի անցուդարձին՝ միմյանց փոխանցելով օրվա լուրերը, բամբասանքները, երբեմն նույնիսկ «հաշվեհարդար» տեսնում միմյանց նկատմամբ: Այսպես օրինակ՝ Խ. Դաշտենցի «Ֆայտոն Ալեքում» մեջբերվում է է մի դեպք, երբ Պոլոզ Մուկուչի կինը Վեքի բաղնիքում տաք ջուր է լցրել մի կնոջ մեջքին, այն բանի համար որ այդ կինը փքված-փքված պատմել է, թե «Պոլոզի հետ ավտո է նստել ...»¹⁴: Փաստորեն, լողանալուց բացի, բաղնիքը զրեթե ամենուրեք քաղաքներում դարձել է ժամանցի, ինչպես և կերուխումի, զվարճության, տոնի ու հարսանիքի նախապատրաստության վայր:

Կանայք բաղնիք են գնացել ամիսը 1-2 անգամ: Սակայն թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում կանայք շաբաթ օրերը՝ կիրակնամուտին, տանը լվանում էին գլուխները: Կանայք օրեր առաջ մեծ բավականությամբ և հաճույքով, որպես մեծ իրադարձությանն ընդառաջ, նախապատրաստվում էին բաղնիք գնալուն: Ե՛վ տղամարդիկ, և՛ մանավանդ կանայք բաղնիք էին գնում ընկերովի՝ փոքր ու մեծ խմբերով, հարևաններով, բարեկամներով, հյուրերի հետ միասին: Գնում էին գեղեցիկ հագնված, արդուզարդով: Շատ հաճախ, միմյանց հետևելով ու «մրցակցելով», կանայք աշխատում էին զարդարվել ոսկեղենով և ոսկեկար շորերով՝ ցուցադրելու համար իրենց հարստությունն ու գերազանցությունն միմյանց նկատմամբ: Սակայն ավելի շուտ այդպես էին վարվում՝ ցույց տալու համար իրենց ապահովածությունը, դրանով իսկ՝ իրենց ամուսինների, որդոց հաջողակությունը ձեռնարկած գործերում: Ապահովության համար զարդերը սովորաբար ի պահ էին տրվում բաղնեցյանին՝ փաթաթելով դրանք թաշկինակի մեջ: Բաղնիք գնալիս կանայք, ինչպես եկեղեցի գնալիս, ծածկվում էին սպիտակ թիկնոցով: Հարուստ կանայք գնում էին կառքով, իսկ տան ծառայող տղան կամ ամուսնու աշակերտը բաղնիքի պարագաները ժամ առաջ հասցնում էր այնտեղ: Ալեքսանդրում կապոցի մեջ դրված էին լինում սանրեր, քիսա, օճառվելու համար բամբակյա թելով գործած լիֆը: «Թալիսի» մեջ դնում էին հատուկ տուտկապ-«բոխչան»՝ փաթաթված մաքուր սպիտակեղենով, ցամբոցներ,

¹⁴ Մեղրոսյան Կ. Վ., նշվ. աշխ., էջեր 230, 233: Դաշտենց Խ., Ֆայտոն Ալեքը, Երևան, 1983, էջ 4:

գլխակապեր: Բաղնիքի հաշվին տրվել է արշին ու կես երկարությամբ և մեկ արշին լայնությամբ, մուգ կարմիր բյազի կտոր, որը փաթաթվել է կոնքերին: Կանայք օգտագործել են խավոտ կտորից բաղնոց շապիկ՝ երկար թևքերով ու կնգուղով: Տնից տարել են լողանալու այլ պարագաներ՝ պղնձյա թասեր, տարբեր չափերի ամաններ՝ «եղակ», «փարխաջ» և այլն: Ոտքերը տաք հատակից ու կեղտաջրերից պաշտպանելու համար գործածել են բարձրակրունկ և բարձրաթաթ ոտնամաններ՝ նախկինը՝ «նալըն»:

Բաղնիքում ամեն ինչ կանոնակարգված է եղել¹⁵: Լողացել են հատուկ արարողակարգով: Գնացել են այնտեղ առավոտվա ժ. 9-10-ից՝ երկար մնալու հեռանկարով: Մինչև ջուրը տալը շոգեհարվել են, քրտնել ու քիսայվել, ջուրը տալուն պես սկսել են նախ մեկը մյուսի հետևից լողացնել երեխաներին: Նրանց լողացնելուց հետո արագ փաթաթել են ցամքոցով, տարել հանդերձարան ու հագցրել շորերը: Լողացել են հերթով՝ միմյանց օգնելով: Լվացումն սկսել են գլխից: Օգնողներից մեկը լողացողի գլխին անընդհատ ջուր է լցրել: Սկսվել է գլուխ լվանալու երկար արարողությունը: Դա առաջին՝ «առջի» բերանն էր, երբ 2-3 անգամ օձառել են գլուխը և անընդհատ տաք ջուր լցրել՝ «ոջիլի դեմն առնելու» համար: Այնուհետև անցել են «երկրորդ բերնին»՝ կրկին մինչև 3 անգամ օձառել են գլուխը և երկար սանրել մազերը՝ չղաղարեցնելով տաք ջուր լցնելը: Գլխին լցրել են ջրի մեջ լուծված յուրատեսակ կավ՝ «կավիճք», նորից երկար սանրել մազերը, պարզաջրել ու գլուխը կապել հատուկ գլխակապով: Էրանից հետո շարունակվել է մարմնի երկարատև ու մանրակրկիտ լվացումը, քիսայումը, մերսումը և այլն:

Եզրահանգում. Բաղնիքում լողանալը թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց համար երանելի մի ժամանց էր, իսկական տոնակատարություն, ուստիև մեծ դժվարությամբ են կտրվել այդ հաճույքից: Բաղնիքի ծեսը որոշ իմաստով կապված է եղել անցման բնույթի արարողությունների հետ: Պատահական չէ, որ մարդկանց կյանքի շրջադարձային շատ պահեր կապվել է նաև բաղնիքի հետ (փեսաբաղնիք, հարսնալող, գլուխլվանք, նախատոնական, նախապատրաստական բաղնիք, սգահանություն նաև բաղնիքով և այլն), երբ անցում է կատարվել մեկ վիճակից մյուսին:

БАНИЙ РИТУАЛ У АРМЯН

Погосян С. Г.

Ключевые слова: село, городской быт, общение, гигиена, обычай, переходный обряд, женщина, мужчина, ребенок.

В XIX -начале XX в. посещение бани у армян было явлением преимущественно городского быта. В селениях мылись зимой в доме, летом - на дворе, в специально отведенном

¹⁵ Սեդրոսյան Կ., Պողոսյան Ս., Հայոց բաղնիքները // Նայիրի, տարեգիրք Բ, Թեհրան, 2008, էջեր 461-470: Պողոսյան Ս., Բաղնիքի ծեսը Գյումրիում 19-րդ դարի սկզբին // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական 2-րդ գիտաժողովի հիմնադրությունը, Գյումրի, 1996, էջ 66: Погосян С. Г. Женский банный ритуал у армян // Лавровские (среднеазиатско-кавказские) чтения. 1996-1997. С.ПБ. 1998. сс. 120-122.

месте или в хлеве. Посещение бани превращалось в настоящий церемониал. Баня являлась местом встреч, бесед, проведения досуга, общения и обмена информацией. Здесь, временно оторвавшись от повседневных забот, вовлекались в события общины. Баня была также местом смотрин и выбора невесты. Баня и ее ритуалы были связаны с переходными обрядами - инициациями, являясь своеобразной границей между буднями и праздниками. Как женщины, так и мужчины предпочли традиционно посещать баню с родственниками, друзьями, соседями своего же пола. Примечательно, что подобное предпочтение сохранилось в быту достаточно долгое время. Своеобразной модификацией этого обычая можно считать современные сауны - с новыми проявлениями.

BATHING RITUALS AMONG ARMENIANS

Poghosyan S. H.

Key words: *village, urban phenomenon, entertainment, hygiene, tradition, transition ceremony, woman, man, child.*

In the 19th and early 20th centuries, going to public bath houses was predominantly an urban phenomenon among Armenians. In villages in winter they used to bath in the houses, in summer - in a specially designated part of a courtyard or in barns. Visiting to the bathhouse was a real ceremony. The bathhouse was a place for meetings, conversations, entertainment and communication. Here, one could temporarily forget everyday worries and get acquainted with the events of the community. It was also a place to choose a bride. Bathing rituals were associated with the transition and dedication ceremonies and served as a boundary between everyday life and celebration. Traditionally, both men and women preferred to go to the public baths with relatives, friends and neighbours of the same sex. It is noteworthy that this preference has been preserved in everyday life for a long time. Modern saunas can be considered a unique change of this custom.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն ի ն

1. Գյուլեցյան Հ., Գյումրի (ազգագրական ակնարկ), Գյումրի, 1976:
2. Դաշտենց Խ., Ֆայտոն Ալեքը, Երևան, 1983:
3. Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Երևան, 1981:
4. Մալխասյանց Սո., Հայերեն բացատրական բառարան, Երևան, հ.1, Բ տառ:
5. Պատրիկ Ա., Արծուվիկը, Բեյրութ, 1968:
6. Պողոսյան Ս., Բաղնիքի ծեսը Գյումրիում 19-րդ դարի սկզբին // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական 2-րդ գիտաժողովի հիմնադրությունը, Գյումրի, 1996:
7. Պողոսյան Ս, ԴԱՆ, Երևան, 2021:
8. Մաղոյան Վ. Ա., Երևանի և շրջակայքի ազգագրական կյութեր, Երևան, 1976, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրական և բանահյուսական կյութերի արխիվ (ԱԲԱ), թիվ 24:
9. Մեղրոսյան Կ. Վ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.6., Երևան, 1974, էջեր 159-252:

10. Սեդրոսյան Կ., Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ:
11. Սեդրոսյան Կ., Պողոսյան Ս., Հայոց բաղնիքները // Նայիրի, տարեգիրք, Բ, Թեհրան, 2008, էջեր 461-470:
12. Орбели И.А. Бани и скоморох XII века. Избранные труды. Бр.-1963. сс. 316-323.
13. Погосян С.Г. Женский банный ритуал у армян //Лавровские /среднеазиатско-кавказские/ чтения 1996-1997. С.ПБ. 1998. сс. 120-122.
14. Сехбосян К. В., Погосян С. Г. Народная гигиена: бани //Армяне. М. – 2012.
15. Халпакчян О.Х. Гражданское зодчество Армении. М. -1971.
16. Шарден Ж. Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. Тифлис. 1802.

Ընդունվել է՝ 16. 06. 2021

Գրախոսվել է՝ 02. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Սվետլանա ՊՈՂՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
Հայոց ազգագրության թանգարանի ավագ գիտաշխատող,
Էլ. հասցե՝ Sv_ethnomuseum@yahoo.com

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՈՐՈՇ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արմեն Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Երկու բան են հոգին լցնում միշտ նոր և աճող զարմանքով ու երկյուղածությամբ, որքան հաճախ և երկար ենք մտածում նրանց մասին՝ աստղագարդ երկինքն իմ վերևում և բարոյական օրենքն իմ մեջ:

Իմանուել Կանտ

Բանալի բառեր՝ Հայկական առասպելաբանություն, ազգածին ավանդույթություն, Հայկ, Օրիոն, Վահագն, Արամ, Արա Գեղեցիկ:

Հոդվածում քննվում են հայոց ազգածին ավանդության գլխավոր հերոսների՝ Հայկի, Արամի և Արա Գեղեցիկի կերպարների հետ կապվող կամ նրանց անունով կոչվող երկնային անվանումները (Օրիոն համաստեղության, Ծիր կաթինի և Միաստղի հին հայկական անվանումները): Այդ հերոսների կերպարները ծագում են աստվածային նախատիպերից, և այդ անվանումները գալիս են հնագույն հայոց առասպելաբանությունից:

Նախաբան. Հնագույն ժամանակներում մարդկանց ողջ հոգևոր մշակույթը՝ փիլիսոփայությունը, գիտությունը, արվեստը և գրականությունը միավորված դրսևորվել է առասպելաբանության մեջ: Աստղագարդ երկինքը տարբեր ձևերով մշտապես ներկա է մարդկանց մշակույթում՝ որպես կրոնական, փիլիսոփայական, գեղագիտական երևույթ և, ի վերջո, գիտության օբյեկտ: «Նախագիտության» առավել զարգացած ուղղություններից էր աստղագիտությունը, որը թերևս առավել, քան այլ ոլորտներ, կապված էր կրոնական-առասպելաբանական պատկերացումների հետ:

Ընդհանրապես, հին կրոններում ամենաէական դեր է վերագրվում տիեզերքի արարման առասպելներին՝ տիեզերածնությանը: Դրանք մյուսների մեջ «ամենաառասպելականն» են: Տիեզերածնությամբ է սկսվում տիեզերքի պատմությունը, նրանով են

սկիզբ առնում տարածությունն ու ժամանակը: Տիեզերածնության հետ կապված են, նրա հետևությամբ են ձևավորվում և, կարելի է ասել, որ նրա մասնավոր դեպքերն են աստվածների, մարդու և ժողովրդի ստեղծման առասպելները՝ դիցածնությունը, մարդածնությունը, ազգածնությունը և հասարակության ձևավորումը (միջազգային տերմինաբանությամբ՝ թեոգոնիա, անթրոպոգոնիա, էթնոգոնիա և սոցիոգոնիա)¹:

Մեզանում հին աստվածների առասպելները չեն պահպանվել: Բայց նրանք արտացոլվել են հետագա վիպական ստեղծագործություններում, հատկապես ազգածին ավանդության մեջ, որտեղ ազգածին նահապետները հանդես են գալիս որպես հին աստվածների վիպական փոխակերպումներ: Ամեն մի արարում կրկնում է տիեզերածնությունը, և ազգածնությունը, այսպիսով, տիեզերածնության մի մասնավոր դրսևորումն է: Այստեղ գործում է արարչագործության առասպելների հայտնի սկզբունքը. անվանումն առասպելաբանության մեջ համագոր է արարմանը: Մա, այսպիսով, մասնավորեցված, տեղայնացված տիեզերածնություն է, «հայկական տիեզերքի» արարումը: Առաջին Հայկյանների ավանդության հնագույն նախատիպը պիտի ներկայացներ դիցածնությունը՝ տիեզերքի արարումը և աստվածների սերունդների հաջորդականությունը²: Դա բոլորովին չի նշանակում, թե այդ հերոսները հենց աստվածներ են: Հայկյանների ավանդությունը ժանրային առումով վիպական բնույթ ունի՝ էպոս է. հին աստվածների կերպարներն իջեցվել են դյուցազունների ու հերոսների մակարդակի, ինչի հետևանքով փոխվել պատմականացել է ողջ կառույցը, տեղի են ունեցել կերպարային, սյուժետային և այլ փոփոխություններ: Պետք է *հաշվի* առնել նաև, որ ազգածին ավանդությունը մեզ է հասել հեղինակային խմբագրմամբ և մշակմամբ (սկզբում Մար Աբաս Կատինայի, ապա Խորենացու և Մեբեոսի կողմից):

Միանգամայն անընդունելի է նաև նրանց իրական պատմական հերոսներ համարելը (ինչը գալիս է առասպելական կերպարների իրական նախատիպեր ունենալու մ.թ.ա. IV դ. հույն հեղինակ Եվհեմերոսի ուսմունքից): Աստղերն ու աստղախմբերը, լեռներն ու գետերը հնում կոչվել են դիցաբանական կերպարների և ոչ իրական մարդկանց անուններով: Մա տիպիկ առասպելական-հերոսական էպոս է, հայոց առաջին էպոսը, որը «Մասնա ծոերի» համանմանությամբ կարելի է կոչել «Ազգածին նահապետներ»³: Արխայիկ մտածողության մեջ, ուր աստվածների և մարդկանց միջև սահմանները դեռևս անանցանելի չեն, տիեզերական արարչագործության տարրերը՝ դիցածնությունը, մարդածնությունը և տոհմական վեպը կարող են միահյուսված լինել տարբեր համամասնություններով⁴:

«Ազգածին նահապետներից» հատկապես Հայկի, Արամի և Արայի դիցաբանական՝ աստվածներից ծագող կերպարներ լինելու վերաբերյալ բավական գրականություն

¹ Eliade M. Cosmos and History. The Myth of the Eternal Return. New York. -1959. p. 6 ff., 32 ff.

² Petrosyan A. Y. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Washington DC. -2002. pp. 115 -117.

³ «Ազգածին նահապետների»՝ որպես վաղնջական էպոսի վերաբերյալ տե՛ս Petrosyan A. Y., նշվ. աշխ., Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները, 2, Երևան, 2020:

⁴ Puhvel J. Comparative Mythology. Baltimore. London. -1987. pp. 21-22:

կա⁵: Ստորև քննարկվում են այդ հերոսների հետ կապված երկնային օբյեկտների անվանումները:

Հայկ

Հայկի հակառակորդն ինքն իրեն աստվածացրած բաբելոնյան բռնակալ Բելն է, այսինքն՝ Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկը (հմմտ. սեմական b'1 «տեր»), որը մեզանում նույնացվել է աստվածաշնչյան Նեբրովթի հետ: Հատկանշական է, որ Հայկը սպանում է Բելին նետով, այնպես, ինչպես բաբելոնյան տիեզերածնության առասպելում Բել-Մարդուկն է սպանում իր հակառակորդ Տիամատին: Այսինքն՝ Հայկը հայկական առասպելում ունի այն դերը, ինչ բաբելականում՝ Բել-Մարդուկը: Կարելի է ասել, որ Բելը Հայկի «հայելային անդրադարձն» է՝ «Բաբելոնի Հայկը», ընդ որում, Հայկի անունը, ինչպես և Բելինը, նշանակում է «տեր», հնդեվրոպական *poti- «տեր, ամուսին, նահապետ» արմատից (այսինքն՝ Հայկը, ինչպես և Բելը, մեծ աստծու կոչումն է)⁶:

Հայոց մեջ Հայկի անունով է կոչվել Օրիոն համաստեղությունը⁷: Նեբրովթը ևս նույնացվել է Օրիոն համաստեղության հետ⁸, և կարելի էր կարծել, թե Հայկի այդ նույնացումը կարող էր պայմանավորված լինել բիրիական ազդեցությամբ, Հայկի՝ Բել-Նեբրովթի գործառնության կրկնակր լինելու հանգամանքով: Սակայն կան հնդեվրոպական կապեր, ինչը բացառում է դա: Հայկը սպանում է Բելին «երեքթնեան» նետով (Խորենացի Ա.Ժա): Այս առասպելի լավագույն զուգահեռը հայտնի է հին հնդկական ավանդույթից, որտեղ Օրիոն համաստեղությունը անձնավորվում է որպես նախահայր / արարիչ աստված Պրաջապատի (Prajapati), որին նետահարում է Ռուդրա աստվածը եռամաս նետով (iṣus trikāṇḍa)⁹: Ակնհայտ է, որ Հայկը՝ որպես եռամաս նետ արձակող և իր իսկ անունով

⁵ Արայի վերաբերյալ տե՛ս Մատիկյան Ա. Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930: **Ղափանցյան Գ.**, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան 1944: **Պետրոսյան Ա.** Արա Գեղեցիկ և սուրբ Մարգիս. հնդեվրոպական աստվածն ու նրա քրիստոնեական հետնորդը//Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան 2001, էջեր 157-169: Արամի վերաբերյալ՝ **Պետրոսյան Ա.**, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997: **Petrosyan A.**, նշվ. աշխ. ;Հայկի վերաբերյալ՝ **Petrosyan A.** Forefather Hayk in the Light of Comparative Mythology// Journal of Indo-European Studies, 2009, pp. 155-163; **Պետրոսյան Ա.** Հայկ նահապետի կերպարը. հնդեվրոպական և հինարևելյան առնչություններ// Հայկագունիներ. Երևան 2013, էջեր 153-160:

⁶ Մի շարք հայկական բարբառներում *hay* բառը, ի թիվս այլոց, ունի «տանտեր, ամուսին» նշանակությունը: Հայկը նկարագրվում է որպես գլուխը մի մեծ նահապետական ընտանիքի, որը բաղկացած է երեք հարյուր այրերից և նրանց ընտանիքներից: Հայկի անունը ձևավորվել է *hay* «տեր» արմատից, *-իկ* ածանցով՝ *Հայ-իկ* > *Հայկ*: Այդ անունը պետք է ծագեր հնդեվրոպական *poti- «տեր, տանտեր, ամուսին» արմատից (հմմտ. և *dems- pot- «տանտեր» և *wik'- pot- «կլանի, համայնքի պետ») Հատկանշական է, որ Հայկի մշտական *նահապետ* կոչման երկրորդ մասը ներկայացնում է հնդեվրոպական *poti-ի իրանական արտացոլումը, տե՛ս **Petrosyan A.** Forefather Hayk..., **Պետրոսյան Ա.** Հայկ նահապետի կերպարը...:

⁷ **Ալիշան Ղ.**, Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, էջ 119:

⁸ <https://www.biblicalcyclopedia.com/N/nimrod.html>.

⁹ Այս առասպելի վերաբերյալ տե՛ս **Forssman B.** Apaoša, der Gagner des Tištriia, Zeitschrift für vergleichende Sprachforschung 82. S. 58. աղբյուրների հղմամբ:

հայեր կոչվող իր որդիների և նրանց սերունդների հայր և առաջնորդ, համապատասխանում է Ռուդրային՝ իր անունով կոչվող դիցաբանական կերպարների՝ ռուդրաների՝ իր որդիների խմբի առաջնորդին: Մյուս կողմից, որպես Օրիոնի անվանադիր և նախահայր, նա համապատասխանում է նաև Պրաջապատիին: Հատկանշական է, որ Ռուդրայի բնութագրական մակդիրների (ganapati, vrātapati, bhūtapati, paśupati, gr̥hapati, sthapati, sabhapati), ինչպես և հենց Պրաջապատիի անվան երկրորդ մասերը ծագում են հնդեվրոպական *poti-ից:

Ակնհայտ է, որ Ռուդրայի հայկական կրկնակը՝ Բաբելոնի մեծ աստծուն հաղթողը և երկնքի ամենագեղեցիկ համաստեղության անվանադիրը, պիտի ծագեր աստվածային մի կերպարից: Հայկի աստվածային նախորդը պիտի լիներ աստվածների ընտանիքի նահապետը, վիշապամարտիկ, այնպես, ինչպես Հայկն է հանդես գալիս որպես իր մեծ, նահապետական ընտանիքի նահապետ և Բելին հաղթող:

Արամ

Ըստ Մ. Աբեղյանի, Արամը, հայոց երկրորդ անվանադիր նախնին, ներկայացնում է Հայկի մի «երկրորդ տիպարը»¹⁰: Նրա հակառակորդ Բարշամի անվան առաջին մասն էլ ծագում է Բելի անվան b'1 արմատից (արևմտասեմական Ba'al Šamin «երկնքի տեր» դիցանվան կրճատ ձևն է): Այսինքն՝ կարելի է ասել, որ Արամը և Բարշամը ներկայացնում են Հայկի և Բելի «երկրորդ կերպարները»: Ըստ Շիրակացու հաղորդած ավանդության՝ Վահագնը՝ հայոց նախնին, մի խիստ ձմեռ հարդ է գողացել Բարշամից՝ ասորիների նախնուց, որի հետևանքով էլ առաջացել է Ծիր-Վաթինը՝ «Հարդագողի հետքը»¹¹: Վահագնը հայոց նախնի չէ, և պարզ է, որ նա այստեղ փոխարինել է Արամին, ինչը ցույց է տալիս Արամի՝ ամպրոպային Վահագնի վիպական կրկնակը լինելը: Մյուս կողմից, արդեն Յ. Մարկվարտը համեմատել է Արամի և նրա երրորդ հակառակորդ Պայապիսի կոիվը Ջևսի և Տիփոնի կովի հունական առասպելի հետ, որտեղ ևս Արամը համապատասխանում է ամպրոպային Ջևսին¹²: Արամը հնդեվրոպական առասպելաբանության մեջ լավագույն անվանաբանական զուգահեռ ունի հին հնդկական ավանդույթում, Ռամա անունով հերոսների մեջ. հմմտ. հնդ. rāma- «մութ, սև», հնդեվրոպական *h₂reh₁mo- արմատից¹³: Եվ «Ռամայանա» էպոսի հերոս Ռաման ամպրոպի աստծու էպիկական փոխակերպումներից մեկն է¹⁴, այնպես, ինչպես և Արամը:

Արամն իր սխրագործությունները կատարում է իր *նորատի* («պատանի, երիտասարդ») ռազմիկների զորքով (Խորենացի Ա.ժգ), և նա, ուրեմն, նաև հնդեվրոպական պատանի ռազմիկների խմբի առաջնորդի դիցաբանական անձնավորումն է: Այդ խմբերը

¹⁰ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 55:

¹¹ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 7:

¹² Markwart J., Le berceau des arméniens. Revue des études arméniennes. -1928, 8. pp. 216-217.

¹³ Puhvel J., նշվ. աշխ., էջ 90; Mayrhofer M. Etymologisches Wörterbuch des Altindoirischen. II. Heiderberg. -1996. S. 449.

¹⁴ Puhvel J., նշվ. աշխ., էջեր 92-93:

հաճախ կապված են սևի հետ (հայոց մեջ նրանց հիշողությունն է թուխ մանուկի կերպարը)¹⁵: Բարշամի աստվածային նախատիպը պաշտվում էր հայոց մեջ Բարշամին անունով: Նա կոչվել է «սպիտակափառ» (Ազաթանգեղոս 784), և նրա կուռքը կազմված էր փղոսկրից ու արծաթից (Խորենացի Բ.ժղ), այսինքն՝ Արամի և Բարշամի պատմությունը «սևի և սպիտակի» հակադրության առասպելի մի ձևափոխությունն է¹⁶:

Արա

Դիցաբանական է և Հայկյանների վերջին առասպելական նահապետի՝ Արայի կերպարը: Մի միջնադարյան տեքստում ասվում է. «Նուազ է Արայն քան զԱրուսեակն զեղեցիկ»¹⁷: Արուսյակը երկնքի ամենապայծառ աստղի՝ Վեներա մոլորակի անուններից մեկն է (հայերեն կոչվել է նաև Աստղիկ, Լուսաստղ, Լուսաբեր և մի շարք այլ ձևերով): Հին աշխարհում, բաբելոնյան ազդեցությամբ, սկսած մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերից, մոլորակները կոչվել են մեծ աստվածների անուններով¹⁸: Եվ Արուսյակը ողջ հին աշխարհում կոչվել է մեծ դիցուհու անունով՝ արքայերեն Իշտար, պարսկերեն Անահիտա, հունարեն Ափրոդիտե, լատիներեն՝ Վենուս (Վեներա): Հայոց Աստղիկը նույնպես մեծ դիցուհի էր՝ նույնացված հունական Ափրոդիտեի հետ: Համեմատությունը Աստղիկ/Արուսյակի՝ երկնքի ամենապայծառ աստղ-մոլորակի հետ, ցույց է տալիս, որ Արան ևս պիտի լիներ մոլորակի անուն, այսինքն՝ դիցանուն:

Հին աշխարհում ամենուրեք կարմիր Մարս մոլորակը կոչվել է ռազմի աստծու անվամբ՝ արքայերեն Ներգալ, պարսկերեն Բահրամ, հունարեն Արես, լատիներեն Մարս: Հունական առասպելաբանության մեջ Ափրոդիտեն Արեսի՝ ռազմի աստծու սիրուհին էր: Այս պատկերացումը տարածված էր նաև Հայաստանում՝ Աստղիկը համարվում էր ամպրոպի և ռազմի աստված Վահագնի սիրուհին (Ազաթանգեղոս 809): Հատկանշական է, որ Արա անունը հաճախ համադրվում է հունական Արեսի հետ¹⁹: Ուրեմն, հնարավոր է, որ Արայի աստղը եղել է Մարս մոլորակը, իսկ Արան՝ Արեսի համապատասխանությունը: Բայց անկախ այն բանից, թե որ մոլորակն է կոչվել Արա, այդ անունը պետք է որ հայոց հին աստվածներից մեկի անունը կամ մականունը լիներ:

Եզրահանգում. Այսպիսով, հայկական ավանդությունում ազգածին ավանդության առանցքային կերպարների, ավելի ճիշտ՝ նրանց դիցաբանական նախորդների հետ են կապվել մեր գալակտիկայի, երկնքի ամենազեղեցիկ համաստեղության և մոլորակներից մեկի անվանումները: Եվ քանի որ, ինչպես ասվեց, անվանումն առասպելաբանության

¹⁵ **Kershaw K.** The One-Eyed God: Odin and (Indo-) Germanic Männerbünde, Washington DC. -2001. passim; Sergeant B. Les troupes de jeunes hommes et l'expansion indo-européenne//Dialogues d'Histoire Ancienne. 29 (2). -2003, pp. 17; **Petrosyan A. Y.** Armenian Traditional Black Youths: the Earliest Sources // Journal of Indo-European Studies. -2011. pp. 342-354.

¹⁶ «Մև, մուգ» Արամի և «սևի ու սպիտակի» հնդեվրոպական առասպելի վերաբերյալ տե՛ս **Petrosyan A. Y.** The Indo-European and Ancient Near Eastern..., pp. 47-57:

¹⁷ **Աճառյան Հ.** Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 264:

¹⁸ **Ван-дер-Варден Б.** Пробуждающаяся наука II. Рождение астрономии. М. -1991. сс. 194-206.

¹⁹ **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 263: **Արոնց Ն.**, Հին հայոց աշխարհայացքը, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջեր 259-266: Արայի անվան ծագման վերաբերյալ մի շարք կարծիքներ տե՛ս **Մատիկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 304:

մեջ հավասարազոր է արարմանը, ուրեմն, նաև նրանց առաջացումը (ինչը բացահայտ ասվում է Հարդագողի հետք»/Օրի կաթինի լեգենդում): Մրանցից Հարդագողի առասպել-լույթը շատ հին է, տարածված բազում, իրար ազգակից և ոչ ազգակից ժողովուրդների մեջ (Եվրոպա, Աֆրիկա, Միջին Ասիա, Իրան և Հնդկաստան)²⁰, Հայկ-Օրիոնի կապը հնդեվրոպական ժառանգություն է, իսկ Մրայի՝ մոլորակի հետ նույնացումը, ավելի ուշ՝ բաբելոնյան ազդեցության մի արտահայտություն (մ.թ.ա. առաջին հազարամյակի երկրորդ կես): Ինչևէ, այսպիսով, բացահայտվում է մի պատկեր աստղագարդ երկնքի վերաբերյալ հայոց համակարգված, մինևույն առասպելաբանական ցիկլով (ազգածին ավանդությամբ) պայմանավորված առասպելական պատկերացումներից: Հիրավի, տիեզերքի դիտարկումը, ուսումնասիրությունը և աստղագիտության, ինչպես և մնացած գիտությունների ձևավորումը, սկսվում են առասպելաբանությունից:

О НЕКОТОРЫХ АСТРОНОМИЧЕСКИХ ПРЕДСТАВЛЕНИЯХ ДРЕВНИХ АРМЯН

Петросян А. Е.

Ключевые слова: *Армянская мифология, этногоническое предание, Гайк, Орион, Вахагн, Арам, Ара Прекрасный.*

В статье рассматриваются древнеармянские названия некоторых небесных объектов связанных с именами главных героев этногонического предания. Так, именем первопредка и первого эпонима армян Гайка назывался созвездие Орион, а именем последнего мифологического патриарха Ара Прекрасного – звезда, вероятно, одна из планет, так как она сравнивается с Венерой. А Млечный путь – «След соломокрада», считался образованным от соломы, похищенного богом Вахагном от Баршама – предка ассирийцев. Притом в легенде Вахагн представлен предком армян, т.е. он заменил патриарха Арама – второго мифологического эпонима армян, противника Баршама. Таким образом раскрывается фрагмент мифологической картины звездного неба, названного и систематизированного единым мифологическим циклом – этногоническим преданием.

SOME ASTRONOMICAL NOTIONS OF ANCIENT ARMENIANS

Petrosyan A. Y.

Key words: *Armenian mythology, ethnogonic tradition, Hayk, Orion, Vahagn, Aram, Ara the Handsome.*

The article deals with the ancient Armenian names of some celestial objects connected with the names of the main heroes of ethnogonic tradition. Thus, the name of the eponymous forefather and first Armenian eponym Hayk was given to the constellation Orion, and of the last

²⁰ Никонов Б. А. География названий Млечного пути, Ономастика Востока. М. -1980. сс. 242-261; Березкин Ю. Е., Дувакин Е. Н. Тематическая классификация и распределение фольклорно-мифологических мотивов по ареалам. Аналитический каталог. <https://ruthenia.ru/folklore/berezkin/>. № 159.

mythological patriarch Ara the Handsome – to a star, probably, one of the planets, as it is compared with Venus. And the Milky Way, the "Straw Trace," was thought to have been formed from the straw stolen by the god Vahagn from Barsham, the ancestor of the Assyrians. Moreover, in the legend, Vahagn is represented as the ancestor of the Armenians, i.e., he replaced the patriarch Aram, second mythological eponym of Armenians, adversary of Barsham. This reveals a fragment of the mythological picture of the starry sky, named and systematized by a single mythological cycle – the ethnogenic tradition.

Գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966:
2. Ադոնց Ն., Հին հայոց աշխարհայացքը, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:
3. Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895:
4. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942:
5. Մատիկյան Ա., Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930:
6. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
7. Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944:
8. Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում հայոց ազգաձագման ինդիքը, Երևան, 1997:
9. Պետրոսյան Ա., Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս. հնդեվրոպական աստվածն ու նրա քրիստոնեական հետնորդը// Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան 2001, էջեր 157-169:
10. Պետրոսյան Ա., Հայկ նահապետի կերպարը. հնդեվրոպական և հինարևելյան առնչություններ, Հայկագունիներ. Երևան, 2013:
11. Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները, 2, Երևան, 2020:
12. Ван-дер-Варден Б. Пробуждающаяся наука II. Рождение астрономии. М.- 1991.
13. Берёзкин Ю. Е., Дувакин Е. Н. Тематическая классификация и распределение фольклорно-мифологических мотивов по ареалам. Аналитический каталог. <https://ruthenia.ru/folklore/berezkin/>.
14. Никонов Б. А. География названий Млечного пути // Ономастика Востока. М. сс. 242-261. -1980.
15. Eliade M. Cosmos and History. The Myth of the Eternal Return. New York. -1959.
16. Forssman B. Aparaša, der Gagner des Tištriia, Zeitschrift für vergleichende Sprachforschung 82,-1968.
17. Kershaw K. The One-Eyed God: Odin and (Indo-) Germanic Männerbünde, Washington DC.-2001.
18. Markwart J. Le berceau des arméniens, Revue des études arméniennes. 8. -1928.
19. Mayrhofer M. Etymologisches Wörterbuch des Altindoarischen, II, Heiderberg.-1966.
20. Petrosyan A. Y. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Washington DC. -2002.
21. Petrosyan A. Forefather Hayk in the Light of Comparative Mythology // Journal of Indo-European Studies, pp. 155-163.
22. Petrosyan A. Y. 2011, Armenian Traditional Black Youths: the Earliest Sources // Journal of Indo-European Studies, -2011. pp. 342-354.
23. Puhvel J. Comparative Mythology, Baltimore, London.-1987.
24. Sergent B. Les troupes de jeunes hommes et l'expansion indo-européenne // Dialogues d'Histoire Ancienne, 29 (2), -2003, pp. 9-27.

*Ընդունվել է՝ 05. 06. 2021
Գրախոսվել է՝ 02. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆ պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող, էլ. հասցե՝ alpehist@gmail.com

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՍՈՒՄԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԵՐԳԱՐԱՆՈՒՄ

Գևորգ Այվազյան, Մերզո Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *աշուղ, երգացանկ, ազատագրական պայքար, Տարոն, ուսուցիչ:*

Արևելահայ գավառակենտրոն Ալեքսանդրապոլի հասարակական միտքն անընդհատ արտահայտվելու հնարավորություններ է փնտրել: 1870-ական թթ. այդպիսի հրաշալի առիթ է հանդիսացել Բաքվում «Սոխակ Հայաստանի» լիակատար երգարանի հրատարակումը: Ժողովածուն գրավել է ալեքսպոլցի կրթամշակութային առանցքային որոշ գործիչների ստեղծագործական ուշադրությունը: Նրանք այդտեղ զետեղել են իրենց սոցիալ-քաղաքական բնութագծերով գրվածքները:

Հոդվածում տրվել է այդ երախայրիքների արժեքանական վերլուծությունը: Հայաստանի քաղաքների առօրեականության պատմության ուսումնասիրության կարևորության ըմբռնումով պարզաբանվել է դրանց նշանակությունը:

XIX դ. երկրորդ կեսին Ալեքսանդրապոլում նկատվող արտասովոր (հուն.՝ *phainomenon*) իրողությունների ընկալմանման համար չափազանց կարևոր է ժամանակակից գրականության և հրապարակախոսության պահունակից ալեքսպոլցիների բարքագրական ժառանգության վերհանումը: Հետազոտական մակարդակում թեմայի ստվերագրկումը, մեր կարծիքով, գիտական նորույթ լինելուց բացի, կարող է խթանել այսօրվա Գյումրի զբոսաշրջային հետաքրքիր ծրագրերի կազմումը:

Նախաբան. «Սոխակ Հայաստանի»¹ ոչ բարձրարժեք երգարանի կենցաղագրական ժանրի ակերպողական վավերագրության մասին կցկտուր տեղեկություններ կան Գ. Լևոնյանի,² Մ. Նարյանի,³ Կ. Դուրգարյանի⁴ և ուրիշների՝ հայ աշուղներին նվիրված աշխատություններում: Ալեքսանդրի աշուղների երգերի մասին խոսելիս՝ գրեթե բոլոր ուսումնասիրողները նշել են, որ այս կամ այն երգն առաջին անգամ տպագրվել է Բաքվում լույս ընծայված երգարանում: Միայն հայերեն երգարանների արժեքավոր մատենագիտության առաջաբանի և ծանոթագրությունների կազմողներն են մանրամասն փոխադրել «Սոխակ»-ի հատորների բովանդակությունը:⁵

XIX- XX դդ. երգարաններ կազմվել են Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Թիֆլիսում, Կ. Պոլսում, Վառնայում, Բոստոնում և այլուրեք: «Սոխակ»-ի հրատարակիչ Ավագ Գրիգորյանցի⁶ կարծիքով՝ դրանք մինչև XIX դ. կեսերը «...նշանակուած են եղել փոխարինելու մեր մեջ երգվող օտարազգի երգերը... երբեք չեն եղել արտայայտություն ժողովրդի հոգւոյ»:⁷ Պրոֆ. Թ. Պողոսյանը դիպուկ է ասել. «Երգարանները զգայուն արձագանքն են հայոց հասարակական կյանքում եւ մտքի մեջ ընթացող տեղաշարժերին»:⁸ «Մբ Գրիգոր Լուսավորչի անվան Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության»⁹ որդե-

¹ Այսուհետ՝ «Սոխակ», իսկ տողատակերում՝ ՍՀ:

² Հայ աշուղներ: Աշխատ. Գ. Լևոնյան, Ալեքսանդրապոլ, Տպարան Գևորգ Ս. Մանոյեանցի, 1892:

³ Հայկական սովետական հանրագիտարան: Հ. 4, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջեր 550-551:

⁴ Նույն տեղում, հատոր 9, Երևան, 1983, էջ 472:

⁵ Հայերեն երգարանների մատենագիտություն (1513-1921թթ.), Երևան, Նահապետ, 2014, էջ I-VIII:

⁶ Հետագայում դարձել է քահանա. Գրիգոր ավագ քահանա Գրիգորյանց:

⁷ Սոխակ Հայաստանի. Լիակատար երգարան, խմբագրեց Աւագ Գրիգորեանց: Աշխատություն Բ: հատոր I, Բագու, Ն.Մալաֆեանցի եւ ընկ. տպարան, 1874, էջ 5:

⁸ Հայերեն երգարանների մատենագիտություն, էջ IV:

⁹ Արևելահայ բարեգործական-մշակութային ամենաերկարակյաց ընկերություններից մեկն է: Հիմնադրվել է 1864թ. մայիսի 21-ին բժիշկ Դավիթ Ռոստոմյանցի կողմից (1864-1920): Ֆինանսապես կայուն ընկերությունն ազգանպաստ բազմաթիվ գործեր է կատարել (տե՛ս Դադայան Խ. Ջ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ. -1920թ.), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջեր 65-74; Տոմար ընտանեկան. 1874-1875թ.: Հատոր առաջին, Թիֆլիս, Ի տպարանի գլխավոր կառավարութեան փոխարքային Կովկասու, 1874, էջ 122-124): Ընկերության Խորհուրդն այլ հայ քաղաքների թվում կապեր էր հաստատել նաև շիրակցի հոգևորականներ և մանկավարժներ Թեոդորոս վրդ. Շիրակունու, Հայրապետ Դուկայանցի, Ալեքսանդր Լավայանցի, Կարապետ Հովհաննջանյանցի և ուրիշների հետ: 1873թ. օգոստոսին Ալեքսանդրապոլի ամրոցից բժիշկ Ավետիք Բաբայան(ց)ը նամակով դիմել է Մարդասիրական ընկերության խորհրդի նախագահին: Նա Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի առաջնորդ Մուքիաս վրդ. Պարզյանի, Մբ Գայանեի վանքի վանահայր Վահան վրդ. Բաստամյանի, պատմաբան Ալեքսանդր Երիցյանի և ուրիշների խորհրդով առաջարկել է, որ ընկերությունն իր հովանու տակ վերցնի Հառիճի վանական ընկերությունը (1850-1915). «...երկու ընկերութեանց գլխատր և հիմնական առնչութիւնը յարաբերութիւնը հետեւեալը պէտք է լինի Հառիճոյ ընկերութիւնը իւր գործառնութիւններով, ծաղկեցնում է Բագուայ ընկերութեան նպատակը և համբար, իսկ վերջինը առաջնոյն իւր հովանաւորութեան տակ է պահում բարոյական և նիւթական օժանդակութեամբ ի յաջողակ դէպս նրան քաջալերում...» (տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կ.Կոստանյանի ֆոնդ, վավերագիր 691): Յույց

գիր¹⁰ «Հայ պատանի» Ա. Գրիգորյանը ժողովրդական և աշուղական երգարվեստները հարստացնելու նպատակով որոշել է այդ ընկերության ֆինանսական և կազմակերպական աջակցությամբ երգարան հրատարակել: «Մոխակ»-ի համար նյութեր հավաքելու խնդրանքով 1873թ. նա հրավերներ է ուղարկել «ազգայիններին»: Երկրորդ կարգի բերդամրոց Ալեքսանդրապոլից¹¹ հրավերն ընդունել է ուսուցիչ, բանասեր Աղեքսանդր Մխիթարյանը.

Ողջո՛ յն քեզ, շատ ողջոյն, Մո՛խակ քաղցրաձայն,
Ողջոյն սիրանուէր նան անձկանօք,
Ճռուողէա՛ հանապազ, իմ սիրո՛ւն թռչնիկ,
Թո՛ղ աշխուժիւ լսեմք, ցնծամք բերկրանօք-
Խնդամք հրճուանօք:¹²

Հեռավոր Մարատովից հրավերին արձագանքել է մեկ ուրիշ ալեքպոլցի՝ առևտրական Հակոբ Փամբուխյանը: Նրանց ժրաջան աշխատակցության արդյունքում «Մոխակ»-ի երգացանկում տեղ են գտել Ալեքսանդրապոլի գրականության և Աստրախանի հայ բանահյուսության բազմաթիվ նմուշներ:¹³

Ալեքսանդրապոլից «Մոխակ»-ի թղթակիցները ուսուցիչներ, գիտնականներ, աշուղներ, բանաստեղծներ, արձակագիրներ և հոգաբարձուներ էին:

Երգով հայրենասիրություն ներշնչելու, հայ ժողովրդին օտար տիրապետությունից ազատագրելու պայակը սնել է նրանց բոլորի քանքարը: Վարդի և Մոխակի, Գարնան, Վարդանանց պատերազմի, Անիի երաժշտական եղանակներով վերջիններս զգալի տպավորություն են գործել հանրային գիտակցության վրա:

Երգարանում ազատերգության եղջյուրից խմել է ով ինչպես կարողացել է: Երկրորդ «Փնջիկում» Շիրակի դաշտի կարոտից տոչորվող Մուշեղ Մուշեղյանցն արևոտ ողջույնով գովել է Հայաստանի արշալույսը.

Ճերմակ շուշան սարերուն,
Բացեց թերթեր իւր սիրուն,
Ուրախ գուարթ ակնարկեց,

տալու համար, թե ինչքան կարևոր է երկու միաբանական ընկերությունների համագործակցությունը, Ա. Բաբայանը գրել է. «...Ձեր ընկերութեան համար այդ շատ կարևոր է, որովհետև նա իւր բուն նպատակին այն ժամանակ կարող է հասնել, երբ հայաշատ գաւառներում, որպէս Աղեքսանդրապոլը ունենայ մի կեդրոն գործունէութեան, իսկ մեր ընկերութեան համար էլ այդ շատ կարևոր որովհետև Բագուն միջակէտ է, մի ցուցիչ է Ռուսաստանի և Անդրկովկասի աւելի հարուստ հայերին...» (Նույն տեղում: Մեջբերումներում պահպանվել է բնագրի կետադրությունը): Պատասխան «մասնաւոր նամակին» ծանոթ չենք, բայց հետագայում երկու ընկերություններն իրենց գործունէությունը շարունակել են առանձին-առանձին:

¹⁰ Որևէ հաստատության կամ անձի խնամքով պահվող՝ դաստիարակվող երեխա, սան:

¹¹ Военная энциклопедія. Томъ I. Петербургъ. Типографія Т-ва И. Д. Сытина. -1911. с. 260.

¹² Մոխակ Հայաստանի: Լիակատար երգարան: Հատոր IV, Բագու, Հայոց Մարդասիրական ընկերութեան տպարան, 1878, էջ 194:

¹³ Մոխակ Հայաստանի: Հայոց ժողովրդական երգեր: Երկասիրութիւնք ազգային երգիչների: Հատոր III, Բագու, Հայոց Մարդասիրական ընկերութեան տպարան, 1876, էջ 259:

Իւր բոլորի բոյսերուն:¹⁴

Գեղեցիկ են հնչում նաև ուսուցիչ Հովսեփ վրդ. Փինայանցի «Երգ»-ի հետևյալ տողերը.
Առ քեզ ահա՛, առ քեզ մայր մեր. քաղցրի՛կ Հայաստան,
Քո հարազատ զուակունք նոր աւետիս կրկարդան:¹⁵

«Հայաստանի կենտրոն» արտահայտությունը հայ ազատագրական կազմակերպությունների, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի «Բարենպատակ» ընկերության գաղափարախոսության մեջ ծրագրային նշանակություն է ունեցել:¹⁶ Ընկերության անդամներ Կարապետ Հովհաննջանյանցի («Վանեց ի մօր օրօրը», «Խայո խաւատ»),¹⁷ «Տարօնցի հայի արտասուքը»¹⁸), Կարապետ Մատինյանցի («Մշեցի հոր կտակը»¹⁹) և Ավետիք Նայանցի հեղինակած երգերից «պարզվում է», որ Հայաստանի կենտրոնը Տարոն-Վասպուրականն էր.

Հա՛յ տղայ, սիրէ Հայր, Հայի կրօնն է գովելի,

Հայաստան շատ գաւառ կայ, բայց իսկ կետրօնն է գովելի.

Նոցա մէջ սուրբ տեղիք կան, գիտենք Տարօնն է գովելի...²⁰

1860-ական թթ. արևելահայ մտավորականության շրջանում լայն արձագանք էին գտել հասարակական գործիչ Հովհաննես Եսայանցի կողմից հատուկ նպատակով երգված «Հառաչանք Անիի վերայ» բանաստեղծության վերջին երկու տողերը, որոնք փաստել են այդ փուլում հայ ազատագրական պայքարի աննպատակահարմարությունը.

Վասն որոյ քնի՛ր, ողբալի քաղաք,

Քու առողջութեան դեռ չէ ժամանակ:²¹

«Սոխակ»-ում շիրակցի առաջադեմ ազգային պահպանողականները, հակադրվելով Հ. Եսայանցին, իրենց հախուռն բնավորությամբ պաշտպանել են բոլոր ժամանակներում ազատ ապրելու մարդկանց իրավունքը.²² Թ. վրդ. Շիրակունի՝ «Տաղ ի ժամ գար-

¹⁴ Սոխակ Հայաստանի: Լիակատար երգարան: Հատոր II, Բագու, Հայոց Մարդասիրական ընկերության տպարան, 1875, էջ 30-31:

¹⁵ ՄՀ, հ. I, էջ 22:

¹⁶ Ընտիր պատմություն Դավիթ Բեգին, ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1871, է: Հմմտ. Պարսաւյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, Հայաստան, 1958, էջ 193: Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, էջ 109: Հայոց պատմություն, Երևան, ԵՀ հրատ., 2012, էջ 364:

¹⁷ Սոխակ: Լիակատար երգարան: Հրատարակեց Գրիգոր քինյ. Գրիգորեանց, Սանկտ Պետերբուրգ, Տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1888, էջեր 78-80, 92-93:

¹⁸ Սոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան, Հտ. Ա., Մոսկուա, Տպ. Ք.Բարխուդարեանի, 1895, էջեր 74-76: Սոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան, Հատոր առաջին, Բագու, Տպարան Ա.Ղասաբեանի, 1902, էջեր 48-50:

¹⁹ Սոխակ: Լիակատար երգարան, Սանկտ Պետերբուրգ, Տպ. Ի.Ն.Սկորոխոդովի, 1888, էջ 308-309:

²⁰ ՄՀ, հ. IV, էջ 152:

²¹ Նույնը տեղում, էջ 198:

²² Այս համապատկերում տեղին է հիշատակել նաև Ալեքսանդրապոլի սիրահարված աշուղ Պետրոս Մադաթեանցի «Ի դիմաց Անի քաղաքին» քերթվածը (տե՛ս Նոր քնար Հայաստանի: Տետրակ Դ, Ի Մոսկուա, Ի տպարանի Վոլդեմարայ Գօթիէ, 1857, էջեր 49-50):

նան», «Ողբերգություն և առ մայրաքաղաքն Անի», «Երգ առ Անի գահն Բագրատունեաց»,²³ Աղեքսանդր վրդ. Արարատյան՝ «Անի քաղաք»,²⁴ Բայանդուրցի Սարգիս Տեր-Մելքիսեդեկյանց՝ «Քնար», Մելքիսեդեկ քին. Մանուկյանց՝ «Հայրենիք», Ջամալի՝ «Բնութեան հրաշալեաց ներկայացուցիչ, մեղմիկ գարուն»:²⁵

Նրանցից ավելի համարձակները պայքարի կոչ են հղել. Մ. Մուշեղյանց՝ «Ընդունիր անուշ գառ, իմ սիրոյս բարբառ», «Քնար իմ»,²⁶ Ս. Տեր-Մելքիսեդեկյանց՝ «Պանդխտի արտասուքը», Հավես՝ «Բոլոր երկիրներէն ինձի համար քաղցր Հայաստանն է», Հազիր՝ «Մինչն ե՞րբ այսպէս, Տէր իմ, բաղդով ապիրատ մնամ», Ջամալի՝ «Մեր նախնիքը ունէին շատ»,²⁷ Հ. վրդ. Փինաչյան՝ «Շուշան, դուստր մեծին Վարդանայի բանտի», «Մի՛ լար», «Յառաջ», «Նոր տարուայ մաղթանք (հայ մանուկների համար)», Աղ. Ափրիկյանց՝ «Ջեյթուն-ցու հրաւիրակ»,²⁸ Շերամ՝ «Ջեյթունի քայլերգ»:²⁹

Ըմբռնունք Թ. վրդ. Շիրակունու «Խրախոյս Վարդանայի դաշտին Աւարայր» բանաստեղծությունից մի հատված.

Օ՛ն անդր, ընկե՛րք, փութացե՛ք, մէք զոհ լիցուք մեր ազգին,
Մեր կրօնին, հաւատոյն, մեր մայրենի սուրբ լեզուին,
Առ այն կմախք մեր քաջաց դարուց ի դար միշտ յարգին,
Նիզակք ճօճան ի յայեր, Վարդան գոչէ, ա՛յ Հայեր:³⁰

Պատանիների համար կրթասիրական և սոցիալ-բարոյական քարոզը երգարանի ընդարձակ բաժիններից է: Աշխարհիկ այդ քարոզը գիտնականները, աշուղները և բանաստեղծները հայ երեխաներին հորդորել են վանել տգիտությունը, հոգևոր քաջություն ունենալ, ընկերասեր և ազգասեր լինել, առաջադիմության հարցում «լուսաւոր ազգերից» օրինակ վերցնել, Առաքելական դավանանքին հաստատ մնալ, մայրենի և օտար լեզուներ սովորել: Աշուղ Հազիրը լայնաբերան բղավել է («Ճմարտութիւնն, ո՛վ մարդ, ա՛ն ու մի՛ ծախիր»).

Կեանքդ անցաւոր է, կապաւինես ո՛ւմ.
Ջա՛նք արա սովորիր հոգևոր ուսում,
Որ չմնաս վերջը դատարկ ու տրտում,
Աղքատ ու չքաւոր, զուրկ գանձարանէն:

Հէ՛ ո՛ի կացիր անկրթութեան խմորէն,
Պէ՛ տք չէ քեզի օգուտ գալը նորանէն,

²³ ՍՀ, հ. II, էջ 36-40:

²⁴ ՍՀ, հ. I, էջ 17-18:

²⁵ ՍՀ, հ. IV, էջ 57-58, 95-97, 164-166:

²⁶ ՍՀ, հ. II, էջ 202-203, 247-248:

²⁷ ՍՀ, հ. IV, էջ 38, 55-56, 179, 183-184:

²⁸ ՍՀ, հ. Ա, էջ 165-169, 201-203, 308-309, 311-312:

²⁹ Մոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան, Բագու, Էլեկտրաշարժ տպ. «Բագու», 1912, էջ 300:

³⁰ ՍՀ, հ. IV, էջ 118:

Քանզի ուսումն է լաւ ոսկի խնծորէն,
Պատուական ակունքէն ու կարկէհանէն:³¹

Նույնաբովանդակ սաստիչ խոսքեր ենք լսում նաև շնորհաշատ ուսուցիչ Հ. վրդ. Փինայանից («Նոր տարուայ մաղթանք»).

Լա՛ւ աշխատենք ուսում առնել,
Սիրե՛նք անխոնջ կարդալ գրել:³²

Աշուղ Ջամալին կարևոր դեր է վերապահել «խղճով» ուսուցիչներին և նրանց կոչ արել անմնացորդ նվիրվելու մանկավարժությանը.

Հայ եղբայր ուսուցիչ, դու մի՛ խնայիր,
Ինչ ուսում առել ես, քու ազգիդ խղճուկ
Գիտութեանդ լոյսը սրտով ընծայիր,
Արծարծէ սրտերում մանկական փափուկ:
Նայելով փրկութեան վեհ աստիճանից,
Ամեն մի բան սպասվում է քեզանից,
«Ում շատ տուաւ՝ շատ պահանջվի նորանից»,
Կատարիր փրկչական այս խօսքը յատուկ:³³

Մ. Միրզոյանցի, Ջամալու, Հավեսի, Մալիլի և Հազիրի քրիստոնեական սիրով ներծծված և դաստիարակչական բնույթի երգերը³⁴ խոսել են աշխարհի ունայնության, փողի իշխանության, շրջապատում տիրող ստի, անարդարության, նենգության, դավաճանության, մատնության, կեղծիքի և անմիաբանության մարմաջի մասին.

Սիրոս Ռամայի և Նոբի նման
Դառել է կը ողբայ Յակոբի նման,
Մխիթարելու չափ ինձ Յոբի նման
Մէջս իմաստութիւն, հանճար էլ չկայ:

Կա՛յ արդեօք Մալիլիս խրախոյս տուող,
Ողջամիտ խօսքերով հաստատ յոյս տուող,
Բացի սուրբ գրքերէն ինձի լոյս տուող
Չկայ, էլ մէկ ուրիշ դամբար էլ չկայ:³⁵

Ալեքսանդրապոլի հասարակական բարքերի (ծխախոտամոլություն, հարբեցողություն, լոթիություն, գողություն, անառակություն, հարուստների շփացածություն և ժլատություն, Սբ Ջատիկի տոնի շոայլ նշում և այլն) կենդանի նկարագրություններ են պետական ծառայող Հարություն աղա Հովհաննջանյանցի «Օխախոտ», «Քրիստոս յարեալ ի մեռելոց», «Լապտեր», «Հարբեցող մարդու երգ», Ջամալու «Մի մանգալու տեղում երկու

³¹ ՍՀ, հ. IV, էջ 158:

³² ՍՀ, հատոր առաջին, էջ 274:

³³ ՍՀ, հ. Ա, էջ 147:

³⁴ ՍՀ, հ. II, էջ 133; ՍՀ, հ. IV, էջեր 44, 56-57, 130-131:

³⁵ ՍՀ, հ. IV, էջ 57:

Հայ աղջիկ» և Աբրահամ Փափանյանցի «Է՛հ չեմ սիրել» (Փառասեր Հարուստ) երգերը:³⁶
Դառն է գրնգում չ, Հովհանջանյանցի ծիծաղը.

Թո՛ղ չունենամ հաց, այդ իմ փոյթս չէ՛,
Առանց ջրի էլ անցնելը դժուար չէ,
Միայն թո՛ղ ծխախոտս լինի լաւ սամսոն
Ծուխն քնթիցս հանելն էլ դժուար չէ:³⁷

Կամ՝

Որքան որ շատանան անկիւններում գինետներ,
Այնքան ես ուրախ կանցնեմ իմ օրեր,
Հարբած վերկենալ, հարբած անկողին մտնել,
Թո՛ղ միայն լինի իմ կեանքի նպատակներ:³⁸

Եզրահանգում. Այսպիսով, «Մոխակն» իր գեղագիտական թույլ թևիկներով հասել էր նաև Ալեքսանդրապոլի գավառ: Տեղի գրական-երաժշտական ոլորտի առաջատար դեմքերի և հատընտիրի նախաձեռնողների միջև համագործակցությունը բանուկ ճամփա է եղել: Երգարանում իր գոյության ամբողջ ժամանակահատվածում (1874-1912) տպագրվել են շիրակցի ստեղծագործողների 100-ից ավելի երգեր: Դրանցում արծարծվել են հայ հասարակության վարքագծին առնչվող բազմաթիվ հարցեր:

ОТРАЖЕНИЕ ЛИТЕРАТУРНО-МУЗЫКАЛЬНЫХ ПРАВОВ АЛЕКСАНДРОПОЛЯ В ПЕСЕННИКЕ «СОЛОВЕЙ АРМЕНИИ»

Այգաչյան Գ. Տ., Այրաբետյան Ս. Ա.

Ключевые слова: *ашуг, песенный репертуар, освободительная борьба, Тарон, учитель.*

Накануне русско-турецкой войны 1877-1878 гг. литературно-общественные деятели Ширакской области питали надежды на Возрождение Армении. Они искали подходящие формы выражения своих благородных намерений.

Это идеологическая группировка для реализации общепольных проектов воспользовалась возможностями издания воспитанника Общества Человеколюбия в Баку Авака Григорьева, с символическим именем «Соловей Армении». Во всех томах песенника напечатаны или переизданы песни, написанные на стихи разночинной интеллигенции Александрополя. Авторы композиции с лёгким шёпотом размышляли о вопросе статуса автономии Западной Армении, о нравственных проблемах общества и о целенаправлении процесса воспитания и обучения.

³⁶ ՄՀ, հ. IV, էջեր 7-11, 115-117, 129-130, 179-182, 189-190:

³⁷ Նույն տեղում, էջ 8:

³⁸ Նույն տեղում, էջ 190:

**REFLECTION OF THE LITERARY AND MUSICAL MORES OF
ALEXANDRAPOL IN THE SONGBOOK "THE NIGHTINGALE OF
ARMENIA"**

Ayvazyan G. S., Hayrapetyan S. A.

Key words: *ashugh, song repertoire, liberation struggle, Taron, teacher.*

On the eve of the Russian-Turkish war of 1877-1878 literary and public figures of the Shirak region harbored hopes for the revival of Armenia. They looked for suitable forms of expression of their noble intentions.

This ideological group, for the implementation of generally useful projects, took advantage of the publication of Avag Grigoryants, a pupil of the Society for Humanity in Baku, with the symbolic name "The Nightingale of Armenia". In all volumes of the songbook, songs written to the verses of the various intelligentsia of Alexandrapol are printed or republished. The authors of the composition with a light whisper pondered the issue of the autonomy status of Western Armenia, the moral problems of society and the purposefulness of the process of education and training.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կ. Կոստանյանի ֆոնդ, վավերագիր 691:
2. Դադայան Խ.Ջ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ. -1920թ.), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006:
3. Դալիթ Բեգ: Ընտիր պատմություն Դալիթ Բեգին, եւ պատերազմաց Հայոցն Խափանու որք եղեն ընդ դեմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, եւ հայոց 1171, Ի Վաղարշապատ, Ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1871:
4. Հայ աշուղներ: Աշխատ. Գ.Ջ.Լեւոնեան, Ալեքսանդրապոլ, Տպարան Գևորգ Ս. Սանոյեանցի, 1892:
5. Հայերեն երգարանների մատենագիտություն (1513-1921թթ.), Երևան, Նահապետ, 2014:
6. Հայկական սովետական հանրագիտարան: Հատոր 4, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1978:
7. Հայկական սովետական հանրագիտարան: Հատոր 9, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
8. Հայոց պատմություն: Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Խմբագրությամբ պրոֆ. Հր. Ռ. Միմոնյանի, Երևան, ԵՀ հրատ., 2012:
9. Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002:
10. Նոր քնար Հայաստանի: Տետրակ Դ: Չանազան երգք Պ.Պետրոսի Տ.Յովսեփեան Մաղաթեանց Շամախեցոյ Սէլեադ մականուանելոյ յօգուտ ազգի ի լոյս ընծայեաց Ոսկան Տ.Գեորգեան Յովհաննիսեանց Երեւանցի, Ի Մոսկուա, Ի տպարանի Վօլդեմարայ Գօթիէ, 1857:
11. Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից: Ուսումնասիրություն և փաստաթղթեր, Երևան, Հայաստան հրատ., 1958:
12. Սոխակ: Լիակատար երգարան: Հրատարակեց Գրիգոր քնյ. Գրիգորեանց, Սանկտ Պետերբուրգ, Տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1888:
13. Սոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան: Հտ. Ա. 4-րդ տպագր., Մոսկուա, Տպ. Ք. Բարխուդարեանի, 1895:

14. Սոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան: Հրատարակեց Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանց: Հատոր առաջին: Հինգերորդ տպագրութիւն, Բագու, Տպարան Ա. Ղասաբեանի, 1902:
15. Սոխակ Հայաստանի: Ազգային լիակատար երգարան: Հրատ. Գրիգոր աւ. քինյ. Գրիգորեանց: 10-րդ տպագր., Բագու, Էլէկտրաշարժ տպ. «Բագու», 1912:
16. Սոխակ Հայաստանի: Լիակատար երգարան: Խմբագրեց Աւագ Գրիգորեանց: Աշխատութիւն Բ: Հատոր I, Բագու, Ն.Մալաֆեանցի եւ ընկ. Տպարան, 1874:
17. Սոխակ Հայաստանի: Լիակատար երգարան: Խմբագրեց Աւագ Գրիգորեանց: Աշխատութիւն Ե: Հատոր II, Բագու, Հայոց Մարդասիրական ընկերութեան տպարան, 1875:
18. Սոխակ Հայաստանի: Լիակատար երգարան: Խմբագիր-հրատարակիչ Աւագ Գրիգորեանց: Աշխատութիւն Ը: Հատոր IV, Բագու, Հայոց Մարդասիրական ընկերութեան տպարան, 1878:
19. Սոխակ Հայաստանի: Հայոց ժողովրդական երգեր: Երկասիրութիւնք ազգային երգիչների: Աշխատութիւն Է. Հատոր III, Բագու, Հայոց Մարդասիրական ընկերութեան տպարան, 1876:
20. Տոմար ընտանեկան: 1874-1875 թ.: Հատոր առաջին: Աշխատասիրեաց Տ.Սրբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, Ի տպարանի զլիաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու, 1874:
21. Военная энциклопедія. Томъ I. Петербургъ, Типографія Т-ва И. Д. Сытина. -1911.

Ընդունվել է՝ 25. 07. 2021

Գրախոսվել է՝ 03. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 10. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ AyG.84@mail.ru

Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ serhayr@mail.ru

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Գյուլամիրյան Հ.Ա., Լիխտենբերգեր Ա.,

Մուրադյան Ս.Ռ., Շրայբեր Տ., Ջարդարյան Մ. Հ.

«Արտաքսատա» հայ-գերմանական հնագիտական ծրագրի

2018-2021 թթ. պեղումների արդյունքների շուրջ.....5

Գևորգյան Ա. Յ.

Հ.Ա. Մարտիրոսյանի ներդրումը Հայաստանի հնագույն

մետաղամշակության ուսումնասիրության գործում.....19

Դեվեջյան Մ. Հ., Դավթյան Ռ. Հ.

Նիզակի ծայրապանակներ, թե՞ գավազանի զլուխներ.

Լոռի Բերդի ձևավոր կոթառների շուրջ.....25

Երիցյան Բ. Գ.

Հայաստանի քարի դարի սկզբնական նյութական մշակույթի դերն

ու նշանակությունը Հայաստանի պատմագիտության ոլորտում.....34

Մանասերյան Ն. Հ., Բայան Լ. Բ.

Կենդանիների ազդեցությունը ուրարտացիների տնտեսական,

կրոնական և մշակութային կյանքի հայեցակետերի վրա.....44

Խուդավերդյան Ա. Յու.

Արագածի հյուսիսարևմտյան լանջի Լեռնակերտի դամբարանադաշտի

նյութերի մարդաբանական տվյալների ուսումնասիրություն

(հնեաախտաբանական ասպեկտ).....51

Փիլիպոսյան Ա. Ս.

Ջորաջ քարեր մեզալիթյան հնավայրի պեղումների

նախնական արդյունքները (2014-2018 թթ.).....57

Քալանթարյան Ի. Ա., Ջարիկյան Ն., Ֆերեշեթյան Վ.

Գետահովիտ -2 քարայրում 2020թ. իրականացված պեղումների արդյունքները68

Քոչարյան Գ. Գ.

Դվին ամրոց-սրբավայրը պատմամշակութային համատեքստում.....80

Վ Ի Մ Ա Գ Ը Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Աղամյան Ս. Խ.

Վիմագրական ուսումնասիրություններ Գեղարքունիքի մարզից87

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ղազարյան Ա. Պ., Յականյան Ա. Ա.

Լազաշի տիրակալ Էաննատումը և Սուբուր երկիրը.....95

Ակոպով Ա.Ա.

Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերն
ըստ XVI դարի օսմանյան հարկացուցակների.....101

Ամիրջանյան Հ. Հ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ղուկաս Կարնեցու դպրոցաշինական
գործունեության շուրջ.....111

Կավրեղիշվիլի Ա. Ա.

Բրեստ- Լիտովսկի խաղաղության բանակցություններում
(3-15. 12. 1917) թուրքական պատվիրակության մի խնդրի շուրջ.....118

Ավագյան Բ. Է.

Ինչո՞ւ փակվեց Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի գերեզմանոցը
(ըստ ՀՀ ազգային արխիվի փաստաթղթերի).....124

Հայրապետյան Ա.Ս.

ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական
կազմակերպությունը ռուսական առաջին հեղափոխության տարիներին.....132

Հովհաննիսյան Հ.Ա.

Ռուբեն Հերյանի համագործակցությունը Հայ բարեգործական
ընդհանուր միության հետ.....142

Մովսեսյան Ն. Մ.

1920թ. հայ-վրացական հարաբերությունների լուսաբանումը
ժամանակի հայ պատմագրության մեջ.....150

Մելիք-Աղամյան Հ. Հ., Խաչատրով Հ.Վ.

Հայերի ավանդը Սովետական Ադրբեջանի նավթի և գազի ծովային
հանքավայրերի բացահայտման և շահագործման մեջ.....158

Ա Ջ Գ Ա Գ Բ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Աբրահամյան Հ. Ա.

Ավագ Հինգշաբթիի և Մեծ Պահքի ավարտի առնչությունների շուրջ.....166

Ավետիսյան Մ. Ս.

Մետաղա ջրխմիկների տիպաբանական բնութագիրը.....176

Բազեյան Կ. Ա.

Շիրակի կանացիակերպ աղամանները.....183

Գևորգյան Լ. Պ.

Ազգագրական սկզբնաղբյուրների տեղեկատվության դրսևորումը
թանգարանային ցուցադրության մեջ.....191

Խաչմանուկյան Մ. Հ.
Տիկնիկը որպես բացառիկ երևույթ հայկական մշակույթում.....200

Հուսիկո Ֆ. Ն.
Հումանիտար ոգու կրողը՝ շարժական տեխնոլոգի ուսումնասիրող
(Ա.Ա.Մարտիրոսյանի փորձով).....206

Հայրապետյան Թ. Լ.
Հակամարտությունը «Մասնա Ծոեր» էպոսում.....212

Պողոսյան Ա. Ա., Պողոսյան Լ. Ա.
Արհեստները Գեղարքունիքում 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին
ըստ պատմագրագրական նյութերի.....220

Պողոսյան Մ. Հ.
Բաղնիքի ծեսը հայոց մեջ.....228

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Պետրոսյան Ա. Ե.
Հին հայոց որոշ աստղագիտական պատկերացումների շուրջ.....236

Մ Շ Ա Կ Ո Ի Յ Թ

Այվազյան Գ. Ս., Հայրապետյան Ս. Ա.
Ալեքսանդրապոլի գրական-երաժշտական բարքերի արտացոլումը
«Սոխակ Հայաստանի» երգարանում.....243

Содержание

АРХЕОЛОГИЯ

<i>Гюламирян Г., Лихтенбергер А., Мурадян С., Шрайбер Т., Зардарян М.</i> Армяно-германский археологический проект «Артаксата»: результаты раскопок в 2018-2021 гг.....	5
<i>Геворкян А. Ц.</i> Вклад А.А. Мартиросяна в деле изучения древнейшего металлопроизводства Армении..	19
<i>Деведжян С. Г., Давтян Р.</i> Втоки копий или головы жезлов? О фигурных втоках из Лорибердских погребений.....	25
<i>Ерицян Б. Г.</i> Значение и роль начальной материальной культуры каменного века в истории Армении.....	34
<i>Манасерян Н. У., Балян Л. Б.</i> Влияние животных на экономические, религиозные и культурные аспекты жизни урартов.....	44
<i>Худавердян А. Ю.</i> Исследование антропологических материалов могильника Лернакерт из северо-западного склона Арагаца (палеопатологический аспект).....	51
<i>Пилипосян А. С.</i> Предварительные результаты раскопок мегалитического памятника Зорац Карер (2014-2018 гг.).....	57
<i>Калантарян И. А., Зарикян Н., Ферешетян В.</i> Результаты раскопок пещеры Гетаовит-2 в 2020 г.....	68
<i>Кочарян Г. Г.</i> Крепость-святилище Двин в историко-культурном контексте.....	80

ЛИТОГРАФИЯ

<i>Адамян С. Х.</i> Эпиграфические исследования в Гегаркуникской области.....	87
--	----

ИСТОРИЯ

<i>Казарян Р. П., Цаканян Р. А.</i> Правитель Лагаша Эаннатум и страна Субур.....	95
--	----

<i>Акопов А. А.</i> Демографическая картина Мамрванского санджака согласно османским налоговым спискам XVI века.....	101
<i>Амирджанян А. О.</i> О вопросе образовательной деятельности Католикоса всех армян Гукаса Карнеци.....	111
<i>Каврелишвили Р. А.</i> Одна из задач турецкой делегации на Брест-Литовских мирных переговорах (03-15. 12. 1917).....	118
<i>Авагян И. Э.</i> Почему было закрыто кладбище на Холме Чести в городе Александрополе (по документам Национального архива РА)	124
<i>Айрапетян А. С.</i> Александропольская военная социал-демократическая организация РСДРП в годы Первой русской революции.....	132
<i>Оганнисян Г. А.</i> Сотрудничество Рубена Геряна с Армянским благотворительным общим союзом.....	142
<i>Мовсисян Н. М.</i> Освещение армяно-грузинских отношений 1920 года в историографии Армении того времени	150
<i>Мелик-Адамян Г. У., Хачанов Х. В.</i> Вклад армян в открытие и освоение морских нефтегазовых месторождений Советского Азербайджана	158

Э Т Н О Г Р А Ф И Я

<i>Абраамян А. А.</i> Великий Четверг и Последний День Великого поста.....	166
<i>Аветисян М. С.</i> Типология металлических чаш для питья воды.....	176
<i>Базеян К. Р.</i> Антропоморфные солонки Ширака.....	183
<i>Геворгян Л. П.</i> Отображение информации этнографических источников в музейной экспозиции.....	191
<i>Хачманукян М. Г.</i> Феномен куклы в армянской культуре.....	200
<i>Хуако Ф. Н.</i> Носитель гуманитарного духа, изучающий мобильный техно- (с учетом опыта А.А. Мартиросяна).	206

С о д е р ж а н и е

Айрапетян Т. Л.

Конфликт в эпосе «Сасунские Удалыцы».....212

Погосян А. А., Погосян Л. А.

Ремесла в Гегаркунике в конце XIX в. и в начале XX в.
(по историко-этнографическим материалам)220

Погосян С. Г.

Банный ритуал у армян.....228

Ф И Л О Л О Г И Я

Петросян А. Е.

О некоторых астрономических представлениях древних армян.....236

К У Л Ь Т У Р А

Айвазян Г. С., Айрапетян С. А.

Отражение литературно-музыкальных нравов Александрополя в
песеннике «Соловей Армении».....243

Contents

ARCHAEOLOGY

<i>Gyulamiryan H. A., Muradyan S. R., Zardaryan M. H. Lichtenberge A., Schreiber T.</i> The Armenian-German Archaeological Project: Results from the Excavations in Artaxata 2018–2021.....	5
<i>Gevorkyan A. C.</i> H. A. Martirosyan's Contribution to the Study of Ancient Metal Production of Armenia.....	19
<i>Devedjyan S., Davtyan R.</i> Spear Butts or Sceptre Heads? Towards the Ferrules from Lori Berd.....	25
<i>Yeritsyan B. G.</i> The Meaning and Role of Stone Age Original Material Culture in the History of Armenia.....	34
<i>Manaseryan N. H., Mirzoyan L. B.</i> The Role of Animals on the Economic, Religious and Cultural Life of Urartians.....	44
<i>Khudaverdyan A. Yu.</i> Study of Anthropological Materials from the Lernakert Burial Ground from the North-Western Slope of Aragats (paleopathological aspect).....	51
<i>Piliposyan A. S.</i> Preliminary Results of Excavations at the Megalithic Site Zorats Karer (2014-2018).....	57
<i>Kalantaryan I., Zariqyan N., Fereteshyan V.</i> The Results of the Excavations Carried Out in Getahovit-2 Cave in 2020.....	68
<i>Kocharyan G. G.</i> The Fortress-Sanctuary Dvin in Historical and Cultural Context.....	80

LITHOGRAPHY

<i>Adamyanyan S. Kh.</i> Epigraph Studies in Gegharkunik Region.....	87
---	----

HISTORY

<i>Ghazaryan R. P., Tsakanyan R. A.</i> The Ruler of Lagash Eannatum and the Land of Subur.....	95
<i>Akopov A. A.</i> Demographic Image of Mamravan Sanjak according to the Ottoman Tax Lists of XVI Century.....	101
<i>Amirjanyan H.H.</i> About the Educational Activity of Catholicos of All Armenians Ghukas Karnecy.....	111
<i>Kavrelishvili R. A.</i> One of the Tasks of the Turkish Delegation at Brest-Litovsk Peace Talks (December 3 -15, 1917).....	118
<i>Avagyan I. E.</i> Why was the Cemetery on the Hill of Honor Closed in the City of Alexandropol (according to the Documents of the National Archive RA).....	124

Contents

<i>Hayrapetyan A. S.</i> The Russian Social Democratic Labour Party (RSDLP) Alexandropol Military Social-Democratic Organization During the First Russian Revolution.....	132
<i>Hovhannisyan H. A.</i> Cooperation of Ruben Heryan with the Armenian Charitable General Union	142
<i>Movsesyan N. M.</i> Coverage of the Armenian-Georgian Relations of 1920 in the Historiography of Contemporaries of Armenia.....	150
<i>Melik-Adamyanyan H. H., Khachanov Kh. V.</i> Armenians' Contribution to the Discovery and Exploitation of Marine Oil Desposits of Soviet Azerbaijan.....	158

ETHNOGRAPHY

<i>Abrahamyan H. A.</i> The Maundy (Holy) Thursday and the Last Day of Lent.....	166
<i>Avetisyan M. S.</i> Typological Features of Metal Water Pewters.....	176
<i>Bazeyan K. R.</i> Womanlike Salt Cellars of Shirak.....	183
<i>Gevorgyan L. P.</i> Displaying Information of Ethnographic Sources in Museum Exhibition.....	191
<i>Khachmanukyan M. H.</i> The Doll as an Exceptional Phenomenon in Armenian Culture.....	200
<i>Huako F. N.</i> Bearer of the Spirit of Humanity - Researcher of Mobile Techno (by experience of A.A. Martirosyan).....	206
<i>Hayrapetyan T. L.</i> Conflict in the Epic "Daredevils of Sasoun".....	212
<i>Poghosyan A. A., Poghosyan L. A.</i> Crafts in Gegharkunik at the end of the 19th Century and at the Beginning of the 20th Century (according to Historical and Ethnographic Materials).....	220
<i>Poghosyan S. H.</i> Bathing Rituals among Armenians.....	228

PHILOLOGY

<i>Petrosyan A. Y.</i> Some Astronomical Notions of Ancient Armenians.....	188
---	-----

CULTURE

<i>Ayvazyan G. S., Hayrapetyan S. A.</i> Reflection of the Literary and Musical Mores of Alexandropol in the Songbook "The Nightingale of Armenia".....	112
---	-----

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 2 (24) 2021

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. 2 (24) 2021

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

SCIENTIFIC WORKS. 2 (24) 2021

Համակարգչային և գերարվեստական ձևափոխումը՝ Լ. Կոստանյանի,
Խմբագրումը և սրբագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի,
Ա. Սառաջյանի

Ստորագրված է տպագրության՝ 15. 10. 2021թ.

Ծավալը՝ 260 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am